Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

№769 С1926 №601

ՊԱՅԾԱՌ ԱՐԵՎ

Կազմեց յեվ խմբագրեց
ՍՈՒՐԽԱԹՅԱՆ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

491.99-8
U-97

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ № 81

ՅԵՐԵՎԱՆ — 192[illegible]

1005-10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք.

ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Կազմեց յեվ խմբագրեց

ՍՈՒՐԽԱԹՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ — № 81.

ՅԵՐԵՎԱՆ — 1923.

07 AUG 2013
9436
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
59294.66

Լուսժողկոմատի տպարան Վաղարշապատում

1. Ընկերները

Եղիշե Չարենց

Նրանք փոքրիկ էին՝ յերեխան ու կատուն,
մեկտեղ խաղում էին տախտակների վրա.
մինչև մութը իջներ, մինչև հայրը գար տուն
ու հողագույն հացով կերակրեր նրանց։

Հայրը բանվոր էր։ Միշտ, առավոտվա ծեգին,
նա գործարան կերթար ու յետ կգար մութին.
հաց կբերեր իրա յերեխային մի քիչ,
յերեխան էլ կտար՝ կեսը կատուն ուտի։

Այսպես ապրում էին։ Հայրը նրանց մեկ-մեկ
բան կը պատմեր դրսի, հարուստների մասին,
վոր կուշտ են միշտ նրանք, բայց չեն հոգնում յերբեք,—
Ինտերնացիոնալ կերգեր՝ յերեխան լսի։

Ու կպատմեր, վոր միշտ ինքը հոգնի պիտի,
պիտի արյուն թքե, վոր չոր փշրանք գա տուն.
ու լռություն դարձած՝ իրիկնային մութին
կլսեյին նրան յերեխան ու կատուն...

Բայց մի օր — մի օր կարմիր —
գործարան չգնաց էլ հայրը.
աչքերում — վճիռ կար մի,
ժպիտը հաստատ ու անծայր էր։

Փողոցում—մարդիկ, մարդիկ,
դրոշները ալվան, կարծես տոն էր...
Ու նման էր մայիսյան վարդի
սրերում այդ—նոր խնդությունը։

Յեվ մի որ համբուրեց զավակին
բանվոր հայրը՝ ձեռքին հրացան.
համբուրեց աչքերը կատվի
ու գնաց անձայն...

Բայց դարձավ դռնից բանվոր հայրը,
համբուրեց նրանց վերստին.
— «Հասկանո՞ւմ եք, ասավ—ժամանակն է՝
զարկելու յենք եսոր հարստին»։

Ու յելավ։ Փողոցում կրակոց էր։
Փողոցում չոքեց բանվոր հայրը։
Զորքերով լեցուն էր փողոցը.
փողոցում կռիվ ու պայքար էր։

Զարկեցին... Ճչաց բանվոր հայրը.
հարվածը կրծքին էր, հատու։
Բայց հառաչը խոր ու անծայր այն
լսեցին յերեխան ու կատուն...

Վազեց, վազեց փողոց փոքրիկ յերեխան.
կատուն վազեց հետքից իր ընկերոջ փոքրիկ.
նրանց գլխին—կարկուտ, կարմիր գնդակ տեղաց
և յերկուսն ել ընկան հայր-բանվորի կողքին։

Չխաղացին նրանք ել հատակի վրա,
չսպասեցին ել՝ զուր, վոր հայրիկը գա տուն.
Նրանք փոքրի՜կ-փոքրի՜կ նահատակներ յեղան—
յերեխան ու կատուն...

Ը Ն Կ Ե Ր Ն Ե Ր

2. Ազատվեցին

Սերիկ

Տոն օ՛ր էր։ Պատկոմները կանոնավոր շարքերով միացան ընդհանուր յերթին. նվագախումբը գնում էր առաջից։

Ամեն անգամ յերբ լսվում էր պատկոմների նվագը, փոքրիկ Համոն տեղը հանգիստ կանգնել չէր կարողանում. պատկոմների յետևից ինքն էլ ծխախոտի տուփերով լիքը արկղը վիզը գցած, ներս ընկած կրծքին վոսկրոտ մատներով սեղմելով քայլում էր։

Յերբ նվագը դադարում էր, հիշում էր, վոր պետք է վաճառի ու նվազ ձայնով կանչում էր՝

—Պապըռո՜զ, պապըռոոո՜զ...

Համոն շատ էր ուզում պատկոմ դառնալ, բայց ինչպե՞ս։

Յերկար հետևելով պատկոմներին, նա իմացավ, վոր նրանց գլխավոր շտաբը գտնվում է Աբովյան փողոցի վրա։

Ծխախոտի արկղը ձեռքին յեթե գնար, ելի պատկոմները նրան պիտի սպեկուլյանտ ասեյին։ Սպեկուլյանտ բառը նրան անչափ վիրավորում էր։ Նա գիտեր, վոր իր խաղեյինը սպեկուլյանտ է և իր աշխատանքը այդ խաղեյինի գրպանն էր գնում. ինքը ինչ սպեկուլյանտ էր, վոր յերբեք կուշտ փորով հաց չէր ուտում։

Վորպեսզի չվիրավորեն, նա իր արկղը պահ տվեց ընկերոջը նախորոք համրելով.

—Տես՝ քանի տուփ է, հա՜...

—Լա՜վ, լա՜վ, գնա...

Համոն վախվըխելով մտավ շտաբը և մոտեցավ պետին։

—Ի՞նչ ես ուզում։

— Ուզում եմ պատկոմ գրվեմ։

—Հայր-մայր ունե՞ս, վո՞րտեղ ես ապրում։

—Վորբ եմ։ Ապրում եմ Ռուբենի փողոցում։

—Ո՞ւմ մոտ։

—Սարգիս Վանեցյանի։

—Նա ինչո՞վ է զբաղվում։

—Սպեկուլյանտ է։

—Սպեկուլյա՞նտ,—հարցրեց պետը, իսկ դու ինչո՞ւ յես նրա մոտ ապրում։

—Նա ինձ փողոցից վերցրեց։

—Ծառայո՞ւմ ես տանը։

—Տանն էլ, ամեն տեղ էլ. ամբողջ օրը „պապըռոզ եմ ծախում։

— Նրա՞ համար։

—Այո. մենակ յես չեմ. հինգ հոգի յենք, ամբողջ օրը ծախում ենք, գիշերը գոմում քնում. վոչ մի օր էլ կուշտ հաց չենք ուտում. ամեն օր էլ մեզ ծեծում է... Վրա տվեց Համոն, ուրախանալով, վոր մեկը իր կյանքով հետաքրքրվում է։

Պետը բարկացած՝ սեղմեց շրթունքները և հոնքերը կիտեց։ Համոն վախեցած լռեց։

—Իսկ դու և քո ընկերները կուզեյի՞ք մանկատանը ապրել։

Համոն փայլեց։

—Այո, թող վորբանոցում ամբողջ օրը բանեցնեն, բայց գիր սովորեցնեն ու պատկոմ լինենք։

Պետը ինչ-վոր բան էր մտածում։

—Լա՜վ, ես կխոսեմ մանկատների վարիչի հետ։ Կարծեմ մի վորբանոցում տեղ կա։ Վաղը ժամի 1-ին արի, պատասխանը իմացիր։ Իսկ այդ սպեկուլյանտի հասցեն տուր։

— Ռուբենի փողոց, № 79, Սարգիս Վանեցյան. ամենքը ճանաչում են, շատ հարուստ է։

— Վարդգե՜ս—կանչեց պետը—այս հասցեյով գնա և իմացիր, թե քանի վորբեր են ապրում այդ սպեկուլյանտի մոտ և դրանց աշխատանքը նա ինչպես է շահագործում։ Պատասխանը այսօր անհրաժեշտ է։

Յերբ Համոն ընկերներին պատմեց, բոլորի դեմքն էլ փայլեց։

Պետական մանկատուն ընկնելը նրանց համար յերջանկություն էր. այնտեղ չեյին ծեծում, դպրոց եյին ուղարկում, ամենքը պատկոմական մարզանքներին մասնակցում եյին, մաքուր հագնվում, կերակրվում...

—Տղե՜րք, այ կճաքի ծուռ Սաքո՜ն.—ասաց մեկը։

Ծուռ Սաքո—նրանք իրենց խաղեյինին եյին ասում, ծուռ վոտի պատճառով։

—Թող տրաքի՛.—վրա բերեց մյուսը.—վոր կառավարությունը իմանա, թե վոնց է մեզ ծեծում, Չեկա կտանի՛։

— Եսոր փախչե՞նք—հարցրեց մեկը։

—Չէ՛, ջանըմ—ասաց Համոն,—սպասեք, վաղը պատասխանը իմանամ, նոր։

Մյուս օրը ժամը 1-ին Համոն ներս մտավ շտաբը. սիրտը թրթռում էր. ընկերները սպասում եյին դուրսը։

— Գնա՛նք ինձ հետ մանկատների վարիչի մոտ,—ասաց պետը։

Համոն պետի հետ գնաց Լուսժողկոմատ, մանկատների վարիչի մոտ։

— Հա՛, ասաց վարիչը, այսօր ձեզանից յերեքը կարող են մտնել մանկատուն, իսկ յերկուսը հետո...

— Չէ, էդպես չենք կարող, շշնջաց Համոն վախվխելով։

— Ինչո՞ւ։

— Վոր յերեքս գանք, խաղեյինը են յերկուսին շատ կծեծի. միասին մի քանի որ սպասենք, վոր միասին գանք։

Վարիչը նայեց նրան։

— Ապրես, տղա, վոր մտածում ես ընկերիդ մասին. լավ, թող քո ասածը լինի. հինգդ էլ վաղը յեկեք, հենց վաղն էլ մանկատուն կմտնեք...

— Իսկ խաղեյինը մեզ յետ չի՞ տանի։

— Թող մի քիթը ցույց տա...

Մյուս որը հինգն էլ վաղ առավոտյան, առանց ծխախոտի արկղները վերցնելու, կամացուկ անհետացան գոմից ու դեպի Լուսժողկոմատ վազեցին։

Դեռ շուտ եր. նրանք բակում նստեցին սպասելու։

— Աղչի, Անգին,—կանչեց խաղեյինը—են շան լակոտները քնած են դեռ, գնա զարթեցրու, շուտ գնան առևտրի. ձրիակերնե՜ր.. յես ձե՜ր...

Անգինը վերադարձավ, ասաց, վոր գոմում վոչ վոք չկա։ Խաղեյինը զարմացավ, կատաղած ինքն էլ գոմը գնաց. լուցկի վառեց, տեսավ՝ խոտի վրա վոչ վոք չկար։

— Ա՜հ, սպասի՛ր, յես կքերթեմ եսոր դրանց կաշին... Ձրիակերներ, շան...

Բայց... էլ քերթել չեր կարող—ձեռքը չեր հասնի։ Այդ որը հնգին էլ մանկատուն ընդունեցին, լողացրին, մաքուր շորեր ավին, կերակրեցին։

— Առայժմ անկողիններդ հատակին գցեք.—ասաց կառավարչուհին։

— Վոչինչ...

Խեղճ յերեխաները ուրախությունից խելքները կորցրել եյին։

— Ինչ լա՜վ է.—շշնջում եյին իրար ականջի։

Հինգն էլ դպրոց ընդունվեցին, չնայած վոր տեղ չկար. իրարից բաժանվել չեյին ուզում. ենքա՛ն ուսուցչին խնդրեցին, վոր ընդունեց։

Մի ամիս անց, յերբ պատկոմների հետ շարքերով անցնում եյին «Կոմմունարների այգու» մոտով, նրանք տեսան «Ծուռ Սաքոյին»։

Այժմ նա միանգամայն անվտանգ եր։ Յերեխաները ժպտալով իրար նայեցին։

3. Աշխատանքի յերգը

Հ. Հակոբյան

Մի յերգ գիտեմ յես աննման—
հզոր մուրճի թափի նման,
վորոտի պես հատու, խրո՛խտ
մի յերգ գիտեմ յես աննման։

Ծնվել է նա մութ հանքերի
մետաղակուռ յերակներից
ու ձայն առել քլունգների
ցասկոտ ու շեշտ հուր-զարկերից։

Սնունդ առել, ջիղ ու արյուն՝
բանուկ, ուժեղ բազուկներից.
գործարանը խանդ ու ավյուն
շնչել նրան իր ժխորից։

Հմայք ունի յերգս այնպես,
հոգսի ժամին թե վոր յերգես՝
թախիծ ու վիշտ կչքանա—
լքված հոգուն նեցուկ է նա։

Հե՜յ, իմ յերգը միշտ աննման—
հզոր մուրճի թափի նման,
վորոտի պես հատու, խրո՛խտ—
մի յերգ գիտեմ յես աննման։

---

4. Եսասեր հսկան

Օ. Ուայլդ

1

Մի հսկա ուներ մեծ, հրաշալի պարտեզ։ Այդպիսի գեղեցիկ պարտեզ վոչ մի տեղ չկար։ Գույնզգույն անուշահոտ ծաղիկներ փռված եյին մշտադալար կանաչների մեջ։ Սիրուն թռչունները շարունակ ծլվլլում ու յերգում եյին՝ ծառից ծառ թռչկոտելով։ Գարնանը բոլոր ծառերը ծածկվում եյին վարդագույն ու սպիտակ ծաղիկներով և յերեխաները դպրոցից վերադառնալով՝ ուրախ-ուրախ խաղում եյին նրանց ստվերի տակ։

— Վորքա՜ն լավ է այստեղ, ասում եյին նրանք։

Յերեխաները հսկայից չեյին վախենում, վորովհետև նա տանը չեր։

Ասում եյին, վոր նա գնացել է հյուսիս իր բարեկամի մոտ և այլ ես չի վերադառնա։

Բայց ահա մի որ լուր տարածվեց, թե հսկան վերադարձել է

Յերբ յերեխաներն յեկան պարտեզ, հսկան սաստիկ բարկացավ և գոռաց.

— Ի՞նչպես եք համարձակվում ուրիշի պարտեզը մտնել։ Այս պարտեզը իմն ե և բացի ինձանից վոչ վոք իրավունք չունի ոգտվել նրանից։

Յեվ նա պարտեզի շուրջը բարձր պարիսպ շինեց և դռան վրա գրեց. «Ուրիշի սեպհականության ապահովությունը խանգարողը խիստ կպատժվի»։

Հսկան սաստիկ յեսասեր եր, այսինքն բացի իրանից վոչ վոքի չեր սիրում և վոչ վոքի մասին չեր մտածում։

Այդ որվանից յերեխաները զրկվեցին իրենց գեղեցիկ խաղատեղից։ Փոշոտ փողոցը նրանց դուր չեր գալիս. նրանք տխուր նայում եյին պարտեզի բարձր պարիսպներին ու փակ դռանը և ա՜խ քաշելով ասում.— Վո՞րքան լավ եր այնտեղ, պարտեզում։

Գարունն յեկավ. ամբողջ բնությունը զարդարվեց կանաչով ու գույնզգույն ծաղիկներով։ Բայց հսկայի պարտեզում ձյունը դեռ չեր հալել։ Թռչուններ չկային, վոր յերգեյին, յերեխաներ չկային, վոր ուրախ ծիծաղեյին ու խաղային։ Պարտեզը լուռ եր ու մռայլ։

— Զարմանալի յե, ինչու գարունը մոռացել ե իմ պարտեզը, ասում եր յեսասեր հսկան, դուրս նայելով ամրոցի պատուհանից։

Գարունը չմտավ նրա պարտեզը և բարձր պարիսպների յետևից անցավ գնաց։ Հասավ ամառը. նա յել մի կարճ ժամանակով ներս նայեց, տեղ-տեղ մի քիչ կանաչ յերևացրեց ու նույնպես գնաց. այսպես անցավ մի ամբողջ տարի։ Հսկայի պարտեզում շարունակ ձմեռ եր։

Նա զարմանում եր և չեր հասկանում դրա պատճառը։

Մի գարնանային առավոտ հսկային թվաց, թե նրա պատուհանի տակ նվագում են. մոտեցավ, բաց արեց պատուհանը և սաստիկ ուրախացավ. դա յերաժիշտ չեր, վոր նվագեր, այլ մի փոքրիկ գեղեցիկ թռչուն եր ծլվլում նրա պարտեզում. շատ ժամանակ ե՝ նա թռչնի ձայն չեր լսել։ Հսկան գլուխը դուրս հանեց լուսամուտից և ինչ տեսավ։ Կանաչ գարունը ներս ե մտել նրա պարտեզը, ծառերը ծաղկել եյին, գույնզգույն ծաղիկները տարածել եյին իրենց անուշ հոտը։

— Վերջապե՜ս, գարունն յեկավ, բացականչեց հսկան և իջավ պարտեզ. այստեղ զարմացած կանգ առավ։ Պատի նեղ արանքից յերեխաները ներս եյին մտել և բարձրացել ծառերը։ Ամեն մեկը մի ծառ եր ընտրել, բարձրացել, նստել եր նրա ճյուղին և թաքնըվել նորաբողբոջ ծաղիկների ու տերևների յետևը։ Պարտեզն այնպես եր ուրախացել սիրելի հյուրերի գալուն, վոր սիրտը բացվել եր կանաչով ու ծաղիկներով։ Ծառերն ու ծաղիկները ժպտում եյին, իսկ թռչնիկներն ուրախ ծլվլում։ Դա մի հրաշալի տեսարան եր. հսկան հիացած կանգնել եր և չեր կարող աչքը հեռացնել այդ գեղեցիկ պատկերից։ Հանկարծ նա նկատեց, վոր մի փոքրիկ մանուկ կանգնել ե ծառի տակ և լաց ե լինում։ Նա չեր կարողացել բարձրանալ ծառը։ Յեվ այդ ծառը դեռ չեր կանաչել։ Հսկան հուզվեց. նրա սիրտը մեղմացավ։

— Մի՞թե յես այնպես յեսասեր եմ յեղել, վոր չեմ թույլ տվել յերեխաներին մտնել իմ պարտեզը, ասաց նա. այսուհետև յես կքանդեմ պարիսպը և իմ պարտեզը կդարձնեմ յերեխաների մշտական խաղատեղի։

Հսկան մոտեցավ լացող մանկանը և բարձրացնելով նրան, նստեցրեց ծառի ճյուղին. ծառն իսկույն կանաչեց և ծաղկեց։ Մանկիկն ուրախանալով՝ ձեռքը մեկնեց, փաթվեց հսկայի վզովը և համբուրեց.

Մյուս յերեխաները, վորոնք հսկային տեսնելով վախեցել փախել եյին, այդ բանը տեսնելով՝ սիրտ առան և նորից ներս վազեցին։

Այդ որվանից յերեխաներն ամեն որ գալիս եյին պարտեզ։ Բարի հսկան խաղում եր նրանց հետ, զբաղեցնում և զվարճացնում նրանց։

5. Արտավազդ

Հովհ. Հովհաննիսյան

Զարկեցե՛ք, դարբիննե՛ր, կռանը սալին,
զարկեցե՛ք կռանը — շղթայքն ամրանան,
անիծյալ արքայի կապանքն ամրանան.
զարկեցե՛ք, դարբիննե՛ր, կռանը սալին։

Ահարկու ամպերը յեկան ժողվեցան,
ծեր Մասյաց ճակատին սև քող փաթթեցին,
գոռում է փոթորիկ գազանի նման,
հառաչում, սուլում է կատաղած քամին։

Զարկեցե՛ք կռանը. խորունկ քարայրից
ահա չար հողմի հետ հառնում են ձայներ...
Ցոլացավ փայլակը — արքայի աչքից
դեպի վեր թռչում են բարկության կայծեր։

Կամի նա յելանել վրեժխնդիր հոգով
իր անվերջ տանջանքի թույնը մահաբեր
աշխարհի չորս կողմը շաղ տալու մտքով,
բայց ամուր են նրա ծանր շղթաներ։

Մաերիմ դամփռները կրծում են կապանք,
կրծում են անդադար կապանքն արքայի...
Արտավա՛զդ, վերջ չունի հոգուդ տառապանք,
Յեվ դեռ շատ հեռու յե վախճանն աշխարհի։

Յեվ անզոր չարության քո կուռ հարվածներ
դեռ պիտի փշրվին մեր մուրճի տակին —
մենք սպասում ենք դեռ ևս գեղեցիկ օրեր,
դեռ հաշտ է յերկինքը մեղսոտ աշխարհին։

Բայց յեթե քարացած մենք չենք լսելու
նոր կյանքի կոչն հուժկու, և վերածնության
սրբարար ավազան մեզ չի փրկելու, —
Արտավա՛զդ, փշրվի թող մեր կուռ կռան։

Մենք էլ չենք զարկելու յերկաթի սալին,
թող կրծեն դամփռերդ վոտքիդ շղթաներ,
արձակվին բազուկներդ, և դու աշխարհին
դուրս արի բերելու կոտորած, ավե՛ր...

Բայց վո՛չ. հավատում ենք դեռ մենք փրկության,
մեզ մի նոր յերկնքից նոր լույս կբացվի,
և տեսնում ենք ահա արդեն ծիածան
մենք ազա՛տ, լուսավո՛ր մի նոր վիճակի...

Զարկեցե՛ք, դարբիննե՛ր, կռանը սալին,
զարկեցե՛ք կռանը — շղթայքն ամրանան,
անիծյալ արքայի կապանքն ամրանան.
զարկեցե՛ք, դարբիննե՛ր, կռանը սալին։

6. Արևը

Արագի

... Լսո՞ւմ եք, պարոն, կանգնեցե՛ք մի փոքր, յես կպատմեմ բոլորը, սկզբից... Դուք գնո՞ւմ եք... Լավ, յես կպատմեմ ծաղիկներին ու խոտերին...

— Սիրո՛ւն կակաչներ, դե լավ լսեցեք արևի պատմությունը։

— Աղջիկս հիվանդ էր. գիտե՞ք, նա էլ ձեզ նման գեղեցիկ մի աղջիկ էր, սիպտակ-սիպտակ դեմքով, փայլուն վոսկե մազերով...

Բժիշկը ներքև իջավ մեր բնակարանը. նա տխուր... ինչո՞ւ... հա, հիշում եմ... Նա չեր սիրում ներքևի հարկերը... ուզում էր փախչել ներքևի հարկերից...

Նա իջավ ներքև, նայեց իմ աղջկան, նայեց սենյակի պատերին։

— Խոնավ է, ասաց, պետք է փոխեք բնակարանը, պետք է արևոտ սենյակ ճարեք։

— Քանի՞ յերեխա ունեք, հարցրեց։

— Յերեքը ունեյինք, մեռան. այս մեկն է մնացել... ազատեցեք իմ աղջկան. նա մեր տան հոգին է...

Նա ինչ-վոր դեղ գրեց և տխուր դեմքով դուրս գնաց։

— Հայրիկ, ի՞նչ գրեց բժիշկը, հարցրեց աղջիկս։

— Արև գրեց, սիրելիս, արև գրեց, վոր քեզ վրա փայլի և դու լավանաս...

Ու յես գնացի արև փնտռելու, գնացի շատ հեռու և վերջապես գտա արևոտ բնակարան...

— Սիրելի՛ կակաչներ, դուք, արևի զավակներ, ավելի լավ չե՞ր լինի ձեզ մոտ բերեյի իմ վոսկեծամիկ աղջկան... Բայց հա՛, գիտեմ, դուք մեզ հաց չեյիք տալ, դուք իմ Լուսիկին հաց չեյիք կարող տալ...

— Լսեցե՛ք, յես դեռ չեմ վերջացրել...

Մյուս առավոտ յես Լուսիկին պիտի տանեյի արևի տունը. բայց յերբ լուսացավ, նա ինձ կանչեց, ձեռքս բռնեց ու փակեց աչքերը...

Հետո յեկան մարդիկ և նրան տարան... մենք չեյինք թողնում, բայց նրան տարան թաղելու...

Յեվ յերբ վոսկեծամիկ աղջիկս հեռացավ մեզանից, մեր տան հոգին էլ նրա հետ գնաց...

Մենք բոլորս այրվեցինք լաց լինելուց, և յես դարձա արևի հիվանդ...

Յես միշտ գնում եյի, նստում նրա գերեզմանի մոտ և սպասում արևածագին։ Ու միշտ տեսնում եյի իմ Լուսիկին արև գրկած և իր մազերը նրա վրա փռած։

Յերբ պատմեցի իմ տեսածը մորս ու կնոջս, նրանք չհավատացին. նրանք կարծում եյին, թե յես խելագարվել եմ և վողբում եյին կարմրած, ցամաքած աչքերով։

Բայց մի որ էլ յես բարձրացա արևի մոտ։

— Հզո՛ր արև, ասացի, մի մեծ գանգատ ունեմ քեզանից. ինչո՞ւ դու մի շողք խնայեցիր իմ աղջկան, ինչո՞ւ դու սպանեցիր և տարար իմ Լուսիկին։

Նա տխրեց ու մթնեց։ — Գնա՛, ասաց, գնա հայտնիր աշխարհին, ասա՝ վերևի հարկը արևի շողքերը խլեց, սովեր ձգեց ներքևի հարկին և սպանեց էն վոսկեհեր աղջկան...

---

7. Հին որհնություն

Հովհ. Թումանյան

կանաչ, վիթխարի ընկուզենու տակ,
իրենց հասակի կարգով, ծալպատակ
միասին բազմած,
մի շրջան կազմած
քեֆ եյին անում
և ուրախանում
մեր հսկա պապերն ու մեր հայրերը՝
գյուղի տերերը։

Մենք՝ առույգ ու ժիր գեղջուկ մանուկներ՝
յերեք դասընկեր,
նրանց առաջին գլխաբաց կանգնած,
ձեռքներս խոնարհ սրտներիս դրած
զի՜լ, ուժեղ ձայնով նրանց սպասում—
տաղ եյինք ասում։

Յերբ գվարթաձայն մեր յերգը լռեց,
մռայլ թամադեն բեխերն ոլորեց,
նրա հետ վերցրին լիք բաժակները
բոլոր մեծերը
ու մեզ որհնեցին. «Ապրե՛ք, յերեխե՛ք,
բայց մեզ պես չապրեք»...

Ժամանակ անցավ, նրանք էլ անցան,
գնարթ յերգերս վշտալի դարձան.
և յես հիշեցի մեր որբ լալիս,
թե մեզ օրհնելիս՝
ինչու ասացին. «Ապրեք, յերեխեք,
բայց մեզ պես չապրեք»...

Խաղաղություն ձեզ, մեր անբախտ պապեր,
ձեզ տանջող ցավը մեզ էլ է պատել։
Այժմ, տխրության թե քեֆի ժամին,
մենք էլ, օրհնելիս մեր զավակներին,
ձեր խոսքն ենք ասում. «Ապրեք, յերեխեք,
բայց մեզ պես չապրեք»...

8. Թշնամիները

Ճակատամարտը վերջացավ։ Հեռվում դեռ լսվում էին թըն-դանոթների դղրդյունը և հաղթանակող զորքերի համազարկերն ու փողերը։ Կովի դաշտում կոտրված սայլերի, թափթփված հըրացանների, փշրված սրերի, քանդված չափարների մեջ ընկած էին սպանվածների կույտեր, մարդկանց և ձիերի դիակներ, այլանդակված, հոշոտված. այդ կույտերի միջից տեղ-տեղ լսվում էին վիրավորների խոր հառաչանքներ։

Մի չորացած առվի յեզերքին, խիտ յեղինջի մեջ, իրարից ոչ հեռու պառկած էին յերկու զինվոր, յերկուսն էլ ծանր վիրավորված։

Նրանց համազգեստները տարբեր էին։ Մի քանի ժամ առաջ դեռ կատաղի թշնամիներ էին, իրար դեմ կանգնած, պատրաստ սվիններով միմյանց խողխողելու, իսկ այժմ...

59294.66

Այժմ լուռ նայում էին իրար և այնպես ուզում էին խոսեն, գոնե մի բան ասեն, բայց ափսոս որ իրար լեզու չէին հասկանում։ Հանկարծ ավելի յերիտասարդը դժվարությամբ մի յերկու քայլ հազիվ սողեսող տալով մոտեցավ իր թշնամուն և մեկնեց նրան իր զինու սրվակը. հետո յել աշխատում եր թաշկինակով կապել նրա վերքից հոսող արյունը։ Բայց ոչինչ դուրս չեկավ. միայն ինքն ավելի թուլացավ ու պառկեց։

Յերբեմն մեկը, յերբեմն մյուսը ձիգ էին թափում վեր բարձրանալու մի քիչ՝ թևի վրա, օգնության էին կանչում, բայց նրանց կանչերին մոտերքից պատասխան եր տալիս միմիայն փորը ճղված մի ձիու աղեկտուր խրխինջը։

Վերջապես յերիտասարդը հոգնած և թուլացած քուն մտավ։ Վրա հասավ պարզկա գիշերը. ցուրտ քամին գալիս փչում եր հեռավոր լեռներից։ Կովի դաշտում ավելի ու ավելի նվազում էին հառաչանքները. վիրավոր ձին էլ չեր խրխնջում։

Կես գիշերին ավելի տարեց վիրավորը կրկին մի փորձ արավ նստելու, բայց իզուր. արդեն բոլորովին արյունաքամ եր յեղել։ Մահվան սառնությունը սկսել եր պատել նրա անդամները։

Աչքը գցեց իր հարևանի վրա։ Յերիտասարդ վիրավորը քնած եր խորը և մի տեսակ ակամա կուչ եր յեկել գիշերվա կծող ցրտից։

— Պիտի սառչի,— անցավ հասակավորի մտքովը.— անպատճառ պիտի սառչի խեղճը. ինչքա՜ն էլ յերիտասարդ է։

Յերբ արշալույսի դեմ վիրավորներին հավաքող խումբը մո-

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР
ՀԽՍՀ ԳԱՆ ԿԻ ԴԱՐԱՆ ГСС Библиотека ZUUՌ-Арм ССР Им А Мясникяна Մ.ՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
БИБЛИОТЕКА ИНСТИТУТА

տեցավ նրանց, յերիտասարդը զարթնեց, ուզեց բարձրանալ ու զարմացավ, վոր իր վրա մի վերարկու կար գցած։

Նայեց շուրջը, նայեց հարևանին։ Հարևանը մեռած եր և պառկած առանց վերարկվի. Նրա վերարկուն եր իր վրա։

Ի՜նչ չարչարանք պիտի կրած լիներ այդ հոգևարքի մեջ ա-րյունաքամ յեղող մարդը, մինչև վոր վերարկուն հանել կարողա-նար և ծածկեր մոտը պառկած վիրավորին։

Յերբ յերիտասարդին բարձրացնում եյին վոր տանեն, նա խորին հուզմունքով ու յերախտագիտությամբ նայում եր «Թըշնամու» տանջված ու կարկամած յերեսին ու չեր կարողանում հայացքը հեռացնի նրա կիսախուփ մարած աչքերից։

---

9. Մանուկ Դավիթը

(Հայկական հին վեպից)

Հ. Թումանյան

1

Եօ դարում Մըսր անհաղթ ու հզոր
Մսրա-Մելիքն եր նստած թագավոր։
Հենց վոր իմացավ էլ Մհեր չկա,
վեր կացավ կռվով Սասունի վրա։
Ջենով Օհանը ահից սարսափած՝
թշնամու առաջն յելավ գլխաբաց,
աղաչանք արավ, ընկավ վոտները.
— Դու յեղիր, ասավ, մեր գլխի տերը,
ու քու շվաքում քանի վոր մենք կանք,
քու ծառան լինենք, քու խարջը միշտ տանք,
միայն մեր յերկիրը քարուքանդ չանես,
ու քաղցր աչքով մեզ մոտիկ անես։
— Չէ՛, ասավ Մելիք,
քու ամբողջ ազգով
անց պիտի կենաս իմ թրի տակով,
վոր եզուց-ելոր ինչ էլ վոր անեմ,
վոչ մի սասունցի թուր չառնի իմ դեմ։
Ու գնաց Օհան, բոլոր բովանդակ
Սասունը բերավ, քաշեց թրի տակ.
մենակ Դավիթը, ինչ արին, չարին,
մոտ չեկավ դուշման Մելիքի թրին,

Յեկան քաշեցին, թե զոռով տանեն,
թափ տվավ մարդկանց
ձգեց դես ու դեն։
Փոքրիկ ճկույթը մի քարի առավ,
տպառած քարից կրակ դուրս թռավ։
— Պետք է ըսպանեմ
էս փոքրիկ ծուռին, —
ասավ թագավորն իրեն մեծերին։
— Թագավո՛ր, ասին, դու եսքան հզոր,
թրիդ տակին է վողջ Սասունն եսոր,
ինչ պետք է անի քեզ մի յերեխա,
թեկուզ իր տեղով
հենց կրակ դառնա։
— Դո՛ւք գիտեք, — ասավ
Մսրա թագավոր, —
Բայց թե իմ գլխին
փորձանք գա մի որ,
եսօրը վկա,
սրանից կգա։

2

Էս վոր պատահեց,
մեր Դավիթ հսկան
մի մանուկ եր դեռ
յոթ-ութ տարեկան.
մանուկ եմ ասում, բայց ենքան ուժեղ,
վոր նրա համար թե մարդ, թե մժեղ։
Վա՜յ, է խեղճ վորբին աշխարքի վրա,
թեկուզ աշխարքի կորյուն լինի նա։
Ջենով Օհանին ուներ մի չար կին։
Մին յերկու լսեց, մի որ էլ կարգին
իրեն մարդու հետ սկսեց կռվել.
— Յես մենակ հոգի, հազար ցավի տեր,
ինչ էս ուրիշի յեթիմը բերել,
նստեցրել գլխիս պարապ հացակեր...
հոգեմ պլուխը... յես գերի հո չեմ,
ամենքի քեֆի յետևից թռչեմ...
մի կուռ կորցրո՛ւ, կարգի՛ր մի բանի,
գնա իր համար աշխատանք անի...»։
Ու հետո սկսավ վողբալ ու կոծել,
իր որը սգալ, իր բախտն անիծել,
թե անբախտ յեղավ աշխարքի միջում,

վո՛չ մի տեր ունի, վոչ մարդն է խղճում…
Ու գնաց Ոհան յերեխի վոտի
մի զույգ վոտնաման բերավ յերկաթե,
յերկաթի մի կոռ շալակին դրած,
ու արավ Սասմա քաղքի գառնարած։

3

Փշեց գառները մեր հովիվ հսկան,
յելավ Սասունի սարերն աննման.
— Ե՛յ, ջա՛ն սարեր,
Սասմա սարեր…
վոր կանչեց, նրա ձենից ահավոր
գղորդ-դըմբդըմբոցն ընկավ սար ու ձոր,
վայրի գազաններ բներից փախան,
քարեքար ընկան, դադարկուն յեղան։
Դավիթը ընկավ նրանց յետեից,
վորին մի սարից, վորին մի ձորից
աղվես, նապաստակ, գել, յեղնիկ բռնեց,
հավաքեց բերավ, գառներին խառնեց,
իրիկվան քշեց վողջ Սասմա քաղաք։
Կաղկա՛նձ ու վոռնո՛ց, աղմո՛ւկ, աղաղա՛կ.
քաղքցիք հանկարծ մին էլ էն տեսան,
գալիս են հրես անհամար գազան։
— Վա՜յ, հարա՜յ, փախե՛ք…»
Մեծեր, յերեխեք
սրտաճաք յեղած, գործները թողած,
վո՛րը տուն ընկավ,
վո՛րը ժամ, խանութ,
ու ամուր փակեց
դուռն ու լուսամուտ։
Դավիթը յեկավ կանգնեց մեյդանում.
— Վա՜հ, էս մարդիկը
ի՛նչ վաղ են քնում։
Հե՜յ ուլատեր, հե՜յ գառնատեր,
յելե՛ք շուտով բացե՛ք դռներ.
ով մինն ուներ, տասն եմ բերել,
ով տասն ուներ, քսան արել…
Շուտով յելե՛ք, յեկե՛ք տարե՛ք,
ձեր գառն ու ուլ զատերն արե՛ք»։
Տեսավ՝ չեն գալի,
դուռ չեն բաց անում,
ինքն էլ մեկնըվեց քաղքի մեյդանում,

գլուխը դրավ մի քարի, մնաց
ու մուշ-մուշ քնեց մինչև լուսաբաց։
Լուսին՝ իշխաններն յելան միասին,
գնացին Ձենով Ոհանին ասին.
— Ամա՜ն, քե՛զ մատաղ,
ա՛յ Ոհան ախպեր,
Մեր գառն ու մեր ուլ
թո՛ղ մնան անտեր,
միայն սրանից ազատ արա մեզ.
վո՛չ գառն է ջոկում,
վոչ գելն ու աղվես,
էս քաղքի գլխին փորձանք կբերի,
գելերոց կանի, կտա կավերի։

4

Յելավ Դավթի մոտ գնաց Ոհանը։
— Հը՛, Դավիթ ասավ, վո՞նց է քո բանը։
— Հորեղբայր Ոհան, շատ է դժար բան.
էն կարմիր, անպոչ գառները վոր կան,
խելոք են, ամա պոչավոր գառներ
ցրվեցին, փախան վողջ սարերն ի վեր,
էնքան վազեցի, վոր յելավ հոգիս,
էլ իսկի տրեխ չմնաց հագիս։
— Դավի՛թ ջան, ասավ, էդ շատ է դժվար.
արի նետ-աղեղ շինեմ քեզ համար,
նետ-աղեղդ ա՛ռ, գնա՛ վորս արա,
ման արի ազատ սարերի վրա։
Նետ-աղեղն առավ Դավիթ Ոհանից,
հեռացավ քաղքից, քաղքի սահմանից
ու դառավ վորսկան։ Գնաց մի կորկում
լոր եր սպանում, ճնճղուկ եր զարկում,
մթանը գնում իրան հոր ծանոթ
աղքատ, անվորդի մի ծեր կնկա մոտ,
վիշապի նման յերկար, ահագին
մեկնվում, քնում կրակի կողքին։
մի որ էլ, յերբ վոր վորսից դարձավ,
պառավը վրեն սաստիկ բարկացավ.
— Վա՜յ Դավիթ, ասավ, մահս տանի քեզ,
դո՞ւ պետք է էն հոր զավակը լինես։
Ձեռից ու վոտից ընկած մի ծեր կին,
էս եմ ու էն արտն աստրծու տակին,
ինչո՞ւ յես գնում տափում, տրորում,

իմ ամբողջ տարվա ապրուստը կտրում։
Թե վորսկան ես դու. Նետ-աղեղդ ա՛ռ,
Ծծմակա գլխից մինչև Սեղանսար
քու հերը ձեռին մի աշխարհ ուներ,
վորսով մեջը լի վորսի սար ուներ,
յեղնիկ կա էնտեղ, այծյամ ու պախրա.
կարո՞ղ ես, գնա էնտեղ վորս արա։
—Ի՞նչ ես, ա՛յ պառավ, էլ ինձ անիծում,
յես ջահել եմ դեռ, յես նոր եմ լսում.
վո՞րտեղ է հապա սարը մեր վորսի...
—Գնա, հորեղբայրդ՝ Ոհանը կասի։

5

Հորեղբոր շեմքում մյուս որը ծեգին
Դավիթը կանգնեց աղեղը ձեռքին։
—Հորեղբա՛յր Ոհան, ինչո՞ւ չես ասել,
իմ հերը վորսի սար է ունեցել,
այծյամ կա էնտեղ, յեղջերու, կխտար.
վե՛ր կաց, հորեղբայր, տա՛ր ինձ վորսասար։
—Վա՛յ, կանչեց Ոհան, եդ քո խոսքը չէր,
եդ ո՞վ քեզ ասավ, լեզուն պապանձվեր։
էն սարը, վորդի գնաց մեր ձեռից,
էն սարի վորսն էլ գնաց էն սարից։
Էլ չկան այծյամ, յեղջերու, կխտար.
Քանի լուսեղեն քու հերը դեռ կար,
Էյ դիդի որեր, վո՞րտեղ եք կորել,
յես շատ եմ էնտեղ վորսի միս կերել...
քո հերը մեռավ. աստված խռովեց,
Մսրա Թագավոր զորքեր ժողովեց,
յեկավ մեր յերկիր քարուքանդ արավ,
էս սարի վորսն էլ թալանեց, տարավ,
յեղնիկը գնաց, յեղջերուն գնաց...
մեր գիրն էլ հալբաթ էսպես եր գրած։
Անցել է վո՛րդի, քու բանին գնա,
Մսրա Թագավոր ձենդ կիմանա...
—Մսրա Թագավոր ինձ ի՞նչ կանի վոր...
յես ի՞նչ եմ հարցնում Մսրա Թագավոր...
Մսրա Թագավոր թո՛ղ Մըսր կենա,
իմ հոր սարերում ի՞նչ գործ ունի նա...
վե՛ր կաց, հո՛րեղբայր, նետ-աղեղդ ա՛ռ,
կապարճդ կապիր, գնանք վորսասար։

Ցելավ Ոհանը ճարը կտրված,
գնացին տեսան՝ էլ ի՞նչ վորսասար.
անտառը ջարդած, պարիսպն ավերած,
բուրգերը արած գետնին հավասար...

---

10. Հաջողվեց

Սիմակ

1

Լևոնը, մի կարմրերես, ժիր պատանի, դարբնի խփկան մեծ բահով, արագ ու թափով փորում եր իրենց կալի յետևի ազատ տարածությունը, վոր միշտ անոգուտ ընկած եր, չոր ու անպտուղ։ Քրտինքը վողողել եր նրա դեմքն ու մազերը խճճել ճակատին։

— Եդ ի՞նչ ես անում, Լևիկ, ինչո՞ւ յես փորում, հարցրին նրան Հեղուշն ու Անիկը, վոր անցնում եյին այդտեղով դաշտը գնալու, բանջար ու ծաղիկ քաղելու։

Լևոնը գլուխը բարձրացրեց և շատ ուրախացավ, տեսնելով իր ընկերուհիների ժպտուն յերեսները։

— Ինչ եմ անո՞ւմ, աչքներդ լավ բաց արեք. ա՛յ, փորում եմ, վոր բոստան անեմ. տեսեք, թե ինչքան լոբի, բողկ ու դդում եմ ցանելու է... բա խիա՞րը... պա՛հ, պա՛հ, պա՛հ, աղջիկերք, էնքան խիար ուտեցնեմ ձեզ վո՛ր...

— Ի՜... խելոք Լևիկ, վո՞նց վոր տեսնում եմ, ընկեր Արդարի տված բնագիտական դասերը զուր են անցկացել քեզ համար, խոսեց Հեղուշը, վոր ընկերներից ավելի զարգացած եր։

— Բա դու չե՞ս տեսնում, վոր էստեղ, էս չոր տեղը առանց ջրելու բան չի բուսնի. իսկ աղբրի ջուրը էստեղ չի հասնում։ Էնպես վոր ափսո՜ս մեր սիրուն Լևիկի քրտինքին։

— Եդ ճիշտ է, Հեղուշ, բայց մի՞թե յես չեմ կարող աղբրից ջուր կրել ու ջրե՞լ... ինչ, դու կարծում ես՝ կծուլանա՞մ, թե՞ ուժս պակաս է։

— Ասենք, եդպես էլ կարելի յե, ցածրաձայն կմկմաց Հեղուշը...—Բայց Լևիկ, դա շատ դժվար կլինի քեզ համար։ Ա՛յ ինչ լավ կլիներ, Անիկ, յեթե Պուճուր ձորի ջրից առու լիներ հանած ու մեր գեղի վերևով անցկացրած։

— Ինչքան բոստաննե՜ր կշինեյինք։ Վոչ թե միայն Լևիկը, էն ժամանակ յես ու դու յել, Անիկ, ցանք կանեյինք և ծաղկանոցներ կսարքեյինք։

— Իսկապես է՛, խոսակցությանը խառնվեց և լռակյաց Անի-

կը, մեր մարագից ցած ահագին տեղ կա, ու դեռ շուրջն էլ պատած է, հիանալի բոստանի տեղ է։

— Իսկ մենք չե՞նք կարող առու հանել ու ջուր բերե՜լ... Ա՛յ, էս կալերի վերևով անցկացնել... Նորից խոսեց մտածկոտ Հեղուշը, ձեռքով ցույց տալով առվի ճանապարհը։

Հանկարծ Լևոնը գցեց բահը և ցատկեց աղջիկների մոտ։

— Գիտե՞ս, ինչ անենք. հենց էսօր ևեթ մեր ընկերներին հավաքենք խոսենք, համոզենք, մի յերկու հոգի ընտրենք, վոր գնան խորհրդի նախագահի մոտ ու մենք էլ ամեն օր դասերից հետո «շաբաթորյակ» անենք ու փորենք։

— Լա՛վ, դուք ձեր ծաղիկ քաղելը թողեք, յես էլ իմ բահը, գնանք։

Ու վազկոտված գնացին։



2

Հաջորդ օրը գյուղխորհրդի գրասենյակի առջև հավաքված մարդկանց խմբին մոտեցան Հեղուշն ու Լևոնը։ Նրանք համարձակ դիմեցին խորհրդի նախագահին, վոր չոր կազմվածքով, ցանցառ մորուքով ու խելոք հայացքով մի մարդ եր։

— Ընկեր նախագահ, խոսեց Լևոնը մի քիչ քաշվելով, մեր պատանեկական կազմակերպությունը վորոշել է Պուճուր ձորի ջրից առու հանել, գյուղի վերևով անցկացնել, վոր գյուղի չորս կողմը ծառեր գցենք ու բոստաններ շինենք։

— Վո՞նց, վո՞նց, ընդհատեց նախագահը հոնքերը կիտելով ու չիբուխին զոռ տալով։

Այս անգամ Հեղուշը բացատրեց մանրամասն ու կանոնավոր։ Քանի նա խոսում եր, նախագահի դեմքի արտահայտությունը փոխվում եր ու սիրալիր դառնում։

— Շա՛տ, շատ լավ եք միտք արել, յերեխեք։ Դուք վոր հիմիկուց եդպես բաներ անեք, են ա մեր աշխարհը կծաղկացնեք,— վերջը խոսեց նա հուզված։— Գնացեք, շինեցեք, միայն աշխատեք էնպես անել, վոր արտերը չտրորեք. շինեցեք, ձեզ մատաղ, էլի դուք...

3

Ճաշից հետո գյուղի 12-15 տարեկան բոլոր պատանիները, տղա թե աղջիկ, բահերով ու քլունգներով զինված, շարվեցին նախապես գծված առվի ուղղությամբ և յերգով, խաղով, կատակներով գործի կպան։ Ամբողջ գյուղը թամաշի յեկավ։ Բոլորն էլ հիացած խրախուսում եյին պատանիներին։ Ամբողջի շունչն ու վոգին Հեղուշն ու Լևոնն եյին, վորոնք և՛ փորում, և՛ խոսում, և՛ պարում, և՛ ամենքին սիրտ եյին տալիս, ամենքի համար գործիք գտնում, ամենքի հետ կատակներ անում։ Իսկ ընկեր Սրգարը ղեկավարում եր ամբողջ աշխատանքը։

Բոլորը ցնծության մեջ եյին։ Թե ինչ ուրախություն եր տուն դառնալիս, եդ արդեն ասել չի լինի։

4

Անցավ յերկու շաբաթ. առուն պատրաստ եր։ Ջուրը շատ հեշտությամբ գալիս անցնում եր գյուղի վերևով ու գնում թափվում եր մեծ ձորը։

Այժմ էլ սկսվեց մի յեռուն, մի տենդոտ աշխատանք՝ ծառեր տնկելու, պարտեզ շինելու։

Յեվ յեթե դու, ընթերցող, հուլիսին անցնելու լինեյիր այդ գյուղի վերևով, ուրախությանդ ու հիացմունքիդ չափ չեր կարող լինել։

—Կեցցե՛ մեր միությունը, կեցցե՛ մեր միացյալ աշխատանքը, ասում եյին պատանիները միմյանց և ուրախանում։

11. Մեկմայիսյան հիմնը

Վ. Կիրիլլով

Փառաբանեցե՛ք Մեկը Մայիսի—
վերջն է կապանքի, տոնն աշխատանքի.
փառաբանեցե՛ք Մեկը Մայիսի—
տոնը գարունքի և ազատ կյանքի։

Գործարաններից, ծխոտ վայրերից
յեկե՛ք ամենքդ տոնախմբության,
թափորե՛ր, յերկրի լիագոր դու տեր,
դու ազնիվ մարտիկ պրոլետարական։

Ուժգի՛ն—յերգիչնե՛ր բա՛րձր—դրոշակնե՛ր.
փա՛ռք մեծ Միության բյուր բանվորների,
փա՛ռք տվեք յերկրիս լեգեոններին՝
զորքին այս յուղոտ, մով բլուզների։

Փառաբանեցե՛ք Մեկը Մայիսի—
վերջն է կապանքի, տոնն աշխատանքի
փառաբանեցե՛ք Մեկը Մայիսի—
տոնը գարունքի և ազատ կյանքի։

Թարգմ. Դ. Դեմիրճյան

12. Գայլն ու գառը

Լաֆոնտեն

Մի որ գառը հեռանալով տնակից,
ջուր եր խմում սարից հոսող առվակից.
բայց կանգնած եր նրանից վերև քանի քայլ
մի վորս պտռող սոված գայլ,

վոր կատաղած գոչեց.—Ա՛յ դու անբես,
քի՛չ իմ ջուրը պղտորես։
Մի՞թե պիտի քեզ ների
դաս ու խրատ տամ խստորեն։
— Ա՛խ տե՛ր,—խեղճ-խեղճ գառն ասաց,—
յես քեզ յերբեք չեմ տեսած։
Բացի դրանից այսոր ել
յես չեմ կարող խմելուդ ջուրը պղտորել
այն պատճառով պարզապես,
վոր քեզանից վար եմ յես,
առվի ակն ել վերև է։
— «Բարբաջանքդ դերև է։
հիշում եմ, վոր դու հերու
ինձ շան բաժին կշինեյիր՝ չփախչեյի թե հեռու։

— Այդ յես չեմ, տեր.
կես տարեկան չեմ ել դեռ։
— Բաս յեղբայրդ ե արել դա։
— Յեղբայր չունեմ՝ հավատա։
— Մորեղբայրդ եր, կամ մի ուրիշ հարազատ։
— Մեռած մայրս վոչոք չուներ ինձնից զատ։
Մեղավոր չեմ
յես քո դեմ,
— Լո՛ւռ,
գլխացավանք մի՛ տալ դուր։
Հենց նրանով ես մեղավոր,
վոր իմ սոված փորին կեր ե հարկավոր։
Ասաց, բռնեց խեղճ գառնուկին հոշոտեց։
Իզուր թույլը ուժեղից գութ պաղատեց։

Թարգմ. Ն. Մամիկոնյան

---

13. Սլաքավարը

Ստանյուկովիչ

1

Յերիտասարդ չեր սլաքավար Իվան Գալկան—մռայլ, անհամբույր մի մարդ եր. կարծես ամենքից դժգոհ, մեկի վրա շարունակ բարկանալիս լիներ. այդ եր նրա դեմքի սովորական արտահայտությունը։

Վաղուց նա ծառայում եր այդ պաշտոնով և, պետք ե ասած, իշխանության աչքում լավ համարում ուներ։ Ծույլ, հարբեցող չեր Իվանը, յերբեք աշխատանքին չեր ուշացել, յերբեք և վոչ մի սխալ չեր արած։ Հեշտ չե սլաքավարի գործը. սոսկալի յե, յեթե աչքդ մի փոքր փակեցիր, կամ ուղին սխալ փոխեցիր, անուղղելի պատահարի, սարսափելի դժբախտության պատճառ պետք ե դառնաս։

Իվան Գալկան գիշեր-ցերեկ կանգնած իր սլաքի մոտ, հոնքերը կիտած այնպիսի լարված ուշադրությամբ և հուզմունքով եր դիտում մոտեցող գնացքը, կարծես մի բանից վախենալիս լիներ... Նա չեր սիրում, վոր այդ ժամին մեկը ձայն տար նրան, մի բանի մասին հարցներ՝ խանգարեր։ Կուռ բազուկով սլաքը տեղափոխելիս նա գիտակցում եր, վոր իր ամենաչնչին սխալմունքի համար կարող ե շատերի մահվան պատճառ լինել։

Ընկերները ծիծաղում եյին մռայլ Գալկայի վրա և շարունակ կրկնում.

— Գալկան իր սլաքը հարազատ մորից, սիրունիկ քրոջից և յերիտասարդ ամուսնուց ավելի յե սիրում։

Իվանի մայրը վաղուց մեռել եր, քույրը ինչ-վոր հեռու գյուղում եր ապրում, իսկ կին նա դեռ չուներ ու ապրում եր մեն-մենակ։ Իհարկե, վորքան ել չուզենաս, ակամա տխուր, մռայլ և անհամբույր կդառնաս, յերբ մոտդ հարազատ, սրտակից մարդ չունիս, վոր խնամի, ցավի քեզ համար, ուրախության և տխրության ժամերը բաժանի քեզ հետ։ Իսկ տխուր մարդկանց առհասարակ վոչ վոք չի սիրում, ամենքը փախչում են նրանցից։

Բայց պետք ե ասած, կար մեկը, վորը չեր խորշում սլաքավարից և յերբեմն, տոն որերին նույնիսկ, այցելության եր գալիս նրան։ Դա կայարանի պահապան ծերունի Յակով Միխայլենկոն եր։

Ահա կնստեյին Միխայլենկոն ու Գալկան և կսկսեյին իրար սրտից խոսել։ Մեծ մասամբ, իհարկե, նրանք խոսում եյին իրենց կայարանի, յերկաթուղագծի վրա պատահած զանազան դեպքերի մասին։

Մի անգամ ծերունի Միխայլենկոն մոտեցավ իր բարեկամին և շատ հուզված ձայնով հարցրեց.

— Լսե՞լ ես, Գալկա, թե հարևան գծի վրա յերեկ գիշեր ինչ ե պատահել։

— Ի՞նչ, շտապ հարցրեց սլաքավարը։

— Գնացքները ընդհարվել են իրար... շատ սպանվածներ և վիրավորներ կան։

— Ինչպե՞ս, ընդհարվե՞լ են՝ կրկին ու կրկին հարցրեց Իվանը։

— Այո՛, այո՛, սիրելիս, և ասում են սլաքավարի պատճառով... սլաքավարն ե մեղավորը, սլաքավարը։

Գալկայի դեմքը այլայլվեց. հոնքերը կիտավեցին ու հուսահատ թևերը շարժելով արտասանեց.

— Միշտ ամեն մեղքը սլաքավարի վրա յեն բարձում. անկեղծ, վիրավորական ե նույնիսկ... միշտ մեղավորը սլաքավարն ե։

Միխայլենկոն գլուխը շարժեց։

— Ե՛հ, սիրելիս, իհարկե լինում ե վոր զուր են ասում... բայց...

— Չհավատաս, ծերուկս, չհավատաս. սուտ են ասում, բարկացած ընդհատեց նրան Գալկան։

— Լսիր, Վանիա, դու մի բարկանար. տես, թե այդ դժբախտ դեպքը ինչպես ե տեղի ունեցել...

—Սլաքավարը կանգնած ե լինում սլաքի մոտ։ Կարգին ե ամեն բան. սպասում ե գնացքին. սլաքը կանոնավոր ե տեղափոխված։ Ինչպես յերևում ե, խեղճը շատ հոգնած ե լինում. տեղնու-

տեղը նստել և մի փոքր աչքը խուփ արել, նիրհել է. լսում է սուլոց—գնացքը գալիս է։ Սլաքավարը վեր է թռչում ու քնաթաթախ՝ մոռանալով որ սլաքն արդեն ուղղած էր. նորից տեղափոխում է այն... Ուրեմն գնացքը այլ գծի վրա յե... ընդհարվում է ապրանքատար գնացքին... Սոսկալի յե անգամ յերևակայել, թե ինչ կարող էր տեղի ունենալ... Մեքենավարը սպանված, օբերը վիրավոր, իսկ ճանապարհորդներից շատերը սպանված, այլանդակված...

Իվան Գալկան գլուխը ձեռքերի մեջ սղմած լուռ էր մի քանի րոպե. վերջը դես ու դեն ընկնելով ու անհասկանալի բառեր մրթմրթալով, կանգնած տեղից պոկվեց ու ամբողջ թափով նետվեց դեպի սլաքը։

— Ո՞ւր, ո՞ւր ես գնում, ինչ պատահեց, գոռաց նրա յետևից զարմացած Միխայլենկոն։

— Սլաքին նայելու, գոռաց Իվանը։

— Շուտ է, գնացքը դեռ շատ է հեռու, ինչ շփոթվեցիր. հե՜յ Գալկա, աղաղակում էր ծերունին նրա յետևից, իսկ բարձրահասակ սլաքավարը, խոշոր քայլերով, արագ հեռանում էր, չպատասխանելով իր միակ բարեկամի կանչին։

Այդ օրվանից Իվան Գալկան դարձավ ավելի մռայլ։ Ասենք կայարանի ծառայողները հարևան գծի վրա տեղի ունեցած ընդհարումից հետո այնպես եյին նայում Գալկայի վրա, կարծես այն դժբախտ դեպքի հեղինակն ու պատճառը նա լիներ։

Կանգնած իր պոստի վրա, հաճախ իր յերևակայության մեջ սպառնում էր նա իր անծանոթ ընկերակցին։

— Քնե՜լ սլաքի մոտ, ինչպես ես համարձակվում քնել սլաքի մոտ, այ դու չար հոգի։ Միթե կարելի յե քնել, յերբ սպասում ես գնացքին։

Կայարանում ամենքը համոզված եյին, որ Գալկան ամբողջ կյանքը իր սլաքի կողքին անց կկացնի և այդտեղ կպլոկի նրա մենավոր գլուխը։

2

Այդ դեպքից մի առժամանակ անց՝ Իվանը ամուսնացավ կայարանի պահապան Միխայլենկոյի աղջկա՝ Մարիի հետ։ Մի տարի հետո նրանք վորդի ունեցան։ Անկարելի յե նկարագրել այն ուրախությունը, վոր տիրեց սլաքավարին և իր ընտանիքին։

Տղային, ի պատիվ պապի՝ Յակով անվանեցին։

Իվանին այժմ կարելի յեր տեսնել կամ սլաքի մոտ, կամ յերեխան գրկած։ Բայց, վորքան էլ շատ սիրելիս լիներ յերեխային, նա յերբեք չէր մոռանում ծառայությունն ու պարտականությունը։

Ժամանակն անցնում էր, Յաշան մեծանում էր և արդեն սկսում էր սողալ, ինչ-վոր անհասկանալի բառեր թոթովել։

Ամառը, ազատ ժամերին Իվանը Յաշային մոտակա անտառն էր տանում, ծաղիկներ ժողովում նրա համար, յերգում, խաղում. յերբեմն հայրը, վորդուն գրկած գնում էր կայարանը։ Ծիծաղելի յեր նայել, թե ինչպես ահագին, կոպիտ Իվանը խնամքով և քընքշությամբ տանում էր յերեխային։ Յաշան ուրիշներից չէր քաշվում։ Կայարանում ամենքը ճանաչում եյին նրան և խաղում նրա հետ։

— Շատ լավ յերեխա է լինելու, Գալկա, քեզ շատ է նման, ասում եյին կայարանի ծառայողները։

Ուրախանում էր հայրը այս խոսքերից և հպարտությամբ նայում էր սիրելի զավակին։

Մի անգամ, ամառվա վերջերին Իվանը, յերեխային գրկած, գնաց սլաքը կանոնավորելու. Մաշան լվացք էր անում և հանգիստ սրտով թողեց, վոր Իվանը վորդուն տանի։ Ասենք առաջին անգամ չէր, վոր հայրը վորդուն տանում էր սլաքի մոտ։

Իվանը սպասում էր մարդատար գնացքին։ Յերեխային վոչ հեռու մի կողմ նստեցրեց, ծաղիկներ քաղեց և ածեց նրա ծնկներին, իսկ ինքը գնաց սլաքը կանոնավորելու։ Բայց այդ րոպեյին նա նկատեց յերկաթուղագծի վրա մի քուռակ, յերկար պարանը վզին։ Հավանականաբար մոտիկ տեղերում կարել էր կապը, բարձրացել գիծը և այստեղ ծիծաղելի թռիչքներ էր անում, վազվզում չարաճճորեն։ Քուռակին բռնելը հեշտ չեղավ։ Սլաքավարը շատ վազեց նրա յետևից, վերջը բռնեց և կապեց մոտակա ծառին... Բայց ուշացավ... նա արդեն լսում էր մոտեցող գնացքի ձայնը... շուռ յեկավ, վոր սլաքին վազի, բայց ճչաց, ամբողջ մարմնով ցնցվեց, գունատվեց։ Սարսափելի յեր խիկապես նրա տեսածը... Նրա Յաշան, նրա թանկագին քաղցրիկ վորդին, սողալով հասել էր յերկաթուղագիծը և նստել յերկու գծերի (ռելս) մեջտեղը ու խաղում էր ավազի և ծաղիկների հետ։ Վազել, գրկել պետք է յերեխային և, յեթե հնարավոր է, փրկել նրան անխուսափելի մահից... Բայց ինչպես. գնացքն արդեն մոտենում է. հեւում, գոռում, ահա վրա յե հասնում, իսկ սլաքը դեռ տեղափոխված չէ։ Յեթե ինքը վազի դեպի իր զավակը, նա չի կարող հասցնել սլաքի տեղափոխությունը... վորքան մարդ պետք է փչանա։ Այնտեղ, կայարանում, գնացքն է կանգնած—կընդհարվի և սոսկալի բան կպատահի... Բայց միթե հարազատ զավակին սեպհական ձեռքերով մահվան գիրկը պետք է նետի։

Անկարելի յե... Անկարելի յե։ Իվանը ամբողջուժով կատաղի վազում էր դեպի զավակը։ Վոչ...Ինչ վոր անհաղթելի ույժ վերադարձնում է նրան դեպի սլաքը։

Ծնողի տաք սիրո և սրբազան պարտականության միջև մղվող այս կատաղի պայքարը միայն մի ակնթարթ է տևում, իսկ դժբախտ հոր դարեր է թվում։ Արյունը սառչում է նրա յերակներում, շունչը կտրվում կոկորդում, կարծես սիրտն էլ դադարում բաբախելուց և սև ձյութի պես մազերը մի ակնթարթում սպիտակում են նրա գլխին։

Սլաքավարը վճռեց, թե ինչպես պետք է վարվի ինքը... Վրահասավ սլաքին և աչքերը փակելով, դողդոջուն ձեռքերով տեղափոխեց սլաքը... Խեղճի վոտները թուլացան և տեղն ու տեղը գետին փռվեց, կրծքից սրտաճմլիկ մի հեծկլտոց արձակելով։

Նա իր հարազատ զավակի կյանքը զոհեց տաս ու տաս անծանոթ ոտարների կյանքը փրկելու համար։ Գնացքը սրընթաց անցավ նրա առաջով, իր հետ տանելով սլաքավարի ամբողջ հույսը, ուրախությունը, յերջանկությունը։ Իվանի ուղեղում մտքերը խառնվել եյին իրար, սիրտը լցվում եր արյունով... Նա բացեց աչքերը և օրորվելով դեպի առաջ նետվեց։...



Սա ինչ է. ինչ է սա. յերազ, խաբեյություն, հրաշք, թե իրականություն։

Յաշան կենդանի յե, անվնաս... նստել է ռելսների մեջտեղը, լուռ է և զարմացած չռել է աչքերը, չհասկանալով, թե ինչ է կատարվել իր շուրջը։ Միայն աջ թշին չանկռտվածք է յերևում, վորից արյուն է հոսում, իսկ սև, գանգուր մազերի մեջ խճճվել են հոր ժողոված ծաղիկները։

Ուրախությունից գլուխը կորցրած Իվանը նետվեց դեպի վորդին, գրկեց, սղմեց նրան կրծքին ու վազեց դեպի տուն։

Այդ ժամանակ Մաշան, լվացքի կողովը ուսին, վերադառնում եր գետակից։ Տեսնելով դեպի իրան վազող անծանոթ ալեորին, գրկած իր Յաշային—սարսափեց, վախից կողովը վար ձգեց։ Ալեորին իր ամուսնու տեղ չընդունեց, բայց սիրտը նրան թելադրեց, վոր ինչ-վոր սոսկալի բան պետք է պատահած լիներ։

— Յաշա... գնացքը... կենդանի յե...—աղաղակեց ալեորը և փռվեց գետնին բարձրաձայն հեկեկալով։ Իվանի աղիողորմ լացն ու հեկեկանքը լսողի սիրտը կտոր-կտոր կաներ։

Ամեն կողմից մարդիկ սկսեցին հավաքվել սլաքավարի տնակի շուրջը։ Դողալով և հազիվ շունչ քաշելով յեկավ և ծերունի Միխայլենկոն։ Շատերը տեսել եյին, թե ինչպես յերեխան նստել եր և նրա վրայով անցել եր գնացքը։ Ամեն ինչ պարզվեց. ամենքը իմացան սլաքավարի հերոսական վարմունքի մասին։ Գրկում, համբուրում, շնորհակալություն եյին հայտնում նրան, իսկ սա, շփոթված, յերկչոտ հայացքով շարժում եր իր ալեոր գլուխը և շարունակ կրկնում Մաշային.

— Սրան... սրան չխղճացի...

Մաշան լսելով ամբողջ պատմությունը, լալիս, փայփայում, համբուրում, կրծքին եր սղմում իր զավակին։ Նա յերբեմն թաց կտոր եր դնում իր վորդու թշիկին, յերբեմն մոտենում ամուսնուն, փաղաքշում, գլուխը շոյում, հանգստացնում նրան, իսկ յերբեմն սիրտը բռնած նայում իր շուրջը յերկչոտ հայացքով, հավանաբար սարսափով պատկերացնելով պատահած դեպքը իր յերևակայության մեջ։

Ծերունի Միխայլենկոն ձեռքը թոռնիկի գլխին դրած շշնջում եր նրան իր ծեր շրթունքներով.

— Մեծացի՛ր, մեծացի՛ր, սիրունիկս և յեղիր այնպիսին... այնպիսին, ինչպիսին հայրիկդ է։

Ասում են՝ այս դեպքից հետո Գալկան յերկար ժամանակ հիվանդ պառկեց։

Շատ ժամանակ անցավ այս դեպքից հետո. Իվան Գալկան այսօր էլ ծառայում է յերկաթուղագծի վրա, վորպես սլաքավար։ Պատմում են, վոր այսօր էլ, յերբ գնացքը անցնում է նրա մոտով, նա ամեն անգամ ցնցվում է և աչքերը փակում։

Թարգմ. Ա. Հոգիչանյան

---

14. Ալագյազի մանիներից

Ավ. Իսահակյան

Ալագյազը աստղերու մեջ՝
Ադամանդե թագը գլխին.
Սարերեն վեր, ամպերեն վեր,
Թիկն է տվել զմրուխտ գահին։

Մինամ հավքի թևեր ունիմ,
Թռնիմ կերթամ Ալագյազ.
Ճակտիս աստղե պսակ ունիմ,
Սրտիս մեջը զառ յերազ։

Յերկինք անամպ, անուշ լուսին,
Աստղերի մեջ ման կուգա.
Հարսները սոսին-սոսին,
Հովը հովտում կը հևա։

Լուռ քարայրի են մութ ծոցում
Հովը տխուր կը շվա.
Հովի հանգը սիրտս է ծորում,
Առվակն անուշ կը ճիչա։

---

15. Կույրերի վարժարանը

Է. Ամիչիս

1

Կո՞ւյր. հասկանո՞ւմ ես այս բառի ամբողջ իմաստը։ Հապա մտածի մի քիչ։ Վո՛չ յերկինք տեսնես, վո՛չ արև, վո՛չ հայր, վո՛չ մայր, և վո՛չ մի բան աշխարհիս յերեսին. հավիտյան՝ խավար, ինչպես գերեզմանում։ Փորձի՛, փակի աչքերդ և յերևակայի՛ վոր այդպես պիտի մնաս ընդմիշտ. սոսկալի, զարհուրելի բան. քեզ պիտի թվա թե այդ դժբախտությանը դիմանալ չես կարող, կա՛մ խելքդ կը թռցնես, կա՛մ կը մեռնես…

Յեվ սակայն յերբ մտնում ես առաջին անգամ կույրերի վարժարանը դասամիջոցին, լսում ես նրանց ջութակ ածելը, սրինգ նվագելը, բարձր-բարձր խոսելն ու ծիծաղը սանդուղքների վրա, միջանցքներում ու ննջարանում ազատ համարձակ ման գալը, մտքովդ ել չի անցնի, թե դրանք թշվառ եակներ են։

Ո՜հ, լավ մտածի. կան, վոր զրկվել են աչքի լույսից մի քանի օրում. ուրիշները տանջվել են ամբողջ տարիներ. շատերը

կուրացել են սարսափելի վիրահատության պատճառով. վերջապես կան և այնպիսիները, վոր կույր են ծնվել… ծնվել են անհույս գիշերվա մեջ, մտել են աշխարհ իբրև մի գերեզման և չը գիտեն՝ ինչ ասել է մարդու պատկեր։

Յերբ մարդ հիշում է այդ հավիտյան փակված աչքերը, այդ անհայեացք, անշարժ բիբերը և հետո նայում է իր շրջապատողներին, ուղղակի աններելի է թվում, վոր մենք բոլորս, վոր աչք ունենք, բախտավոր ու յերջանիկ չը լինենք։ Յեվ չը մոռանաս, վոր այդ բախտից զրկվածների թիվը շատ մեծ է. օրինակ, միայն Իտալիայում քսանըվեց հազար կույր կա. քսանըվեց հազար մարդ արևի լույս չի տեսնում… միայն մի Իտալիայում։

2

Բայց բարի բնությունը գալիս է օգնության։ Կույրերի մյուս զգայարանները անհամեմատ ավելի յեն զարգանում, քան մերն է. և զարգանում են այն պատճառով, վոր փոխարինում են տեսողության ու ավելի սուր են գործածվում։ Այսպես՝ առավոտյան, յերբ կույրն ուզում է իմանա՝ արև կա՞, թե չէ, ձեռքը պարզում է պատուհանից դուրս արեգակի ջերմությունը փորձելու։ Կույրը մարդու ձայնին ականջ դնելով գաղափար է կազմում նրա հասակի բարձրության մասին։ Մենք մեկի հոգու մասին կարծիք կազմելու համար, նայում ենք նրա աչքերին. կույրերը նայում են նրա ձայնին և յերկար հիշում են այդ ձայնը։

Կույրերը շոշափելով կարողանում են զանազանել ներկված կերպասը չը ներկվածից։ Փողոցով անց կենալիս հոտառությամբ ճանաչում են խանութները, մինչև անգամ այնպիսի խանութներ, ուր մենք վոչ մի առանձին հոտ չենք առնում։ Հոլ գցելիս նրա բզզոցին ականջ դնելով՝ իմանում են թե վորտեղ ընկավ, և վերցնում են առանց սխալվելու։ Կոն են խաղում (կեգլի), պարան են ցատկում, քարերից տներ են շինում, մանուշակ են քաղում, կարծես տեսնելիս լինեն, գույն-գույն հարդերից կողով ու խսիր են հյուսում, այն աստիճան զարգացած է նրանց շոշափելիքը։

Շոշափելիքը նրանց տեսանելիքն է. նրանց ամենամեծ զըվարճությունն է շոշափելով իմանալ իրերի ձևը։ Տեսնելու բան է, թե ինչ ուրախությամբ հարձակվում են յերկրաչափական ձևերի վրա, զանազան գործիքների վրա և ինչ մեծ հաճույքով պտույտ են բերում ձեռներին ու շոշափում այդ բոլորը՝ տեսնելու համար, թե ինչպես են շինված. նրանք ասում են՝ տեսնելու…

3

Կույրերը սովորում են և գրել-կարդալ։ Հատուկ նրանց համար տպված գրքեր կան ուռուցիկ տառերով. նրանք այդ տառերի վրա մատները ման ածելով վորոշում և արտասանում են բառերը։ Սահուն կարդում են և շատ են կարմրում մի բան սխալ կարդալիս։

Գրում են առանց թանաքի, հաստ ու կոպիտ թղթի վրա, մի բարակ յերկաթե ձողիկով, վոր հետքեր է թողնում թղթի մեջ. և հակառակ կողմը դուրս են գալիս ուռուցիկ տառեր, վորոնց վրա մատները ման ածելով կարողանում են կարդալ։

Այսպես գրում են շարադրություններ, նամակներ, թվաբանական խնդիրներ են վճռում։ Հաշիվները մտքով կատարում են վերին աստիճանի արագ ու թեթև, վորովհետև նրանց միտքը չի ցրվում։ Չափազանց սիրում են լսել ուրիշների ընթերցումը։ Յեվ արժե ականջ դնել նրանց դատողություններին մի կարդացած կտորի վրա, մանավանդ յեթե նյութը պատմական է։

Դասամիջոցներին միշտ միասին են հավաքվում. իրար սաստիկ կապված են։ Որինակ չկա, վոր կույրը սիրե մեկին ու հետո ատի. բարեկամությունը նրանց սփոփանքն է։ Նրանք վերին աստիճանի արդարամիտ են, պարզ ու ճիշտ վորոշում են չարն ու բարին։ Յեվ մի վորևե վսեմ գործի պատմությունը վոչ վոքի այնպես չի վոգևորում, վորչափ նրանց։

4

Ջերմ սիրահար են յերաժշտության։ Յերաժշտությունը նրանց բերկրանքն է, կյանքն է։

Մինչև անգամ փոքրիկ յերեխաները պատրաստ են միքանի ժամ անշարժ կանգնել նվագածություն լսելու։ Նվագել հեշտ են սովորում. և նվագում են յեռանդով։ Յեթե վարժապետը մեկին ասի՝ թե նվագելու շնորհք չունի, սաստիկ կը տխրի, բայց և այնպես կը շարունակի ուսանել մեծ ջանքով։

Մարդ պետք է տեսնի կույրի նվագելը, կույրի դաշնամուր ածելը։ Գլուխը բարձր բռնած, ժպիտը շրթունքին, յերեսը վառ, խեղճը հուզմունքից դողդողում է, հիացած է ու ականջ է դնում ակկորդներին, վորոնք փռվում են շրջապատող խավարի մեջ։ Մարդ պետք է տեսնի հասկանալու համար թե յերաժշտությունը ինչ աստվածային սփոփանք է։

Յերաժշտության մեջ առաջինը, առաջին ջութակահարը, առաջին դաշնակահարը նրանց մեջ թագավոր է. նրանից պատկառում են, պաշտում են նրան։

Կույրերի խոսակցության սիրելի նյութը յերաժշտությունն է։ Գիշերները անկողնում պառկած, դասերից և որվա աշխատանքից իսպառ հոգնած, նրանք դարձյալ մեղմ զրույց են անում իրար հետ յերաժշտագետների, ոպերաների, նվագարանների ու նվագախմբերի՝ որկեստրների մասին։ Նրանց համար ամենամեծ պատիժը յերաժշտության դասից զրկվելն է։ Այդ զրկանքը նրանց համար այն աստիճան ծանր է, վոր այդ տեսակ պատիժ իսկի չեն ել տալիս։

Կույրի համար յերաժշտությունը նույնն է, ինչ վոր լույսը մեզ համար։

5.

Լույս...

Ի ծնե կույրերը այնքան ել թշվառ չեն. նրանք չեն ճանաչել լույսը, տիեզերքը, բնությունը. այդ բոլորի մասին գաղափար չունեն, յերևակայության մեջ պատկերներ չը կան, նրանք չունեն վողբալու բան։ Բայց նրանք, վոր նոր են կուրացել, նրանք դեռ հիշում են ամեն բան և հասկանում են իրենց կորուստը։ Ո՜վ գիտի՝ ինչ են զգում, յերբ հետզհետե թանկագին պատկերները նսեմանում են նրանց հոգու մեջ և յերբ սիրելի դեմքերը ասես մեռնում են նրանց համար։

Տղաներից մեկը մի որ բացականչեց.

— Ա՜խ, յեթե մի րոպե աչքս բացվեր, գոնե մի րոպե մորս յերեսը տեսնեյի... ել չեմ հիշում նրա դեմքը։

Յերբ ծնողները այցելության են գալիս, կույր մանուկները ձեռքով շոշափում են նրանց դեմքը, վոր դիմագծերը լավ պահեն իրենց մտքում։

16. Լալվար սարը

Վ. Տիրոնյան

Ծագում ե մանուկ արևը գարնան
Կովկաս լեռների ձյունի պատնեշից,
զարթնում են մեկ-մեկ սարերն աննման
ձմռան անվրդով քնի մշուշից։

Ահա Լալվարի վիթխարի ուսին
Բազմում ե արփին թարմացած ուժով,
սարեր ու ձորեր իրար յերեսին
Նայում են, ժպտում ամպի մշուշով...

Վերջին ձյուներն ել ահա հալ ընկան,
արտասվեց իսկույն լեռների հսկան.
ամեն մի ձորից աղբյուր ե հոսում,
ամեն մի թփից բյուլբյուլ ե խոսում։

Յեվ զալար հովիտ, և՛ ժայռի կրծքեր
արձագանք տալով գարուն են հնչում.
ձմռան փարախից հովվական յերգեր
զեփյուռի թևով սարերն են թռչում։

Ծաղկալից աշխարհ անվերջ ձորերի
բացվում ե ժպտում կոկոնից զվարթ.
փարթամ գեղության վոգին Գուգարքի
շնչում ե գարնան բույրով անարատ։

Ամպերն ել իրար համբույրներ տալով,
չվում են կայտառ, Լալվարը գրկում,
առաջին անգամ թունդ վորոտալով
Գուգարք աշխարհին վողջույն են յերգում։

Յեվ հայրենիքում փայլակ կայծակի
գիշերվա դրոշմած գաղտնի համբույրներ,
յերգում են յերկրին սերը յերկնքի,
դողում են սիրուց սարեր ու ձորեր։

Յեվ խորհրդավոր մի թովիչ ձայնով
խոսում են նրանք, իրար հետ փարվում,
յերգում են, խնդում, հազար բերանով
Լալվարի վիթխար հասակը գովում

17. Արագածի վորսորդը

Ավանդություն

Հովհ. Թումանյան

Ժամանակով մի վորսորդ վերցնում ե նետն ու աղեղը և գընում ե Արագած լեռն վորսի։

Լեռան կանաչ թիկունքի վրա մի յեղնիկ ե արոտ անելիս լինում. վորսորդը տեսնում ե նրան, նա ել վորսորդին. տեսնելն ու փախչելը մեկ ե լինում. վորսորդն ընկնում ե նրա յետևից, նա թռչում ե քարից քար, վորսորդն ել յետևից. մեկ ել յեղնիկը մի բարձր ժայռի ծայրին մոլորված կանգ ե առնում. ինչ անի խեղճը. առաջին անտակ անդունդն ե խորանում, հետևն անգութ վորսորդն ե ընկած, նետն ու աղեղը լարած պատրաստ, ազատվել անհնար ե. կամ պետք ե վորսորդի նետից մեռնի, կամ անդունդն ընկնի, հազար կտոր լինի։

Վորսորդը հասնում ե և նշան բռնում. յեղնիկը մի հրաշքով լեզու ե առնում և ասում ե. «ո՜յ մարդ, խղճի արի, մեղք եմ, յերեխաներ ունեմ, անոթի կը մեռնեն ձագուկներս, վորբ ու անտեր ձագուկներս»։

Վորսորդը չի լսում աղաչանքն ու նետն արձակում ե. նետը թռչում, քարի ե դիպչում. վորսորդը նորից նշան ե բռնում։

Յեղնիկը լալով աղաչում ե նորից. «դու յերեխա չունե՞ս, դու սիրտ չունե՞ս, անգո՛ւթ, անխի՛ղճ մարդ»։

Այնպիսի մորմոքելի ձայնով ե ասում խեղճ յեղնիկը, վոր ժայռի սիրտը մղկտում ե, իսկ վորսորդի սիրտը դառնում ե քարից քար։

Ու յերբ վորսորդն ուզում ե նորից նետն արձակել, յեղնիկը չուզենալով անգութ մարդու ձեռքն ընկնել, ապավինում ե ահռելի անդունդին, վազ ե տալիս ու իրեն ձգում ե ժայռից ցած։

Ժայռը գթոտ ձեռները տարածում ե, քնքուշիկ բռնում ե յեղնիկին և հանգիստ, ապահով իջեցնում ե անդունդի հատակը, դալար հովտի մեջ կանգնեցնում. ասես թե՝ յեղնիկը կանաչ թուփից կանաչ թուփի վրա յե ցատկել։

Վորսորդը կատաղած վազ ե տալիս յեղնիկին բռնելու և վոտքը սայթաքում ե ու ժայռից գլխի վրա գլորվում. Ժայռը հզոր բազուկներով ամուր բռնում ե վորսորդի վոտքերից ու ել բաց չի թողնում։

Ասում են, այն որվանից մինչև այսոր վորսորդը ժայռից կախված ե գլխի վրա։

18. Կկուն ու աքլորը

Ա.. Խնկոյան

— Ջա՜ն աշխարհիկ
իմ աքլորիկ,
ձայնդ զիլ-զիլ,
վոսկի ծիլ-ծիլ,
յերգերիդ մեջ
բյուր յել և եջ
— Կըկու քուրիկ,
հուրիկ, բուրիկ,
քո ձայնն էլ է
լավ գեղգեղուն,
ծոր է տալիս
ու մըղմըղում,
յերգ եմ լսել
յես շատ ու քիչ,
բայց չեմ տեսել
քեզ պես յերգիչ։
— Վոսկեփետուր,
աստվածատուր.
կուզեմ
լսեմ
ձայնդ անսպառ
միշտ անդադար,
թեկուզ մի դար։
— Պուճպուճուրիկ,
մի պուտ ջրիկ,
Կկու քուրիկ,
յերգվում եմ յես,
վոր լսում ես
ես չափ, պուճո՛ւր...
բաղասելով
իմ աչքերը
դառնում են ջուր։
Վո՞րտեղից է
քեզ եդպես ձայն,
մաքուր, քնքուշ
ու զրնգրնգան։

Դուք եդպես եք
ամբողջ ցեղով.
մի բուռ բան եք
թեև տեղով,
բայց ձեր յերգը
խիստ աջողակ,
չունի, չունի
վոչ մի սոխակ։
— Գոհ եմ քեզնից,
ջիվա՛ն աքլոր.
խըղճով ասենք
դու միալար
լավ ես յերգում
դրախտահավից,
թռչունների
լավի լավից։

Վողջ աշխարհը
խոսքիս վկա,
քեզ պես յերգիչ
չըկա, չըկա։
Նստեց ծիտը
ծիտիկ—միտիկ,
ասավ՝ «հլա
սըրանց մտիկ,
ինչ լավ գիտեն
իրար յեղել.
սա թողին
պակաս տեղ էլ։
Ե՜, լավ, հերիք,
իրար գովեք.
աշխարհ գիտի՝
թե դուք ով եք»։

19. Աղջիկն ու լուցկիները

Անդերսեն

1

Սաստիկ ցուրտ էր։ Ձյունը քուլա-քուլա թափվելով ծածկում էր գետինը։ Արդեն սկսում էր մթնանալ. այդ գիշերը հին տարին հրաժարական վողջույն էր տալիս ամբողջ աշխարհին, իսկ վաղը նոր տարի էր—բերկրանքի և ուրախության որ։ Այդ միջոցին ձյունապատ փողոցովն անցնում էր գլխաբաց և վոտաբոբիկ մի խեղճ աղջիկ։ Իրավ է, տնից դուրս գալիս նա հագել էր մոր մաշիկները, բայց փողոցի մի ափից մյուս ափն անցնելիս՝ նա ընկավ յերկու միմյանց հանդեպ ընթացող կառքերի մեջտեղը և շտապելուց ու շփոթվելուց՝ մաշիկները կորցրեց։ Մաշիկներից մեկն իսկապես կորավ, իսկ մյուսը թռցրեց մի փոքրիկ չարաճճի տղա, վոր նավակ շինի նրանցից ու զվարճանա։

Աղջիկը գնում էր վոտաբոբիկ. նրա փոքրիկ վոտները կարմրատակել էյին և ցրտից փետացել։ Նա իր կրծքի վրա ամրացրած փոքրիկ արկղիկում դարսած ուներ լուցկիների միքանի կապոց, իսկ մի կապոց բռնած էր ձեռքին։ Վատ յեղանակը շատ էր վնասում նրան. փողոցի անցուդարձը համարյա կտրված էր, չկային գնորդներ, այդ պատճառով նրա գրպանում ևս չկար վոչ մի կոպեկ։ Համ մրսում էր, համ քաղցած էր վողորմելին, և հենց յերևույթն էլ յերևում էր, թե վորքան չարաչար տանջվում էր նա։ Անբախտ արարած։ Ձյունը քուլաներով թափվում էր նրա բաց-խարտյաշ մազերի վրա, վորոնք գեղեցիկ գանգուրներով շրջապատում էյին նրա փոքրիկ, չքնաղ վիզը։ Բայց ամենևին ուշք չէր դարձնում իր գանգուրների վրա, նրանց մասին չէր էլ մտածում։ Պատուհանները վառվում են բազմաթիվ ճրագներով, խորովածի հոտը բռնել է ամբողջ փողոցը, ամենքը պատրաստվում են դիմավորելու նոր տարվան, ամեն տեղ յեռում է կյանք—ահա ինչով էր զբաղված նրա միտքը։

Վերջապես մի խուլ անկյուն գտավ յերկու տների մեջտեղում և վոզնու պես կուչ գալով, նստեց այնտեղ։ Սառնամանիքը փետացնում էր նրա ամբողջ մարմինը, բայց նա չէր համարձակվում տուն գնալ. և ինչպես վերադառնար, յերբ մեկ հատիկ լուցկի անգամ չէր ծախած և գրպանումն էլ կոպեկ չուներ։ Առաջինն վոր հայրը նրան կը թակեր՝ տեսնելով աղջկանը դատարկաձեռն տուն վերադարձած, և յերկրորդն էլ—միթե միևնույն չէր՝ տուն գնալ թե փողոցում մնալ. չէ՞ վոր իրանց տունն էլ նույնքան ցուրտ էր, վորքան և դուրսը, բաց յերկնքի տակ։ Նրանք ապրում էյին ձեղնահարկում՝ և քամին չորս կողմից ազատ

ներս ու դուրս եր անում, չնայելով վոր ամենամեծ անցքերն ու ճեղքերը խցված եյին հարդով ու զանազան փալաս-փուրուսներով։ Խեղճ աղջկա ձեռքերը կապտել, լեղակի գույն եյին ստացել։—Ա՜խ, ինչ կը լիներ գեթ լուցկու աղոտ բոցով տաքանալ։ Բայց ինչու չհանել մի լուցկի, չքսել պատին և չտաքացնել սառած մատները։ Նա հանեց լուցկին և ճկը՜ռ՝ քսեց պատին. ո՜, ինչպես բոցավառվեց։ Աղջիկը ձեռքով ծածկեց աղոտ բոցը և լուցկին սկսեց այրվել, ինչպես փոքրիկ ճրագ։ Յեվ խղճուկին թվում եր՝ թե նստած ե յերկաթե մեծ վառարանի առաջ և փետացած մարմինը տաքացնում ե նրա հրաշալի բոցով։ Ո՜, ինչ գեղեցիկ վառվում ե կրակն այդ հսկա վառարանում՝ տարածելով շուրջն ախորժելի տաքություն։ Վողորմելին ձեռքերը մեկնեց, վոր տաքացնի, բայց հանկարծ բոցը հանգավ, վառարանը չքացավ և ինքը դարձյալ նստած եր փողոցի մութ անկյունում, այրված լուցկին ձեռքին։

Նա հանեց յերկրորդ լուցկին և քսեց պատին։ Լուցկին վառվեց, լուսավորեց պատը և լուսավորված տեղը պատի վրա դարձավ թափանցիկ, կարծես լուսավորությունը գազային եր։ Աղջիկն տեսավ մի շքեղազարդ սենյակ, վորի մեջտեղը դրված եր սպիտակ սփռոցով ծածկած սեղան։ Սեղանի վրա կարգով շարված եյին փայլուն ճենապակյա ափսեներ, իսկ մեջտեղը՝ մեծ սկուտեղի վրա դրված եր շլորով և խնձորով գեղեցիկ համեմած ու տապակած սագ, վորից այնպիսի մի անուշ հոտ եր բուրում, վոր ամենակուշտ մարդու ախորժակն անգամ կը շարժեր։ Ո՜, յերջանկություն. հանկարծ սագը վեր կացավ սկուտեղի վրայից և, գլորվեց հատակի վրա։ Նրա մեջքի մեջ ցցված եյին դանակ և պատառաքաղ։ Նա գլորվելով մոտեցավ մանուկ աղջկանը։ Բայց լուցկին այդ միջոցին հանգավ, և նրա առաջ կանգնած եր դարձյալ նույն սառն ու հաստ պատն իր դաժան կերպարանքով։

Բայց ահա վառվեց յերրորդ լուցկին. և աղջիկը տեսավ, վորպես թե ինքը կանգնած ե մի շքեղազարդ տոնածառի առաջ։ Այս տոնածառն անհամեմատ հարուստ ու բարձր եր այն տոնածառից, վոր նա անցյալ ծննդյան տոնին տեսել եր ապակյա դռների միջով մի հարուստ վաճառականի տանը։ Տոնածառի կանաչ ճյուղերի վրա վառվում եյին հազարավոր մոմեր, իսկ սենյակի պատերի վրա կախկրված բազմաթիվ գեղագրական պատկերներն, վորպիսիք նա հաճախ տեսել եր խանութների պատուհաններում դրած, կարծես ժպտում եյին նրան։ Նա վեր բարձրացրեց իր փոքրիկ ձեռքերը, բայց, ա՜վաղ, լուցկին հանգավ. տոնածառի մոմերն սկսեցին սլանալ բա՜րձր, շա՜տ բարձր—և աղջիկը տեսավ, վոր այդ աստղեր եյին...

2

Նա պատին քսեց դարձյալ մի լուցկի։ Շուրջը տարածվեց շքեղ լույս և հրաշալի լույսի մեջ յերևաց նրա պառավ տատը՝ հեզ և փայլուն ժպիտը յերեսին։

«Տատի ջա՜ն,—գոչեց աղջիկը՝ փետացած կռները տարածելով առաջ,—առ ինձ քեզ մոտ։ Յես գիտեմ վոր յերբ լուցկին կը հանգչի, դու ել չես լինի. կը չքանաս, ինչպես չքացան յերկաթե վառարանը, տապակած սագը և շքեղ տոնածառը»։

Նա շտապով վառեց կապոցում մնացած մյուս բոլոր լուցկիները, վորովհետև նա սրտով ցանկանում եր, վոր տատիկը չհեռանա։ Լուցկիները մի ակնթարթում բոցավառվեցին և չորս կողմը տարածեցին այնպիսի մի զորեղ լույս, վոր կարծես թե ցերեկ լիներ։ Վոչ մի ժամանակ այնքան գեղեցիկ չեր յեղած նրա տատը, վորքան այդ րոպեին։ Նա վերցրեց թոռնիկին իր ձեռքերի վրա և երկուսն ել ուրախ ու զվարթ, պայծառ լույսի շերտը ճեղքելով՝ սլացան բա՜րձր, բա՜րձր—այնտեղ ուր չկա վոչ քաղց, վոչ տանջանք...

Յերբ վրա հասավ ցուրտ առավոտն, աղջկանը գտան յերկու տների մեջ տեղը, խուլ անկյունում նստած։ Նրա այտերը կարմիր եյին, շրթունքները ժպտում եյին։

Խեղճ վողորմելին մեռել եր։

Նա փետացավ նոր տարվա նախընթաց գիշերը։ Նոր տարվա առաջին որը լուսավորեց թշվառուհեան մի անմեղ և անպաշտպան զոհի դիակ, վոր մի քանի ժամ առաջ սրտագրավ պատկերներ տեսնելով լուցկու փայլուն լույսի մեջ՝ ժպտում ու հրճվում եր, ինչպես ճրագի շուրջը ճախրող թիթեռ։ Լուցկիների մի կապոցը բոլորովին այրված եր։ «Յերևի նա ուզեցել ե տաքանալ»— ասաց մեկը։ Յև վոչ վոքի մտքովն անգամ չանցավ, թե ինչպիսի հրաշալի տեսիլներ եյին նկարվել փոքրիկ աղջկա չքնաղ աչիկներին. վոչ վոք չիմացավ, թե վորպիսի փառքով և շքեղությամբ դիմավորեց նա նոր տարվան իր սիրելի տատիկի հետ միասին։

---

20. Մանուկ Մհեր

Ավ. Իսահակյան

Մեռավ Դավիթ, Սասմա առյուծ,
մեռավ խանդոտ սրտի կըսկծուց.
ու մնաց որբը, անհեր, անմեր,
իրենց որդին Մանուկ-Մհեր։
Դավթի յեղբայր՝ Ծըռնճղափորիկ,
յեկավ տիրացավ Սասման անառիկ,
տեր դարձավ Դավթի գանձին ու կայքին,
վոր պահե շահե Սասմա ժառանգին։
Թեև Մհեր դեռ
տղա եր, տխմար,
իրեն ուժի տեր
աշխարհ մարդ չկար.
հոր պես վեմ-հսկա,
աչքերը բոց-հուր,
մեջք ու բազուկներ
պողպատից ու կուռ։
Սասմա սեպ-սարեր վոտներն անդունդին,
գլուխն յերկնքին, յերկնուց ամպերին, —
կը վազեր Մհեր
ամպի յետևեն,
փետուր կը պոկեր
արծվի թևեն։
Յոթը մարդու կեր
կուտեր մեկ ժամում,
ով տարով կաճեր,
են կաճեր ժամով։
— Ես վիշապ տղան ենքան անկշտում՝
բան չի թողնելու մառանն ու տաշտում։
Իրար կասեյին
Ծնճղափորիկ ու իրեն կնիկ։

Խեռ եր բնութը՝ բորբ ու բարկացկոտ,
որերով խոժոռ, հոնքերը ժանգոտ,
որերով մենակ, ինքն իր հետ Մհեր՝
մարդու չեր նայեր՝
մարդու չեր խոսար,
մթար ու մլար՝
հանցվոր Նեմրութ սար։

— Ես դևեն պիտի փորձանք գա մեզի.
Իրար կասեյին երիկ ու կնիկ, —
խոսք չի հասկանա, վոչ սաստ, վոչ խրատ։
Ու միտք կանեյին
երիկ ու կնիկ,
թե ինչպես անեն՝
մի բանի աբով,
մի ուրիշ ճամբով
հեռացնեն Մհեր
արնեն ու տեղեն.
անճարակ հանեն ու խելքե տուկառ,
վար ձգեն Մհեր Սասունցոց աչքին.
Ու իրենց վորդին՝ փոքրիկ-ճնճղիկ,
վոր գիր կը սովրեր Մարութա սուրբ վանք,
Դարձնեն ժառանգ
ջոջենց աթոռքին,
իշխան տիրական
Սասմա աշխարքին։

Ցելան կարգեցին
Մհերին հոտաղ,
մեջքին կապեցին
գոմշի մեկ մախաղ՝
հացով ու թացով։
Ասին յերկուսով, —
— բան արա, վորդի,
պարապ մի նստի։

Մհերն եր. կելներ առավոտ լուսին,
առջևը կածեր հորթերն ու մոզին.
ու կերթար Սասմա կանանչ սար ու ձոր։

Վողջ հացը կուտեր մի բրդուճ արած.
ու որը բոլոր՝
կը մնար քաղցած.
Մեկ որ ել յեղավ,
վորսկանի մեկն ուզեց մի քիչ հաց.
վորսկանը նրան խրատեց, ասաց.
— Տո, տխմար Մհեր, տունդ չքանդվի,
դու լինիս ժառանգ Սասմա տեր Դավթի,
ու հիմի ենպես՝ աղքատ հորթարած.
քու հոր բոլին եր աշխարհ արարած.

քու հերը ունէր ակերով վոսկի.
գեղեր ու քաղաք, հուր-հրեղեն ձի,
վոր ամպերեն վեր կը թռներ կերթար.
ու թուր-կայծակին, վոր ժեռ կը կտրեր.
հորեղբայրդ ուտե քու հորդ գանձը,
դու հիմի քաղցած մաշես քու անձը.
վա՜յ ծուռ Սասունցի. տունդ չքանդվի:

Ու Մհերի աչք բաց յեղավ մեկեն,
իրիկուն չեղավ,
լցված տուն դարձավ:
— Հորեղբա՛յր, որըս կանցնեմ անոթի:

Հորեղբայրն ասաց.
—Ի՞նչու, ա՛յ վորդի,
Սասմա մեր սարեր լիքն են ժախ, բանջար,
քաղե, կեր, ինչու կըմնաս անճար:
Ավելցուց Մհեր.
—Սասմա ժեռ քարեր՝ շեղբերու նման՝
տերևներն հագիս՝ մաշեցին, կերան.
— Կարկտի՛, հագի.—Նեղսրտած ասաց Ճնճղափորիկ:
Մհերն եր, գոռաց.
— Իմ հորս ծովեն մեկ ափ ջուր չե՞ս տա:
Ու կիտեց հոնքերն իրարու վրա:

— Անիծվի են մարդ, վոր մեծսիրտ վորբին
թևի տակ կառնի ի վեր աշխարհին:
Հորեղբայրն ասաց ու մահակն առավ,
ծեծեց Մհերին, տնից դուրս արավ:

Լախտն առավ Մհեր, վոր դարկեր նրան,
ձեռքը չը գնաց հորեղբոր վրան:
Ու յելավ Մհեր լալով, լաց-աչքով,
գնաց հոր ու մոր գերեզմանի քով,
թողություն խնդրեց հորեն ու մորեն,
հեռացավ Սասմա հողեն ու ջրեն:

---

21. Ինչպես մաճկալ դարձա

Պ. Ռոզեգեր

Սա մի փոքրիկ դեպք է իմ կյանքից, բայց մեծ նշանակություն ունի ինձ համար, վորովհետև դրանով վերջացավ իմ յերեխայությունը և սկսվեց իմ պատանեկությունը, յերբ յես առաջին անգամ մի իսկական լուրջ գործ արի:

Ո՜, մեծ, շատ մեծ նեղություններ քաշեցի յես, մինչև վոր տավարածից դարձա մաճկալ: Վորպեսզի փոքր յեղբայրս տավարածություն անի իմ տեղ—ինչ հնարքներ բանեցրի, ինչքան չարչարվեցի: Նրան հանդում պահելու նպատակով նրա համար ամեն որ թռչնի բներ եյի գտնում, ձվեր հանում, շվի եյի շինում և առհասարակ աշխատում եյի ամեն կերպ սիրաշահել նրան: Յեվ, վերջապես, աջողվեց: Իսկ ինքս տավարածությունից ազատվելով՝ ուզում եյի մաճ բռնել՝ անպատճառ: Ինձ աջողվեց մի կերպ իմ կողմը թեքել մեր հոտաղ Մարկոսին, վոր միաժամանակ մեր արտերը վարողն եր: Գործն այնպես տարա, վոր Մարկոսը մի որ ասավ.

—Գութանը դատարկ բան է, դու թեև մեծ չես, բայց բավական ուժեղ ես և կարող ես մաճ բռնել:

Այս խոսքերի վրա յես հպարտ-հպարտ ձգվեցի, աշխատելով գլուխս հասցնել յերկար Մարկոսի ուսերին և բռնելով մեր ցանկապատի ձողերից մեկը, այնպես ուժգին տարուբերեցի, վոր ձողը կոտրվեց: Այս բոլորը յես արի նրա համար, վորպեսզի հորս ցույց տամ, թե մաճ բռնելու համար յես բավական ուժեղ եմ: Բայց հայրս ծիծաղեց:

—Ա՜խ դու պարծենկոտ, ասավ.—դեռ յերեկ, մեկել որը կարում չեյիր շորերդ հագնես, ես որ մեծ մարդ ես ձևանում: Է՜, լավ, գիտեմ, գիտեմ դրա վերջը ինչ կլինի. առաջ տաք-տաք գործի կըկպչես, հետո ենպես կսառչես վո՜ր...

Այդ ժամանակ մենք վարելատեղն եյինք։ Վարում եյինք մեր տան կողքի մեծ արտը։ Մարկոսն իր տեղը զիջեց ինձ և յես գութանի մաճը բռնեցի։

Հեշտ բան չկարծեք վարը։ Սրտի ծայրը հասնելիս մաճկալը պետք է իմանա գութանը շրջել և բարձրացնել այն ամեն ան- գամ, յերբ մեծ քարեր են պատահում. յեզներին խելույն դժվար է կանգնեցնել և. գութանը քարին դիպչելով՝ կարող է փշուր-փշուր լինել, յեթե չկարողանաս ժամանակին գութանը բարձ- րացնել։ Այո, վարելը հանաք բան չի. և յերկար ժամանակ է պետք, վոր մի քանի ակոս գնաս։

Յես պինդ բռնեցի գութանի մաճը։ Վարը Մարկոսի համար խաղ ու պար եր. նա գութանը կառավարում եր առանց դժվարու- թյան։ Բայց հիմա բանն ուրիշ եր։ Յերբ յեզները շարժվեցին՝ չկարողացա յես ուղիղ հետևել նրանց ընթացքին. գութանն ինձ դես ու դեն եր շպրտում և ուզում եր հողից դուրս ընկնել, այն- պես վոր մերկ վոտներս մի քանի անգամ ճմբերի տակն ընկան։

— Չե, դեռ ուժը չի պատում, ասավ հայրս, իսկ Մարկոսը ծիծաղեց։

Յես վիրավորվեցի։ Այդ պատվի խնդիր եր ինձ համար, և յես պետք է ցույց տայի, վոր յերեխա չեմ։ Յես չեի ուզում տա- վարած մնալ, նստել միշտ սեղանի ներքևի ծայրին, իրավունք չունենալ ընդհանուր խոսակցության մասնակցելու և խոսել միայն հորթերի ու վոչխարների հետ։ Յես խիստ պատվասեր եյի։ Ուզում եյի լինել առողջ, ուժեղ, աշխատող և ինքնուրույն։ Յեվ ահա փորձով համոզվեցի, թե վորքան է ավելանում ույժը այն մարդու, վորը վորոշում է իր նպատակին հասնել։ Յես շարունա- կեցի վարել և, վերջի վերջո, կարողացա գութանի հետ վարվելու հնարը գտնել ու բավական տանելի մի ակոս հանել, այնպես վոր հողի վորդերը՝, ճիճուները զարմացած բարձրացնում եյին գլուխ- ները, վոր տեսնեն, թե ով է այսօրվա մաճկալը։

Գութանը յերրորդ անգամ շուռ տալուց հետո՝ նայեցի իմ մշտական ժամացույցին—արևին։ Բայց այս անգամ ամպերը ծած- կել եյին նրան։

Ժամանակը սաստիկ դանդաղ եր անցնում։ Վերջապես մեր բակի դռանը յերևաց մայրս և, ինչպես տատս եր անում մի ժամանակ, յերկու մատը դրեց բերանն ու շվացրեց։ Յես մաճը բաց թողի և ինձ թվաց, վոր մայրս յերբեք այդպես գեղեցիկ չեր սուլել։

Ճաշից առաջ յես ձեռներս, իհարկե, չլվացի։ Նրանց կպած հողը ապացույց եր արդեն, վոր յես էլ տավարած չեմ, այլ մաճ- կալ, հողագործ; և հավասար իրավունք ունիմ բանվորների հետ

նստելու։ Յեվ յես նստեցի նրանց քով ու սկսեցի մասնակցել նրանց զրույցին։

Տատերը, գուցե, գտնեն, թե այս դեպքը, վորի մասին խո- սում եմ այս պատմվածքի մեջ, այնքան աննշան է, վոր հիշել անգամ չարժեր։ Բայց լավ իմացեք, վոր գյուղացու կյանքում այն օրը, յերբ առաջին անգամ նա մաճ է բռնում, ունի մեծ նշանակություն։

Այդ տարի յես վարեցի ամբողջ դաշտը, իսկ հայրս յերկյու- ղով ու հույսով ցորեն ցանեց այնտեղ։ Հետևյալ գարնան, յերբ ցանքը կանաչեց, մարդու սիրտ ցնծում եր նրան նայելուց։

— Տասը տարի յե՝ այսպիսի բերք չենք ունեցել, ասում եր հայրս։

---

22. Գարուն

Վ. Տերյան

Ժպտում են նորից անտառ ու ձորակ,
և հեղեղները խոսուն, սառնորակ
վողջունում են ինձ զվարթ ծիծաղով։

Զուգել ես նորից դաշտ, անտառ ու լեռ,
Գարո՛ւն, ամեն տեղ նոր կյանք ես վառել,
իմ սրտում էլ ես թևերդ փռել։

Յեվ ահա տխուր իմ մենակ տնից
դուրս յելա կրկին զվարթ ու ջահել,
և յես չեմ կարող իմ ճիչը պահել։

Ծաղկել ես սարում, անտառում, արտում,
բացել ես իմ դեմ վոսկեղեն հեռուն...
Վողջո՛ւյն քեզ, արև՛, վողջույն քեզ, գարո՛ւն։

---

23. Յերկաթուղու մուտքը մեր ձորերը

Հովհ. Թումանյան

1

— Ու՜, ու՜, ու՜, ու՜... Ձորերում սուլում եր յերկաթուղին։ Նոր եր մտել նա մեր ձորերը։

— Ա՛յ ձենդ կտրվի,— կանչեց այն կողմից վորսկան Ոսեփը։

— Ա՛յ տղա, ինչի՞ ես եդպես ասում, ինչ վնաս բան ե յերկաթուղին,— մեջ մտան մի քանի գյուղացի։

— Վնաս չի, բա ինչ ե. յեկավ, ձորերումը ծըղրտաց, ել պախրա չմնաց, կխտար չմնաց, ձենից խրտնեցին, փախան կորան։

— Պախրեն ու կխտարը չե վոր, հավատա, յես ել կկորչեմ, խոսք առավ մի հովիվ, վոր դագանակին հենված կանգնել եր։— Գնում եմ, քարի գլխին կանգնում եմ, ձորերին մտիկ եմ անում. վոր են քարափները քանդելիս տեսնում եմ, սրտիս ծերը մղկըտում ե, վոնց վոր թե մարդու յերեխին թշնամու ձեռքին քըրքըրելիս լինեն ու մարդ կարենա վոչ ոգնի...

— Չե՛, շատ բան կփչանա,— նրա հետ ել հառաչեցին մի քանիսը։

Ու սկսվեց վեճը յերկաթուղու վրա, թե յերկաթուղին ոգուտ եր բերելու, թե վնաս։

2

Այդ վեճի ժամանակ յերկաթուղու գծի վրա աշխատող ոտարականներից մինը ձորից դուրս յեկավ ու մոտեցավ մեզ։

— Բարի իրիկուն ձեզ։

— Աստծու բարին, վարպետ։

— Ինձ մի չափ ալյուր ե հարկավոր, ձեզանից ով ալյուր կծախի,— դիմեց ոտարականը ամենքին։

— Վո՞րտեղից ես, վարպետ,— հարցրեց Ուհաննես բիձեն։

— Ռոմանովի հողիցն եմ։

— Ուհաննես բիձա, մի հարցրու տես՝ վո՞ր քաղաքիցն ե,— խնդրեց մի գյուղացի։

— Բա քաղաքի անունն ինչ ե, բարեկամ, կրկին հարցրեց Ուհաննես բիձեն։

— Սըրվագ։

— Սըրվա՜գ, յերկարացնելով ու խորհրդավոր կրկնեց Ուհաննես բիձեն։

— Ի՞նչ ասավ, Ուհաննես բիձա։

— Սըրվագ։

— Պա՜հ, քու տունը չքանդվի... ծափ տվին ու ծիծաղեցին մի քանի գյուղացի։

— Ենտեղից եստեղ քանի ամսվա ճանապարհ ե, շարունակում եր հարց ու փորձը Ուհաննես բիձեն։

— Յերեք ամսվա։

— Պա հո՜...— միաբերան զարմացան ամենքը։

— Համեցեք, ղարիբ ախպեր, նստի հաց բերեն. հաց անուշ արա։

— Չե, շնորհակալ եմ, վռազ եմ— ձեզանից ով ալյուր կըծախի, մի չափ ալյուր տա՝ գնամ։

— Աղջի, մի չափ ալյուր դուրս բերեք,— դռնից ձեն տվավ Ուհաննես բիձեն,— գլուխ-գլուխ լցրեք։

Հարսներից մեկը մի չափ ալյուր դուրս բերավ, ուզեց դատարկի մարդու տոպրակի մեջը, բայց նա թող չարավ։

— Ի՞նչ արժե...

— Ածա՛, դեռ ածա տոպրակիդ մեջը։

— Չե, առաջ մի գինն իմանանք։

— Դեռ ածա, հետո կիմանաս. թե վոր թանգ լինի, դատարկելը հեշտ ե։

Վարպետը իր տոպրակը բաց արավ, հարսն ալյուրը մեջը դատարկեց ու գնաց։

— Դե հիմի ինչ տամ,— հարցրեց ծոցից քսակը հանելով։

— Վոչինչ, վարպետ, վոչինչ չի հարկավոր, փեշքեշ. մեր աշխարքումը ղարիբից հացի փող չեն առնի, այդ տեսակ ադաթ չը կա... ասավ Ուհաննես բիձեն ու շարունակեց իր չիբուխը ծխելը։

Վարպետը մի քիչ շփոթվեց, շեմ ու շում արավ ու գնաց։

3

Նրա գնալուց հետո մի կարճատև լռություն տիրեց. ապա խոսեց մի գյուղացի։

— Են որը մինն ել եր յեկել թե՝ մածուն եմ ուզում։ Հարսները մածուն դրին առաջին. կերավ պրծավ, հիմի վեր եկացել թե՝ ինչ արժի։

Ասում եմ՝ ինչը...

Թե՝ մածունը...

Ասի՝ այ մարդ, գլխիցս քաշվի, այդպես բաներ մի խոսի, թե չե վոչխարի յեղած կաթն ել կը ցամաքի...

— Այ տղա բա ինչպես անենք... են լա՛վ ե, վոր գա, ձրի ուտի ու տանի... Են որը մեկին ել յես իմ մի խան ալյուր չափել տվել... այդ ուր կերթա... մեջ ընկավ Ուհաննես բիձու փոքր յեղբայրը։

— Վոր գա, մին ել տուր...— գլուխը վեր քաշելով հանդարտ խոսեց Ուհաննես բիձեն։

— Ոջախդ շեն կենա,— վրնչացին մի քանի ծերեր։

— Աչքս լուս եղի՛։ Սովածից սկսած ով գա՝ չափ տուր կասես յես նրանց համար եմ աշխատել... Ով գալիս ե՝ բարով, հազար բարի, բան ե ուզում, փողը բերի, տանի...

Ու սկսեցին վիճել։ Ուհաննես բիձեն էլ տաքացավ, աղմուկը մեծացավ։

Ո՜ւ, ո՜ւ, ո՜ւ... Ջրերում սողում եր յերկաթուղին։

Նոր եր մտել նա մեր ձորերը։

---

24. Կաղնին ու յեղեգը

Ա. Խնկոյան

«Ա՛յ յեղեգ,
ինչ ցեղեք».—
ասավ ահագին
կաղնին յեղեգին։
«Քո ուժդ, ինչ ե,
վոր քամին փչի՝
կամ պետք ե սողաս,
կամ փռվես—դողաս։
խլեղ ու ճլեղ,
Մասիս սարն եմ, տես.
արեր, գիտես,
չի հասնում գոտիս,
Մրրիկը՝ վոտիս։
Գայիր եղի՛,
վողորմելի,
իմ ստվերի տակ բուսնեյիր,
վատ յեղանակ չը տեսնեյիր։
իմն ե կյանքը ես աշխարհում».
Խոսքը բերանում,
մին էլ ողում,
մըթնոլորտում
վորոտ, ճայթոց,
ամպի պայթոց,
կայծակ ահեղ,
կարկուտ հեղեղ,
խենթ ու խլոտ
քամին գլվոտ
փնչուն,
վրչուն
իրան առած,
մի սոսկալի
մրրիկ դառած՝
գլեց,—
խլեց
կաղնին տակից
ու յերկնքի
յոթը հարկից,
վոր չը շփեց
ցածի ժայռին,—
փշրեց, թափեց
հսկա ծառին։

---

25. Խուլ ու համրը

— Կանչեցեք, խնդրում եմ, իսկույն կանչեցեք իմ դուստր Արփիկին, ասաց հայրը խուլ ու համրերի դպրոցի ծառային.— Յերեք տարի ե, վոր յես նրան չեմ տեսել. այս րոպեյիս եմ օտարությունից վերադարձել։

— Այժմ դասամիջոց ե, պատասխանեց ծառան,—կերթամ վարժուհուն կասեմ։

Քիչ հետո դուռը բացվեցավ, Արփիկը վարժուհու հետ ներս մտավ։

Հայրը վրա պրծավ, գրկեց, համբուրեց և ինքն իրան ասաց.

— Ա՜խ... ինչպես մեծացել ե, վո՜րչափ սիրունացել ե իմ հոգյակս։ Հարգելի վարժուհի խնդրում եմ՝ ասացեք աղջկան, վոր մի բան ասե նշաններով, դուցե հասկանամ։

Վարժուհին ծիծաղելով հարցրեց.

— Արփիկ, ո՞վ ե քեզ մոտ յեկել։

— Հայրս, պատասխանեց աղջիկը։

— Ի՞նչ... միթե իմ Արփիկը խոսել գիտե, միթե նա լսում ե. վո՛չ, վո՛չ, այդ անկարելի ե... ասա, աղջիկս, միթե դու խոսում ես, ասա շուտ...

— Հարգելի պարոն, մեջ մտավ վարժուհին։ Արփիկը չի լսում վոչ ձեր ասածը և վոչ էլ իր խոսածը. դուք գիտեք, վոր նա խուլ ե, բայց նա նայելով ձեր շրթունքների շարժումներին, հասկանում ե՝ թե ինչ եք խոսում և ձեզ կարող ե պատասխանել։

Հայրը տարակուսանքի մեջ ընկավ, նա մոտեցավ և աղջկա ականջից հարցրեց.—Ուրա՞խ ես, վոր հայրդ վերադարձել ե։

Աղջիկը տրտում նայեց ու բան չասաց։ Հայրը զարմացավ, իսկ վարժուհին ժպտաց և ասաց.

— Արփիկը չպատասխանեց, վորովհետև չտեսավ ձեր շրթունքների շարժումները. կրկնեցեք ձեր հարցն այնպես, վոր նա տեսնի ձեր բերանը։

Հայրը նայեց աղջկա յերեսին և ասաց.—Ուրա՞խ ես, վոր հայրդ վերադարձել ե։

— Այո՛, այո, ուրախ եմ պատասխանեց Արփիկը։

Ավելի լավ համոզվելու համար, նորից հարցրեց.

— Արփիկ, ինչ ե մորդ անունը։

— Աննա։

— Քրո՞ջդ։

— Հեղինե։

— Այս ինչ ուսումնարան ե։

— Խուլ ու համրերի։

— Յերկու անգամ տասը ինչ կանե։

— Քսան։

Հայրն ուրախությունից լաց եղավ.—Շնորհակալ եմ, օրիորդ, հարյուր անգամ, հազար անգամ շնորհակալ եմ։ Ներեցեք, վոր չեմ կարող արտահայտել շնորհակալությունս։

— Ձեր աղջիկը գիտե նաև գրել, կարդալ, համրել, հարկավոր բաների անուններ, ասաց վարժուհին.— մի յերկու տարուց հետո ավելի բան կը սովորի։ Մեր դպրոցն ավարտողները կյանքի մեջ իրենց համար զբաղմունք գտնում են, վորանք խանութներում լավ ծառայում են։

Հայրը զարմանքից քարացել, մնացել եր. վերջապես ասաց.

— Թույլ տվեք տեսչին ևս շնորհակալություն հայտնել։

— Նա այստեղ չե. դուք շնորհակալություն հայտնեցեք նույնպես այն խուլ-համր աղջկան, վոր Արփիկին մոր նման նայում, խնամում ե. նա Արփիկին կարի դաս ե տալիս, կարգ ու կանոնի ե սովորեցնում, ամեն բանի մեջ ոգնում ե և միշտ հետն ե լինում։

— Կանչիր, Արփիկ ջան, կանչիր քեզ խնամք տանող ընկերդին, ասաց հայրը։

Քիչ հետո Արփիկը նրա ձեռքը բռնած բերեց հոր մոտ։

— Ահա, հայրիկ, ահա այն բարի աղջիկը, վոր ինձ ամեն բանի մեջ ոգնում ե, ասաց Արփիկը։

— Ա՜հ, պատվական ընկեր, գոչեց հայրը.— Բարի աղջիկ, ընդունիր իմ անկեղծ և խորին շնորհակալությունը. լեզվով անկարող եմ ասել այն, ինչ զգում եմ։

— Դուք ձեր աղջկան այսոր հյուր տարեք, ասաց վարժուհին,— Թող նա մի քիչ ձեր մոտ մնա և կարոտն առնի։

— Շատ շնորհակալ եմ, ասաց հայրը և հայտնեց Արփիկին, վոր շորերը հագնի։

Մի քանի րոպեից հետո Արփիկը հոր հետ դուրս յեկավ դպրոցից.

— Վոհ, ինչ գեղեցիկ ե արևը, ասաց Արփիկը և ուրախ գնաց իր հայրիկի հետ։

26. Լուսաբացին

Հ. Հակոբյան

Նորից յեկա այցելության
գործարանի պարիսպներին,
յերկաթակուռ այն շենքերին,
վորոնք մի օր շունչ ավեցին իմ յերգերին։

Ահա մոտ նրա շեմքով—
ինձ վողջունեց արթուն սուլիչ,
մեքենաներն ուրախացան
ու խնդացած՝ արձակեցին յերկաթե ճիչ։

Իրար անցան ճախարակներ,
ժիր փոկերն ու պըտուտակներ,
շոգեմուրճը հպարտ թնդաց
ու վորոտաց. դեռ չե՜մ հոգնել, դեռ չե՜մ հոգնել։

Նրան խմբով ձայնակցեցին
չարաճճի հազար մուրճեր.
ծըլվըլալով գըըընգացին,
կըլկըլացին՝ վորպես ուրախ դեղձանիկներ։

Յեվ այս ժխոր-համերգի մեջ
մեծ քուրան եր հուրհրատում,
և անհանգիստ կայծը անշեջ
առավոտյան նոր կյանքի յերգն եր պատրաստում։

27. Տպարանում

Ստ. Լիսիցյան

Զվարթ և ուրախ ե տպարանում։ Գրաշարների ձեռքերը ավելի արագ և աշխույժ են շարժվում, տառերը իրենք իրենց են թռչում կասսաների աչքերից և իրար կողքի շարվում։ Ամենքի յերեսին մի խորհրդավոր ժպիտ ե

շողում։ Մինչև անգամ գրաշար ծերունի Միխոն, նա էլ եր ժպտում։

Իսկ ներքևում, տորբին հարկում, տպագրական մեքենան ժիր դղրդում ե, տպիչ Գասպարի յերգը գիլ հնչում՝ «Սա ե մեր վերջին կռիվը»...

Զարմանալի տղա յե Գասպարը։

Ամեն առավոտ, թշերը կարմրած, ժպտուն աչքերով, գլխարկը ծոծրակին քաշած, յերեսը մաքուր լվացած՝ Գասպարն ուղղակի փողոցից ներս եր վազում գրաշարանոցը, մեկ շարքից մյուսին վազելով, աջ ու ձախ վողջունելով՝ «բարի լուս, քեռի Հակոբ, բարի լուս, Սիմոն բիձա, էյ, ընկեր Կարապետ, գալուստդ

բարև», և առանց պատասխանի սպասելու շտապում էր կանգնում ծերունի Միխոի առջև։

— Բարի աջողում, Միխո ապեր, այս գիշեր վո՞նց էյիր, կըռնակդ հո այսօր էլ չի՞ ցավում։

— Չէ, չէ, Գասպար ջան, այսօր լավ եմ, շատ ապրես, աչքիս լույս,— և Միխոի ճակատի խոր կնճիռները հարթվում էյին և արյունկալած աչքերում փայլում էր հայրական գգվանքը։

Իր կոշտ ձեռքը մեկնում էր ու սեղմում Գասպարի փոքրիկ թաթը։ Գասպարն իջնում էր ցած։

— Բարի լույս, Սոնա բաջի,— կանչում էր նա գեղեցիկ տպագրական մեքենային։— Հանգստացա՞ր հա՞, իմ նազան։

Ու մոտենալով սկսում էր քնքշությամբ շոյել մեքենայի մեծ անիվը, կողքերը, հետո կապում էր գոգնոցը, առնում էր ձեթե ամանը ու ձեթ ածում մեքենայի բոլոր ծակոտիկները, որ մեքենան փափուկ, անաղմուկ բանի։

— Պառկել ես, Սոնա բաջի, պառկել, նազդ չես ուզում կոտրես... Նազ ու տուզով ես ժաժ գալի։ Շուռ արի, շուռ արի, տեսնեմ։

Մեքենապետը քմծիծաղ տալով, ականջ էր դնում իր աշկերտի այս շատախոսությանը և շարվածքը պարփակում, սարքում։ Գասպարն անհամբեր սպասում էր, թե յե՞րբ պիտի գա իր հերթը, մեքենային թուղթ տալու ժամանակը։ Վերջապես յերբ մեքենան պատրաստ էր լինում, Գասպարը կանգնում էր բարձր պատվանդանի վրա և սկսում էր թերթը թերթի յետևից հասցնել, դարսել մեծ թմբուկի վրա։ Մեքենայի մեծ անիվը հետզհետե ավելի արագ էր պտտվում, թմբուկն ավելի շտապով էր թերթերը փախցնում, շարվածքը կրող տախտակը ավելի վոգևորված էր գնում գալիս, և հետզհետե ավելի վոգևորված էր հնչում առավոտյան յերգը։

«Սոնա բաջին վազում է, վազում է,
Թուղթը թղթին դարսում է, դարսում է»...

28. Ուռի

Ա. Խնկոյան

Գիժ քամին դաշտում
սուլում է, խաղում.
Նորատունկ ուռին
արմատից դողում։
Ծռվում է, ծալվում,
չունի նա նեցուկ,
արցունք է թափում
լալիս է ծածուկ։
Աշնան անձրևը
մաղում է վերից,
քամին տալիս է՝
գրկում տերևից։

Դաշտը լայն ծով է,
կանանչ արբեցում.
դողում է ուռին
տխուր վշվշում։
«Ինչո՞ւ տնկեցին
ինձ ճամփի վրան,
ինչո՞ւ ինձ տվին
գիժ քամու բերան»։
Վոչինչ չի ասում
դաշտը անսահման,
լալիս է ուռին
խեղճ վորբի նման։

---

29 Պայթուն հանքում

Հ. Մելիք-Հայկազյան

1

Յես բանում էյի հանքի խորքում, գործիքովս քանդում էյի ապառաժը։ Ընկերս ծալապատիկ նստած ճրագը ձեռքին լույս էր անում։

Հանկարծ մեր ականջին հասավ մի խուլ հեռավոր դղրդյուն։

— Ի՞նչ էր,— բացականչեց ընկերս, վոտի կանգնելով վախեցած։

Մեր մոտից մի մարդ անցավ վազեվազ. նա հևում էր։

— Ի՞նչ եք կանգնել անշարժ,— գոչեց նա առանց կանգ առնելու,— չլսեցի՞ք... գազի պայթունը... Շուտ փախեք դուրս։

Յեվ անհետացավ։ Նույն վարկյանին մեր ճրագները հանգան և մենք թաղվեցինք թանձր խավարի մեջ։ Ոդը սաստիկ խեղդող դառավ։

Գլխապատառ վազում ենք, սայթաքելով ամեն մի քայլափոխի։

Բայց ո՞ւր ենք վազում։ Մեր աջ ու ձախից ձգվում են անհաշիվ վոլորուն անցքեր, գալերիներ, վորոնք նույնպես թաղված են խավարի մեջ. Նրանց վրա գտնվում է նույն տեսակ մութ գալերիների մի ուրիշ շարք, ապա յերրորդը — չորրորդը։ Ի՞նչպես գտնենք մեր ճանապարհը այդ ահագին լաբիրինթոսի մեջ։ Այս սոսկալի ստորերկրյա աշխարհում, յերբ զրկվել էյինք մեր անբաժան ընկեր՝ լապտերի լույսից։ Սովորական ժամանակ այդտեղ

դես ու դենից լուսավոր կետեր են յերևում, բանվորների լապտերները։ Իսկ այժմ... Մարել են մեր այդ կենսատու աստղիկները, իրենց հետ տանելով մեր կյանքն ու մեր հույսերը։

Վազում ենք սակայն։ Հանկարծ մեր առաջ թանձր ծուխի մի պատ է բարձրանում։ Մռայլ, գարշելի հոտ ունեցող խավարը պատել է մեզ չորս կողմից, այրում է մեր դեմքերը։ Գլուխս պտույտ է գալիս։ Խեղդվելու վրա ենք։ Յեվ խելագարի պես յետ ենք վազում այս դժոխքից։

Բայց ուր ել վոր գնում ենք այդ անիծած գազերը անանցնելի պատնեշի նման մեր ճանապարհը կտրում են ու յետ հրում։

Միևնույն տեղում չենք կարողանում մնալ, դես ու դեն ենք նետվում, շրջում, պտտվում այդ մութը հանքում, վորը չի ուզում մեզ բաց թողնի ու պինդ բռնած պահում է մեզ իր մռայլ ճիրաններում։

2

Բոլորովին հոգնած և հույսս կտրած՝ յես մեքենաբար ձեռքս տանում եմ գրպանս։

Ի՞նչ կա այնտեղ. ժամացույցս, մի հասարակ պարզ ժամացույց ժանգոտված ու մաշված, վորի վրան հանքը մի անջնջելի դրոշմ է դրել։

Բայց զարմանալի է. այդ ժամացույցը այժմ ինձ վրա մի տարորինակ տպավորություն է անում։

Նա միակն է այս քաոսի մեջ, վոր մի կանոնավոր, խելացի բան է ներկայացնում։ Նա մեզ միացնում է ամբողջ աշխարհի հետ։ Նրա չրխկչրխկոցը զարմանալի կերպով ինձ հանգստացնում է ու սիրտ տալիս։ Նա կենդանի է, նա խոսում է։ Կարծես ասում է ինձ. «Պինդ կաց, սիրելիս, խելքդ մի կորցնի, աշխատի՛ աշխատի հարատև և կանոնավոր, և կը փրկվես...»

Ա՛խ, այդ բարեբեր չրխկչրխկոցը։

Ի՜նչքան նա սփոփել է մեզ բոլորիս մեր այդ օրերի դերեզմանային դաժան կյանքի ժամանակ, յերբ մենք սաստիկ սովի, ծարավի ու հոգնածության ազդեցության տակ կատարյալ հուսահատության եյինք հասնում։ Մեզանից ամեն մեկը վերցնում եր նրան, շոյում, փայփայում, ականջին դնում, լսում ու անվերջ լսում, և չեր ուզում բնավ բաժանվել։ Կատարյալ յերեխա եյինք դարձել։

Յես շուտ-շուտ ժամացույցս լարում եյի, վոր չկանգնի։

3

Ժամացույցիս չրխկչրխկոցը վերադարձրեց ինձ սառնասրտությունս։

— Չե՛, պետք չե վոր հուսահատվեմ,— ասի ինքս ինձ։

Ընկերներս անշարժ պառկած եյին հուսահատ։ Վճռեցի հույսի մի նշույլ վառել նրանց սրտում և ստիպել շարժվելու։

— Լսեցե՛ք, ընկերներ, մեզ կանչում են. հանքը զարկում են,— գոչեցի յես։

«Հանքը զարկում են». ինչ գրավիչ խոսքեր մեզ պես կորած, կյանքից կտրված մարդոց համար։

Դա նշանակում եր, վոր այնտեղ, վերևում, ուր վոր փայլուն արեգակը շոյում է յերկիրը իր տաք վոսկեղոծ ճառագայթներով, այնտեղ արդեն մտածել են մեր մասին և ամեն ջանք գործ են դնում մեզ ազատելու։

«Հանքը զարկում են». սա մի ձայն է, վոր յերաժշտությունից ել քաղցր է, վոր իջնում է վերևից պահապան հրեշտակի նման մեր հույսերը վառ պահելու և հորդորելու, վոր մենք համբերությամբ տանենք մեր բոլոր նեղությունները, մինչև վոր մեր փրկիչները գան հասնեն մեզ։

Հանքը զարկելը հաղորդակցության մի միջոց է, իր տեսակի մի հեռախոս, ի հարկե շատ ավելի պարզ ու հասարակ։ Նրա միջոցով հանքահանները իմաց են տալիս իրար, յերբ մեկի հետ դժբախտություն է պատահում, զարկելով այդ նպատակով շինված խողովակը, վոր իրար է միացնում գալերիները։ Նույն բանն են անում վերևի-հարկից վտանգվածների մասին տեղեկություն ստանալու համար։

Յեվ տեսեք, ինչ տարորինակ բան է մարդու յերևակայությունը։ Այդ ձայնը, վոր գոյություն չուներ, նրանք բոլորն ել պարզ լսում եյին։

Արագ վոտի թռան, և նորից ճանապարհ ընկան։

4

Գնում ենք անվերջ նեղ անցքերով, բարձրանում ենք, իջնում, մագլցում, սահում։

Գալերիի վերի մասում մի ինչ վոր պատնեշի յենք հանդիպում, ձեռքերով շոշափում ենք և ամբողջ մարմնով ցնցվում։ Դա դիակների մի ամբողջ դեզ է կուտակված և դես ու դեն ցրված։

Դիակները դեռ սառած չեն։ Պարզ եր, վոր մեր գալուց քիչ առաջ եյին մտել իրենց հավիտենական քունը։ Խեղճե՛ր. յերևի նրանց բանելու տեղը շատ մոտիկ է յեղել պայթումի տեղից և մեզանից շուտ են յենթարկվել վատ գազերի ազդեցությանը։ «Անշուշտ մեզ ել նույն վիճակն է սպասում մոտ ապագայում»,— մտածում եմ յես և դարձյալ ցնցվում։

Շտապով թողնում ենք այդ սոսկալի վայրը և գնում... անվերջ գնում:

Վոտներս տանում են ինձ բոլորովին մեքենաբար. եվ չգիտեմ թե վորտեղ ենք գտնվում մենք, ուր ենք գնում: Մտքերս չեմ կարողանում կենտրոնացնել մեր դրության վրա, վոր վորոշեմ անելիքս: Շարունակ մտածում եմ իմ սիրելիների մասին. արդյոք բախտ կունենամ նրանց նորից տեսնելու: Ի՞նչքան լաց ե լինում յերևի կինս՝ փոքրիկիս գրկած, ինձ անշուշտ կորած համարելով:

Բոլորս լուռ ենք, տխուր մտածմունքների մեջ խորասուզված:

Հանկարծ մեր առաջ մի բան ե շարժվում մթության մեջ: Յեվ լսվում ե մի ձայն, մի մարդկային ձայն, վորի մեջ մի անսահման ուրախություն եր հնչում:

— Ահա, ահա գալիս են մեզ ազատելու:

Այդ մի ձայնից հետո լսվում ե յերկրորդը, յերրորդը: Նրանք հինգ հոգի եյին: Տեղներիցս վեր ենք կենում և վազում դեպի մեզ:

Մթության մեջ փնտրում ենք իրար, ձեռներս պարզած, աչքակապուկ խաղացող յերեխաների նման: Տալիս ենք մեր անունները և հայտնում, վոր մենք ել նրանց նման հանքի դժբախտ բանտարկյալներ ենք: Դժվար ե նկարագրել խեղճերի հուսահատությունը...

Առաջարկեցինք, վոր մեզ միանան ու գնանք միասին հանքի յելքը փնտրելու: Յեվ գտանք... Բան որ գետնի տակ, խավարի մեջ, անտանելի տառապելուց հետո յելքը գտանք:

---

30. Հույս

Ռ. Պատկանյան

Թող փչե քամին պաղ-պաղ յերեսիս,
վերեն ամպերեն սառնիկ ձյուն թող գա.
վորքան վոր կուզե թող փչե հյուսիս,
հուսով եմ, վաղ-ուշ գարունը պիտ գա:

Թուխպը թող պատե յերկինքը պայծառ,
թանձր մառախուղ յերկիր թող փակե,
տարերք աշխարհիս խառնվին իրար,
հուսով եմ, վաղ-ուշ արև պիտ ծագե:

Թող գա փորձություն, թող գա հալածանք,
խավար թող դառնա անաղոտ լույսը.
սարսափելի չեն յերբեք տառապանք,
միայն չը հատնիր փրկության հույսը:

---

31. Մի շաբաթ ծառի վրա

Վ. Փափազյան

1.

Յերևակայեցեք, մի ամբողջ շաբաթ բնակվեցի յես մի թթենու վրա: Այն ժամանակ, վորքան հիշում եմ, պետք ե 13—14 տարեկան լինեյի: Անհագին տղա և մի ամբողջ շաբաթ ծառի վրա...

Չեմ հիշում՝ ինչ մի ծանր հանցանք եյի գործել, և գուշակելով վոր յերբ հայրս գար՝ անշուշտ խիստ պատժելու եր ինձ, մտածեցի խուսափեմ: Մեր բակում, ճիշտ փողոցի դռան առաջ, կար մի կիսաչոր բարձր թթենի, վոր իր բարձրության վրա բաղկաթոռի նման մի բան եր կազմել:

Բարձրացա այնտեղ, հետս առա մի ներքնակ, մի բարձ, պարզեցի ճյուղերի վրա, հարմարեցրի, հետո ծածուկ իջնելով մի առ մի վեր հանեցի մի աման լիքը ջուր, հաց, պանիր և տեղավորվեցի վերևում:

Հայրս կեսօրին տուն յեկավ, վորոնում եր ինձ վոր պատժի, բայց յերբ նրան ցույց տվին ծառն և վրան թառած այլանդակ թռչունը, չը կարողացավ ծիծաղը զսպի:

— Լա՛վ,—կանչեց նա ինձ,—մնա՛ այդտեղ, տեսնենք ով կը զղջա վերջը:

Ու մնացի:

Անշարժ նստած մեխվել եյի մի տեղ ժամերով. եվ յերևակայեցեք՝ ինչ տանջանք պիտի լիներ. են ել մի այնպիսի պատանու համար, վոր սովոր եր շարժուն կյանքի, սիրում եր վազվզի, թռչկոտի, մտնի ամեն տեղ, յելնի փողոց, տանիքների վրա մագլցի ..

Այո՛, իրավունք ուներ հայրս. չեր անցել յերկու ժամ, վոր արդեն զղջում եյի խենթությանս վրա: Սակայն համառել եյի, չեյի կոտրվում՝ իջնեմ, պատիժս կրեմ, զոնե ներողություն խնդրեմ ու ազատվեմ:...

Ուրեմն պետք եր մի բանով զբաղվեյի: Մի քիչ ճյուղեր կըտրտեցի թափեցի ցած. տերևները թքոտում կպցնում եյի բուռիս և թըխկացնում. հետո դիտեցի շրջակայքը, ծառի վրա իջնող թռչունները, շուռ յեկա այս կողմ, այն կողմ, մտածեցի քնեմ... Բայց անտանելի եր. կողերս ել ցավում եյին, տեղս ել սկսում եր անհանգիստ թվալ...

Ջանացի իջնեմ ծածուկ, մի քիչ վազվզեմ, շարժեմ վոտներս: բայց հայրս բաց լուսամուտում նստած, դեմքը ուղիղ իմ կողմը՝

հարցում եր։ Ո՛հ, տանջանք եր, վոր յերևակայել չեք կարող։

— Կարդա՜մ...—ծաղրեց հանկարծ մտքումս.—չե՞ վոր ահա հայրիկը կարողանում է այդքան յերկար մի տեղ նստել ու անշարժ կարդալ։ Գուցե յես էլ կարողանամ։ Ա՛խ, ձեռիս մի հետաքրքրական գիրք լիներ...

Ցերեկոյեան հենց վոր հայրս գործով տնից դուրս գնաց, իսկույն ցած սահեցի։

Ամենից առաջ քիչ վազեցի, յեղբայրներիս ու քույրերիս նեղացրի, բարկացրի, հետո ճաշից ինչ վոր մնացել եր՝ կերա, մտա անկողինս ու քնեցի։

2

Մյուս առավոտ հայրս թեև շուտ զարթնել, անշուշտ տեսել եր ինձ անկողնիս մեջ, սակայն անխոս դուրս եր գնացել։

Զարթնելուս պես շտապեցի, վոր յելնեմ ծառիս վրա, քանի դեռ չեր վերադարձել։

Սակայն նախ քան բարձրանալս, մտա հորս գրադարանը և ընտրեցի մի գիրք, մի մեծ գիրք։ Առաջի յերեսից միքանի տող կարդալով տեսա, վոր աշխարհաբար պատմություն եր։ Առա ու դո՜ւրս...

Մանր տառերով տպված այդ գիրքը՝ դուրս յեկավ վոր պարզ լեզվով գրած մի շատ հետաքրքրական բան եր։

«Սոս ու Վարդիթեր»,—կարդացի կողի վրա։ Մեր հայանի գրող Պռոշյանի վեպն եր։ Գյուղական կյանքի մանրամասն նկարագիր պարզ, մեր խոսած լեզվով, հետաքրքրական...

Ամենայն հափշտակությամբ սկսեցի կարդալ ու կարդալ։

Կարդացի յերկար, շատ յերեսներ... չը գիտեյի քանի ժամ եր անցել, յերբ հայրս տուն յեկավ։ Ներս մտավ թե չե՝ կանգնեց ու աչքերը գցեց վրաս։ Կռացա, մեր ակնարկները միմյանց հանդիպեցին։

— Ի՞նչ ես անում այդտեղ,—հարցրեց նա զարմացած։

— Կարդում եմ, հայրիկ։

— Կարդո՞ւմ ես, դասե՞րդ ես սովորում։

— Վո՛չ, ուրիշ գիրք է։

— Վո՞րտեղից է։

— Քո գրադարանից։

— Ի՞նչ բան է։

— «Սոս ու Վարդիթեր»։

— Ա՛, ինքդ ընտրեցիր։

— Այո։

— Յեվ հասկանո՞ւմ ես։

— Բոլորը։

Մի քիչ լռեց, նայեց ինձ, հետո ժպտաց, քայլեց դեպի ներս, ասելով

— Այդպես գիրքը կարդալ ցածումն էլ կարող եյիր... Բայց, վոչինչ, կարդա...

Յեվ յերբ ուզում եր ներս մտնի, դարձավ ու ավելացրեց։

— Իսկ յերբ կը պրծնես՝ յես քեզ ուրիշը կըտամ, նույնքան և գուցե ավելի հետաքրքրական...

3

Մի շաբթվա ծառի վրա ապրելս այնքան օգուտ տվավ ինձ, վորքան չեր տվել ամառվա ամբողջ արձակուրդը։ Յերբ ես չարությունից չարություն, խաղից խաղ՝ սպանում եյի ժամանակս, մնում եյի ազատ և կարծում եյի թե առանց այն էլ՝ դպրոցը շատ է ծանրաբեռնում գլուխս։ Յեվ յեթե պիտի ուսում ստանայի, զարգանայի, դպրոցն էլ բավական եր։

Սխալված եյի։

Այն օրվանից, յերբ առաջին անգամ ինքնաբերաբար կարդալ սկսեցի, յերբ յոթ օր ծառի վրա թառած, իրար յետևից յերեք-չորս գիրք կարդացի, այն օրվանից յես բոլորովին այլ կերպ սկսեցի նայել կարդալու վրա։

Սկսեցի մտածել, մտածել սովորեցի և ինձ թվում եր, թե անցկացրած տարիներս շատ հիմար կյանք եյի վարել։

Ծառի վրա շատ բան պարզվեց ինձ համար, և յերբ իջա, այլևս այն պատանին չեյի, վոր խաղում, վազում եր աննպատակ. մտածում եր միմիայն ուտելու, խմելու և զվարճության մասին և վոր իր մեկը մյուսից ավելի անհամ չարություններով զզվեցնում եր շրջապատողներին և նույնիսկ իրեն։

4

Մի օր կեսօրին իջել եյի, խոհանոց մտել։ Քաղցել եյի. մինչև հորս վերադարձը կարծում եյի, թե մի բան կուտեմ և կը հասնեմ տեղս յելնելու, յերբ հանկարծ փողոցի դուռը բացվեց և յես խոհանոցից, հայրս դռնից, դեմ ու դեմ յեկանք։

Շվարեցի. բնազդաբար փախա, առաջին հանդիպած դռնից ներս ընկա ու յետևիցս փակեցի։

Հայրս յերևի վճռել եր բռնի ինձ, մոտեցավ դռանը և հրեց։

—Բա՛ց—ասավ նա։

Ձայն չը հանեցի. ամոթից, վախից, շվարմունքից պապանձվել եյի։

—Ա՛, դու բաց չե՞ս անում,—կանչեց հայրս,—լավ ուրեմն,

այժմ յես դրսից կըկողպեմ քեզ՝ այդտեղ և տեսնենք ինչպես կապրես այսուհետև։

Ու սկսեց գործադրել ասածը։ Լսեցի փակի ձայնը, հետո բանալիքի դառնալը։

— Հայրի՛կ, — կանչեցի ներսից։

— Ի՞նչ կա, — կանգ առավ նա։

— Իզուր ես փակում, յես դուրս կըգամ։

— Դո՞ւրս կը գաս։

— Այո՛։

— Պատժից չե՞ս վախենում։

— Ո՛չ, դու ինձ այլևս չես պատժի։

— Չե՞մ պատժի. ինչո՞ւ։

— Որովհետև յես զղջացել եմ արած յիմարութեանս վրա և ներողություն եմ խնդրում։

— Այդպե՞ս...

Դուռը բաց արավ. յես էլ բացի և յայտնվեցի շեմքի վրա։ Նայեց յերեսիս առանց շարժվելու, նայեց յերկար, հետո մի քայլ յետ քաշվեց ու ասաց.

— Ուրեմն...

— Ների՛, հայրի՛կ, այսուհետև էլ ինձ չես տեսնի ոչ հիմար, ոչ էլ փոքրոգի...

— Այդպե՞ս, ասավ նա ժպտուն, — իրա՞վ է։

— Իրավ է։

— Հավատում եմ... Գիրքդ պրծե՞լ յես։

— Ո՛չ դեռ։

— Քեզ համար մի նոր գիրք եմ բերել. յերբ ձեռքինդ վերջացնես՝ նա կարդա... Իսկ առ այժմ՝ գնա լվացվի և ճաշի...

Հայրս քայլեց դեպի պարտեզ։

— Լսի՛ — ձայնեց նա ինձ բակի մեջտեղից, — յերբ կարդալ ուզենաս՝ գրադարան մտի և դուռը յետևից փակիր, որ քեզ չխանգարեն...

—

Այսպես եր ահա, որ ծառ յելայ երեխա և այնտեղից իջա պատանի։

——

1) Մարդ իր ամբողջ ուսումը դպրոցո՞ւմ է ստանում: Ուրիշ ի՞նչ միջոց կա ուսումը լրացնելու:

2) Ազատ ընթերցանությունը ինչո՞վ է տարբերվում սովորելուց:

32. Աշխատանքն ածխահանքում

Ն. Սարգսյան

Քարածուխը գտնվում է հողի տակ, յերբեմն կես վերստ և ավելի խորության մեջ։ Այդ խորությունից նրան դուրս հանելու համար մարդիկ փորում են խոր հանքահորեր։ Մի ծանր և վտանգավոր աշխատանք։ Պետք է փորել զանազան տեսակի շերտեր. յերբեմն քարային, յերբեմն էլ փափուկ հողաշերտեր։ Թե մեկ և թե մյուս տեսակի շերտերի փորումը կապված է բազմաթիվ դժվարությունների ու վտանգների հետ։ Քարային շերտը փորելու ժամանակ բանվորն իր քլունգն ու բահը ստիպված է մի կողմը դնել. այդտեղ պետք է գործել վառոդով կամ մի այլ պայթուցիկ նյութով։ Հաճախ է պատահել, վոր այդ պայթյունների ժամանակ առաջացել են մեծամեծ դժբախտություններ։ Պակաս վտանգավոր չէ նաև փափուկ հողաշերտի փորումը։ Բանվորը փորում, առաջ է անցնում և մեկ էլ հանկարծ հողաշերտը փլում է և իր տակը վողջ-վողջ թաղում մարդկանց։ Այդ է պատճառը, վոր այդպիսի հողաշերտեր փորելիս, պետք է բացված անցքն ամրացնել հենարաններով։ Սակայն այդ հենարանները շատ անգամ չեն կարողանում ծառայել իրենց նպատակին։

Այսպիսով մեծ դժվարություններով ու զոհերով, վերջապես, պատրաստում են հանքահորը։ Սկսվում է այնուհետև իսկական աշխատանքը, ածխահատումը։ Բանվորը ծանր քլունգը ձեռքին, ուժեղ հարվածներ է հասցնում քարածուխի զանգվածներին։ Քարածուխը մեծ ու փոքր կտորներով պոկվելով՝ ընկնում է ցած։ Քիչ անցած՝ բանվորի առաջ գոյանում է մի մեծ ածխակույտ։ Պետք է շուտով հեռացնել ածխակույտը այդտեղից։ Յեվ ահա

տեսնում ես մի բանվոր մի փոքրիկ սայլակ հրելով՝ մոտենում է ածխակույտին։ Շուտով ձեռքով կամ բահերի միջոցով ածուխը լցվում է սայլակի մեջ։ Սայլակը հետ է գնում. նա ածուխը տանում է այնտեղ, որտեղից պետք է դուրս հանեն լույս աշխարհ։ Մինչև սայլակը կրկին հետ կդառնա, քլունգը շարունակում է իր գործը և շուտով բանվորի առաջ նորից գոյանում է ածխակույտ։ Սայլակը տանում է և այդ։ Այսպես մի կողմից քանդվում է, մյուս կողմից դուրս տարվում։ Հողի տակ առաջանում է մի բացվածք, որ գնալով հետզհետե մեծանում է։ Փորող բանվորը հետևում է շարունակ քարածուխի ընթացքին, ինչ ուղղությամբ որ ընկած է քարածուխը, այն ուղղությամբ էլ նա առաջ է գընում։ Վերջը հողի տակ առաջանում է մի մեծ հրապարակ, որից դեպի զանազան կողմեր գնում են փողոցներ։ Հաճախ այս փողոցների աջ և ձախ կողմերից ես փորվում են փոքր ու նեղլիկ անցքեր։ Լայն փողոցներում աշխատելն այնքան էլ դժվար ու ծանր չի։ Այդտեղ բանվորը կարողանում է ուղիղ կանգնել, նըստել, վեր կենալ, զանազան շարժումներ կատարել, մինչդեռ նեղ անցքերում բանվորը ստիպված է լինում աշխատել նստած կամ չոքած, յերբեմն էլ անցքն այնքան նեղ է լինում, որ նա նստել անգամ չի կարող և պետք է աշխատի անպատճառ պառկած։

Բավական չէ, որ այդ նեղլիկ անցքերում մարդ հազիվ է կարողանում շարժվել, մյուս կողմից էլ ածխափոշին, որ հետզհետե նստում է դեմքի վրա, թափվում աչքերը, բերանն ու քիթը, այս հեղձուցիչ օդը, միանգամայն անտանելի յեն դարձնում աշխատանքն այդ անցքերում։ Սակայն բանվորը ստիպված է աշխատել և անտրտունջ շարունակում է նա իր գործը։

Այդ նեղլիկ անցքերում կուտակվող ածուխը մեծ, հասակավոր բանվորներն իրենց սայլակներով դուրս տանել չեն կարող։ Դրա համար էլ այդ աշխատանքը կատարում են սովորաբար յերեխաները. սրանք առանց դժվարության մտնում են նեղլիկ անցքերը, հավաքում ածուխը լցնում իրենց փոքրիկ սայլակները և դուրս տանում։ Պատահում են յերբեմն այնպիսի նեղլիկ անցքեր, որ յերեխաներն անգամ չեն կարողանում ուղիղ կանգնած միջով անցնել և ստիպված են լինում կռանալ։ Այդ դեպքում մի փոքրիկ յերեխա կռացած առջևից քաշում է սայլակը, իսկ մի ուրիշն էլ հրում է հետևից ձեռքերով, յերբեմն էլ գլխով։ Սայլակը շատ անգամ 7–8 փութ ծանրություն է ունենում։ Ահա այդ ահագին ծանրությունը փոքրիկ յերեխաները մերկ, բոկոտն, սուր ծայրեր ունեցող ածուխի կտորների վրայով քաշելով՝ տանում, տեղ են հասցնում։ Տեղ են հասցնում թե չէ, նստում են, հանգստանում։ Բանվորները դատարկում են նրանց բերած սայլակը։ Սայլակը դատարկ է կրկին և յերեխաները վերցնում են այն և նորից վազում դեպի մկան անցքերը։

Կյանքը ծանր է ածխահանքի մթության, խոնավության տակ ու հեղձուցիչ օդի մեջ։ Այնտեղ, գետնի խորքում այնքան տոթ է, որ մարդիկ սովորաբար հանում են իրենց շորերը և մերկ աշխատում։ Ածխափոշին նստում է նրանց քրտնած մարմնի վրա և քրտինքի հետ շաղախվելով՝ ծածկում մարմինը ածուխի շերտով։ Ածխափոշին լցնում է և նրանց աչքերն ու թոքերը։ Այդ է պատճառը, որ բանվորները հաճախ ստանում են թոքախտ հիվանդությունը և շատ վաղաժամ իջնում գերեզման։

Բայց այդ բանը դեռ բավական չէ։ Ածխահանքերն ունեն նաև իրենց հատուկ աղետները։ Հաճախակի տեղի ունեցող փըլուզումները, հրդեհները, ջուրն ու պայթյունները բանվորների կյանքն ամեն րոպե վտանգի տակ են պահում։ Ածխահանքերը, հայտնի է, որ փորվում են գետնի խոնավ շերտերում, դրա համար էլ այնտեղ շարունակ ջուր է հավաքվում։ Այդ ջուրը ջրհան մեքենաներով միշտ ածխահանքից դուրս են հանում, բայց յերբեմն պատահում է, որ չեն կարողանում վրա հասնել և ջուրը հավաքվում, լճանում է ածխահանքերում։ Լճանալով ջուրը՝ յերբեմն իրեն համար ճանապարհ է բացում այս ու այն կողմից և թափվում այնպիսի տեղեր, ուր բանվորներ են աշխատում։ Այդ ժամանակ բանվորներն ահաբեկված վազում են դես ու դեն և շատ անգամ յելք չգտնելով՝ ընկնում են ջրի մեջ և խեղդվում։

Մեծ վնաս են հասցնում բանվորության նաև հրդեհները։ Քարածուխը շատ դյուրավառ նյութ է, դրա համար էլ հեշտությամբ զանազան պատճառներից վառվում է և հրդեհ առաջ բերում։ Յերբեմն էլ ածուխը վառվում է ինքն իրեն։ Ածխափոշին ու ածխի փոքրիկ կտորները խոնավությունից հաճախ այնքան են տաքանում, որ իրենք իրենց սկսում են այրվել և հրդեհ առաջացնել։ Հրդեհը շատ հեշտությամբ ծավալվում է հանքահորի զանազան մասերում։ Այդ ծավալման առաջն առնելու համար հանքահորի ազատ մասերը պատնեշներով բաժանում են հրդեհին յենթակա մասերից։ Հաճախ այդպիսի հրդեհների զոհ են գնացել հանքահորերում տասնյակ ու հարյուրավոր բանվորներ։

Բայց հանքահորի ամենասարսափելի աղետը պայթուցիկ գազի պայթյունն է։ Այդ գազը դուրս է գալիս ածխահանքից և կուտակվում հանքահորի այս կամ այն մասում։ Զափազանց դյուրավառ ու դյուրաբորբոք է այդ գազը. ամենափոքրիկ ու աննշան կայծից անգամ բռնկվում է նա և առաջ բերում սարսափելի

պայթյուն: Յերբեմն պայթյունն այնքան ուժգին է լինում, վոր
ամբողջ հանքահորը կործանվում, տակն ու վրա յե լինում: Առա-
ջանում են սոսկալի փլվածքներ, ծածկվում են անցքերը և այդ
բոլորը այնքան անսպասելի, այնքան արագ, վոր վոչինչ չես կա-
րող փրկել: Անթիվ, անհամար են պայթյունների պատճառած
վնասները: 1908 թվին Դոնի շրջանի ածխահանքերից մեկում տե-
ղի ունեցած սոսկալի պայթյունի ժամանակ զոհ են գնում բոլոր
բանվորները, առանց բացառության, 300 հոգուց ավելի: Առաջ-
ներն այդ տեսակ պայթյուններ շատ ավելի հաճախ եյին տեղի
ունենում, քան այժմ, վորովհետև մութ ածխահանքերը լուսավո-
րում եյին սովորական ճրագներով, վորոնցից գազն անմիջապես
բռնկվում պայթում եր:

Ածխահանքերը ուրիշ յերկրներում պատկանում են մասնա-
վոր մարդկանց կամ ընկերությունների, վորոնք բանվորների
դառն աշխատանքով հարստանում են: Այսպես եր առաջները նաև
մեր յերկրում. այստեղ ևս բոլոր հանքերը պատկանում եյին մաս-
նավոր մարդկանց ու ընկերությունների, բանվորներն այստեղ ևս
զրկանքներ եյին կրում և զուրկ եյին իրենց իրավունքները պաշտ-
պանելու հնարավորությունից: Սակայն հեղափոխությունը տա-
պալեց հիմնովին այդ կարգերը: Ածխահանքերը դարձան բանվո-
րա-գյուղացիական կառավարության սեփականությունը: Բանվոր-
ներն իրենք յեղան իրենց աշխատանքի տերն ու տնօրենը և ի-
րենց բաղդի դարբինը:

---

33. Ճնճղուկը

Ի. Տուրգենև

Յես վերադառնում եյի վորսից և անցնում եյի այգու ծա-
ռուղիով: Շունս առջևս ընկած գնում եր: Հանկարծ նա քայլերը
դանդաղեցրեց և սկսեց դարան մտնել՝ ասես իր հանդեպ վորսի
հոտ առավ. Յես մտիկ տվի ծառուղու յերկայնքով և տեսա մի
ճնճղուկի ձագ, վորի կտուցի բոլորքը դեղնավուն եր և գլուխը՝
աղվամազ: Նա բնից վայր եր ընկել և նստել անշարժ՝ անօգնա-
կան փռելով հազիվ բմբլակալած թևիկները: Հենց այն է՝ իմ շունը
դանդաղ մոտենում եր նրան, յերբ յանկարծ մոտակա ծառից մի
սևակուրծք ճնճղուկ պոկվելով՝ քարի պես ընկավ հենց նրա դնչի
առջև, և ամբողջովին փշաքաղվելով, այլակերպ, հուսահատ ու
խղճալի ճիչով թռչկոտաց մի յերկու անգամ դեպի շան ատամնա
վոր բաց յերախը: Նա վրա ընկավ՝ վոր ազատի իր ձագուկին,

և ծածկեց նրան իր մարմնով: Բայց նրա փոքրիկ մարմինը ամ-
բողջովին դողում էր սարսափից, նրա փոքրիկ ձայնը վայրենա-
նում, խռպոտում էր, նա մեռնում էր, նա անձնազոհ էր լինում:
Ի՞նչ ահագին հրեշ պիտի լիներ նրա համար շունը: Բայց այնու-
ամենայնիվ նա անկարող յեղավ նստած մնալ իր բարձր, ան-
վտանգ ճյուղին... Նրա կամքից ավելի զորեղ մի ուժ նրան
վայր նետեց այնտեղից: Իմ շունը կանգ առավ, յետ-յետ քաշվեց:
Յերևում էր վոր նա էլ ճանաչեց այդ ուժը: Յես շտապեցի յետ
կանչել շփոթված շանս, և հեռացա ակնածելով: Այո, մի ծիծա-
ղեք: Յես ակնածում էյի այդ փոքրիկ, հերոս թռչնի առջև, նրա
սիրո մոլեգնության առջև:

---

34. Գելը

Հովհ. Թումանյան

1

Տիրան անունով մի յեզն ունեյինք: Մի ձմեռ ես յեզը կո-
րավ: Ախպերս ինձ ուղարկեց ման գալու: Ես էլ եսպես 16—17
տարեկան ջահել տղա յեմ: Գնացի գյուղի չորս կողմը ման յեկա,
բան չգտա: Գոմահանդ ունենք, այնքան էլ գյուղից հեռու չի:
Ասի՝ յեզը սովոր է, կարելի եդ կողմը լինի գնացած: Գնացի եդ
գոմահանդը: Գնացի, ես գոմը նայեցի, են գոմը նայեցի, վերջը՝
տեսնեմ դրուստ վոր յեզը մի գոմում է: Յեզը դուրս արի, դուրս
յեկա, տեսնեմ արդեն մութն ընկնելու վրա է: Սիրտս մի տհ ըն-
կավ: Տեսնում եմ, վոր լուսնով չեմ կարող գյուղը հասնեմ: Մը-
տածում եմ՝ գնամ, չգնամ:

— Ի՞նչ անեմ...

Չորս կողմս ամայի ձյունապատ դաշտ, շեն չկա, ձեն չկա.
Ձեռս էլ մի ճիպոտ ու մի դանակ:

Ի՞նչ պետք է անեմ: Բաղդիս անունը տվի, յեզն առաջս արի,
քշեցի: Մի քիչ տեղ անց էյի կացել, հանկարծ ես դառը քամու
հետ մի տխուր ձայն ընկավ ականջովս: Կանգնեցի, ականջ դրի...
Տեսնեմ գայլի վոռնոց է՝ ո՜ւ ու...

Ո՜ւ... ես վոռնոցին միացավ ամբողջ խումբը ու սարսափով
լցվեց դաշտը: Մտիկ տամ՝ վոր աջ կողմս հեռվում մթան մեջ
ջուխտ-ջուխտ վառված ճրագների մի բազմություն է շարժվում...
էլ ինչ. խիկույն հասկացա, վոր գայլերի աչքերն են—սոված վոհ-
մակ է... Յեզը յետ տվի դեպի գոմերն ու քշում եմ, վո՜նց եմ
քշում, վազում եմ, վո՜նց եմ վազում... յետ նայեմ, վոր արդեն
գալիս են: Յեզը թող արի, փախա ընկա գոմը: Ընկա գոմը. բար-

ձրացա սյուների գլխներին գերանների վրայի կոնգերից մեկին։

Կոնգերից մեկին վեր յելա։ Դեռ չեյի տեղավորվել — մին էլ տեսնեմ յեզանս դոռոցը բարձրացավ։

Յեզանս դոռոցը բարձրացավ ու իսկույն էլ կտրեց. խրխր-ոցն ընկավ։ Խրխռոցն էլ կտրեց, միայն գայլերի ժրնգժրնգոցն եմ լսում, ու լսում եմ՝ վոնց են լափում...

— Վա՜յ, Ծիրան ջան... դուրս թռավ սրտիցս։

Բայց ինչ Ծիրանի ժամանակն է։ Յես իմ գլուխս եմ լաց լինում, մտածում եմ թե՝ ես լավ եր, յեզնովը կլինեն մինչև կլուսանա, կամ կկշտանան ու կգնան, կամ ասում եմ, ինձ չեն գտնիլ... Դու մի ասիլ՝ սոված գայլի վոհմակ. յես հիսունին ասեմ, դու հարյուր իմացի, ձեռաց հալոել են, ու մին էլ տեսնեմ, մութը գոմը լցվեցին են ջուխտ-ջուխտ վառված ճրագները՝ ռեխ-ները բաց արած...

Գոռան...

Յեկել են լցվել, ներքևից ագահ-ագահ ինձ են մտիկ ա-նում։ Յես էլ չորացել եմ, մնացել վերևը գերանին կպած։ Մտիկ արին, մտիկ՝ ու թող արին դուրս գնացին։ Շունչս յետ յեկավ։ Ասի՝ «Էս լավ յեղավ, ազատվեցի»։

2

Դեռ ազատման խոսքը բերնումս, մին էլ ինչ եմ լը-սում։ Իմ վերևը կը-տուրը քանդում են, չանգերով հողը յետ են տալիս։ Արդեն լսում եմ չանգերը կոճերին են դիպ-չում...

Սառը քրտինքը վրա տվեց... Շտա-պեցի տեղս փոխե-ցի, անցկացա մյուս կոնգի վրա կուչ յեկա։

Բաց արին, կո-ճը վեր կալան, տե-սան տակին չըկամ։ Նրի յեկան ներքև։

Մտիկ արին, վոր մյուս կոնգի վրա յեմ. յետ դուրս գնացին։ Հիմի այս կոնգի վերևից սկսեցին քանդել կտուրը։

Դարձյալ տեղս փոխեցի։ Այդպիսով՝ նրանք քանդելով, յես տեղս փոխելով հասանք վերջին կոնգին։

Էլ ուր գնամ։

Յեկան մտիկ արին կատաղած ու յետ գնացին։ Քարգում են, վո՜նց են քանդում...

Մի սուր դանակ ունեյի գրպանումս, հանեցի բաց արի ու ձեռիս բռնած՝ սպասում եմ, ինձ սիրտ տալիս։

Իսկ հենց ականջիս վերևը քանդում են։ Քանդելով հասան կոճերին։ Հասան կոճերին, մինը կոճերի արանքովը թաթը մեկնեց վոր կոճը յետ քաշի։ Թաթը բռնեցի ու են սուր դանակովս դրութ կտրեցի... Թաթը փախցրեց, վոռնալով, կոնձկոնձալով յետ գնաց ու կտերն իրարով անցան։ Իմացել եյի, վոր գայլերի մինը յեթե վերավորվեց, մյուսները վրա յեն թափվում, նրան ուտում։ Ասի՝ ուրեմն սրան ուտում են։ Հիմի սպասում եմ, վոր սրան կուտեն կըպրծնեն, յետ կըգան։ Դարձյալ դանակս ձեռքիս սպա-սում եմ։

Ականջս ձենի է։ Գիշերվա մի ժամին՝ վոնց վոր յերազում մի բարակ ձայն եմ լսում։

— Ավո, հե՜յ...

Ինձ կանչում են...

— Միթե ինձ են կանչում... Միթե ախպերս է... Միթե մերոնք են... Գոմից ձայն եմ տալիս, գոռում եմ։

— Աղանիկ, հե՜յ... Այստեղ ե՛մ... Գոմում ե՛մ... Գայլերը ինձ ուտում ե՛ն... Ոգնեցեք, հե՜յ...

Նորից նրանք ձայն են տալիս, իմ ձայնը չեն լսում, թեև յես շարունակ կանչում եմ։

Մին էլ տեսնեմ հրացանները տրաքեցին, յետևից լսվեցին հեռացող գայլերի կաղկանձն ու մարդկանց հարահրոցը։ Պարզ ճանաչեցի յեղբորս ու մեր գյուղացի տղերանց ամեն մեկի ձայնը։

— Ավո, հե՜յ...

— Այստեղ ե՛մ... Այստեղ ե՛մ... Կենդանի ե՛մ...

Ներս թափվեցին գոմը։

— Ավո՜ ջա՜ն, Ավո՜ ջա՜ն, — ուրախացած ու զարմացած կան-չում են ամենքը։

Ցած յեկա վերջին կոնգի վրայից։ Ախպորս վիզն ընկա ու սկսեցի հեկեկալ։

— Էլ լաց մի լինիլ, Ավո ջա՜ն, նոր նոր մորից ծնվեցիր, — կանչեցին ես ու են կողմից, ու ինձ դուրս բերին դուռը, ուր թափված եյին մեր Ծիրան յեզան վոսկորները։

Դեռ լույսը չեր բացվել։

Հեռվից լսվում եր գելերի վոռնոցը։

35. Կենդանիների հավաքական ինքնապաշտպանությունը

Ն. Սարգսյան

Գեղ կանգնի, գերան կոտրի.

Փոքրիկ և առհասարակ թույլ կենդանիները իրենց զորեղ թշնամիներից հաճախ պաշտպանվում են ընդհանուր ուժերով։ Ճագարները, այդ խեղճ, վողորմելի ու վախլուկ կենդանիները յերբեմն միանալով միմյանց հետ՝ հաղթում են իրենցից շատ ավելի ուժեղ, կենդանիներին։

«Յես մառանում պահում եյի յերեսուն ճագար,—պատմում է մեկը,—առնետները մտնում են այնտեղ և սպանում մի քանի ճագար։ Այդ դեպքի հաջորդ օրը, յերբ մտնում եմ մառան, տեսնում եմ բոլոր ճագարները հավաքված մի անկյունում, մեջքները դարձրել են դեպի պատը և դունչները ցցած՝ նայում են։ Նրանց առաջ, հատակի վրա ընկած եր յերկու մեծ առնետ։ Մեկը նրանցից մեռած եր արդեն, իսկ մյուսը ծանր վիրավորված։ Պարզ է, առնետների և ճագարների մեջ կռիվ եր տեղի ունեցել. ճագարները խմբված՝ ընդհանուր ուժերով հարձակում են գործել նրանց վրա և հաղթել ու այժմ իրենց ապահով դիրքերում սպասում են նոր առնետների հարձակման։

Այդպես խմբովին, ընդհանուր ուժերով են պաշտպանվում գայլերի և այլ գազանների դեմ վարազները, ընտանի խոզերը, ձիերը և ամերիկական բիզոնները։ Վերջիններս գայլերի ու այլ գազանների մոտեցումը իմանում են հոտից, դեռևս շատ հեռվից և նախապես պատրաստվում են դիմադրության։ Նրանք բոլորը հավաքվում են միասին, թույլերին ու ձագերին տեղավորում են մեջտեղը, իսկ ուժեղները շրջան կազմած՝ կանգնում են ծայրերին, մեջքները դարձրած դեպի շրջանի ներսը, իսկ գլուխները՝ դեպի առաջ, յեղջյուրները պատրաստ։ Այդ դրության մեջ գայլերը մոտենում են նրանց, բայց յերբեք չեն համարձակվում հարձակում գործելու։

Ճիշտ նույն ձևով են պաշտպանվում նաև վայրի խոզերը կամ վարազները։ Մի ականատես պատմում է հետևյալը. «Անտառի մի ծայրում կար, վարազների մի յերամակ, վոր հանգիստ իր համար արածում եր ճահճի մոտ, մեկ ել հանկարծ մի մեծ գայլ անտառից դուրս գալով՝ հարձակվում է այդ յերամակի վրա։ Իսկույն վարազներն անհանգիստ խորդյունով իմաց են տալիս իրար վերահաս վտանգի մասին։ Անմիջապես հավաքվում են բոլորը. գոճիները առնում են մեջտեղը և կանգնում շուրջանակի։ Գայլը պտըտվում է նրանց շուրջը. ինչպես յերևում է, նա ցանկանում է մի

գոճի խլել և փախցնել։ Բայց այդ նրան չի հաջողվում, գոճիները բոլորը պաշտպանված են ամեն կողմից։ Այդ դրությունը շարունակվում է բավական յերկար։ Վերջը գազազած գայլը համբերությունից դուրս գալով՝ հարձակվում է գոճիներից մեկի վրա։ Վարազները կարծես հենց դրան եյին սպասում և անմիջապես թափվում նրա վրա ամեն կողմից։ Մի քանի րոպեյից հետո գայլի դիակը ընկած եր արդեն այնտեղ բզկտված ու պատառոտված։

Մեր ընտանի խոզերը նույնպես պակաս հերոսներ չեն վտանգի ժամանակ։ Մի անգամ յերկու գայլ հարձակվում են ընտանի խոզերի մի յերամակի վրա. խոզարածը գլուխը կորցրած չգիտեր թե ինչ անել. սակայն խոզերն առանց շփոթվելու, իսկույն հավաքվում, սեպի ձևով կանգնում են և սկսում հետզհետե մոտենալ գայլերին։ Դերերը շուտով փոխվում են։ Խոզերը սկսում են հարձակվել, իսկ գայլերը՝ պաշտպանվել։ Նրանցից մեկը մի կերպ գլուխն առնում ու փախչում է, իսկ մյուսը յետ-յետ գնալով՝ դեմ է ընկնում մի ծառի։ Վերջինս ուզում է ցատկում գործելով խոզերի վրայով փախչել, ազատվել, բայց իզուր։ Խոզերը նրան հենց այդ ժամանակ վայր են գցում և պատառ-պատառ անում։

Հայտնի է, վոր ամենակատաղի ու ամենաարյունարբու գազանը վագրն է, բայց դուրս է գալիս, վոր ընդհանուր ուժերով կարող են կենդանիները պաշտպանվել նաև նրա դեմ։ Դիտողությունները ցույց են տվել, վոր յերբ վագրը հարձակվում է գոմեշների վրա, նրանք վոչ թե ցրիվ են գնում և ամեն մեկը առանձին իր մասին մտածում, այլ, ընդհակառակը, հավաքվում են և միացած ուժերով հարձակվում նրա վրա։ Հովիվներն այդ շատ լավ գիտեն, դրա համար էլ գոմեշների հետ յեղած ժամանակ յերբեք յերկյուղ չեն կրում վագրից, լավ գիտենալով, վոր վտանգի ժամանակ գոմեշներն իրենց ևս կպաշտպանեն։ Յեվ իրոք. մի անգամ մի վագր հարձակվում է մի հովվի վրա. հովիվը սրտաճաք ընկնում է ցած։ Գոմեշներն այդ նկատելով՝ առանց շփոթվելու ամեն կողմից իսկույն հարձակվում են վագրի վրա և իրենց յեղջյուրներով այնքան հարվածներ հասցնում, վոր վերջը վագրը կոտրված, ջարդված ընկնում է գետին։

Ընդհանուր ուժերով պաշտպանվում են թշնամիների դեմ նաև թռչունները։ Այդ կողմից հայտնի են մանավանդ ճնճղուկները ու ծիծեռնակները։ Ով չի տեսել, թե ինչպես ծիծեռնակները վտանգի ժամանակ ծվծվում են և շուտով խմբվում միասին ու ընկնում իրենց թշնամու յետևից։ Այդպիսի դեպքում ծիծեռնակները վոչ միայն իրենց են ազատում, այլ և ուրիշ թռչուններին։

Այս բոլորը ցույց են տալիս, վոր իզուր չէ ասված՝
Գեղ կանգնի, գերան կոտրի։

36. Սար գնալը

Վ. Միրաքյան

Ահա գարնան հետ և շարան-շարան
դաշտավայրերից դեպի զով սարեր
ձգվեց սայլերի, ուղտերի քարվան—
փախչում են շոգից թե՛ թուրք, թե՛ հայեր։

Թնդում են ձորում զանգի հնչյուններ,
ձիերի խրխինջ, պայտերի դոփյուն,
մեկ-մեկի կցած անվերջ քարվաններ
քաշում է նառը, անհոգ մռնչում։

Վորը տանում է ալաչխի քեչան,
կուժն ու խնոցին, ճիպոտն ու չաթան,
վորն էլ զարդարված գիր ու փնջերով՝
որորվում, անցնում լեռան լանջերով։

Բայց նառն ինքնագոհ քայլում է հանդարտ,
բոժոժ ու զանգեր վզին ու կրծքին,
և որորելով կապերտներն ու զարդ,
գեղեցիկ հարսն է նա տանում մեջքին։

Մերթ բարկանալով կանգնում է հպարտ,
մերթ փրփուր թափում կատաղած բերնով,
մերթ յերկար շուրթը կախելով բարդ-բարդ
նա պարծենում է գեղեցիկ բեռով։

Ընկել է ճամպեն թունդ իրարանցում,
դոփում են ձիեր, սանձերը կրծում—
ազնիվ մետաքսից վոսկեթել գործած
ադաջարիններ թամքերին գցած։

Հուժկու կրծքերից կապած թալիսման,
արևելյան ճոխ արծաթն ու վոսկին,
ճերմակ զաթիրան, քողն ամպի նման
փափում են սիրուն հարսների դեմքին։

Լեռների տոնն է. մարդ և անասուն
ուրախ յերգերով դիմում են սարեր,
մոռնալով ձմռան քաշած վայնասուն,
ծաղիկ փնջելով անցնում են ձորեր։

Անցնում են արագ քոչ-քոչի միջով,
գարնան արևից փայլում են զենքեր.
յեվ թարմ, կենսաբույր թավիշ կանաչով
բացվում են, ժպտում սարվորի դեմքեր։

Փոքրիկ յերեխան պինդ մեջքին կապած,
խեղճ հովվի կինն էլ վազում է վոտքով,
ոգնում է մարդուն գոհ և սրտաբաց
բախտի վորոշած ծանր վիճակով։

Մայում են, բայում գառըն ու մաքին,
թնդում կովերի, հորթերի բառաչ,
իսկ թըրընգալով գոմեշը ձագին
կանչում է՝ դանդաղ վազելով առաջ։

Վազում են հոգնած շները հոտի
և լեզուն հանած թանչին են տալիս,
լսվում է հանկարծ ձայնը լակոտի,
վոր քոչից ընկած՝ կաղանչ է գալիս։

Քարվանի ծայրը սարերը հասավ,
հասավ ու ձուլվեց թուխ ամպերի հետ,
վրան-վրանի յետևից բուսավ
ծաղիկների մեջ գույն-գույն, սիզավետ։

Ալաչուխ, ղադա, անվերջ վրաններ
շրջան կազմելով սառն աղբյուրի ափին,
ինչպես ծեր արծվի կարկառած բներ,
հենվեցին մեկ-մեկ բարձր քարափին։

Գոշտեցի հայն էլ սառը ջրի կարոտ,
յեկել է, դրել բինեն այս ամառ
Լոք, Լալվար, Լեջան աղբյուրների մոտ,
շոգերից ազատ ապրելու համար։

Գուգարը սարերի սիզավետ լանջին
բազմել են հայի, թուրքի բինաներ,
բայց դարձյալ խառնված քոչ-քոչի միջին՝
դեռ յերերում են ուղտի քարվաններ։

Խրխնջում է ձին, կովը բառանչում,
բոլորն էլ իրանց յուրտն են ճանաչում.
բայում է անուշ ամլիկը գառան,
սարեր ու ձորեր նորից կյանք առան։

Գիշերը հասավ, մթին է ճամբան.
մարում է կամաց աղմուկը քոչի,
առվակի ափին քարվաններն իջան,
կանչում են՝ «տղերք, ապրանք չկորչի»։

Սայլերի ճռոց, վոչխար ու տավար
գտնելով ձորում գիշերն իջևան,
հանգիստ են առնում մյուս որվան համար։
կրակի վրա առվակի ափին
մի տեղ ընթրիք են շտապ պատրաստում,
մի տեղ էլ կորած գառանն ու հորթին
սար ու ձոր ընկած հովիվն է կանչում.
մի այլ տեղ ուրախ շրջան բոլորած
ուտում են նրանք կաթ ու խորոված։

Գիշերն էլ արդեն մնջում է, լռում,
հոգնած քոչվորին հանգիստ քուն բերում...
սարի փեշերը կախած մի ծայրին
Լալվարն էլ կարծես նույն վիշտն է զգում,
ինչպես վիրավոր արծիվը ժայռին,
թևերը փռած քոչվորին հսկում։

Բայց Լոք սարերի կանաչ լանջերում
մի բինա յել կա, վոր դեռ չի քնում,
այնտեղ խարույկի շուրջը բոլորած՝
տեսած ու լսած արկածն են պատմում,
և մեծ ու փոքր ականջներ լարած՝
աշուղ Գիքոյի յերգերն են լսում.

պատմում է, յերգում աշուղն անցյալից,
ձորերում տեսած հին իգիթներից.
կրակին գցած կաղնի մեծ գերան,
սարվորն էլ արթուն լսում է նրան։

---

37. Կյանքը մրջնոցում

Ն. Սարգսյան

1.

Խիտ ու մութ անտառ է. մեծ ու հսկա ծառեր, վորը կանգնած ուղիղ դեպի վեր, վորը ծռված և հենված կողքի ծառերին, վորը վայր ընկած։ Մեկը փարթամ դալարուն, մյուսը կիսաչոր կամ փտած. և այս բոլորը անկարգ, խառնի խուռն։ Ծառերի տակը և բներին՝ թավշանման մամուռ, թարմ, բաց կանաչագույն գորգի պես։ Գեղեցիկ է այդ գորգը, մանավանդ յերբ արևի ճառագայթները թանձր սաղարթի նեղլիկ անցքերով թափանցելով՝ ընկնում են նրա վրա, ժպտում ու գուրգուրում։ Ի՜նչքան յեռուն կյանք կա այդ սիրուն գորգի մեջ. ինչքան տեսակ-տեսակ կենդանիներ ժիր ու աշխուժ շարժվում են նրա մեջ։

Ահա և մի փոքրիկ բլրակ մեծ ու դարևոր կաղնու տակ, կյանքի յեռ ու զեռի մի ամբողջ աշխարհ. տասնյակ ու հարյուր հազարավոր մրջյունների մի քաղաք։ Բլրակի շուրջը ամենուրեք վխտում են մրջյուններ, ամենքը գործ են կատարում, ավելորդ վոչ մի շարժում։ Ահա մի քանի մրջյուններ արագ կերպով սպիտակ ձվաձև պարկեր են քաշքշում այս ու այն

կողմը և աշխատում ինչքան կարելի յե շուտ թաքցնել, պատսպարել նրանց։ Ահա մի քանի մրջյուններ ել քաշ են տալիս մեռած, անշնչացած մրջյունների դիակներ, նրանք տանում են նրանց թաղելու։ Մի այլ տեղ ել տեսնում ես մի քանի մրջյուններ հավաքված, աշխատում են ճյուղ քաշ տալ. ճիշտ ե այդ աշխատանքը նրանց ուժից վեր ե, բայց վոչինչ, նրանք շարունակում են իրենց գործը առանց հուսահատվելու, մինչև վոր կողքով անցնողները ոգնության են հասնում։ Ահա և յերկու մրջյուն մի կենդանի ճանճ բռնած տանում են դեպի մրջնոցի անցքը. դրանց յետևից գնում են մի խումբ այլ մրջյուններ։ Ինչպես յերևում ե, շատ վորս են ճանկել և լավ քեֆ են ուզում անել։

Այս բոլորը տեսնելով՝ մարդ այն տպավորությունն ե ստանում, թե այդ աշխատանքները կատարվում են մեկը մյուսից անկախ, անկարգ ու պատահական ձևով։ Բայց վոչ. մրջնոցում կյանքը յենթակա յե մեծ կարգապահության։ Այնտեղ ամեն մի մրջյուն իր գործն ունի և կատարում ե այն ճշտությամբ։ Այն մրջյունները, վորոնք մրջնոցը պաշտպանում են զանազան թշնամիներից, այլ գործով չեն զբաղվում։ Յեվ այդ կարգապահությունը յերբեք չի խախտվում։ Իսկ յեթե մրջնոցի գլխին վորևե մի աղետ ե պայթում, որինակ, յեթե այս կամ այն պատճառով մրջնոցը քանդվում ե կամ թշնամիներ են հարձակվում նրա վրա, այն ժամանակ այդ կարգապահությունն անմիջապես վերացվում ե. ամենքը դառնում են զինվորներ՝ և ամեն մեկը կատարում ե այն, ինչ կարող ե։

Ծանոթանանք մրջնոցի աշխատանքների հետ։

2

Մրջնոցի կարևոր աշխատանքներից մեկը պաշարի հավաքումն ե։ Պաշարի համար նրանք հավաքում են գլխավորապես հատիկներ։ Յերբ հատիկները հասունանում են, մրջյուններն ամբողջ խմբեր կազմած գնում են այնտեղ, վորտեղ պետք ե հատիկներ ժողովեն։ Տեղ հասնելով՝ նրանց մի մասը բարձրանում ե թփերը, հասնում հասկերին և սկսում շարժել ու թափահարել հասկերը։ Հատիկներն այդ շարժումներից թափվում են ցած։ Ներքևում գտնվող մրջյուններն իսկույն հավաքում են այդ հատիկները և տանում դեպի մրջնոցը։ Յեթե մրջնոցը շատ հեռու ե, այն ժամանակ մրջյունները ճանապարհի վրա մի քանի տեղ պահեստաներ են շինում՝ քարերի և կամ մեծ տերևների տակ և յուրաքանչյուր պահեստի մոտ նշանակում պահապաններ։ Այնուհետև հատիկները մի պահեստից տեղափոխում են մյուսը և այդպիսով վերջը բոլորը հասցնում մրջնոց։ Մի պահեստից հատիկները մա-

տակա պահեստը տեղափոխելու համար նշանակվում են հատուկ խմբեր։ Մրջնոցում հատիկները սկսում են տեսակների բաժանել. մեծերը բաժանում են փոքրերից, վնասվածները, ջարդվածները՝ անվնաս ծիլացածներից և յուրաքանչյուր տեսակը պահում առանձին-առանձին։

Բացի հատիկներից, մրջյունները հավաքում են նաև մեռած միջատներ, ծաղկի մասեր, փայտի կտորներ, տերևներ և այլն։ Այս բոլորը նույնպես մրջնոցում տեսակների բաժանում և ավելորդ մասերը անմիջապես հանում, հեռացնում մրջնոցից։

Հավաքված պաշարը մրջյունները տեղավորում են հատուկ ամբարի կամ շտեմարանների մեջ։ Մրջնոցում այդպիսի շտեմարաններ շատ կան։ Մրջնոցներ կան, ուր 80-100 հատ այդպիսի շտեմարաններ կան։

Պաշարը տեղափոխելուց հետո, մրջյուններն սկսում են հոգ տանել նրա պահպանության վրա։ Ամենից շատ նրանք աշխատում են այնպես անել, վոր հավաքված հատիկները չծլեն, դրա համար նրանք կրծում են հատիկի վորոշ մասերը և այդպիսով խանգարում ծլումը։ Սակայն մյուս կողմից ծլումն անհրաժեշտ ե, վորովհետև այդ ժամանակ հատիկը քաղցրանում ե. նրա մեջ առաջանում ե շաքար, վոր մրջյունների ամենասիրելի կերակուրն ե։ Ահա հենց այդ ե պատճառը, վոր նրանք հատիկները սկսում են կրծել միայն այն ժամանակ, յերբ ծլումն սկսված ե և հատիկի մեջ արդեն շաքար ե գոյացել։ Հայտնի յե, վոր հատիկները խոնավությունից փչանում են կամ ծլում։ Այդ շատ լավ գիտեն նաև մրջյունները և արևոտ յեղանակներից ոգտվելով՝ նրանք խոնավացած հատիկները հանում են ամբարներից, չորացնում և կրկին տեղավորում իրենց տեղերը։

Պաշարի հետ կապված բոլոր աշխատանքները մրջյունները բաժանում են իրենց մեջ։ Նրանց մի մասը պաշար ե հավաքում, մյուսները պահպանում են այդ պաշարը, և մի յերրորդ մասն ե հսկում ե այդ պաշարի մաքրության վրա։

3

Մրջյունները շատ են սիրում ուտել ափիդների արտադրած քաղցր հյութը։ Ափիդները մրջյունների կթան կովերն են. ինչպես վոր մենք կովեր ենք պահում նրանց կաթից ոգտվելու համար, այնպես ել մրջյունները ափիդներ են պահում՝ նրանց քաղցր հյութի համար։ Հաճախ մրջյունները մրջնոցում շինում են հատուկ տեղեր, ուրիշ կերպ ասած, գոմեր և ափիդներին պահում այնտեղ, խնամում ու կերակրում։ Ափիդները կերակրվում են կանաչ տերևներով, դրա համար ել մրջյունները շարունակ նրանց

համար թարմ ու հյութալից տերևներ են բերում։ Շատ անգամ մրջյուններն իրենց մրջնոցը շինում են այն ծառերին ու թփերին մոտիկ, վորտեղ ապրում են ափիսները։ Ծառերի վրա յեղած ափիսներին նույնպես մրջյունները պահում, խնամում են և, վոր գլխավորն է, պաշտպանում են զանազան թշնամիներից։

Յերբ պետք է կթել ափիսը, մրջյունը մոտենում է և իր բեխերը քսում նրա փորին։ Ափիսն անմիջապես արձակում է իր մարմնի յետևի մասից մի փոքրիկ կաթիլ քաղցր հյութ։ Մրջյունը իսկույն ագահությամբ կլանում է այն հյութը։ Բայց չէ վոր նրա կարիքը զգում են նաև մրջնոցում յեղողները. նրանց համար էլ պետք է բաժին տանել։ Իր քաղցը հագեցնելուց հետո, մրջյունը հավաքում է քաղցր հյութը իր բերանում և վազում մրջնոց՝ նրանով կերակրելու իր ընկերներին և մանավանդ այն փոքրիկներին, վորոնք դեռ թրթուրի վիճակի մեջ են գտնվում։

Ափիսների հետ կապված աշխատանքները նույնպես մրջյունները բաժանում են իրենց մեջ։ Մի մասը պահում, խնամում է նրանց, մյուսը՝ կերակրում, պաշտպանում, յերրորդը՝ կթում, չորրորդը՝ քաղցր հյութը վերցնելով կթողներից՝ կերակրում է թրթուրներին։

4

Մրջնոցի հետաքրքրական աշխատանքներից մեկն էլ մանուկ սերնդի հոգատարությունն է. դրանով զբաղվում է մրջյունների մի հսկայական խումբ։ Ահա մի կլորիկ, մեծ փորով մրջյուն. դա մրջյունների մայրն է. Նրա շուրջը խմբված են մեծ թվով մրջյուններ, վորոնք ամեն քայլափոխի հետևում են նրան և աշխատում, ինչքան կարելի յե, մոտ լինել նրան։ Մորը կերակրում են նրանք մեծ խնամքով։ Մրջնոց մտած ամենաքաղցր և ամենալավ պատառը նրան է պատկանում։ Առատ սնունդ ստանալով՝ մայրը շարունակ ձվեր է ածում։ Այդ ձվերը մրջյուններն իսկույն վերցնում են, առանձնացնում և սկսում լիզել։ Ձվերը դրանից հետզհետե աճում, մեծանում են. ինչպես յերևում է, լիզելու ժամանակ մրջյունների բերանից ձվի վրա թափված հյութը ծծվում է ձվի մեջ և նրան ուռճացնում։ Այդպես մրջյունները խնամում են ձվերը յերկու ամբողջ շաբաթ։ Այդ ժամանակի ընթացքում մրջյունները ձվերը շարունակ տեղափոխում են մի տեղից մյուսը՝ Յեվ այդ նրա համար, վոր պաշտպանեն ձվերը զանազան վտանգներից՝ ցրտից, տաքից, խոնավությունից և այլն։

Վերջը ձվերից դուրս են գալիս փոքրիկ, սպիտակ վորդիկներ կամ թրթուրներ, կույր և առանց վոտքերի։ Այդ անօգնական արարածներին պահելու ու խնամելու համար մրջյունները ահագին աշխատանք են գործ դնում։ Ընկած իրենց տեղը՝ նրանք

ամբողջ ժամանակը ուտել են ուզում և մրջյուններն այդ շատակերներին կշտացնելու համար վոչինչ չեն խնայում։ Մրջյունների մի ահագին խումբ զբաղված է միայն նրանց կեր հասցնելով։ Բայց միայն կերակրելը բավական չէ. նրանց պետք է մաքրել, սրբել, տեղափոխել մի տեղից մյուսը և այլն։ Այս բոլոր աշխատանքները կատարում են դայակ մրջյունները սիրով ու անտրտունջ։ Այդպես շարունակվում է թրթուրների հոգատարությունը, մինչև վոր նրանք հարսնյակներ են դառնում, այսինքն դառնում են այն սպիտակ ձվաձև պարկերը, վոր սովորաբար սխալմամբ մրջյունների ձվեր են անվանում։ Այդ ժամանակ մրջյունների աշխատանքը զգալի կերպով պակասում է, բայց այդ յերկար չի տևում։ Շուտով հարսնյակները պարկերի մեջ հետզհետե կերպարանափոխվելով իսկական մրջյուններ են դառնում և պետք է իրենց պարկերից դուրս գան։ Սակայն դրա համար, նրանք պետք է ծակեն պարկերի պատերը, մի բան, վոր մատաղ մրջյուններն անել չեն կարող։ Նշանակում է, այդ աշխատանքը ևս պետք է կատարեն դայակները։ Յեվ իրոք. այս վերջինները շարունակ ուշադիր կերպով անտղում են հարսնյակները և յերբ նկատում են, վոր նրանց մեջ արդեն մրջյունը պատրաստ է, ծնոտներով պատռում են պատյանը և մրջյունն այնտեղից դուրս հանում։ Նորելուկ մրջյուններին դայակները լվանում, մաքրում, սրբում են, գրգռում թևերը և ապա կերակրում։ Դայակներին օգնում է մրջյունների մի առանձին խմբակ, վոր զբաղված է մրջնոցը մաքրելով։ Հենց վոր մրջյունները դուրս են գալիս պատյաններից, այդ խումբը իսկույն հավաքում է մրջնոցից և հեռացնում է բոլոր դատարկ պատյանները և այլ զանազան մնացորդները։

5.

Շատ հետաքրքրական է նաև ինքը մրջնոցը. նա մի փոքրիկ թմբիկ է, կես արշին կամ միքիչ ավելի բարձրությամբ։ Բայց մի այդ չափ էլ գտնվում է հողի տակ, այնպես վոր ամբողջ մրջնոցը, իր հիմքից մինչև ծայրը՝ մի արշինից մինչև յերկու արշին բարձրություն է ունենում։ Նա բաղկացած է բազմաթիվ հարկերից։ Կան մրջնոցներ, ուր այդ հարկերի թիվը հասնում է յերբեմն 30–40-ի։ Յուրաքանչյուր հարկում շինված են միքանի մեծ և բազմաթիվ մանր սենյակներ։ Ամբողջ մրջնոցի ուղիղ մեջտեղում կա մի մեծ դահլիճ, վորի առաստաղը հենված է բազմաթիվ սյուների վրա։ Դահլիճից դեպի մրջնոցի զանազան կողմերը գնում են ահագին թվով միջանցքներ, վորոնք դահլիճը միացնում են զանազան սենյակների ու շտեմարանների հետ։ Մրջնոցի ներքևի մասը միշտ ավելի ամուր և կանոնավոր ձևով է շինված, քան վերևինը։ Մեծ մրջյուններն ապրում են գլխավորապես ներքևի և միջին մասե-

բում, իսկ թրթուռներն ու հարսնյակները՝ վերևի մասում:

Մրջնոցները սովորաբար այդպիսի ձև և կազմություն են ունենում, բայց տեղին ու հանգամանքներին նայած, յենթարկվում են հաճախ զանազան փոփոխությունների: Այդ կողմից ահագին նշանակություն ունի մրջյունների շատությունը. ինչքան մրջյունները շատ են, այնքան մրջնոցը լավ է և մեծ, և ինչքան քիչ, այնքան համեստ ու փոքր:

Մրջնոցում կյանքը միշտ հանգիստ ու խաղաղ չի անցնում, յերբեմն տեղի յեն ունենում արյունահեղ պատերազմներ: Հարևան մրջնոցը պաշար թալանելու կամ թրթուռները գողանալու դիտավորությամբ մեկ ել տեսնում ես հարձակում է գործում: Գալիս են հազարավոր, տասնյակ հազարավոր մրջյուններ, կանոնավոր զորքերի պես շարված: Թշնամիների մոտենալը իսկույն իմաց է տրվում մրջնոց: Բոլորը պատրաստվում են դիմադրության. ամեն մեկը անում է, ինչ կարող է: Մրջնոցի անցքերի մոտ կանգնում են զինվորները, ուժեղները. բայց մեծ մասը դուրս են, մրջնոցի շուրջը, նրանք թույլ չեն տալիս, վոր թշնամիները մոտենան մրջնոցին: Սկսվում է պատերազմը, արյունալի ու դաժան: Մրջյունները կռվում են մեկ-մեկ կամ խմբերով: Ուժեղ ու ամուր ծնոտներով բռնելով մեկ-մեկու վզից, վոտքերից, վոտից քաշում, քաշքշում են, անխիղճ ու անխնա: Կռիվը տևում է ժամեր, որեր, յերբեմն ել շաբաթներ: Կռվի դաշտը շուտով ծածկվում է հարյուրավոր ու հազարավոր կտրված և մարմնից անջատված գլուխներով, վոտքերով և փորերով: Շատերն ել մահացու վիրավորված ընկած են այս ու այն տեղ: Ընկածներին փոխարինում են նորերը, թարմ ուժերը: Սանիտարները հոգատար կերպով հավաքում են վիրավորներին և տանում մրջնոց, ուր նրանց հատուկ մրջյուններ խնամում և կերակրում են: Այդպես շարունակվում է դաժան պատերազմը: Յեթե հարձակվողներն ուժեղ են, ապա իրար հետևից գրավում են բոլոր դիրքերը և մտնում մրջնոցին: Այստեղ արդեն կռիվն ել ավելի սուր բնույթ է ընդունում, վորովհետև ամբողջ մրջնոցը վոտքի է կանգնում: Յեթե այստեղ հարձակվողները հաղթում են, այն ժամանակ սկսվում է թալանը: Թալանողները մրջնոցից դուրս են բերում ամեն ինչ: Կազմում են հատուկ խմբեր, վորոնք պատերազմի ավարը տանում են իրենց մրջնոցը: Հաճախ տանում են նրանք նաև փոքրիկ թրթուռներին և հարսնյակներին: Հաղթողները սրանց տանում են իրենց մոտ, խնամում և նրանցից դուրս յեկածներին պահում վորպես ստրուկներ, վորոնք այնուհետև կատարում են մրջնոցում ամենածանր աշխատանքները:

---

38. Բարեսիրտ աղվեսը

(Առակ)

Ար. Խնկոյան

Ծառի վրա յերեք ձագ,
իսկ աղվեսը նրա տակ
պլպլդել է ու լալիս,
թաթով գլխին է տալիս.
«Աշխարհ սուր է դառել…
Արյունը ջուր է դառել.
վորսորդ, աչքդ թող դուրս գա,
սրանից ել մեղք բան կա,
սպանեցիր խեղճ մորը,
ձագերն ընկան ես որը.
բնի մեջին քաղցած են,
ախ, ինչ տեսակ ձայն կածեն:
Իմ կույր աչքը տեսնում է,
սաս ձեռքս ել հասնում է,
վոր մի կտեմ վորբերին,
իմ հորն ու մորը խերին:
Այ թռչուններ,
թևավորներ,
վոր ձեզ չասեմ,
ել ում ասեմ.
վորբիկներ են ես անմարիկ
կանք, ջրեք, արեք բարիք.
թույլ միք տա, վոր սովից մեռնեն,
թևեր ավեք յելնեն թռնեն:
Կկուս այ քեզ պատրաստի բուն,
յերեք ձագի մայր յեղիր դուն:
Քեզնից փետուր
Տակները տուր.
դաշտից կեր բեր,
պահիր վորբեր:
Դու տատրակիկ,
հենց բան արա
խըղճի մոտիկ.
Այ, փոխանակ
Ողամիջի
յերդի, պարի,
յելևեջի,
խնդրեմ արի,
կըրկը վորդեր,
տուր ձագերին
խեղճ ու անտեր:
Դու, աղունիկ,
գթոտ մարիկ,
շատ լավ գիտես
ձագի կարիք.
խըղճա, հոգիս, յերեք ձագին,
խըղճա ու առ թևիդ տակին:
Յեվ դու, ծիծեռ,
չես խղճում դեռ,
յերբ լաց, հառաչ
աչքիդ առաջ
դաշտն է առել
ու ինձ վառել:
Դու յել, սոխակ,
խեղճի ընկեր,
կերի տեղակ
յերգիր, յերգեր:
Յերբ վոր փըչե մեղմ զեփյուռը՝
ծառի, ծաղկի ուղած հյուրը,
դու ել հետը ծառի ճյուղին
նանիկ ասա յերեք ձագին.—
Յերեք ձագին,
խեղճ ու մոլոր,
անուշ ձայնով
օրոր, օրո՛ր…
Թևավորներ
բա ինչ ասեմ
ձեր խըղճերին,
վոր չեք ոգնում
ես խեղճերին:
Ա՜խ, խլանամ,
Ա՜խ, քոռանամ,

Ես կսկիծը
վո՞նց մոռանամ։
Գոնե տատմոր ձենը լսեն
բնի միջին էլ չըսպասեն,
ծառից իջնեն,
շոյեմ,
շահեմ,
աչքի լույսի
նման պահեմ։
Իմ սանիկներ,
իմ ջանիկներ,
նախշուն ճուտեր,
քաղցած, անտեր,
գիրկըս արիք,
ձեզ ըսփոփեմ.
արցունքս հերիք
չափեմ,
թափեմ»։
Ես խոսքի հետ
յերեք ձագը
բնից ընկան
ծառի տակը,
ու տատմերը հափ ու հուփ,
ձագերն առավ ափ ու խուփ։

---

39. Շների մասին

1

— Զարմանալի կենդանիներ են շները, ասաց Հայկն ընկերներին.—ինչե՛ր ասես՝ չեն պատմում նրանց մասին։

— Հետաքրքիր է, Հայկ, պատմի՛ր, պատմի՛ր լսենք, խնդրեցին մյուսները։

— Շատ լավ, ասաց Հայկն ու սկսեց.

— Լսեցեք, պատմեմ։ Այսոր ուսուցիչը մի հոդված կարդաց։ Մի տանտեր մի քանի որ իրար վրա նկատում է, վոր սեղանի վրա դրած մսի կտորն անհետանում է։ Նա հետևում է և համոզվում, վոր իր շունը կամ կատուն պետք է արած լինեն։

Մի որ էլ դրսից լուսամուտի վարագույրի արանքով թագուն նայում ու դիտում է։ Կես ժամ չեր անցել,· ասում է տերը, շունը տեղից վեր կացավ, մոտեցավ լուսամուտին, դռներին և ականջ դրեց. յերբ համոզվեց, վոր ձայն չկա, մոտեցավ կատվին և դնչով խփելով՝ սեղանին նայեց։ Այսպես մի քանի անգամ կրկնեց։ Կատուն հասկացավ շան միտքը, թռավ սեղանի վրա և տապակած միսն առած՝ ներքև ցատկեց։

Շունն իսկույն վրա հասավ. միսը խլեց նրանից և սկսեց ուտել։

Տերն իմաց է տալիս ծառային, վոր դուռը բաց անե։ Յերբ շունը դռան ձայնը լսում է, իսկույն մսի կտորը բերանից գցում է և հաչելով՝ կատվի վրա յե հարձակվում։ Տերը շան խելոքությունը համարելով՝ նրան ներում է։

Մի մայր էլ ջրի յե գնում։ Տանը վոչ վոք չի լինում։ Մայրը գնալով շանն՝ ասում է.— Արաբ, Հրանդի քով կաց և լավ

նայիր։ Քիչ հետո շունը տեսնում է, վոր մի ոձ սողալով ներս է գալիս և սողում է դեպի յերեխայի որորոցը։ Արաբն իսկույն հարձակվում է ոձի վրա և նրան մի քանի կտոր անում։ Շան հաչոցից յերեխան տեղից վեր է թռչում և որորոցից ներքև ընկնելով՝ լալիս, լալիս՝ քնում է։ Արաբը մանկան մոտ նստած, հսկում է։ Յերբ մայրը ներս է մտնում և տեսնում է յերեխան որորոցից վայր ընկած, շան բերանն էլ արյունոտած՝— Վորդի՜ս, վորդի՜ս, գոռալով՝ ուշաթափվում է։ Յերեխայի լացն ու աղաղակը վերջապես մորն ուշքի յեն բերում։ Յերբ նա տեսնում է սպանված ոձին, նոր հասկանում է շան քաջագործությունը։

— Մեր փոքրիկ Զալումն էլ խելոք է, մեջ մտավ Սոնիկը։ Մի անգամ մայրս տանից դուրս գալիս ասում է.— Զալում, յերեխի մոտ կաց, մինչև վերադառնամ։ Զալումը մնում է։ Քիչ հետո, յերբ յերեխան լալիս է, Զալումը մոտենում է նրան, ձեռները լիզում է, ցածր հաչում է, հետը խաղալ է ուզում, վոր մանուկը ձայնը կտրե։ Յերբ տեսնում է, վո չի լինում՝ վազում, բերում է բակում թագցրած իր վոսկորը և նրան տալիս։ Մայրս վրա յե հասնում և ծիծաղում է Զալումի արածների վրա։

— Դրա նման բաներ յես շատ եմ կարդացել, մեջ մտավ Սիրուշը։ Որինակի համար՝ մի վարժեցրած վորսի շուն ամեն առավոտ շուկայից հաց, միս, ծխախոտ և այլ բաներ եր բերում։ Մի որ էլ հացթուխը փորձելու համար՝ շանը թոնրից նոր հանած տաք հաց է տալիս։ Շունը բարկացած հաչում է նրա վրա, փողն առնելով հեռանում է և էլ նրա մոտ չի գնում։ Մի անգամ էլ այդ շան տարած կապոցը ճանապարհին բացվում է, միջի միսը, գինու շիշը ցած են ընկնում։ Շունը վորչափ աշխատում է, չի կարողանում տանել, ստիպված՝ մոտը կանգնած պահում է։ Տերը զարմանում է, թե ինչու՞ շունն այսչափ ուշանում է. դրա համար դուրս է գալիս և ինչ է տեսնում։ Իր շան չորս կողմը մի քանի շներ հավաքված՝ ուզում են նրանից միսը խլել, իսկ սա կատաղի կերպով պաշտպանում է և չի թողնում իրենց մոտենալու։

— Մեծ գամփռներն էլ խելացի յեն, ձայն տվեց Աշոտը։ Գյուղում ինձ ցույց տվին յերկու մեծ գամփռ, իսկ և իսկ գայլ խեղդողներ։ Տերը մեկը հինգ վոչխարի հետ չեր փոխում։

— Այս գամփռներն են իմ տուն ու տեղը պաշտպանում, ասում եր տերը. նրանք վոչ միայն գայլերի հետ են կռվում և նրանց պատառում, այլև ամենակատաղի ավազակների դեմ և նրանց ձիուց վայր են բերում։

2

—Շները շատ լավ, հետաքրքիր և զարմանալի պատմություններ ունին, մեջ մտավ նորից Հայկը.—ինչպես օրինակ՝ վորսի, հրդեհի, կրկեսներում խաղացող և այլ տեսակ շները: Բայց իմ կարծիքով ամենքից հետաքրքիր են Բերնարի մեծ-մեծ շները: Սրանք բուք ու բորանից մարդկանց կյանքն են ազատում:

—Պատմիր, պատմիր մեզ նրանց մասին, ամեն կողմից կըրկնեցին մանուկները:

Բերնարի ապաստարանը, սկսեց Հայկը, գտնվում է Շվեյցարիայի լեռներից մեկի վրա: Այնտեղ մինչև անգամ ամառվա տաք օրերին հանկարծ ձյուն, կարկուտ է գալիս, բուք ու բորան է լինում և ճանապարհորդներին տակովը անելով խեղդում է: Ապաստարանում պահում են այդ խելացի մեծ շներին և նրանցից օգտվում են, մոլորվածներին ազատում են:

Ա՛յ թե ինչ է պատմում մի փոքրիկ ճանապարհորդ:

— Յես հորեղբորս հետ գնացի Բերնար: Ճանապարհին տեսանք այդ ուժեղ, գեղեցիկ; մեծ-մեծ շներից մի քանիսին: Նրանց վզերից կախած էյին զանազան ուտելիքներ ու վոգելից խմիչքներ: Նրանք ժայռերի, ձորերի և ձյուների մեջ ման էյին գալիս, վոր մոլորված ճանապարհորդներին կամ ձյունի տակ մնացողներին ազատեն և ապաստարան առաջնորդեն: Մենք ապաստարանում էյինք, յերբ մեկ էլ մի շուն ներս ընկավ և հաչելով հասկացրեց, վոր օգնության կարիք կա: Մենք դուրս յեկանք և գնացինք նրա յետևից: Խելացի կենդանին առաջ ընկած՝ հաչելով գնում էր և մեկ-մեկ էլ մեզ էր նայում, վոր տեսնի թե իրան հետևում ենք, թե վոչ: Բավական տեղ անցնելուց հետո նա կանգնեց մի բլրի մոտ և թաթերով ձյունը յետ արեց: Մենք նրան օգնեցինք: Ձյունը մի կողմ արինք և յերկու մարդ տակից դուրս բերինք: Խմիչքներ տալով, մարմինները շփելով, ուտեցնելով մի կերպ նրանց ուշքի բերինք և վերադարձանք վանք: Դեռ չեյինք հանգստացել, վոր մի այլ շուն հաչելով ներս ընկավ, նրա յետևից էլ մի կին: Նա արտասվելով պատմում էր, վոր իր տասը տարեկան վորդին ձորից ներքև գլորվեց ձյուների մեջ և էլ չերևաց: Յերկու ժամ չէր անցել, վոր ապաստարանի սպասավորներից մեկը շան հետ միասին ներս մտավ և անմխիթար մորը հանձնեց իր վորդուն:

Այդ շների մասին մեզ շատ բաներ պատմեցին: Նրանցից մեկը՝ Բարրին նույնիսկ քառասուն մարդ էր ազատել և դրա համար շքանշան ստացել:

40. Եշն ու սոխակը

Իշուկը մեկ սոխակ տեսավ,
— Մեկ ինձ նայիր,—նրան ասավ,—
ասում են՝ դու լավ ես յերգում,
բայց չըգիտեմ՝ ճի՞շտ են ասում.
յես ականջներ ունեմ լայն-լայն,
լավ եմ լսում ամեն մի ձայն,
բայց քո յերգը յես չեմ լսած,
թեև լսել շատ եմ ուզած:
Այս լավ յեղավ, վոր քեզ գըտա,
դե՛, մեկ յերգիր, մեկ բըլբըլա՛,
տեսնեմ ուղի՞ղ լա՞վ ես յերգում,
թե՞ իզուր են այդքան գովում:
Այնմեկ սոխակը նազ չարավ,
սիրուն կտուցը բաց արավ,
ուզեց ցույց տալ ավանակին,
վոր սուտ չեն գովում սոխակին:
Ձայնը լարեց և սկսեց...
Սոխակի ձա՜յն... ինչե՜ր չասեց.
մեկ դայլայլում, գեղգեղում էր,
այնպես շըվշըվում, սընգում էր,
վոր սար ու ձոր գըվգըվում էր.
լեռ. քարերն էլ դարձրին ուշ,
այնքան քաղցր էր, այնքան անուշ:
Վերջապես սոխակը լռեց,
եշի վճռին ականջ դրեց:
—Ե՛հ,—եշն ասաց,—վատ չես յերգում,
բայց յես շատ եմ ափսոսում քեզ,
վոր չես յերգում աքլորի պես.
յեթե մեր աքլորին տեսնես,
նրա յերգին ականջ դնես,
այնուհետև նրա նման
դու յել կերգես շատ աննման:
Այս վճիռը վոր իմացավ
մեր սոխակը՝
թևերն խփեց, թռավ գնաց
ու եշի մոտ էլ չըմնաց:

41. Ինչ եյին ասում սենյակի իրերը

Գիշեր էր. Վահանի քունը չէր տանում. Նա անկողնու մեջ այս ու այն կողմն էր շրջվում և անհանգիստ շարժվում։ Հանկարծ նա սենյակի մեջ լսեց չխչխկոց, թխթխկոց և զանազան ձայներ։

— Ի՞նչ ձայներ են, ովքեր են խոսողները, մտածում էր Վահանը. Նա լսեց և ծածուկ ականջ դրեց։ — Մ՜յ քեզ բան, աթոռներն են խոսում, ասաց նա ինքն իրան։

— Սպասեցեք, ընկերներ, բոլորս միանգամից չենք կարող խոսել, գոռաց մի աթոռ. յեթե ուզում եք, դուք լսեցեք, յես ձեր բոլորի ցանկությունը կկատարեմ և ամեն ինչ կպատմեմ։

— Պատմիր, պատմիր, ասացին ամեն կողմից աթոռները։

— Մենք բոլորս գեղեցիկ կեչի ծառեր եյինք, սկսեց աթոռը. մեր մանկության ժամանակ ամեն ինչ լավ էր, մենք անտառում ուրախ զվարթ եյինք։ Արեգակը մեզ տաքացնում էր, անձրևը ջրում էր, թռչունները մեզ վրա բներ եյին շինում, քաղցր յերգեր եյին յերգում։ Գյուղի աղջիկները, տղաները քանի-քանի անգամ մեզ մոտ եյին գալիս, մեր ստվերի մեջ հանգստանում, զվարճանում և կուշտ շունչ քաշելով՝ ասում եյին. «Ի՜նչ հիանալի յեն բուրում այս կեչիները։ Հիշո՞ւմ եք, ընկերներ։

— Ի՜նչպես չէ, ինչպես չէ, պատասխանեցին աթոռները։

— Բայց մենք անտառում շուտով ձանձրացանք. շատ անգամ դժգոհելով՝ մեկ-մեկու ասում եյինք. Ինչ է, շարունակ միենույն տեղումն ենք ապրում. ինչու պետք է հեռու չգնանք, նոր աշխարհներ չտեսնենք։ Մեր ցանկությունը շուտով կատարվեց. մի օր էլ գյուղացիք յեկան, կացիններով բոլորիս կտրեցին և տարան քաղաք հյուսնին վաճառեցին։ Նա մեզ սղոցով տաշեց, հարթիչով հարթեց, սոսինձով իրար կպցրեց, փորորկեց, լաքեց և շինեց աթոռ։ Մենք մարդկանց մոտ շատ պատիվ ունինք. հենց վոր հոգնում են, նստում հանգստանում են. կեցցենք մենք, այնպես չէ՞։

— Կեցցե՜նք, կեցցե՜նք, ձայն տվին աթոռները։

— Ի՞նչ եք այդչափ պարծենում, ասաց սեղանը, ավելի շուտ յես իրավունք ունիմ պարծենալու, վորովհետև յես ձեզ նման հասարակ կեչուց չեմ շինված, այլ մեծ և ամուր ընկուզենուց. տեսեք, իմ յերեսն այնպես վողորկ է, հայելու նման փայլում է. հյուսնը ինձ վոչ միայն լաքել է, այլ ապակյա թղթով մաքրել, կոկել է և փայլեցրել։ Այստեղ միայն յես և այս շորերի պահարանն ենք հարազատ յեղբայրներ ընկուզենուց շինված, կոկված, փայլեցրած։

— Մի՜թե, մի՜թե, ծիծաղեց մի աթոռ. յեթե այդպես է, ապա ինչու նա մեջքը պատին է կպցրել. կարծես մենք չգիտենք, վոր նրա մեջքը վոչ փայլուն է և վոչ էլ ընկուզենուց շինած, այլ ուռենուց, ամենահասարակ ուռենուց։

— Ձայնդ կտրիր, անպիտան, ասաց պահարանը. ինչպես ես համարձակվում ինձ պես ծերունու մասին այդպես խոսել. միթե ուռենին էլ ծառ չէ, ինչպես ընկուզենին կամ կեչին. ինչ անենք, թե մի փոքր թույլ է։ Յես տան ամենահավատարիմ բարեկամն եմ. ամեն տեսակ շոր իմ մեջն են պահում և յես չեմ թողնում, վոր այնտեղ փոշի, ցեց մտնի և գողն էլ գողանա։

2

Հանկարծ հատակի վրա մի բան գրնգաց. — Այդ ո՞վ է, մտածեց Վահանը և գլուխը քիչ բարձրացնելով՝ տեսավ պահարանի բանալին։

— Ի՞նչ եք պարծենում դուք, փայտյա ժողովուրդ, ասում էր բանալին։ Յես փայտից չեմ շինված, այլ յերկաթից։ Փայտը հեշտ կոտրվող, թույլ, այրվող և փտող է, իսկ յես ամուր և պինդ։ Յես, ինարկե, մետաղների ցեղից եմ, իսկ մետաղներ շատ-շատ կան. Նրանք թանգ են, բայց վոսկին և արծաթը ազնիվ մետաղներ են. յերկաթն ամենից հարկավորն է և ամեն տեղ պետք է գալիս։

— Մենք էլ յերկաթ ենք, մենք էլ, կանչեցին պատի մեջ խփված մեխերը։

— Ճշմարիտ է, ճշմարիտ, ասաց բանալին, դուք թեև պատի մեջ եք խփված և մարմնով փոքր, բայց և այնպես մարդկանց շատ պետք եք գալիս. էլ ինչեր ասես, ձեր փոքրիկ գլխից չեն կախում, իսկ մեր ամենից մեծը ամենից հարգելին այս մահճակալն է. նա իր վրա հանգստացնում է հոգնածներին, աշխատավորներին։ Հետաքրքիր է, մայրիկ, շատ հետաքրքիր է իմանալ, թե մենք վորտեղից ենք յեկել, ինչպես են մարդիկ ձեռք բերել. հերին մի փոքր առաջ փայտերն եյին մեկ-մեկու պատմում։

— Պատմիր, մայրիկ, պատմիր, մենք էլ իմանանք, կանչեցին ամեն կողմից մեխերը։

Վահանը ականջ դրեց։

— Ո՛հ, իմ վորդիք, սկսեց մահճակալը. մեր ցեղն այս աշխարհից չէ. մեր հայրենիքը հողի վրա չէ, այլ յերկրի խորքում, լեռների մեջ։ Մեր պապերն այնտեղ ընկած եյին յերկար, շատ յերկար ժամանակով, հարյուրավոր, հազարավոր տարիներով։ Մարդիկ յերկիրը փորելով՝ մեզ էլ հասան. այն ժամանակ մենք հանքային, անձև, կարմրավուն քարակույտ եյինք,

բան մեծ, բարձր ամուր հնոցների մեջ լցրին։ Ամենից առաջ մի հաստ շերտ քարածուխ, ապա հանք, ելի քարածուխ, ելի հանք և այդպես լցրին վիթխարի հնոցը և տակից վառեցին։ Կրակը քանի գնաց թեժացավ. մենք քիչ-քիչ տաքացանք, այնչափ տաքացանք, որ փափկացանք. վերջն էլ հալեցանք։ Մեկ էլ հնոցի տակի անցքը բացին, ինչ ասել կուզե, որ մաքուր հալված յերկաթը դուրս հոսեց։ Առաջ մեզնից շինեցին չուգուն, հետո հալեցին դարձրին պողպատ, կրկին հալեցին, վերջապես դարձրին փափուկ ծավալող յերկաթ։ Ել ինչե՞ր ասես, որ մեզանից չշինեցին՝ մուրճեր, ունելիքներ, բահեր, ուրագներ, արոր, խոփ, գրիչ, ասեղ, մկրատ, դանակ, մեքենաներ, թնդանոթներ և այլն և այլն։ Մի խոսքով, մեր ցեղն ամբողջ աշխարհը լցրեց և մարդկանց ամենապետքական միջոցը դարձավ։ Յեվ յեթե մարդիկ կամենում են իրանցից մեկի առողջությունը կամ հաստատ բնավորությունը գովել՝ ասում են—ա, նա յերկաթի բնավորություն ունի, յերկաթե մարդ է։

— Ինձ էլ ձեզ մասնակից արեք, մեջ մտավ ծեր վառարանը. չե՞ որ յես էլ դրսից յերկաթե հաստ թիթեղով եմ ծածկված. իմ դուռն էլ յերկաթից է. միայն իմ ներսն է աղյուսից շինված. բայց չե՞ որ աղյուսն էլ հողից, կավից և ավազից է շինված։ Ուրեմն յես ձեզ հետ ազգակից եմ։ Յես էլ օգտակար եմ. ձմեռը մարդիկ ինձ շատ են սիրում. հենց որ մրսում են, իսկույն ինձ մոտ են գալիս տաքանալու։

3

— Տաքությունը շատ լավ է, վառարա՛ն քույրիկ, մեջ մտավ լվացարանը. բայց չե՞ որ առողջության համար նույնպես պետք է մարմնի մաքրությունը։ Ա՛յ, հենց դրա համար էլ յես և իմ քույր սափորը օգտակար գործ ենք կատարում։ Մենք էլ թեև կավից ենք շինված, բայց ազնիվ թանկագին կավից։

— Քույրիկ, կարող ես դու ինձ պատմել, թե ինչպես են մեզ պատրաստել, հարցրեց սափորը։

— Ի՞նչպես չէ, պատասխանեց լվացարանը։ Մենք բրուտի մոտ հասարակ ցեխի նման վեր ընկած եյինք։ Մի օր նա մեզ վրա ջուր ածեց և ոտներով կոխեց, կոխեց, այնչափ կոխեց՝ մինչև որ մենք շատ փափուկ, մածուծիկ, կպչուն կավ դարձանք։ Հետո վարպետ բրուտը դրանից մի կտոր առավ, ձեռքերով բիճ ճմռեց և դրեց կլոր սեղանի վրա. սեղանը վոտի անիվով շարժեց. մի կողմից մենք կլորվում եյինք, մյուս կողմից վարպետի ձեռքի մեջ մի տեսակ ձև եյինք ստանում. մեկ էլ տեսնեմ՝ իմ մեջս փոս ընկավ, շրթունքներս կլորացան, ինքս ինձ նայեցի, չճանաչեցի։ Այժմ յես դարձել եմ մի գեղեցիկ լվացարան։ Տեսնում ես՝ վարպետն ելի պատեց սեղանը, մի գունդ կավ ձեռքին բռնած սեղմում, տրորում էր. հիմա ինչ պիտի դուրս գա, մտածում եյի յես։

— Չլինի՞ յես դուրս յեկա, ասաց սափորը։

— Այո, դու դուրս յեկար, վրա բերեց լվացարանը։ Հենց որ քեզ տեսա, այնչափ ուրախացա, որ քիչ եր մնում, սեղանից ներքև ընկնեյի։ Վարպետն ուրիշ շատ ափսեներ, պուտկներ, թեյամաններ, կաթնամաններ շինեց և յերբ մենք բավական լավ չորացել եյինք, տարավ մի մեծ վառարանի մեջ դարսեց։ Սա ինչ բան է, մտածում եյի յես, ինչո՞ւ է մեզ այստեղ բերել։ Քիչ հետո վառարանը վառեց. մենք ամբողջ օր ու գիշեր թեժ կրակի մեջ մնացինք, թրծվեցինք և ահա այս ձևն ստացանք։

— Դուք մարդկանց դրսից եք լվանում, իսկ մենք ներսից, վրա բերեց ջրով լիքը շիշը. այս բաժակն էլ իմ ցեղիցն է, բոլոր թեյի բաժակները նույնպես։

— Իսկ մեզ ինչից են պատրաստել, հարցրեց բաժակը։

— Մեզ հասարակ կավից չեն պատրաստել, ասաց շիշը. մենք մաքուր, դայլախազի լավ ավազ եյինք. մեզ հետ խառնեցին կալաքար և կրակի մեջ դրին։ Վորոշ ժամանակից հետո մենք հալվեցինք։ Մեկ էլ վարպետն յերկար յերկաթե խողովակը թաթախեց այդ հալվածի մեջ։ Մի քանի կաթիլ կպավ նրա ծայրին։ Վարպետը մյուս ծայրից սկսեց փչել, ապակու կաթիլներն ուռան, ուռան, փուչիկի չափ դարձան։ Դեռ այդ բավական չէ. նա փչում եր, գլխի չորս կողմը պտտեցնում, ապակե փուչիկը ձգվում, յերկարում եր, ինչպես մի շիշ։ Մեկ էլ դրեց տաք սալի վրա և դանակով չխկացրեց պարանոցից և ինչ... խողովակը բացվեց. հետո շշի բերանը կպցրեց, արդեն շիշը պատրաստ եր։

— Իսկ ինձ ինչպես պատրաստեց, ղնգաց բաժակը։

— Դու կես շիշն ես, շիշը կես արին, ստացան բաժակը։

4

Մեկ էլ սենյակի ամբողջ պատերը խշխշացին։

— Ա՛յ քեզ բան, պատերն էլ են խոսում, փնթփնթաց Վահանը. հետաքրքիր է սրանց էլ լսել, ասաց ու լռեց։

— Ձեզանից ամեն մեկը, ասացին պատերը, ապրում եք ձեր առաջին կյանքով, իսկ յերկրորդ կյանք չեք ունեցել և չեք էլ տեսել։

— Իսկ դո՞ւք, իսկ դուք, ձայնեցին ամեն կողմից։

—Մենք այժմ յերկրորդ կյանքով ենք ապրում, ասացին պատերը։

— Շատ հետաքրքիր է իմանալ այդ տարօրինակ կյանքը, — ծիծաղելով ասաց բանալին:

— Մենք կը պատմենք, սիրելի բարեկամ, այն ժամանակ դու կիմանաս, — ասացին պաստառները և սկսեցին.

— Մենք էլ առաջ դաշտում եյինք, բայց վոչ ձեզ նման անձոռնի, տգեղ ցեխի կամ քարի կտոր, այլ գեղեցիկ բամբակի բույս և սպիտակ, մաքուր բամբակ եյինք: Գործարանում մեզանից մեքենաներով գործեցին զանազան կտորներ՝ սպիտակեղեն, չիթ, կտավ և այլ սրանց նման բաներ: Յերբ մենք բոլորովին հնացանք և ցնցոտի դարձանք, մարդիկ մեզ դուրս ձգեցին: Մենք կարծեցինք, թե մեր վերջն է, էլ բանի պետք չենք: Բանից դուրս յեկավ, սխալված եյինք: Մի օր էլ տեսանք՝ մարդիկ մեզ աղբանոցներից, փոսերից, բակերից հավաքում և սայլերի վրա լցրած տանում են: Ո՞ւր են տանում, ինչո՞ւ յեն տանում, մտածում եյինք մենք և չեյինք կարող հասկանալ: Մեկ էլ հանկարծ թղթի գործարան ընկանք:

— Ի՜նչ հիանալի ընկերություն է — ամեն տեսակ կեղտոտ շորեր իրար գլխի հավաքված, — ասաց շիշը զզվանքով:

— Մի բեռ սապոն դրանց չեր կարող մաքրել, — վրա բերեց լվացարանը:

— Դու էլ կարծում ես՝ շատ մեծ մաքրություն ես տարածում, — խշխշացին պաստառները: Մեզ մի քանի անգամ մեծ պղնձի մեջ ածեցին, յեռացրած ջրով լվացին, ապա մոխրաջրով լավ յեփեցին, հետո դգոցով այնքան դզդզեցին, վոր խաշիլ դարձանք: Դու հազար գոռա, ոգնություն կանչիր, ո՞վ է լսողը: Հետո մեծ տաշտի մեջ լցրին, թարմ ջրի մեջ այնպես լվացին, վոր կեղտերս բոլորը գնացին և մենք դարձանք մաքուր խաշիլանման մի բան: Հետո մեզ մի ուրիշ հոտ տվին:

— Յերևի վարդաջրով լվացին, — ասաց շիշը:

— Վոչ, վոչ, քլորաջրով, սա անուշ հոտ չունի, ընդհակառակն ամենքին փռշտացնում, հազացնում է, բայց նա մաքրում, սպիտակացնում է, ինչպես ձյուն է, իսկապես, մենք ձյունի նման սպիտակ դարձանք:

— Իսկ հետո ինչ յեղավ, — հարցրին ամեն կողմից:

— Հետո արդեն մի ուրախալի զբոսանք եր: Լվացվելուց սպիտակելուց հետո՝ խողովակի միջով անցանք և ընկանք յերկաթե մանր ցանցի վրա: Սա էլ վորովհետև շարժվում եր, դրա համար բոլոր ջրային մասը մեզանից քամվեց և այսպես մենք դանդաղ առաջ գնացինք: Այստեղ մեզ պատահեց յերկու շարժվող գլան. մենք դրանց միջով անցնելով՝ արագ սողացինք: Յերբ գլանների միջով դուրս յեկանք, մենք էլ վոչ թե թանձր խյուս

եյինք. այլ իսկական թուղթ, միայն դեռ թաց: Քիչ էլ առաջ գնացինք, պատահեցինք յերկու շարժվող տաք գլանների. մենք դրանց միջով անցանք, տաքացանք ու հարթուկվեցինք: Այդտեղից դուրս իջանք՝ իբրև չոր, մաքուր սպիտակ թուղթ:

— Բայց դո՞ւք, պատառներ, չէ՞ որ հասարակ թուղթ չեք, այլ ներկված, ծաղկավոր եք:

— Այդ արդեն պաստառի գործարանում ներկեցին: Մեզ տարան այնտեղ. մի քանիսը վրձինով ներկեցին. յերբ չորացանք, վերցրին ծաղիկներով փորագրած կաղապարները, թաթախեցին վարդագույն ներկի մեջ, սեղմեցին մեզ վրա և դուրս յեկան ծաղիկները: Հետո վերցրին տերևներով փորագրած կաղապարը, թաթախելով կանաչ ներկի մեջ, կրկին սեղմեցին և դուրս յեկան տերևներ: Այսպես մենք դարձանք իսկական պաստառ, և այժմ ապրում ենք յերկրորդ կյանքով:

5

— Դուք ամենքդ վորչափ էլ պարծենաք, բայց և այնպես մարդկանց քիչ օգուտ եք տալիս, լսվեց սեղանի վրայից:

— Ո՞վ է այդ հանդուգը, վոր մեզ չի հավանում:

— Ո՛, դա իմ գիրքն է: Հետաքրքիր է, թե սա ինչ ունի ասելու, մտածեց Վահանը և անհամբերությամբ սպասում եր:

— Այո, հարգելի պատառներ, թեև յես էլ ձեր ցեղակիցն եմ, թեև ինձ վրա էլ նախշեր կան, բայց իմը բոլորովին այլ բան է:

— Հիանալի՜ նախշեր են, ինչ եմ ասում է՛, ծաղրելով ասացին պաստառները. ծուռ ու մուռ գծեր, վորոնց գրեր են ասում:

— Դրանք ինչ նմանություն ունին գեղեցիկ պաստառների հետ, ասացին յերկաթն ու աթոռները:

— Այո, նրանք ծուռ ու մուռ գծեր են, բայց գիտե՞ք ինչ կա նրանց մեջ. այդ տառերը կարդացվելով՝ կազմում են բառեր, սիրուն բառերից էլ մտքեր, դրանցից էլ գեղեցիկ հեքյաթներ, սիրուն պատմություններ, լավ-լավ առակներ: Մարդիկ այդ բոլորը կարդում, ուրախանում և խելոքանում են: Այդ պատմություն-ների մեջ գրված է, թե ինչպես են աճում, մեծանում ծառերը, ինչպես են նրանցից սեղաններ, աթոռներ շինում, ինչպես են յերկաթի հանքեր գտնում, նրանց հալում, ամեն տեսակ յերկաթե գործիքներ շինում. ինչպես են կավերից ամաններ շինում, ինչպես ապակե ամաններ պատրաստում: Մի խոսքով՝ այդ տառերով ամեն տեսակ բաների մասին գրում, տպում են և մարդիկ կարդալով հասկանում, սովորում են:

— Բայց վորտեղ են այդ տառերը շարում և տպում, հարցրին ամեն կողմից:

— Դա տպարանում են անում. գրաշարները գրերն իրար մոտ շարում են, տպելու մեքենան էլ տպում է, հետո տպած թերթերն իրար հետ կազմելով՝ շինում են գրքեր. այ, մեր Վահանի այն բարակ ու հաստ գրքերի նման։

— Ուրեմն գրաշարնե՞րն են այդ բոլորը հնարում։

— Վո՛չ, գրաշարների ինչ բանն է։ Ուսումնական մարդիկ, գիտնականներ, բանաստեղծներ, մի խոսքով հեղինակները այդ գրում և տալիս են տպարանին։ Այնտեղ գրաշարը նրանց գրածին նայելով տառերն իրար մոտ շարում է, չորս կողմից յերկաթե ձողերով ամրացնելով տպելու մեքենայի տակ է դնում, այնտեղ սև մուր քսելով տպվում է թղթի վրա։ Հետո կազմարարը կազմում է։ Սիրուն մեծ ու փոքր գրքերն ուղարկում են աշխարհի ամեն կողմերը և գիրք վաճառողները ծախում են։ Աշակերտները, խելացի և գրագետ մարդիկ առնում, կարդում են և ամեն ինչ այդ գրքերից սովորում։

— Ճիշտ է, ճիշտ, այդ գրքերի մեջ շատ բաներ կան գրած, ասացին ամենքը։ Մարդիկ նրանց սիրում են և ամենքը սիրով կարդում են ու սովորում։

Լույսն արդեն բացվել էր։ Արեգակի ճառագայթները հենց վոր սենյակ մտան, ամեն ինչ լռեց։

— Վերջապես նոր բաներ սովորեցի, ասաց Վահանը ինքն իրան։

42. Փոքրիկ աղջկան

Վ. Տերյան

Դու փոքրիկ, պայծառ աղջիկ ես,
դու արտույտ, վոսկե թռչնակ ես.—
չար նետ թող չը դիպչի քեզ,
աշուն ու ձմեռ չը գա քեզ։
Թող սիրտդ մնա խնդուն հար,
հոգին քո՝ լուսե թիթեռըդ,
խաղա հար և հուրհուրա վառ.
չար հուրը չայրե թևերդ,
հրե դու, արևային դու.
մաքուր դու, ձյունե հասմիկ ես.
անմար թող ցոլա քո խինդը,
չար աչքը թող չտեսնի քեզ…

43. Գայլի ընտանիքը

Ն. Սարգսյան

Ձմեռ է. գայլերի վոհմակները պտտվում են անտառներն ու դաշտերը և յեթե այդտեղ վորս չեն գտնում, մոտենում են ճանապարհներին և հարձակվում անց ու դարձ անողների վրա. յերբեմն էլ մտնում են գյուղերը և փախցնում ընտանի կենդանիներ՝ վոչխար, այծ, հորթ, շուն և այլն։ Ճիշտ է, շատ թանկ են նստում այդ հարձակումները, բայց ուրիշ կերպ վարվել նրանք չեն կարող։ Սովն ու քաղցը նրանց տանջում է. կամ պետք է սովամահ լինեն կամ պետք է դիմեն այդպիսի հարձակումների։ Յեվ նրանք հաճախ ընտրում են վերջինը։ Ի՛նչքան գայլեր են կոտորվում ու վոչնչանում այդ ժամանակ գնդակներից ու գյուղական շներից։ Որերով քաղցած մայլուց հուսահատ ու գազազած հաճախ նրանք նստում են ձյունի վրա, դունչները վեր ցցում ու դառնագին վոռնում։ Յեթե այս քաղցի ժամանակ վորևէ գայլ այս կամ այն պատճառով վիրավորվում է և գայլերը արյան հոտ են զգում, խուկույն հարձակվում են վիրավորվածի վրա և պատառոտում ու լափում մինչև վերջին վոսկորը։

Անցնում է ձմեռը, բնությունը կենդանանում է. կենդանիները դուրս են գալիս իրենց բներից և վորջերից, թռչունները վերադառնում են տաք յերկրներից։ Գայլերն ուրախ են։ Նրանք վտանգավոր տեղերից հեռանում են և մտնում անտառը, ուր արդեն առատ վորս կա։ Այլևս կարիք չկա վոհմակների. մեն մենակ էլ նրանցից յուրաքանչյուրը կարող է հաղթահարել իր վորսին։ Յեվ վոհմակները ցրիվ են անցնում. նրանցից ամեն մեկը գնում է մի ուղղությամբ իր բախտը փորձելու։ Արու գայլերը այդ ժամանակ ազատաբար լափում են ձեռք ընկած վորսերը և անհոգ թափառում։ Այդպես չեն էգերը. սրանք մեծ հոգս ունեն. շուտով պիտի ձագեր ունենան և նրանց համար պետք է պատրաստել փափուկ տեղեր։ Յեվ էգերը սկսում են յեղունգներով հողի մեջ խոր անցքեր փորել, ապա մամուռ ու խոտ հավաքելով այդ անցքերի մեջ՝ շինում են տաք ու փափուկ տեղեր։ Դրանից հետո նրանք ձագեր են հանում, փոքրիկ, կույր ու անօգնական։ Մայրը մեծ սիրով խնամում ու կերակրում է նրանց իր կաթով և պաշտպանում զանազան թշնամիներից՝ մարդուց, գազաններից և, վոր գլխավորն է, արու գայլերից, վորոնք մեծ ախորժակով լափում են գայլուկներին։

Մի անգամ մի գայլ իր հինգ ձագերի հետ ապրում էր անտառում, մի մեծ ծառի տակ շինած իր բնի մեջ։ Քանի դեռ ձա-

գերը փոքր էյին, նա բնից չէր հեռանում, ամբողջ ժամանակը իր ձագերի մոտ պառկած՝ փայփայում ու գուրգուրում էր նրանց։ Սակայն անցնում են օրեր, գայլուկները մեծանում են, բացվում են նրանց աչքերը և մոր կաթն այլևս բավարարություն չի տալիս նրանց։ Մայրն այժմ ստիպված վորսի էր գնում ավելի հեռավոր տեղեր, բռնում նապաստակ, սկյուռ, մկներ և տանում էր բույնը ձագերին կերակրելու։

Մի գեղեցիկ արևոտ օր մայրը վորսի է դուրս գալիս և բավական ուշանում։ Ձագերը յերկար սպասելուց ձանձրանում են իրենց մութ բնի մեջ և դուրս գալով այնտեղից՝ սկսում են բնի առաջ խաղալ և արևի տակ տաքանալ։ Այդ ժամանակ յերեք գյուղացի յերեխաներ սունկ ու դատաշներ հավաքելով՝ գալիս հանդիպում են գայլուկներին։ Սրանք տեղերից չեն շարժվում. յերեխաները մոտենում են, սկսում փաղաքշել նրանց և՝ վերջը մի գայլուկ վերցնելով փախչում են։ Քիչ անցած՝ վերադառնում է մայրը։ Գայլուկները ուրախ ու զվարթ վազում են ընդառաջ։ Մայրը նայում, է նրանց և իսկույն նկատում է, վոր մեկը չկա։ Անմիջապես վորսը վայր է գցում, մտնում բույնը, զննում բոլոր անկյունները, ապա դուրս գալով այնտեղից՝ անհանգիստ շարժումներով տնտղում է բնի շուրջը յեղած խոտերն ու թփերը։ Պակաս գայլուկը չկա ու չկա։ Խեղճը սկսկում է հուսահատ լալ ու վնգվնգալ։ Բայց շուտով զգաստանում է, արագ կերպով կերակրում է ձագերին, քշում նրանց բոլորին բնի ներսը և ինքը վազում մի նոր բույն գտնելու։ Բարեբախտաբար իր բնակած տեղից վոչ շատ հեռու, մի թփի տակ գտնում է նա աղվեսի մի դատարկ բույն։ Մտնում է այդ բույնը, ծանոթանում նրա բոլոր անցքերի հետ. և գտնելով, վոր դա շատ հարմար է իր ընտանիքի համար, վերադառնում է և իր ձագերին տեղափոխում այնտեղ։ Նա կծում է իր ձագի մեջքից, առնում բերանը վազում, տեղավորում նոր բնակարանում և յետ դառնալով՝ տանում նույն ձևով յերկրորդը, յերրորդը, չորրորդը։ Այժմ նա հանգիստ է. թշնամին, վոր տարել էր նրա մի ձագը, այս նոր բնի տեղը չգիտե։ Թե ով է յեղել իր թշնամին, նա չգիտե, բայց կարծում է, վոր անպատճառ մի արու գայլ պիտի յեղած լինի։ Այս նոր բնի մեջ նա իր ձագերի հետ անվտանգ ապրում է ամբողջ ամառն ու աշունը։ Ձմեռվա սկզբին, յերբ գայլերի կերակուրը պակասում է, նրանք խմբվում, վոհմակներ են կազմում, մեր գայլն էլ իր ձագերի հետ գալիս միանում է նրանց։ Այդ ձագերն արդեն մեծացել են այնքան, վոր կարող են իրենց գլուխը պահել։ Մեծ գայլերը նրանց սիրով ընդունում են իրենց վոհմակի մեջ և նրանց հետ միասին վորսի գնում։

Բայց ինչ յեղավ գյուղացի յերեխայի փախցրած գայլուկը։ Նա սկզբում իրեն շատ վատ էր զգում և վնգվնգում էր շարունակ, չէր ուտում վոչինչ և չէր մոտենում վոչ վոքի։ Սակայն մի քանի որից հետո սովորելով իր նոր միջավայրին՝ սկսում է խաղալ ու վազվզել ազատ կերպով գյուղական բակում։ Նա պահում էր իրեն ճիշտ այնպես, ինչպես մի շնիկ։ Ամենքը սիրում էին նրան, կերակրում ու փաղաքշում։ Այդպես մնաց նա յերկու տարի շարունակ։ Վերջը սկսեց նա փոխվել. նա շատ շուտով չարանում էր և հարձակվում շների, այլ ընտանի կենդանիների, նույնպես և մարդկանց վրա։ Նա վտանգավոր էր դարձել, դրա համար էլ ստիպված յեղան կապել նրան։ Կապած վիճակում նա էլ ավելի կատաղի դարձավ. ամենքը վախենում էին նրանից։ Չարությունից նա վոռնում էր շարունակ։ Մի օր էլ առավոտը տեսան, վոր գայլը չկա։ Նա կտրել էր իր թոկը և փախել։ Գյուղի ծայրին հենց այդ գիշերը կերել էր նա մի գառ։

44. Մանթաշին

Ավ. Իսահակյան

Ե՜յ Մանթաշի յերազ հովիտ,
դո՜ւն, զմրուխտե օրորո՜ց.
ծաղիկներդ լուսափթիթ՝
վերաս մետաքս—վառ ծածկոց.

Աղբյուրներդ՝ բյուրեղ զանգեր,
հովերդ անուրջ կը բերեն,
մոռացումի թովիչ յերգեր,
հովերդ անուշ կօրօրեն։

Հուր-հավքերդ՝ թևերն արծաթ,
կտուցները՝ լալ մարջան,
ինձ կը պատմեն վոսկի հեքյաթ
աշխարհներեն դյութական։

Ալմաստ առուն՝ մոր պես անքուն՝
նանիկ կասե, օ՜ր, օ՜ր, օ՜ր,
անուշ նանին զառ մանկության,
նանի, նանի՜, օ՜ր, օ՜ր, օր...

45. Գիքորը

Հ. Թումանյան

1

Գյուղացի Համբոյի տունը կռիվ եր ընկել։

Համբոն ուզում եր իր տասներկու տարեկան Գիքորին տանի քաղաք մի գործի տա, վոր մարդ դառնա, աշխատանք անի։ Կինը չեր համաձայնում։

— Չեմ ուզում, իմ մատաղ յերեխին են կրակ աշխարհը մի գցի. չեմ ուզում.— լալիս եր կինը։

Բայց Համբոն չլսեց։

Մի խաղաղ գեղեցիկ առավոտ եր, մի ախուր առավոտ։ Տանեցիք ու հարևանները յեկան մինչև գյուղի ծայրը, Գիքորի թշերը պաչեցին ու ճամփա դրին։

Քույրը՝ Զանին, լաց եր լինում, իսկ փոքրիկ Գալոն մոր գրկից ձայն եր տալիս՝ «Գիքո՜լ»։

Գիքորը շուռ-շուռ յետ եր նայում։ Տեսնում եր՝ դեռ գյուղի ծայրին կանգնած են նրանք ու մայրը գոգնոցով սրբում ե աչքերը։ Դարձյալ հոր կողքով վազում կամ առաջն եր ընկնում։ Մին ել յետ նայեց. գյուղը ծածկվել եր բլուրի յետև։

Այնուհետև Գիքորը յետ եր ընկնում։

— Արի հա, Գիքոր ջան, արի հա, հասանք հա,— վորդուն կանչելով գնում եր Համբոն, շալակին մի խուրջին, մեջը մի քանի հաց ու պանիր ու մի յերկու դաստա ծխախոտ։

Իրիկնապահին, յերբ անց եյին կենում սարերը, մի անգամ ել յերևաց գյուղը հեռու մշուշում։

— Ա՛յ, ապի, մեր տունն են ե, հա՜— ցույց տվավ Գիքորը՝ մատը մեկնելով դեպի գյուղը, թեև տունը իսկի չեր յերևում, ու անցան։

2

Առաջին իրիկունը հյուր ընկան մի գյուղում։ Տանտերը Համբոյի հին ծանոթն եր։

Դեղին սամովարը թշշում եր սախտի ծերին։ Մի ջահել աղջիկ շըրխկացնելով բաժակները լվանում ու թեյ եր շինում։ Նա մի կարմիր սիրուն շոր ուներ հագին։ Գիքորն ենտեղ մտքում դրավ, վոր յերբ քաղաքում փող աշխատի, իրենց Զանիի համար մի են տեսակ շոր ուղարկի։

Մյուս որը քաղաք մտան, իջան բազար։

— Բիձա, եդ յերեխին ծառա յես տալի՞,— խանութի ներսից հարցրեց մի վաճառական։

— Հրամանք ես,— ասավ Համբոն ու Գիքորին են կողմը հրեց։

— Բեր ինձ տուր, յես կը պահեմ,— առաջարկեց վաճառականը։ Նրան ասում եյին բազազ Արտեմ։

— Հինգ տարի դեռ փող չեմ տա,— ասավ բազազը պայմանը կապելիս։— Թե դրուստ կուզես, դեռ դու պետք ե տաս, վոր քո վորդին բան ե սովորելու։ Ախր իսկի բան չի գիտի...

— Վո՞րտեղից գիտենա, խաղեյին ջան,— պատասխանեց Համբոն.— վոր գիտենար, ել ո՞ւր կը բերեյի։ Յես ել բերել եմ, վոր բան սովորի...

— Կը սովորի, ամեն բան կը սովորի։

— Իմ դարդն են ե, աղա ջան, վոր մարդ դառնա, լեզու սովորի, գրել-կարդալ սովորի, նստել-վեր կենալ սովորի, մարդ ճանաչի, վոր աշխարքումս ինձ նման խեղճ ու գուրկ չմնա...

Բազազը Համբոյին միամտացրեց ու դուրս գնաց բարձր-բարձր հրամայելով՝— Չայ բերեք, հաց բերեք սրանց համար...

3

Ու հայր ու վորդի նստած եյին բազազ Արտեմի խոհանոցում։

— Դե, հիմի դու գիտես, Գիքոր ջան, տեսնեմ՝ ինչ տեսակ տղա յես դուրս գալի... Հենց պետք ե անես, վոր... յես ինչ գիտեմ... ո՜վ տեր աստված... մնաց Համբոն ու չիբուխը լցրեց։

— Վախտ ու անվախտ դես-դեն չընկնես, ձեռքդ ընկած փողը բոռ ու փուչ չանես. հազար ու մի պակասություն ունենք։ Տեղդ ել լավ պահի, գիշերները բաց չլինես, մրսես վոչ...

— Հացի կտորանքն ու քարխուն կը տան, կերակուրի թերմացքը կը տան, շատ անգամ ել իրենք կուտեն, քեզ տալ չեն, բան չկա, կարգը եդ ե... Որեր են, կը մթնեն, անց կը կենան...

Շարունակում եր հայրն իր խրատը, բայց Գիքորն հոր թինկը տված քնել եր արդեն։

Են յերկու որը նա են նրան բան եր տեսել, են ու են կողմը նայել, մա՛ր հոգնել եր բոլորովին։

Մրգով լիքը խանութները, գեղերի նման զարդած գույն-գույն չթերը, տեսակ-տեսակ խաղալիքները, ուսումնարան գնացող կամ դարձող յերեխաների խմբերը, իրար յետևից սլացող կառքերը, ուղտերի շարքերը, կանաչի բարձած ավանակները, թաբախները գլխներին կինտոները... ես ամենի զրոցն ու գոռոցը, աղմուկն ու աղաղակը իրար խառնված պտտվում եր նրա գլխում։ Ցեխ նա հոգնել եր ու հոր թինկը տված քնել։

4

Խանութում Գիքորին ապրանք կը տային մուշտարիների հետ տանելու, չիթ կը ծալեր, խանութը կը սրբեր, իսկ պարապ ժամանակը հաճախորդ կը կանչեր։

Ցեվ ահա Գիքորը հաց է տանում խանութը: Կերակրամանը ձեռքին, մաշված ու դժգույն մեծ-մեծ վոտնամանները քաշ տալով անց է կենում կամուրջով: Նայեց ներքև: Քարվանսարաների բարձր պատերին զարկելով ծառս եր լինում Քուռը, վոլորվում, պտտվում ու ճնշվելով խեղդվում, խուլ թշշում կամուրջի տակին:

Աբից մոտիկ պտտվում եր մի կանաչ նավակ: Յերկու հոգի կային նրա մեջ. մինը ուռկան եր ձգում, մյուսը նավը կառավարում:

«Այ հիմի կը հանի»,—ասավ Գիքորն ու կանգնած նայում եր ձկներին: Ուռկանը դատարկ դուրս յեկավ:

— Ես մինն իմ բախտից,—ասավ Գիքորը ուռկանը ձգելիս:

Գիքորի բախտը դատարկ դուրս յեկավ:

— Ես մինն էլ մեր Զաննի բախտից:

Էս էլ դատարկ դուրս յեկավ:

— Ես մինն էլ Գալոյի բախտիցը:

Գալոն էլ եր անբախտ:

— Ես մինն էլ բաս...

Բայց էդ ժամանակ մոտիկ քարվանսարայի դռանը աղմուկ բարձրացավ: Մի պարսիկ կապիկ եր պար ածում յերգելով:

Ժողովուրդը հավաքվել եր գլխին ու վազում եյին չորս կողմից: Գիքորն էլ վազեց: Աշխատեց կանգնած ժողովրդի արանքը մտնել, առաջ անցնել, չկարողացավ: Վիզը ձգեց, պճեղների վրա կանգնեց ու ճգնում եր անպատճառ տեսնի, թե ինչ է կատարվում մեջտեղը:

— Ի՞նչ ես ներս խծկվում, տո լածիրակ, գնա քու բանին,—ասավ մի կինտո ու զարկեց Գիքորի գլխին:

Գիքորը հանկարծ սթափվեց ու վազեց դեպի խանութ:

5

Իրիկունը Գիքորը կուչ եր յեկել խոհանոցում: Դեռ արտասուքը չեր ցամաքել նրա յերեսին, դեռ այրվում եյին խաղեյինի ապտակների տեղը, յերբ շվշվացնելով ներս մտավ Վասոն, բազազի աշկերտը: Գիքորին նկատելով՝ նա խիկույն կանգ առավ ու մասխարա դեմքին լրջություն տալով սպառնալի հարցրեց.

—Կլուբնումն ուշացար, տո արջի քոթոթ, թե՞ գուբերնատորի մոտ վռազ գործ ունեյիր...

Գիքորը լուռ եր:

— Չե՞ս իմանում, տո, վո՞րտեղ եյիր է, վոր ասոր ինձ քաղցած սպանեցիր: Վոր մեռնեյի, հետո...

Ասպես խոսելով կամաց-կամաց մոտեցավ, մի քիչ կանգնեց ու հանկարծ զարկեց Գիքորի գլխին: Գիքորը յերկու ձեռքով գլուխը պաշտպանեց ու սեղմվեց պատին: Վասոն պատրաստվում եր

մի ուրիշ ձևի հարված էլ հասցնելու, բայց դուրսը բարձրացավ խաղեյինի ձայնը: Գալիս եր:

— Արա տես հիմի՝ քեզ ինչ է անում,—սպառնաց Վասոն:

«Հիմի ինձ կսպանեն», անցավ Գիքորի մտքովը, ու խեղճի հոգին տապ տրավ:

Խաղեյինը արդեն բավական ծեծել եր խանութում, այժմ միայն հրամայեց հաց չտան, վոր իմանա թե ինչ բան է քաղցածությունը:

Գիքորը կծկվեց վերմակի մեջ, գլուխը կոխեց տակը, տապ տրավ:

Վասոն հաց եր ուտում: Գիքորը վերմակի տակից յերբեմն գողուշ ծկրակում, թաքուն նայում եր նրան, կրկին աչքերը ծածկում: Նա էն որը հաց չեր դրել բերանը, ծեծվել ու լաց եր յեղել, այժմ էլ քաղցած պառկել ու քունը չեր տանում:

— Հ՞ը, վո՞նց ես, սոված քունդ չի՞ տանում, հա՛, եղպե՞ս...— նկատեց չարաճճի Վասոն ու մի կտոր հաց ու պանիր տվավ Գիքորին:—Դե, առ, տեղի տակին թաքուն կեր, խաղեյինը չիմանա:

Գիքորը հափշտակեց հաց ու պանիրը, գլուխը կոխեց տեղի տակը, թաքուն ուտում եր ու մտածում: Մտածում եր իրենց տան վրա, էն որերի վրա, յերբ ազատ խաղում եր հանդերում ու լիասիրտ հաց ուտում. մտածում եր էն յերեկոների վրա, յերբ հերն ու մերը կռվում եյին իրեն քաղաք բերելու համար... և մայրը լաց եր լինում, չեր ուզում...

— Ա՜խ, նանի ջան, ինչ լավ եր սիրտդ իմացել,—հառաչում եր Գիքորը տեղի տակին ու հաց ու պանիրն ուտում՝ ականջը սրած, թե խաղեյինը հո չի գալի:

Իսկ առավոտը կանգնած եր խանութի դռանն ու կանչում.

— Եստի համեցեք, եստի համեցեք...

6

Ձմեռը յեկավ: Սառն աղմուկով, ձյունախառն բուքը թըռչում է՝ քաղաքի վրայով: Փողոցներում սուրում, սուլում, հառան է անում: Վզզալով մտնում է անկյունները, աղքատի ու ակլորի յե ման գալիս, պանդուխտ և անտեր յերեխա յե վորոնում:

Ահա գտավ Գիքորին:

Մի բարակ բլուզ հագին, խանութի դռանը կանգնած ձայն եր տալիս նա.

— Եստի համեցեք, եստի համեցեք...

— Հրե՜սս—չարախինդ սուլելով ցուրտը, աներևույթ թրի նման զարկեց անցավ վոսկորները, ու Գիքորը դողաց:

Առանց էն էլ նա շատ եր մաշված, եղքանն էլ հերիք եր նրան: Ու անկողին ընկավ:

Հիվանդ պառկած էր Գիքորը խոհանոցում։ Բազազ Արտեմի մայրը, պառավ դեգին որը մի քանի անգամ ներս էր մտնում իրեն-իրեն խոսելով.

— Ի՞նչ կուզես, վորդի Գիքոր։

— Ջո՜ւր...

Դեգին ջուր էր տալի, հիվանդը դողդոջուն ձեռներով բռնում ագահ խմում էր ու կրկին ուզում։

— Ես սիրտս հովացնում չի, դեգի... յես մեր աղբյուրի սառը ջրիցն եմ ուզում... դեգի... յես մեր տունն եմ գնում... յես իմ նանին եմ ուզում։

Բազազ Արտեմը ցավի մեջ էր ընկել։ Նա գեա-գեն ընկավ, նրանց կողմերից մարդ գալով, պատմեց, վոր Համբոն գա, իսկ Գիքորին տարավ քաղաքային հիվանդանոց։

Եստեղ շատ հիվանդներ կային շարքերով պառկած։ Տխուր տնքում եյին ու իրար նայում անզոր հայացքներով։

Գիքորին էլ պառկեցրին նրանց շարքում։

Եստեղ գտավ նրան հայրը։

— Եդ ի՞նչ ես յեղել, Գիքոր ջան,— մեկտալով վրա ընկավ Համբոն։

Գիքորը տաքության մեջ չիմացավ հոր գալը։

— Գիքոր ջան, բա յեկել եմ է՜, Գիքոր ջան... յես քո ապին եմ է՜...

Հիվանդը վոչինչ չհասկացավ։ Նա զառանցում էր ու զառանցանքների մեջ կանչում էր.— Միկի՜չ, Զանի՜, ապի՜, նանի՜...

— Եստեղ եմ, Գիքոր ջան. նանը զարկել է, վոր քեզ տանեմ մեր տունը... գալիս չե՞ս... Միկիչն ու Զանին հրեն կտերը կանգնած քեզ համպա յեն պահում։ Ի՞նչ ես ասում, դե խոսա է՜, Գիքոր ջան։

— Ե՜ստի համեցեք, եստի համեցեք— բացականչեց հիվանդը, զանազան անկապ կցկտուր խոսքեր ասավ, ու ծիծաղում էր տաքության մեջ։

7

Մի յերկու որից հետո Համբոն գնում էր իրենց գյուղը։

Նա թաղել էր Գիքորին ու գնում էր։ Կառն տակին տանում էր նրա շորերը, վոր մայրը լաց լինի վրեն։ Շորերի գրպաններում մի բուռը փայլուն կոճակներ, նախշուն թղթեր, չթի կտորներ ու մի քանի քորոց գտավ։ Են էլ, յերևի քրոջ՝ Զաննի համար էր հավաքել ու պահել։

Գնում էր Համբոն ու մտածում։ Շատ ժամանակ չէր անցել, վոր էդ միևնույն ճամպով քաղաք յեկավ իր Գիքորի հետ։ Ահա

եստեղ էր, վոր նա ասավ.— Ապի, վոտներս ցավում են...

Յեվ ահա են ծառը, վորի տակ նստեցին հանգստանալու...

Ահա ենտեղ էր, վոր ասավ.— Ապի, ծարավ եմ...

Ահա են աղբյուրն էր, վոր ջուր խմեցին...

Մյուս օրը, յերբ Համբոն անցնում էր լեռները՝ հեռվում յերևաց իրանց գյուղը։ Գյուղից դուրս կանգնած սպասում եյին նանը, Զանին, Միկիչը, Մոսին, իսկ փոքրիկ Գալոն մոր գրկից կանչում էր.

— Արի՜, արի՜, հե՜ Գիքոլ...

---

46. Աներևույթ թշնամի

— Պապի՜, սիրելի՜ պապի, յեկ տես ինչ է յեղել քո ընծայած սիրուն խնձորենին, արտասվելով ասում էր Գուրգենը։

— Շուտ, գնանք, պապի, հառաչելով կանչում էր Վարդգեսը։ Անցյալ տարի նա վորչափ լավ ծաղկեց, գեղեցիկ խնձորներ տըվեց, իսկ այս տարի նրա մանրիկ տերևները թառամել են, քընքույշ ծաղիկները առանց բացվելու փչացել են։

Պապը թոռնիկների հետ մոտավ պարտեզ։

— Պապի, տես, մեր ծառի վրա վոչ մի թրթուռ չկա, ասաց Գուրգենը։

— Կեղևն էլ անվնաս է, վոչ մի տեղ չորացած չէ, վրա բերեց Վարդգեսը։

— Պապի, յես կարծում եմ, այն անպիտան մըջյուններն են արել, մեջ մտավ Գուրգենը. անցած որը նրանք մեր ծառի վրա բարձրանում, իջնում եյին, յես ուզեցի նրանց կոտորել, բայց պարտիզպանը չթողեց։

— Հանգիստ կացեք, ասաց պապը, մրջյունները չեն փչացրել ձեր ծառը։

—Հապա ո՞վ է արել, ասացին մանուկները։ Մենք խնձորենուն շատ լավ խնամել ենք, քո ասածի համաձայն կեղևը միշտ մաքրել ենք, տերևները միշտ մաքրել ենք, տերևները թրթուռներից ազատել ենք, հողը փափկացրել և ժամանակին ջրել ենք։

— Դուք մեղավոր չեք, սիրելիս, ասաց պապը. թշնամին չե յերևում. նա հողի մեջ՝ արմատների մոտն է. այս րոպեյիս դուք կը տեսնեք նրանց։

Պապի կարգադրությամբ պարտիզպանը փորեց խնձորենու չորս կողմը. քիչ հետո մանուկները տեսան խնձորենու արմատների

մոտ մի քանի հատ մեծ-մեծ թրթուրներ սպիտակ գույնով, շագանակագույն գլուխներով:

— Ահա այս թրթուրներն են ձեր խնձորենին չորացրել, ասաց պապը:

— Ի՞նչ զզվելի յե՜ն, ասացին մանուկները:

— Բայց ո՞վ է դրանց այստեղ դրել, հարցրեց Վարդգեսը:

— Ձեր սիրելի մայիսյան բզեզները, ասաց պապը. այն բզեզները, վոր մայիսին շատ մանուկներ ծառերի վրայից հավաքում խաղում են: Ա՛յ, հենց այդ բզեզների եգերը փափուկ հողի մեջ ածում են քորոցի գլխի չափ ձվեր. ձվերից դուրս են գալիս մանր թրթուրներ. սկզբում սրանք ագահաբար ուտում են բույսերի մնացորդները և մեծանում են: Ձմռան ցրտերին խոր են գնում և միասին խմբերով, թմրած մնում են: Գարունը տաքանալով, նորից արթնանում են. այս անգամ ավելի ագահ ուտում են ցորենի, գարու, ծաղիկների և առհասարակ մատաղ բույսերի արմատները և նրանց չորացնում են, յերրորդ տարին նրանք ուտում են փոքրիկ ծառերի արմատներ, իրանք մեծանում են, իսկ ծառերը չորացնում են:

— Պապի, տես՝ այս թրթուրը պատյանի մեջն է:

— Այո, սիրելիս, յերրորդ տարում նրանք պատենավորվում են, իսկ չորրորդում պատյանից դուրս են գալիս այն շագանակագույն բզեզները, վորոնց դուք լավ ծանոթ եք:

— Ուրեմն այդ թրթուրներն յերեք տարի հողի մեջ ապրելով միշտ արմատնե՞ր են ուտում:

— Այո, ասաց պապը:

— Պապի, այդ մայիսյան բզեզներն ե՞լ ծառերը փչացնում, չորացնում են:

— Վո՛չ, նրանք միայն կրծում են տերևները և մատաղ պտուղները: Վորովհետև այս բզեզները վնասակար են, դրա համար վորտեղ շատ են լինում, այնտեղ այգեպանները ծառերի վրայից թափ են տալիս և հավաքելով՝ խոզերին կերակուր են անում: Բարեբախտաբար թռչուններն ել նրանց կոտորում, վոչնչացնում են, յեթե վոչ՝ նրանք ծառերին շատ վնասներ կը տային:

47. Դարբնի յերգը

Հ. Հակոբյան

Զա՛րկ, զա՛րկ, ընկե՛ր, մեզ բախտ կռենք—
թո՛ղ դողդողա մեծ սալը.
շանթի տարափ մեր շուրջ փռենք—
լուսավորվի աշխարհը:

Զա՛րկ, զա՛րկ, ընկե՛ր, ել կանգ չառնենք,
մոտ է ահա լավ օրը...
այնպես թափով սալին զարնենք,
վոր դողդողա աշխարհը...

48. Յեղնիկը

—«Մի անգամ իմ բարեկամ մի վորսկան մեր հանդի անտառուտ սարերից մի յեղնիկ նվեր բերեց յերեխաներիս համար...»:

Այսպես սկսեց ընկերս, աշնանային մի յերեկո, յերբ նստած միասին նրա պատշգամբում, հիացած նայում եյինք հեքյաթական վերջալույսով վառվող սարերին, վորոնց վրա մակաղած հոտերի նման հանգչում եյին մեղմորոր վոսկեգեղմ անտառները:

«Այդ մի նազելի, մատղաշ ու խարտյաշ յեղնիկ եր, վախկոտ, արագավազ, խորունկ և սև ու ջինջ աչքերով, վոր ծածկվում եյին յերկայն, մետաքսե նուրբ թարթիչների տակ:

Յերբ բռնում եյին նրան, քնքույշ մարմինը կուչ եր գալիս գրկիս մեջ և սիրտը վախից արագ-արագ թրթռում եր թռչնի պես:

Բայց նա կամաց-կամաց սովորեց մեզ. ել չեր փախչում, չեր վախենում մեզանից, մանավանդ շատ մտերմացել եր յերեխաներիս հետ. նրանց հետ միասին վազվզում եր պարտիզում, նրանց հետ ճաշում եր և նրանց հետ քնում եր ուղիղ նրանց ծոցում: Յերեխաներս նրա պարանոցին մի կարմիր ժապավեն եյին կապել, ինչպես սովորաբար անում են յերեխաները:

Մի բան ինձ շատ եր զարմացնում. յեղնիկը թեև ինչքան ընտելացել եր մեզ, սովորել եր մեր տանն ու դռանը... բայց մեկ-մեկ, մեզանից թաքուն, բարձրանում եր այս պատշգամբը և ուշադրավ, լուրկ նայում եր հեռու, անտառներով փաթաթված սարերին, ականջները լարած խորասույզ լսում եր անտառների խուլ, անորոշ, հազիվ լսելի շառաչը, վոր բերում է մեղմ հովը...

Նա նայում եր այնպես անթարթ և լսում եր այնպես ինքնամոռաց, վոր յերբ պատահում եր՝ բարձրանում եյի պատշգամբը, նա ինձ բավական միջոց չեր նկատում և յերբ հանկարծ ուշքի յեր գալիս, նետի պես ծլկվում եր մոտիցս։

Առհասարակ մեր աչքերի առաջ նա չեր գիտում. թե ինչ եր մտածում, այդ ել ինքը գիտեր… բայց հենց վոր մենակ եր մնում խեղճ յեղնիկս կամ մենք չտեսնել եյինք ձևանում, իսկույն թռչում եր պատշգամբը և սարերին նայում ու նայում…

Արդյոք նա գիտե՞ր, վոր ինքը այդ ղողանջյուն անտառների յերեխան ե, վոր իր մայրն այնտեղ ե կաթ տվել իրեն, վոր այնտեղ ե իր հայրը յեղջյուրները խփում կաղնիներին. արդյոք նա գիտե՞ր, վոր այդ խուլ շառաչյունը անուշ-անուշ որորել ե իրեն առաջին անգամ և յերազներ ե բերել իրեն արշալույսների, աստղերի շքեղ, սիրուն յերազները…

Խեղճ յեղնիկ… յես շատ եյի ցավում նրան. կարոտ՝ իր սիրած գուրգուրող անտառներից ու զանգակ աղբյուրներից, իր խարտյաշ մորից և շնկշնկան հովերի հետ վազող ընկերներից՝ հիմա տանջվում, տառապում ե մեզ մոտ… այնպե՜ս սրտանց ցավակցում եյի նրան. չե՞ վոր նա ել մեզ պես մտածող և զգայուն հոգի ունի…

Յես շատ եյի հարգում նրան, յերբ նա բարձրանում եր պատշգամբը, յես հեռացնում եյի յերեխաներին և թողնում եյինք նրան մենակ իր նվիրական հուշերի հետ։

Կարծես հասկանում եր նա մեր՝ դեպի իրեն ցույց տված հարգանքը. նայում եր մի փոքր ժամանակ և ապա իր կամքով, մեղմ հովի նման հեզիկ ոտիկներով իջնում եր ներքև և ամեն ինչ մոռացած՝ խաղում եր յերեխաների հետ։

Յերբեմն՝ յերբ գրկում եյի նրան և նայում եյի լեռնային աղբյուրների պես զուլալ ու վճիտ աչքերի մեջ, յես տեսնում եյի այնտեղ մի թախծալի յերազուն կարոտ։

Մի գիշեր, մի քամի գիշեր եր, անտառապատ սարերից անսանձ փչում եր քամին, դուռն ու լուսամուտները ծեծում ու ծեծկում. պարզ լսվում եր, վոր այնտեղ, անտառում, դարևոր կաղնիներն ու լորենիները զարնվում եյին իրար, աղմկում ու գոռում։ Յեվ քամին բերում եր անընդհատ անտառի այդ ուժեղ և լիակուրծ խշշոցն ու մռունչը. քամին այնպես պարզ ու վորոշ եր հավաքել, բերել այդ ամեն ձայները, վոր թվում եր, թե հենց մեր դռան առաջն ե աղմկահույզ հողմածեծ անտառը։

Յերեխաներս վախից կուչ եյին յեկել, այն ինչ յեղնիկը հետաքրքիր և խելացի աչքերով նայում եր դեպի լուսամուտը և ամբողջովին լսելիք դարձած՝ ականջ եր դնում անտառի ահեղ

շառաչին, վոր յերևի՝ խոսում եր նրա հետ մայրենի հարազատ լեզվով…

Մի փոքր հետո ավելի սաստկացավ քամին. աղմուկով բացվեցին լուսամուտի փեղկերը և անտառի մի հուժկու և ահագին շառաչ միանգամից ներս խուժեց։ Այդ միջոցին յեղնիկը հանկարծակի մի վոստյունով ցատկեց լուսամուտի գոգը՝ աչքերը սուզեց շառաչյուն խավարի մեջ և ականջները հափշտակված լարեց…

«Անտառը նրան կանչեց», մտածեցի յես և իսկույն վրա վազեցի բռնելու, սակայն նա մի ակնթարթի մեջ թռավ լուսամուտից պարտեզը, ծածկվեց խավարի մեջ…

Ամենքս զարմացած և տխուր իրար յերես նայեցինք, յերեխաներս սկսեցին լաց լինել, բայց յես հանգստացրի նրանց ասելով թե՝ գյուղի մեջ կամ պարտեզներում պահ մտած կը լինի, վաղը առավոտը կը գտնենք։

Մյուս որ առավոտ վաղ յերեխաներս ծառայի հետ ընկան գյուղը հարց ու փորձի։ Անցավ մի քանի ժամ. յերեխաներս տխրադեմ վերադարձան։ Նրանք ման եյին յեկել գյուղի պարտեզները, գնացել եյին հանդը, վորոնել եյին, վորոնել եյին և չեյին գտել յեղնիկին… Դե՜հ, հիմա գնա, գտիր նրան իր հայրենի անծայր անտառներում…

---

49. Թե ինչպես բռնեցին կապկի ձագը

Ն. Սարգսյան

Կեսօր եր։ Հնդկական հսկայական անտառն անշարժ եր։ Բարձր արմավենիներն ու խիտ մագնոլիաները փաթաթուկներով խճճված լուռ կանգնած եյին։ Ամեն ինչ այդ ժամանակ անտառում կարծես մեռած եր։ Միայն յերբեմն-յերբեմն վոսկեգույն բզեզները բզզալով՝ թռչում եյին այս ու այն կողմ և զարնվելով հանկարծ ծառերի բներին կամ տերևներին՝ ընկնում ցած. տեղ-տեղ ել օձերը կծկված՝ գլուխները վեր ցցած՝ սպասում եյին անհամբերությամբ իրենց վորսերին։

Բայց մեկ ել հանկարծ լսվում են հեռվում կացնի ձայներ։ Օձերը բարձրացնում են իրենց գլուխները և վտանգի հոտ զգալով՝ ուղղվում են և սողալով՝ գնում, թաղնվում են թանձր կանաչների մեջ։

Կացնի հարված տվողները հնդիկներ եյին, մերկ վոտքերով ու կրծքերով, գլուխներին դցած դրախտահավի կամ թութակների սքանչելի փետուրներ։ Այդ հնդիկներին հետևում եյին մի քանի յեվրոպացիներ, սպիտակ քաթանի զգեստներով։ Կացնով

Նրանք խիտ անտառի միջով իրենց համար ճանապարհ էյին բաց անում և առաջ շարժվում:

— Այժմ պետք է շատ զգույշ լինել և կամացուկ գնալ,— ասաց հնդիկ առաջնորդը,— յես արդեն կապիկների հետք եմ տեսնում:

— Իսկ յես արդեն լսում եմ նրանց աղմուկը,— ասաց մյուս հնդիկը:

Յեվրոպացիներն սկսեցին ականջ դնել, բայց ոչինչ չկարողացան լսել: Չնայած դրան, նրանք այնուամենայնիվ հրացանները պատրաստ բռնած, կամացուկ առաջ էյին շարժվում, համաձայն հնդիկ առաջնորդի պատվերի:

Շուտով անտառի խորքում նկատեցին նրանք մի բաց տարածություն, որ շրջապատված էր արմավենիներով, մագնոլիաներով և նարինջներով: Այդ բաց տարածության մեջ տեսան նրանք կապիկների մի ամբողջ խումբ, որ առաջ էր շարժվում:

Խմբի առջևից գնում էր առաջնորդը, մի բարձրահասակ կապիկ. դա հոգատար հայացքով դիտում էր չորս կողմը և դունչը ցցած՝ հոտոտում էր օդը, կարծես դրանով ուզում էր իմանալ՝ արդյոք վտանգ չկա մոտակայքում: Մարդիկ այդ ժամանակ լուռ էյին և թաքնված ծառերի յետևում: Կապիկների փորձված առաջնորդը նրանց դեռ չէր նկատել: Նույն զգուշությամբ մոտեցավ նա առվակին, կրկին անգամ դիտեց չորս կողմը և հանկարծ ընկավ ցած: Դրանով նա կարծես ասաց.

— Խաղացեք այժմ, յես կը հսկեմ ձեզ:

Կապիկների ամբողջ խումբը լսելով առաջնորդի այդ հրամանը՝ անմիջապես ուրախագին ձայներ արձակելով՝ ցրիվ անցավ այս ու այն կողմը: Ոմանք վազեցին, բարձրացան մոտակա ծառերը՝ պտուղներ քաղելու, ոմանք էլ պառկելով ծառերի շվաքում՝ սկսեցին մեկը մյուսի մարմինը մաքրել զանազան կոծոծներից, բույսերի մնացորդներից և միջատներից: Մայրերը նստեցին շուրջանակի և իրենց ձագերն առնելով մեջ տեղը՝ սկսեցին խաղալ նրանց հետ: Մի քանի մայրեր էլ, գրկած իրենց ձագերին, գնացին առվակի մոտ նրանց լողացնելու ու մաքրելու: Ձագերն, ինչպես յերևում է, այդ բանը չեյին սիրում, դրա համար էլ ծվծվում, լալիս էյին, բայց մայրերն անուշադիր ձագերի այդ ծվծվոցին՝ իրենց գործն էյին կատարում և միայն վերջը, նրանց սիրտն առնելու համար, կերակրում էյին կաթով կամ մրգերով: Հանկարծ լսվում է առաջնորդ կապկի նախազգուշական ձայնը: Նա արդեն նկատել էր յեվրոպացիներից մեկին, որ հետաքրքրությունից իրեն զսպել չկարողանալով՝ հանել էր իր գլուխը արմավենու յետևից՝ կապիկների խաղն ու շարժումները դիտելու համար:

Վայրկենապես դադարում են բոլոր ձայները: Մի պահ բոլորը մնում են անշարժ, ապա ծառերի վրա յեղածները սկսում են ցած իջնել մեկը մյուսի յետևից, չմոռանալով վերցնել իրենց հետ առատ պաշար՝ նարինջ կամ այլ պտուղներ: Յերեխաները նույնպես թողնում են խաղը և ինչ-որ յերկյուղի զգացմունքով վազում իրենց մայրերի մոտ: Մայրերն արագ կերպով վերցնում են նրանց իրենց կռների տակը կամ մեջքների վրա և պատրաստվում փախչելու:

Յերբ բոլորը հավաքվում են, առաջնորդը առաջ է անցնում և իսկույն բոլոր կապիկները նրա յետևից վազելով՝ անհետանում են և այդ կատարվում է այնպիսի արագությամբ, որ յեվրոպացիները չեն կարողանում հետևել, թե նրանք ո՞ր ուղղությամբ փախան:

— Զարմանալի բան, նայեցինք, նայեցինք և վոչինչ չկարողացանք շինել, — տրտնջաց մի յեվրոպացի:

Յեվրոպացու այս խոսքերին կարծես պատասխան, հանկարծ նարինջի ծառի տակից լսվում է մի մղկտալի լացի ձայն: Վորսորդները նայում են դեպի այն կողմը և տեսնում մի փոքրիկ կապիկ. ինչպես յերևում է, մայրը մոռացել էր նրան և նա հանկարծ մենակ զգալով իրեն՝ սկսել էր լաց լինել:

Մի բոպե չանցած՝ լսվում է մի անհանգիստ ձայն: Մոտակա ծառի վրա յերևում է նրա մայրը, վոր շտապ կերպով մի ճյուղից մյուսը ցատկելով՝ մոտենում է իր ձագին:

Ահա հասնում է նա իր ձագին և մեկնում ձեռքը նրան. մեկ էլ հանկարծ պայթում է հրացանը: Մայրը վիրավորվում է կրծքից. կարմիր արյունը ցայտում է և ներկում կանաչները:

Որորվելով մի կերպ մոտենում է նա իր սիրելի ձագին և դողացող ձեռքով վերցնում նրան: Բայց այդտեղ նրա ուժերը դավաճանում են: Նա հավաքում է իր բոլոր ուժերը, ձագը բարձրացնում, դնում ծառի ճյուղերից մեկի վրա և ինքը ցած ընկնում:

Այդ ժամանակ վորսորդները մոտենում են նրան:

Վիրավոր կապիկը կշտամբող հայացքով նայում է նրանց և ձեռքը դնելով վերքի վրա՝ ցույց է տալիս նրանց իր արյունոտ մատները: Կարծես դրանով ուզում էր ասել.

«Ահա, տեսեք, դուք ինչ արիք. ինձ սպանեցիք և ձագս թողեցիք վորբ: Ի՞նչու, ինչու արիք դուք այդ»:

Ձագը, սակայն, ծառի ճյուղի վրա չմնաց. նա շուտով իջավ, ընկավ մոր կրծքի վրա և սկսեց աղիողորմ լաց լինել:

Վորսորդները մոտեցան, բռնեցին ձագը և գնացին:

Յերբ հեռացան վորսորդները, կապիկի դիակի մոտ հավաքվեցին նրա ընկերները. նրանք սկսեցին հրել նրան, շարժել, ձեռքից բռնել, վեր քաշել, բայց համոզվելով, վոր նա արդեն մեռած է, աղմուկով վերցրին նրան իրենց ուսերի վրա և տարան անտառի խորքը:

Բռնված ձագը յեվրոպացիները իրենց հետ տարան Յեվրոպա և վաճառեցին այնտեղ գազանանոց պահողներին:

50. Նավավար

Ալ. Ծատուրյան

— Էյ, նավավար, ի՞նչ ես անում,
ո՞ւր ես նստում դու նավակ.
սև ամպերն են, տես, բարձրանում
դեպի յերկինք կապուտակ:

Հորիզոնն է մութով պատած՝
հեռվում ամպն է վորոտում.
Նայի, ծովն էլ կամաց-կամաց
պարզ յերեսը կնճռոտում:

«Ե՜հ, ախպեր ջան, դարդ մի արա,
ծովափին եմ յես ծնվել.

մեծացել եմ ծովի վրա,
ծովի բերքով եմ սընվել։

Մանուկ օրից շատ եմ տեսել
և փոթորիկ, և աղետ.
ծովն է ինձ միշտ օրոր ասել,
նոր չեմ ծանոթ ծովի հետ։

Հայր ունեյի, ծովում կորավ՝
վորսի յելած մութ գիշեր.
յեղբայրներիս ծովը տարավ,
ձկնորս էյին անվեհեր։

Կյանքը լավ է... բայց ինչ արած...
հաց էլ մահից ինչ փախչեմ.
ծովն է տալիս մեզ կյանք ու հաց,
ծովի տակն էլ կը հանգչեմ...»

51. Հյուսիսային յերկրներում

— Ճի՞շտ է, հայրիկ, վոր շներին լծում են։

— Այո, Տիգրանուհի, ճիշտ է։

— Բայց չէ՞ վոր նրանք փոքր են. ի՞նչ բեռ կարող են տանել, հարցրեց Լուսիկը։

— Մեծ-մեծ շներ կան, գավակս, ասաց հայրը. նրանք ուժեղ են և փոքրիկ սայլակներով բավական բեռ են կրում։

— Հայրիկ, ովքեր են նրանց լծում։

— Բեռնակիրները, խեղճ մարդիկ. մի քանի յերկրներում չունեւոր գյուղացիները մոտիկ քաղաքները կարագ, յուղ, պանիր, կաթ և սրանց նման նյութեր տանելիս՝ շատ անգամ սայլակներին շներ են լծում։ Իսկ հյուսիսային յերկրներում, վորտեղ տարվա մեծ մասը ձմեռ է, այնտեղ ամենքն էլ շներ կամ հյուսիսային յեղջերուներ են լծում։

— Մի՞թե այնտեղ յեզներ չկան, հարցրին Տիգրանուհին ու Լուսիկը։

— Այնտեղ յեզ, կով, ձի չի կարող ապրել. նրանց համար ուտելիք չի ճարվում։ Իսկ թեթև շները փոքրիկ սահնակներ առած ձյան վրայից թռցնելով տանում են։

— Հայրիկ, յեթե տարվա մեծ մասը ձմեռ է և այդչափ ձյուն կա, հապա ինչպես են մարդիկ այնտեղ ապրում, հարցրեց Տիգրանուհին։

— Վայ այն ապրելուն. կարո՞ղ ես յերևակայել, հյուսիսային յերկրի բնակիչները՝ էսկիմոսները տարվա մեծ մասը սառցե և ձնե տներում են ապրում։ Այդ յերկրում ամառվա մի յերկու ամսին օրերը տաքանում են, կանաչի և թռչունների յերես են տեսնում, իսկ տարվա մնացած ժամանակը միշտ ցուրտ ձմեռ է։

— Հայրիկ, ինչպես են նրանք այդ տները պատրաստում։

— Շատ հասարակ կերպով։ Նրանք քարերի նման քառանկյունի ձևով ձյունը կտրում են և շրջանաձև յերկու կարգ մեկմեկու վրա դարսում. այդ ձնե աղյուսների արանքում մանր ձյուն են լցնում և այս կերպ պատերը բարձրացնելով գմբեթաձև ծածկում են։ Իհարկե, նրանց տները լուսամուտ ու դուռ չունեն. միայն մի կողմից բավական յերկար և նեղ անցք են թողնում. այստեղ մի մարդ հազիվ կարող է սողալով ներս ու դուրս անել։

— Մի՞թե այդ տեսակ տներում նրանք չեն մրսում։

— Վո՛չ, այնտեղ բավական տաք է. սեղաններն ու աթոռներն էլ սառույցից են, իսկ նրանց վրա փռում են յեղջերուի, ծովային ցուլերի և այլ կենդանիների մորթիներ։ Ձնե պատերն էլ դրսի ցրտից, ներսի տաքությունից հետզհետե սառույցի յեն փոխվում և չեն թողնում, վոր ներսի տաքությունը դուրս գնա. մյուս կողմից այդ պատերը լուսնի և արևի լույս են ներս թափանցում և սառցե խրճիթը լուսավորում։

— Հայրիկ, ինչո՞վ են ապրում էսկիմոսները։

— Նրանց ապրուստը շատ խեղճ է։ Նրանք յուրաքանչյուր սահնակի մի քանի շներ լծած՝ դուրս են գալիս վորսի։ Էսկիմոսները վորսում են ձուկ, ծովային հորթ և միքանի տեսակ ծովային ուրիշ կենդանիներ. ցամաքի վրա վորսում են հյուսիսային աղվես, բադ, արջ և այլն։

— Ուրեմն նրանք դրանցով էլ կերակրվում են։

— Այո, նրանց կերածն այդ է ու մեկ էլ ճարպ. այդ ճարպն է, վոր հյուսիսի բնակիչներին տաքություն է տալիս։

— Հայրիկ, ուրեմն դրա համար է, որ մենք ձմեռները սի-
րով ուտում ենք յուղալի կերակուրներ:

— Այո, զավակս, ճիշտ նկատեցիր, ասաց հայրը: Հյուսիսա-
յին յերկրներ ճանապարհորդողներն էլ յուղ, ճարպ շատ են ու-
տում և նրանց տաքության միակ աղբյուրը դա է:



52. Մասսի լանջին

Ա. Մխիթարյան

1

Ժամի մեկին Մասսի լեռնային վերջին տափարակներից մեկի վրա ճաշելուց հետո՝ մենք միացանք մեր հետևակ ընկերներին: Ձիով այլևս առաջ գնալ անհնար եր. այդ տափարակից սկսվում եր մի թեք, դժվարակոխ զառիվեր, որի վրա բարձրանալու համար՝ լեռնային ճանապարհներին այնքան ընտելացած քյուրդերն անգամ ստիպված եյին լարել իրանց բոլոր ուժերը: Կարավանը, որ այժմ բաղկացած եր միայն արշավախմբի 14 անդամներից, մոտ 25 քյուրդ բեռնակիրներից, մի հրացանակիր քյուրդից և մի առաջնորդից, ավելի ևս կամաց ու դանդաղ, քան առաջ, տեղ-տեղ հանգստանալով, մագլցում եր թեք զառիվերը: Դժվարությունն այն եր, որ զառիվերը ծածկված եր մանր խճով և մեր ոտները շատ անգամ թաղվում եյին նրա մեջ ու վեր բարձրանալու փոխարեն՝ սահում դեպի վայր, բայց և այնպես ալպյան գավազանի օգնությամբ մենք անընդհատ առաջ եյինք գնում:

Որն արդեն յերեկոյանում եր. արևը թեքվում եր դեպի իր մուտքը. հարկավոր եր շտապել և ժամ առաջ հասնել Մասսի այն վերջին տափարակին, ուր անց եյինք կացնելու գիշերը. ուստի

կարավանը, այստեղ փոքր ինչ դադար առնելուց հետո, նորից ճանապարհ ընկավ: Ճանապարհ. այդպես լիներ նույնիսկ դրախտի ուղին՝ յես համոզված եմ, որ հանդերձյալ կյանքում ոչ ոք չեր ցանկանա այնտեղ գնալ: Սև, փայլուն, սրածայր, ահագին ժայռեր, կուտակված իրար վրա, կանգնած են առաջիդ, պատի նման, և դու ստիպված ես նախ մտածել գոնե մի քանի վայրկյան և ապա միայն ալպյան գավազանը ցցելով մի տեղ՝ ժայռերի արանքում, իբրև հեցուկ, դնել ոտքդ որևե ահագին քարի սուր ծայրին: Շատ անգամ այդ էլ բավական չե, հարկավոր է օգնության կանչել և յերկու ձեռքը ու, բառացի մտքով, չորս ոտանի դարձած՝ ճանկռտել ժայռերն ու այդպես միայն հասնել որևե քարակույտի գլուխ ամրությամբ համոզվելու համար, որ առաջիդ կանգնած մի ուրիշ դժվարակոխ քարակույտ պահանջում է քեզանից նույնը, յեթե ոչ ավելին: Յեվ այսպիսի «ճանապարհով» մենք ստիպված եյինք գնալ ոչ պակաս քան յերեք ժամ: Զարմանալին այն եր, որ ոչ ոք մեզանից չեր գանգատվում, թեև ամենքն էլ շնչում եյին ծանր, հևալով, աշխատելով լայն բանալ թոքերը՝ ավելի մեծ քանակությամբ օդ կուլ տալու համար: Լեռնային բարձր շերտերի օդը փոքր առ փոքր զգացնել եր տալիս մեզ իր ուժը:

— Հասանք, հասանք,— լսվեց հանկարծ բարձրից մեր ընկերներից մեկի ձայնը, որ բեռնակիր քյուրդերի և առաջնորդի հետ միասին առաջ եր անցել,— հասանք գիշերելու տեղին:

Յեվ ժամանակ եր հասնելու. մութն ընկնում եր. փչում եր արդեն ցուրտ, սառեցնող քամի. ամենքը քաղցած եյին և հանգիստ եյին խնդրում:

Յերբ մենք հասանք տափարակին, քամին ավելի սաստկացավ և սկսեց փչել փոթորկի զորությամբ: Չընայելով, որ մենք հագանք ձմեռային հաստ վերարկուներս և ձգեցինք վրայից յափընջիներ, այնուամենայնիվ անհնար յեղավ պաշտպանվել ցրտասարսուռ քամու ազդեցությունից. շատերը մեզանից սկսեցին դողդողալ, ատամ ատամի խփել, իսկ մեկը մինչև անգամ հիվանդացավ և բռնվեց տենդով:

Վերջապես վրանը խփվեց և մենք սողալով մտանք նրա տակ, Տմք եր. հազիվ արշին ու կես բարձրություն ունեցող, յերկկողանի նեղ վրանը մեզ թվաց մի հոյակապ ապարանք, մի պալատ, չընայելով որ այդ պալատի մեջ մենք կուչ եյինք յեկել ու սեղմվել իրար ավելի, քան գուցե սեղմվում են ոչխարները նեղ փարախում: Իսկ յերբ թեյը պատրաստվեց և մեզանից յուրաքանչյուրը իրար վրա, ագահաբար կուլ տվեց մի քանի բաժակ՝ հացի, պանրի և յերշիկի հետ միասին, այդ ժամանակ արդեն մենք

զգացինք մեզ կանգնած յերկրային ու բոլոր յերկնային յերանությունների գագաթնակետին։ Ամեն ինչ լրիվ եր. պետք եր միայն քնել ու հանգստանալ՝ վերանորոգելու մեր՝ բավականաչափ սպառված ուժերը՝ հետևյալ օրվա ավելի ևս դժվար վերելքի համար։

Անցավ մի կես ժամ և լռությունն տիրեց վրանում. ամենքը խաղաղ քնած եյին հաստ վերարկուների և վերմակների տակ, իսկ դուրսը մեր ընկերներից մի քանիսը, վորոնց համար տեղ չը կար վրանում, վոտով-գլխով մտել եյին Թաղիքյա մեծ ու հաստ, հատկապես լեռնային ճանապարհորդությունների համար կարել տված պարկերի մեջ և նույնպես քնած եյին անշարժ։

2

Կես գիշերից անց՝ յեղանակը փոխվեց. յերկինքը ծածկվեց սպիտակ-մթնագույն ամպերով. հանդարտված քամին բարձրացավ, նորից ու նորից սկսեց իր ճնշող, սրտամաշ յերաժշտությունը։ Թեթև, սպիտակ, թափանցիկ մառախուղը մեկ ծածկում եր վրանն ու շրջակա ժայռերը, մեկ ցրվում, վերանում՝ տանելով դեպի Մասսի ստորին խորաձորերը. կարկտի մանրիկ հատիկները ծեծում եյին վրանը և բարձրաձայն խշշոցով ծածկում տափարակը։ Սարի հեռավոր գագաթից լսվեց խուլ, սպառնական գոռոց։

Առավոտվա Թեյից հետո, մենք բոլորս, կուշտ յեկած ցրտից, տխուր կանգնել եյինք վրանի մոտ և հայացքներս ուղղել դեպի Մասսի մառախլապատ գագաթը. ամեն մեկը մեզանից վորոնում եր իր առանձին մտածմունքը. քամին վզզում ու վոռնում եր կատաղությամբ։ Լեռան վերնակողերի ժայռերն ահարկու հայացքով նայում եյին բարձրից... «Գնալ արդյոք առաջ, դեպի այդ սարսեցնող, անհյուրընկալ քարակույտերը, դեպի այդ մութ ամպերը ու յենթարկել կյանքը ամեն տեսակ վտանգի, թե յետ դառնալ դեպի Սարդար-Բուլաղի հոյակապ վրանը, դեպի տաքն ու հանգիստը»,—ամեն մեկը մեզանից այս տարակուսանքի մեջ եր։

— Յես յետ եմ գնում, — լսվեց հանկարծ մի վճռական ձայն խմբի միջից,—տաք շորեր չունեմ, մրսում եմ։

Ամենքը կարծես սպասում եյին հենց այդ առաջին ձայնին, վոր մի վորոշ յեզրակացության գային, մի վճիռ կայացնեն իրանց մեջ։ Յերկմտությունը վերջացավ. բոլորն ել շարժվեցին տեղներից։

— Իսկ յես գնում եմ առաջ, ինչ ուզում է թող լինի, յես վճռել եմ. և ինչ պիտի լինի... սկսեց տաք-տաք խոսել մի ուրիշը։ Այդ քայլը ապացուցանում եր, վոր լեռներում յեղանակը հաճախ փոփոխական է լինում, քամին կարող է շուտով դադարել, յեղանակը լավանալ։

Խոսքը, իհարկե, միշտ քաջերինն է. այդ հին ճշմարտությունը Մասսի բարձր կողերի վրա ևս արդարացավ։ Խմբի մեծամասնությունը հետևեց քաջին։

Վճիռը կայացնելուց հետո՝ ամեն մեկը սկսեց շտապ-շտապ պատրաստվել իրագործելու այն։ Քյուրդերը, վորոնք անհամբերությամբ սպասում եյին մեր խորհրդակցության վախճանին, խեղճ-խեղճ կախեցին գլուխները. ուրախ եյին նրանք միայն, վորոնք վերադարձողների հետ պետք է իջնեյին Սարդար—Բուլաղ ու յետ տանեյին նրանց տաք շորերը։

Առաջ գնացողներից յուրաքանչյուրն իր անձնական միջոցները ձեռք առավ ցրտից պաշտպանվելու համար։

Կազմ ու պատրաստ, ալպյան գավազանները ձեռքներիս, փոխեցինք առաջին քայլը դեպի վեր։

—Ո՛ն տղը, հառա՛ջ,— ուրախ բացականչեցի յես ինձ ու ինձ, նկատելով, վոր մեր քաջ ընկերոջ գուշակությանը համաձայն յեղանակը հիրավի սկսում է լավանալ։

Կտրելով մերձակա ընդարձակ ձյունարանի ամբողջ լայնությունը, կարավանը մեկ կորչում եր քարքարուտների արանքներում, մեկ յերևում վորևե բլրի գագաթին. ամենքը վոստոստում ու թռչկոտում եյին աշխույժ և վոգևորված, ամենքի դեմքին, չը նայելով ճանապարհի դժվարության, փայլում եր ուրախ ժպիտ, և այդ ուրախության միակ աղբյուրը պարզ ու պայծառ արևն եր, վոր շողշողում եր ամպերից ազատված կապույտ յերկնքում և տաքացնում մեր ցրտից սառած մարմինները։

Քամին դադարել եր։ Մասսի դեռ այնքան հեռու գագաթն ել պարզել ու ամբողջովին բացել եր մեր առաջ իր ձյունափայլ մաքուր վարսերը։ Յերկյուղն իսպառ չքացավ մեր սրտից։ Ժամերն անցնում եյին ժամերի յետևից. առանց համարյա դադար առնելու, լարած մեր բոլոր ուժերը՝ մենք մագլցում եյինք դեպի վեր, սակայն Մասսի գլխավոր սպիտակահեր կատարը կանգնած եր նույն անմատչելի հեռավորության ու բարձրության վրա և, կարծես, մագաչափ անգամ մենք չեյինք մոտենում մեր նպատակին. ընդհակառակը, վորքան մենք բարձրանում եյինք, թվում եր, թե այնքան ավելի այդ խորհրդավոր կատարը հեռանում եր մեզանից։

Անցան ժամեր, անցավ կեսօրը. վոչ վոք մեզնից չեր մտածում ուտելու կամ հանգստանալու մասին։ Ուղիղ է, մենք հաճախ նստում եյինք և մի կտոր շոկոլադ կամ մի հատիկ անուշեղեն ձգում բերաններս, բայց դա լոկ բալեյական հանգիստ եր՝ կանոնավորելու շնչառությունը, վոր քանի գնում, այնքան ավելի դժվարանում եր. մենք հևում եյինք այնպես բարձրաձայն, այնպիսի տ-

գահությամբ արագ-արագ կուլ տալիս լեռնային շերտերի անոսր ոդը, վոր կարծես խեղդվելիս լինեյինք վորևե փակված ու զմռսած սենյակի անոդ մթնոլորտում։ Հեշտ է ասելը, մենք արդեն գտնվում եյինք մոտ 15,000 վոտնաչափ բարձրության վրա, ուրեմն ավելի վեր քան փոքր Մասիսի և Արագածի կատարները և համարյա մոտ Կազբեկի բարձրության։ Հավիտենական ձյուների միջից յես ձգում եյի հայացքս դեպի վայր, դեպի իմ առաջը բացված անեզր անծայրածիր տարածությունը՝ վողողված արևի պայծառ ճառագայթներով, և թվում եր ինձ, թե այդ կախարդական տեսարանը չի կարող լինել մի շոշափելի իրականություն, թե դա մի դյութական յերազ է, մի վոսկի ցնորք, և յես մի անմարմին եյակ կապույտ յերկնքում, մաքուր, ձյունափայլ ամպերի վրա։ Ա՜խ, յեթե գիտենայի, վոր մեկը կը կատարե իմ վերջին կամքը՝ յես կը կտակեյի վոր իմ դիակը տանեն դեպի հայրենի լեռան այդ ձյունոտ բարձունքը, ուր թիկն տված վորևե ժայռի՝ կարողանայի սառած աչքերով միշտ նայել ու նայել այդ յերազատեսարանին, այդ ցնորական յերկնային պատկերին, մինչև վոր անկուշտ աչքերս ծածկվեյին հավիտենական ձյուներով, թաղվեյին մշտնջենավոր սառույցների տակ։

Իմ անսահման բարձրությունից յես նայում եյի դեպի վայր և առաջին անգամ չեյի կարողանում ըմբռնել, թե ուր եմ և ինչ եմ տեսնում իմ առջև։ Հեռու, հեռու արևելքում Սյունյաց կապուտակ լեռները չե՞ն արդյոք նրանք, վոր ձգվում են, թեթև մըշուշի շղարշով սքողված, այնպես յերկար, այնպես անվերջ դեպի հարավ ու կորչում անհուն տարածության մեջ՝ միանալով յերկնքի ու յերկրի հետ. սպիտակ, թեթև; գեղեցիկ ամպեր, մի՞վ գիտե, գուցե նաև ձյունեղեն ծածկույթներ, տեղ-տեղ փայլում են նրանց կատարներին։ Տեղ-տեղ վորևե ըմբոստ լեռնագագաթ ճեղքել, դուրս է հանել իր գորշ կապուտակ գլուխն այդ ամպերի միջից ու իր հեռու դիտարանից ակնապիշ նայում է ծերուկ լեռանը։ Արաքսը չե՞ արդյոք այն յերկայն կապուտակ գիծը, վոր վոսկի փոշիով լցված լայնալիճ հովտում՝ անհամար պտույտներով գնում անհետանում է հեռու, հազիվ նշմարելի հորիզոնում։ Քմահաճ գետը իր ոձաձև գալարումների մեջ ամուր գրկել է կանաչազեղ, սիրուն մարմանդներ, գուցե նաև այգիներ ու պարտեզներ, ու իր հանկարծական վոլորումների տեղում յերբեմն-յերբեմն փայլում ու պսպղում է, հղկված պողպատի նման, արևի պարզ շողերի տակ։ Փոքր Մասիսը չե՞ արդյոք այն կլորիկ, սիրուն սարը, վոր կանգնած է հարավում իմ դեմ հանդիման և ցույց է տալիս ինձ ամբողջովին իր նազելի իրանը, իր բոլորակ գագաթի վրա բազմած մանրիկ գեղեցիկ բլուրները։ Նա, կարծես, ցածրացել է և այնքան փոքր է յերևում այստեղից, վոր թվում է, թե մի նորահաս պատանի յե կանգնած հսկա ծերունու առաջ։ Իսկ նրա՞նք, հարավ արևմուտքում տարածվող այն ընդարձակ հովիտը, այն լայնեզր գեղեցիկ սարահարթերը, լեռների մեկը մյուսի յետևից բարձրացած այն անվերջ շարքերը…

---

53. Մոծակ

Ն. Սարգսյան

Մոծակն իր մանկությունն անց է կացնում ջրի մեջ։ Ձվից նոր դուրս յեկած փոքրիկ մոծակը բոլորովին նման չի մեծին. նա վոչ թևեր ունի և վոչ էլ յերկար վոտքեր. նա ողակավոր յերկար մարմնով և կարճ վոտքերով մի կատարյալ թրթուր է, ուրիշ վոչինչ։ Գալարելով իր յերկար մարմինը և շարժելով կարճ վոտքերի մոտ գտնվող բարակ յերկար մազիկները՝ արագ կերպով շարժվում է ջրի մեջ։ Բայց մոծակը ազատ ոդ է շնչում, դրա համար էլ շուտ-շուտ վեր է բարձրանում, հասնում ջրի յերեսը և իր պոչի ծայրը հանում ջրից։ Այդտեղ ունի նա մի փոքրիկ անցք. սրանով ոդ է շնչում և կրկին գնում ջրի տակը։ Սննդի նեղություն բոլորովին չի քաշում. Ջրի մեջ առատ սնունդ կա նրա համար և նա միանգամայն հասունանում է, կորցնում է իր աշխուժությունը, կայտառությունը, ընկնում է մի տեսակ թմրության մեջ և քաշվելով մի հանգիստ անկյուն, կծկվում է և մնում անշարժ։ Նրա մարմինը շրջապատվում է պատյանով և մոծակը սրա մեջ սկսում է հետզհետե կերպարանափոխվել։ Շուտով նրա վրա առաջանում են թևեր, յերկար վոտքեր, արյուն ծծելու համար առանձին հարմարություններ։ Նա դառնում է մի սովորական մոծակ։ Պետք է այժմ դուրս գալ պատյանից։ Յեվ ահա նա հավաքում է իր բոլոր ուժերը և աշխատում է պատռել պատյանը։ Յեվ այդ հաջողվում է նրան. Պատյանը մեջքի կողմից պատռվում է. մոծակը նրա միջից դուրս է գալիս, բայց անմիջապես չի կարողանում թռչել հեռանալ, վորովհետև թևերը դեռ թաց են և ծալծլված։ Մի վորոշ ժամանակ նա իր պատռված պատյանի մեջ նստած, կարծես նա-



վակի մեջ, լողում է դեռ ջրի յերեսին, մինչև վոր թևերը բացվում են ու չորանում։ Յեթե այդ ժամանակ մի քամի նրա այդ նավակը շուռ տա, մոծակն այլևս կորած է։ Բայց այդ սովորաբար տեղի չի ունենում, վորովհետև այնտեղ, վորտեղ գտնվում է նա, հանգիստ, կանգնած ճահիճ է, ազատ քամիներից։

Թևերը բացվելուց և չորանալուց հետո թռչում է նա և հեռանում ճահճից։ Յեթե արու յե նա, հանգիստ ու անվրդով ճախրում է օդում, իսկ յեթե էգ է, վայը յեկել է մարդկանց և կենդանիներին. մեկ էլ տեսար տզզալով յեկավ նստեց մարմնիդ վրա, կնճիթը կոխեց մարմնիդ մեջ և սկսեց արագորեն արյունդ ծծել։ Պարզ տեսնում ես, թե արյունդ ինչպես մտնում է մոծակի մարմինը և նրան ուռեցնում։ Կուշտ կերպով արյունը ծծելուց հետո նա թռչում, հեռանում է։ Նրա կծած տեղը սկսում է քոր գալ և ցավել։ Բայց դեռ չհանգստացած գալիս է յերկրորդ, յերրորդ մոծակը։ Ստեղծվում է մի սարսափելի դրություն։ Այնտեղ, վորտեղ մոծակներ շատ կան, մարդիկ բնավ հանգստություն չունեն։ Բայց դրանով վերջանա, շատ լավ է։

Հաճախ մոծակը վարակում է մարդկանց զանազան հիվանդություններով։ Նրա բերանում և մարսողական գործարաններում ապրում են ահագին քանակությամբ փոքրիկ եյակներ։ Յերբ մոծակը կծում է, նրա թուքի հետ մարդու մարմնի մեջ են ընկնում և այդ եյակները և չափազանց մեծ թվով, վորովհետև թքի ամենափոքրիկ մասնիկի մեջ անգամ նրանք հազարներով են վխտում։ Մարդու մարմնի մեջ այդ եյակները արագ կերպով աճում են ու բազմանում։ Շուտով նրանց թիվը հասնում է միլիոնների, տասնյակ ու հարյուրավոր միլիոնների։ Այդքան բազմանալով նրանք սկսում են թունավորել մարդու մարմինը։ Առաջանում է մալարիա կամ տենդ կոչվող հիվանդությունը, վորի ձեռքին շատերը ամիսներով ու տարիներով տանջվում, տառապում են և վերջը գերեզման իջնում։

Ահա թե ինչպիսի հետևանք է ունենում հաճախ մոծակի կծելը։ Բայց ինչպես պաշտպանվել նրանից։ Մարդիկ դրա միջոցը գտել են։ Ճահիճները, կանգնած ջրերը, անձրևից այս ու այնտեղ լճացած ջրերը, վորտեղ մոծակները ձու յեն ածում և բազմանում, չորացնում են զանազան միջոցներով։ Շատ տեղեր կոտրած ամանների և կամ տուփերի մեջ անձրևի ժամանակ հավաքված ջրերն անգամ չեն թողնում, վոր մնան իրենց տեղը։ Տեղ-տեղ էլ նավթ են ածում կանգնած ջրերի վրա, վորովհետև նավթի մեջ մոծակի

ձվերն ու թրթուռները վոչնչանում են։ Այսպիսի միջոցներով շատ տեղերում մոծակներին բոլորովին վոչնչացրել են։ Սակայն յեթե նրանք մի փոքր նպաստավոր պայմաններ են գտնում, դարձյալ սկսում են արագ կերպով բազմանալ։ Նրանք յերբեմն բազմանում են չափազանց մեծ չափերով։ Պատմում են, վոր սրանից մոտ հարյուր տարի առաջ Անգլիայի Նորիչ քաղաքում մի գեղեցիկ օր տաճարի մոտ բնակիչները տեսնում են մի թանձր ծուխ. շատերը կարծում են, թե տաճարը հրդեհ է ընկել և վազում են հանգցնելու։ Սակայն այդ ծուխը վոչ այլ ինչ էր, բայց յեթե մոծակների մի հսկայական խումբ, վոր թռչում էր քաղաքի վրայով։ Մի ուրիշ անգամ էլ, դարձյալ Անգլիայում, թանձր ու թուխ ամպերի ձևով մոծակները ծածկում են մի ամբողջ մեծ քաղաք։

Մի այլ դեպք ես։

Հնում պարսկական Սապոր թագավորն ահագին զորքով ավերում էր իր հարևան յերկրները։ Մի անգամ, յերբ նա պատրաստվում էր հարձակվելու մի քաղաքի վրա, մոծակների մի հսկա բազմություն թափվում է նրա զորքի վրա։ Զինվորները, ձիերը և փղերը մոծակներից հանգստություն չունեյին։ Անտանելի յեր բոլորի դրությունը։ Փրկություն չկար։ Պատերազմը մոռացել եյին և ամենքը միմիայն մոծակների ձեռքից ազատվելու մասին եյին մտածում։ Վերջը Սապոր թագավորը ստիպված հավաքում է իր զորքը և յետ քաշվում։ Մոծակները փախչող զորքին բավական տեղ հետապնդում են և ապա հաղթանակով վերադառնում իրենց նախկին տեղը։

Ամեն անգամ, յերբ պայմանները աննպաստ չեն, մոծակները բազմանում են հսկայական չափերով և այդպիսի մեծ խմբերով շարժվում մի տեղից մի այլ տեղ։

54. Քրիստափոր Կոլումբոս

1

Սրանից մոտ հինգ հարյուր տարի առաջ Հնդկաստանը աշխարհիս ամենահարուստ յերկրներից մեկն էր. այնտեղից արտահանում եյին թանկագին ապրանքներ, մարգարիտ, սադափ, մետաքսեղեն, վոսկեթել մանվածքներ, թեյ, սուրճ, դարչին, բրինձ։ Վաճառականները հակեր եյին կապում, ուղտերին բարձում, կարավաններ կազմում ու ճամփա ընկնում։ Կարավանները անցնում եյին լեռների կիրճերով, անապատներով, օվազիսից օվազիս, քաղաքից քաղաք։ Ուղտերը կոտորվում եյին արևակեզ ավազից ու

ծառավից, մարդիկ հիվանդանում եյին։ Ավազակները կողոպտում եյին կարավաններն ու գերի վերցնում կամ սպանում մարդկանց։ Ամեն տեսակ վտանգների յենթարկվելով, մեկ-յերկու տարուց վերջապես վաճառականները հասնում եյին Միջերկրական ծովի ափերին, վորտեղից ապրանքները նավերով փոխադրում եյին Յեվրոպա։

Շատերն արդեն վորոնում եյին մի այլ ճամփա դեպի Հընդկաստան, ավելի կարճ և ավելի ապահով։ Ջենովացի Քրիստափոր Կոլումբոսն էլ ամբողջովին տարված էր այդ մտքով։

Բախտը նրան գցել էր Պորտուգալիայի մայրաքաղաքը՝ Լիսաբոն։

Նա գիտեր վոր յերկիրը կլոր է, և համոզված էր, վոր Պորտուգալիայից շարունակ դեպի արևմուտք գնալով անպատճառ պիտի հասնի Հնդկաստան։ Նա դիմեց Պորտուգալիայի կառավարության, բայց իզուր։ Ապա ուզեց անցնի իր հայրենի Ջենովան։ Գնում էր Սպանիայով։ Այստեղ նրան խորհուրդ տվին դիմել Սպանիայի կառավարության։ Գիտնականները նրա առաջարկը անմիտ եյին համարում, պալատականները ծաղրում եյին։ Յերկար տարիներ կառավարությունը խոսք չէր տալիս։ Վերջապես ամեն խոչընդոտի դեմ կռվելով՝ Կոլումբոսը հասնում է իր նպատակին։ Կառավարությունը խոստանում է ոգնել, յեթե Կոլումբոսը բոլոր գտած յերկըրները կը հպատակեցնի Սպանիային։

Պալոս նավահանգստում պատրաստված եյին հին, քայքայված յերեք նավ։ Նավաստիները ընտրված եյին ամեն տեսակ վոճրագործներից ու հանցավորներից։ Կոլումբոսը տեսնելով այդ՝ սաստիկ մտատանջության մեջ էր։ Ճամփա ընկնի՞, թե՞ հրաժարվի։ Տասնութը տարիների ջանքերից ու չարքաշությունից հետո հրաժարվե՞լ այս ուխտից։ Ուրիշ անգամ կաջողվե՞ր արդյոք։

Կոլումբոսը վորոշեց ճանապարհ ընկնել։

Հենց վոր փչեց բարենպաստ քամին, Կոլումբոսը նավը յելավ, հրամայեց խարիսխները քաշել ու առագաստները բանալ։

«Բարի ճանապարհ, բարի ճանապարհ»,—կանչում էր ժողովուրդն ափից, մինչև վոր նավերը աչքից չքացան։

Այդ որը 1492 թվի ոգոստոսի 20-ն էր։

2

Նավեցին դեպի Կանարյան կղզիները։ Ղեկավարներից մեկը դիտմամբ կոտրեց ղեկը, վոր նավերը ստիպված լինեն յետ դառնալ։ Բոլորն էլ շփոթվեցին և վատ նշան համարելով՝ պահանջում եյին վերադառնալ։ Կոլումբոսը մի կերպ ուղղել տվավ ղեկը և հրամայեց առաջ գնալ։ Ամենքը տրտնջում եյին. «Իր հիմար քմահաճույքին ուզում է մեզ զոհել՝ բոլորիս կորցնելու է»։

Վերջապես հասան Կանարյան կղզիները։ Ակներև էր, վոր

այդ նավերով անկարելի յեր ճամփորդություն շարունակել անծանոթ ովկյանոսով։ Նորոգելու համար մի ամբողջ ամիս պետք յեղավ։

Ղեկերը նորոգեցին, բոլոր փտած մասերը փոխեցին, թարմ ջուր, միս, փայտ վերցրին, ու մի գիշեր Կոլումբոսը ճամփա ընկավ դեպի արևմուտք։ Յերբ լույսը բացվեց, էլ ցամաքը չէր յերևում, շուրջը միայն ծով էր ու յերկինք, անսահման տարածություն։ Նավաստիներին յերկյուղ տիրեց։

— Ո՞ւր է տանում մեզ. չորս բոլորը միայն ծով է ու ծով, և որեցոր ավելի հեռանում ենք ցամաքից. Չենք ուզում նոր յերկըրներ. Թող յետ տանի մեզ մեր հայրենիքը։

Մի քանիսը զգուշանում եյին, թե ծովային որենքները խիստ են և մահի ու կյանքի իրավունք են տալիս նավապետին։

— Մեզ ինչ,—կանչում եյին նավաստիները.—նա մենակ է, մենք շատ. ինչից ենք վախենում, էլ ինչ ենք մտիկ անում։

Կոլումբոսը լսում էր այս տրտունջները, հորդորում, համոզում, իսկ հարկ յեղած տեղը և սաստում, սպառնում։ Վեցերորդ որը տեսան ջրի յերեսին լողացող մի մեծ գերան. ուրախացան, կարծելով, վոր ցամաքը մոտիկ է. հեռավոր ամպերն ընդունել եյին ցամաքի տեղ։

Շարունակում եյին նավել։ Հասան մի տեղ, ուր ջուրը ծածկըված էր խիտ խոտով, վոր խանգարում էր նավարկությանը։ Բոլորն էլ վախենում եյին, թե ծովի վերջն է ու խոտի տակ խութեր են ծածկված։ «Նավերը ահա կը ժայռերին կը դիպչեն ու կը փշըրվեն. ամենքս կը խեղդվենք»,—մտածում եյին վոմանք։ Բայց Կոլումբոսը սիրտ էր տալիս.

«Չենք խեղդվի, ջրխոտ է, տակը քարեր չկան», ասում էր նա։ Լողում եյին խոտի միջով՝ կարծես մի կանաչ դաշտով։ Վերջապես դուրս յեկան այդ խոտերից էլ. կրկին միևնույն կապույտ ծովը, միշտ միևնույն յերկինքը։

Ելի մի քանի որ անցավ, յերևացին բազմաթիվ թռչուններ։ Գիշերները նստում եյին կայմերի վրա, բայց արևի ծագելուն պես թռչում հեռանում եյին։ «Յեթե թռչուններ են թռչում, անշուշտ ցամաքը մոտիկ է»,—ուրախանում եյին նավաստիները։ Հաջորդ որը տեսան թռչող ձկներ, մի քանի հատ էլ նավերի վրա ընկան։ Յերբեք այդպիսի ձկներ չեյին տեսել։

Բայց զո՜ւր հույսեր. որեր եյին անցնում, ցամաքը չէր նըշմարվում։ Նավաստիները բացե ի բաց հրաժարվում եյին ավելի հեռու նավելուց։ Կոլումբոսը կանգնեց ապստամբների մեջտեղ ու կտրուկ հայտարարեց.

— Այսքան ժամանակ յեկել ենք, ելի մի յերեք որ սպա-

տենք: Յեթե այս յերեք օրն էլ ցամաքը չտեսնենք, կը վերադառնանք տուն:

3

Ապստամբները հնազանդվեցին: Կոլումբոսը հույս ուներ, վոր յերեք որում անպատճառ կը հասնեն ցամաքին: Շատ նշաններ կային. հատակը չափելով նկատել եր, վոր հետզհետե խորությունը պակասում եր, թռչունները պտտվում եյին արդեն յերամներով: Կային և փոքրիկ թռչուններ, վորոնք ծովափից հեռու թռչել չեյին կարողանա: Ցերեկները փչում եր մի այնպիսի տաք քամի, վոր յերբեք ծովից չի փչում:

Ելի մի որ անցավ և դեռ վոչինչ չեր յերևում: Կոլումբոսն էլ հուզվում եր, բայց ցույց չեր տալիս և նավաստիներին խրախուսելու համար հայտարարեց, թե յերկու հազար հինգ հարյուր ռուբլի յե նշանակված նրան, ով ամենից առաջ կը տեսնի ցամաքը: Ամբողջ գիշերը մարդիկ քնած չեյին, շատերը կայմերի վրա լուսացրին: Իսկ Կոլումբոսը մտատանջության մեջ ինքն իրեն ասում եր. «Յեթե այսոր էլ ցամաքը չերևաց, ինչ պետք ե անեմ: Նավաստիները կապստամբվեն, ու ամեն ինչ կորած ե»:

Լուսաբացից առաջ Կոլումբոսը յելավ տախտակամած և հեռվում մի կրակ նկատեց. իր աչքերին չհավատալով՝ կանչեց մի նավաստու ու ցույց տվավ հեռուն: Յերկուսն էլ սրտատրոփ նայում եյին. կրակը շարժվում եր: Անկասկած մի նավակ եր, իսկ նավակով ափից շատ հեռանալ վոչ վոք չեր վստահանա: Կոլումբոսի ուրախությանը չափ չկար:

Լույսը նոր եր բացվում, վոր առաջավոր նավից ձայն տվին. «Ցամաքը, ցամաքը»: Կոլումբոսի նավը ամենից յետևն եր. շուտով այնտեղից էլ նկատեցին: Բոլոր յերեք նավերի վրա էլ մի խելառ ցնծություն բարձրացավ: Նավաստիները համբուրում եյին Կոլումբոսի ձեռները, զգեստի ծայրերը:

— Ների՛, ների՛, Կոլումբոս, վոր չեյինք հավատում քո խոստումներին ու ըմբոստանում եյինք քո դեմ. ովկյանոսը չտեսած՝ սարսափել եյինք»:

Իսկ Կոլումբոսը յերջանիկ կրկնում եր.

— Ամեն ինչ մոռացված ե, յես չեմ բարկանում ձեզ վրա:

Յերեք ամիս անծայր ջրերով նավելուց հետո վերջապես հասնում եյին ցանկալի ցամաքին:

Կոլումբոսը հրամայեց մակույկներն իջեցնել, ու իր ազնական նավապետների ու նավաստիների հետ դիմեց դեպի ափը: Քանի մոտենում եյին, այնքան ավելի եյին զարմանում: Ափին բարձրանում եր մի վիթխարի անտառ, վորի ամեն մի հսկայական ծառը հազիվ չորս մարդ կարողանար գրկել. ամեն մի

տերև յերեք մարդ կը ծածկեր: Ծառերը, ծաղիկները թռչունները՝ բոլորն էլ այնպես չեյին, ինչպես Յեվրոպայում: Անտառից դուրս վազեցին վայրենի մարդիկ, մորթին կարմիր, գլխի մազերը սև, յերկար ու կոշտ, անմորուք: Ամբողջովին մերկ եյին, գլխին փետուրներ ու զարդեր ունեյին: Մարմինն ու յերեսը նախշած եյին բազմերանգ ներկերով, ականջներին ու ռնգներին օղակներ ու վոսկու կտորներ: Նրանք ապշած նայում եյին նորեկներին:

Յելնելով ծովափը, Կոլումբոսը դրոշակը տնկեց ու հայտարարեց նոր գտած յերկիրը Սպանիայի սեփականություն:

Նավերից վորոտացին թնդանոթները:

Այդ կղզին Կոլումբոսը անվանեց Սան-Սալվադոր:

Վայրենիները, տեսնելով սպիտակամորթներին ու լսելով թնդանոթների վորոտը, կարծեցին թե սպանացիք աստվածներ են ու յերկնքի վորդիք, վոր յեկել են փայտե տներով և կարող են փայլակ ու կայծակ անել, ու յերկրպագում եյին նրանց:

4

Կոլումբոսն այնուհետև մի քանի ուրիշ կղզիներ էլ գտավ ու հավատացած լինելով թե գտել ե Հնդկաստանի մերձավոր կղզիները, յերկիրն անվանեց Վեստ-Ինդիա, այսինքն Արևմտյան Հնդկաստան, իսկ վայրենիներին հնդիկներ: Հիմնելով կղզիներից մեկի վրա մի ամրոց ու մարդկանց կեսն այնտեղ թողնելով, նա վերադարձավ Սպանիա:

Յերբ Կոլումբոսի նավերը մտան Պալոսի նավահանգիստը, թնդանոթները վորոտում եյին և ժողովուրդը ցնծությամբ դիմավորում եր: Նա իր հետ բերել եր հնդիկներ, վոսկի, կարտոֆիլ, սիմինդր, պտուղներ, թռչուններ և այլն: Կարտոֆիլն ու սիմինդրը մինչև այն ժամանակ անծանոթ եյին յեվրոպացիներին:

Այժմ ամենքը խոնարհվում եյին Կոլումբոսի առջև, և ավելի նրանք, ովքեր առաջ խելառ եյին անվանում նրան:

Հաջորդ ճամփորդություններին Կոլումբոսի հետ անցան Նոր Աշխարհը բազմաթիվ գաղթականներ: Նոր և նոր յերկրներ եյին բացվում: Հիմնվեցին նոր քաղաքներ: Կոլումբոսը պահանջում եր, վոր յեվրոպացի գաղթականները մեղմ վարվեն վայրենիների հետ և չը կողոպտեն նրանց, և խիստ պատժում եր վոճրագործներին ու ծույլերին: Բայց դրանով բազմաթիվ թշնամիներ վաստակեց, վորոնք դրդեցին կառավարության, վոր նրա տեղ մեկ ուրիշ կառավարիչ նշանակի: Այդ կառավարիչը հանեց Կոլումբոսին պաշտոնից և շղթայակապ ուղարկեց Սպանիա: Թեև նրա շղթաները հանեցին, բայց Կոլումբոսը յերբեք չեր մոռանում թագավորի

մարդկանց այդ ապերախտությունը ու ասում եր իր ազգականներին.

«Յերբ մեռնեմ, այս շղթաներն էլ ինձ հետ դրեք դագաղիս մեջ»:

Վշտից, անաջողությունից սրտաբեկ՝ Կոլումբոսը հիվանդացավ և մեռավ: Նրա հետ թաղեցին և նրա շղթաները, միակ պարգևը, վոր մնացել եր իրեն սպանական պալատից այնքան յերախտիքների փոխարեն:

Նա մեռավ համոզված, վոր գտել է Հնդկաստանի Արևմտյան կողմերը: Բայց շուտով իմացվեց, վոր նրա գտածը Նոր Աշխարհ է: Այդ աշխարհին հետնորդները նույն իսկ չտվին Կոլումբոսի անունը, նա կոչվեց Ամերիկա, մի յերկրորդական ճամպորդի անունով, վոր իր գրքի մեջ առաջին անգամ նկարագրեց այդ նորագյուտ յերկրները:

---

55. Սինղերան

Ն. Սարգսյան

Փղերի կյանքից

Կենդանաբանական այգում, իրար կից վանդակներում ապրում եյին կապիկն ու փիղը:

— Սիրելի հայրենակից,— ասաց կապիկը մի անգամ փղին,— այդ ինչպես յեղավ, վոր դու էլ ընկար այստեղ, մեզ նման խեղճ ու կրակ կենդանիների շրջանը:

— Ինչպես, շատ հասարակ ձևով, ինձ նման փղերի դավաճանությամբ:

— Դավաճանությա՞մբ,— զարմացավ կապիկը:

— Այո, դավաճանությամբ,— ասաց փիղը և խորը հառաչանք քաշեց,— և դա թող քեզ չզարմացնի: Հիմա յես քեզ կը պատմեմ ամբողջ դեպքը և դու կը հասկանաս ամեն բան:

Այս ասելուց հետո փիղն սկսեց.

— Յես, յեղբայրներս, մայրս, հայրս և ուրիշ շատ ազգականներ ու բարեկամներ, մի մեծ խումբ կազմած, ապրում եյինք անտառի խորքում: Մեզ բոլորիս ղեկավարում եր մի մեծ, փորձված ու խելոք փիղ: Ամենքս յենթարկվում եյինք նրան: Ինչ վոր ասում եր նա, մեզ համար օրենք եր, ուր վոր տանում եր, գնում եյինք անտրտունջ: Այդպես այդ փորձված առաջնորդի ձեռքի տակ ապրում եյինք յերկար տարիներ, խաղաղ ու անվրդով:

— Գիտեմ, գիտեմ,— ասաց կապիկը,— մենք էլ հենց այդպես եյինք ապրում:



— Մի օր էլ,— շարունակեց փիղը,— մեր առաջնորդի ղեկավարությամբ գնում եյինք գետը ջուր խմելու և լողանալու: Հանկարծ լսվեցին անորոշ ու խուլ ձայներ: Մեր առաջնորդն անհանգստացավ: Նա նշան տվեց, վոր ամենքս պատրաստ լինենք: Ձայները հետզհետե մոտենում ու ուժեղանում եյին: Մենք գնում եյինք դեպի առաջ, վորովհետև այդ ուղղությամբ միայն ձայներ չեյին լսվում: Գնում եյինք արագ ու շտապով, կոտրատելով, ջարդելով ու տրորելով ծառերն ու թփերը: Մեկ էլ ինչ տեսանք: Մի քանի հարյուր մարդ արշավում են մեզ վրա վառված ջահերով, յերկար յերկաթյա ձողերով և ինչ աղմուկ-աղաղակով—վորը փող եր փչում, վորը գոռում-գոչում, վորը հրացան արձակում, վորը թմբուկ զարկում, վորը ճղավում-բղավում, վորը քա՜հ-քա՜հ

ծիծաղում։ Մի խոսքով մի սարսափելի բան, այնպիսի բան, վոչ տեսած էյի, վոչ էլ լսած։ Անտառը ջահերի լույսից լուսավորվել էր։ Մենք իրար անցած, անկարգ փախչում էյինք գլխապատառ։ Հանկարծ մեր ամբողջ խումբը ընկավ մի տեղ, վորտեղից այլես չկարողացանք դուրս գալ։ Ամեն կողմից հաստ փայտյա սյուներով շինած մի ծուղակ էր դա և մեզ բոլորիս քշել, բերել ածել էյին այդ ծուղակի մեջ։ Վոր կողմը գնում էյինք, ճանապարհը փակ էր։ Վերջը մեր առաջնորդի հրամանով յետ դարձանք, վորպեսզի մեր յեկած ճանապարհով դուրս գանք այդ ծուղակից։ Սակայն մարդիկ արագ կերպով ծածկել էյին և այդ ճանապարհը։

— Բայց մի՞թե չկարողացաք այդ սյուները ցած գլորել. ձեզ համար չէ՞ վոր դա մի հասարակ խաղ է,—հարցրեց կապիկը։

— Փորձեցինք, բայց այդ չհաջողվեց մեզ, վորովհետև հենց վոր մոտենում էյինք սյուներին և ընկնում նրանց վրա, մարդիկ իսկույն սյուների յետևից յերկաթյա ձողերով ծակում էյին մեզ, հրացան արձակում և կամ ջահերով այրում։ Վերջը մենք հուսահատվեցինք և բոլորս հավաքվելով ծուղակի մեջտեղը, սկսեցինք սպասել հանգիստ կերպով մեր ճակատագրին։ Հենց այդ ժամանակ մարդիկ շատ բացեցին ծուղակի անցքը և ահա ինչ տեսնենք, վոր լավ լինի։ Հաղթական քայլերով ներս են մտնում յերկու մեծ փիղ։ Նրանցից յուրաքանչյուրի մեջքին նստած էր մի թխադեմ մարդ, իսկ փղերի յետևից էլ գալիս էր մի փոքրիկ մարդ, վոր փղերի վոտների արանքում հաճախ պահվում, թաքնըվում էր։ Մենք հասկացանք իսկույն, վոր այդ փղերը բարի նպատակով չեն գալիս դեպի մեզ։ Հայրս այդ ժամանակ արագ կերպով վոտները բարձրացնում ու զարկում էր գետնին։ Այդպես անում էր նա միայն բարկացած ժամանակ։ Փղերը հետզհետե մոտենում են մեզ։ Մենք տեսանք, վոր նրանցից յուրաքանչյուրի պարանոցին հագցրած էր մի վզնոց և սրանից էլ յերկար թոկով կապած էր մի օղակ։ Այս օղակը փղերի մեջքին նստած մարդիկ բռնած էյին իրենց ձեռքը։ Հայրս էլ ավելի ուժգին կերպով սկսեց վոտքը գետնին զարկել։ Վերջապես փղերը բոլորովին մոտեցան հորս։ Այն փոքրիկ մարդը, վոր գալիս էր փղերի յետևից, օղակը վերցրեց իր ձեռքը և թաքնվեց ներս մտնող փղերից մեկի վոտքերի արանքում։ Յերբ հայրս իր վոտքը բարձրացրեց այդ անպիտան մարդուկին տրորելու համար, ինչպես յեղավ, չգիտեմ, օղակն ընկավ հորս վոտքը։ Հենց վոր այդ նկատեց այն փիղը, վորի վզնոցից կապված էր օղակը, իսկույն հեռացավ այդ տեղից և իր յետևից քաշ տվեց նաև հորս։ Յերկրորդ փիղն այդ ժամանակ կանգնեց հորս և մյուս փղերի արանքում և չթողեց, վոր նրանք վորևե բանով հորս օգնեն։

Վարժված փիղը վազեց մի մեծ ծառի մոտ և մի քանի անգամ պտտվեց նրա շուրջը. այդպիսով հորս կապեց նա այն հաստ ծառին։ Հայրս կատաղած էր, կնճիթով թոկը բռնում, քաշում էր այս ու այն կողմը, բայց անօգուտ, թոկը չափազանց ամուր էր։ Քիչ անցած, յերկու վարժված փղերը մոտեցան նրան և կանգնեցին նրա աջ և ձախ կողքերին. նա մնաց արանքում և հետզհետե հանդարտվեց։ Այդ ժամանակ փոքրիկ մարդը մտավ փղերի վոտքերի արանքը և կապեց հորս յետևի ազատ վոտքը, նույն ձևով կապեց նա նաև առջևի վոտքերը։ Յերբ հորս չորս վոտքերը կապված էյին արդեն, փղերը և մարդիկ թողին նրան և մոտեցան ինձ։ Ճիշտ նույն ձևով բռնեցին նաև ինձ և տարան կապեցին հորս մոտ, մի այլ ծառից։

Յես շարունակ դիտում էյի հորս. նա կատաղած, փրփրած ձգում, ձգձգում էր թոկերը, ընկնում էր մի կողքի կամ մյուս կողքի վրա, յերբեմն էլ ծառս էր լինում յետևի վոտքերի վրա կամ կնճիթով բռնում էր մոտակա ծառերի ճյուղերից, քաշում, քաշքշում, ջարդում, կոտրատում, բայց միանգամայն անօգուտ։ Թոկերը շատ էյին պինդ ու ամուր։ Վերջը հուսահատված ընկավ նա ցած և սկսեց կնճիթով հողը փորել և ածել իր վրա։ Յերբ ամբողջ մարմինը ծածկված էր հողով, նա սկսեց կնճիթի ծայրով բերնից թուք հանել և ածել այդ հողի վրա։ Շուտով նրա մարմինը ծածկվեց մածուցիկ ցեխի մի հաստ շերտով։ Դրանից հետո նա հանդստացավ և սկսեց նայել մեզ։

Մինչ այս, մինչ այն, բռնում են նաև մորս և ուրիշ շատ-շատերին և նույն ձևով կապում ծառերին։

Վերջը վարժված փղերը մոտենում են ինձ, կանգնում իմ աջ և ձախ կողմերում։ Մարդիկ սկսում են հագցնել իմ պարանոցին մի վզնոց։ Յես այդ ժամանակ աշխատում էյի կնճիթով հարվածներ հասցնել այդ չարամիտ մարդկանց, բայց վարժված փղերն ամեն կերպ խանգարում էյին ինձ և այդ դեռ բավական չէ, մեկ-մեկ էլ ծանր հարվածներ էյին հասցնում վզիս, մեջքիս։ Յերբ վզնոցս կապեցին և միացրին մյուս փղերի վզնոցներին, քշեցին մեզ դեպի գետը։

Սառը ջուրը հովացրեց թարմացրեց և ինձ և յես չգիտեմ ինչու այլևս այնպես թշնամություն չէյի զգում դեպի այդ փղերը։

Լողացնելուց հետո տարան մեզ մի մեծ բակ։ Այդտեղ ինձ բաժանեցին մյուսներից և սկսեցին ծեծել սարսափելի կերպով։ Ծեծում էյին ծանր յերկաթյա ձողերով։ Յես կատաղում էյի, բայց ինչքան կատաղում էյի, այնքան ավելի խիստ էյին ծեծում։ Այդպես ծեծում էյին օրական մի քանի անգամ։ Հաճախ նրանք շիկացած յերկաթով դաղում, այրում էյին իմ վոտքերը, կնճիթը,

Շատով պատում է մարմինս վերքերով, յես չեյի կարողանում այլևս կնճիթով վորևե գործ կատարել։ Այդ դեռ բավական չե, ինձ վոչինչ չեյին տալիս ուտելու, մինչև անգամ խմելու ջուր չեյին տալիս։ Յես սոված, ծարավ, ջարդված և վերքերով պատած ընկած եյի բակի մի անկյունում։ Այդ նույն բակում պահում եյին և մյուս փղերին։ Նրանց, ընդհակառակը, պահում, խնամում եյին, կերակրում եյին հյութալի խոտերով, ջրում լողացնում եյին և վարվում հետները շատ քաղցր ու սիրալիր։

Հենց վոր աչքս ընկնում եր այդ դավաճանների վրա, կատաղությունից փրփրում եյի, հուզվում, ահ, ինչպես եյի ատում յես դրանց այդ բոպեներին։

— Միանգամայն հասկանալի յե,— ասաց կապիկը։

— Այո, հասկանալի յե, բայց դժբախտաբար շատ վաղանցուկ եր այդ ամենը։ Ցերբ յես բոլորովին հալից ընկած եյի, մարդկանց վերաբերմունքը փոխվեց դեպի ինձ։ Ինձ սկսեցին նույնպես ջրել, լողացնել, կերակրել հյութալի խոտերով և փայփայել ու գուրգուրալ։ Յես սկսեցի սիրել ինձ տանջող պահապաններին։ Սկսեցի սիրել նաև մեր դավաճաններին։

— Յես յերբեք չեյի սիրի,— ասաց կապիկը։

— Յերեք ամսից հետո,— շարունակեց փիղը,— յես արդեն մարդկանց համար զանազան աշխատանքներ եյի կատարում. գերաններ եյի կրում, մեծ-մեծ քարեր եյի գլորում, բեռներ եյի տեղափոխում և այլն։ Աշխատանքից վերադառնալուց հետո ամեն որ գնում, մտնում եյի այգին։ Այնտեղ եյին տիրոջս փոքրիկ յերեխաները։ Նրանց յես շատ եյի սիրում։ Հենց վոր նրանք ինձ տեսնում եյին, մոտենում, փաղաքշում եյին ինձ։ Յես վերցնում եյի նրանց, դնում եյի գլխիս ու մեջքիս և տանում ման ածում փողոցները։ Ամենքը քաղաքում ինձ ճանաչում եյին. հենց վոր ինձ տեսնում եյին, ասում եյին — «Սինդերան գալիս է, Սինդերան գալիս է»։ Այդպես եյին կանչում ինձ յերեխաները և բոլոր քաղաքացիները։

Յես աշխատում եյի նաև տանը. հաճախ տան պետքերի համար ջուր ու փայտ եյի բերում, յերբեմն էլ պահում եյի փոքրիկ յերեխաներին։

Ցերբ ինձ պետք է բերեյին այս հեռավոր ու ցուրտ յերկիրը, պետք է տեսնեյիր, թե այդ յերեխաները ինչպես եյին լալիս. նրանք կպել եյին իմ կնճիթին ու վոտքերին և վոչ մի կերպ չեյին ուզում բաժանվել ինձնից»։

Այս ասելով Սինդերան ծանր հառաչեց, փղձկաց, լռեց և այլևս չկարողացավ շարունակել։

Կապիկը մնաց շվարած։

56. Կովկաս

Ա. Պուշկին

Ահա Կովկասն իմ վոտքի տակ։ Յես մեն-մենակ վերևում
սպիտակափառ լեռան լանջին լուռ կանգնած եմ ու նայում.
ինձ պես բարձր արծիվն հեռվում, դեպի յեթեր վերացած՝
լողում հանգիստ սավառնում է՝ թևերն հզոր տարածած.
և տեսնում եմ յես այստեղից հեղեղաներ փրփրալից
ինչպե՛ս ծնվում, ինչպե՛ս ձյունի հյուսեր փլչում սարերից։

Այստեղ ահա շար-շար ամպեր մեղմ սահում են իմ գլխաց,
գոռ ջրվեժներ նոցա ճեղքում ու սլանում դեպի ցած
և աղմուկով գլգլչում այնտեղ լերկ ժայռերի կույտերին,
իսկ քիչ ներքև—չոր մացառ է, մամուռ կպած քարերին.
քիչ էլ այն կողմ յես տեսնում եմ կանաչ, թավուտ անտառներ,
ուր վխտում են յեղջերուներ և ծլվլում թռչուններ։

Այնտեղ արդեն և մարդիկը բուն են դրած սարերում,
և խաշները մեղմ մայում են դալարախիտ վայրերում,
և խաշնարածն իջնում է ցած—դեպի ուրախ հովիտներ,
դեպի խաղուն Արագվայի կանաչազեղ, զով ափեր.
և չքավոր ավազակն է դարան մտնում կիրճի մեջ,
ուր Թերեքի կատաղալից, գվարճ խաղին չկա վերջ։

Խաղում է նա ու մռնչում, վորպես վայրագ մի կորյուն,
վոր վանդակից վորս է տեսել, աչքը կոխել սև արյուն.
և խփվում է նա ափերին, և ապարդյուն կռիվ տալիս,
և իր քաղցած ալիքներով ժայռեր լիզում ու լալիս...
Սակայն ի զո՛ւր։ Նորա համար չըկա ուրախ վոչ մի որ.
Նորան ճընշում ու խեղդում են լուռ քարափներն ահավոր։

57. Անձնազոհ նավաստին

Կ. Ստանյուկովիչ

1

Փոթորիկը մի փոքր հանդարտացել էր։ Հերթապահ նավաստիները հավաքվել էին քամուց պաշտպանված մի անկյուն և հանգիստ զրույց էին անում։ Դրանց մեջն էր նաև «Պստիկ նավաստին»։ Նրա իսկական անունը Կուշկին էր, բայց բոլորը Պստիկ նավաստի էին ասում, վորովհետև յերբ մի անգամ ավագ նավաստին հարցրել էր, թե ո՞վ ես, նա փոխանակ ասելու նավաստի Կուշկին, միամտորեն պատասխանել էր. «Պստիկ նավաստի»։ Յեվ ճիշտ վոր անունը իրեն սազում էր։

Նա մի կարճահասակ, լղար, թխադեմ յերիտասարդ էր, քսանյերեք տարեկան, կենսուրախ և բարի դեմքով։ Նա ման էր գալիս արագ-արագ և սիրում էր կոկ ու վայելուչ հագնվել։ Նրա բոլոր շարժումները դուրեկան էին և ամենքը, նրան նայելիս, ժպտում էին։

Հանկարծ դիտարանից լսվեց հերթապահի ձայնը.

— Առաջ նայեցեք։

— Ի՞նչ է զուր տեղը կոկորդը պատռում,—նկատեց նավաստիներից մեկը։

— Գուցե զուր չէ,—ասաց Պստիկը։

- Յեթե վախենում է մի ուրիշ նավի հանդիպելուց, միևնույն է, վոչինչ չի յերևում. բայց սոսկալի գիշեր է։

— Հերթապահն էլ հենց դրանից է վախենում... առաջ գնալու հնար չկա,—ասաց Պստիկ նավաստին։

— Ինչու...

— Վորովհետև չգիտենք, թե փոթորիկը ուր է բերել մեզ։ Եհ, յեղբայրներ, ծովի վրա միշտ պետք է պատրաստ լինել,—ասաց Պստիկը, շուռ յեկավ և սկսեց նայել ովկյանոսին։

Նա շարունակ նայում էր. հանկարծ անբնական ու բարձր ձայնով ճչաց.

— Խութեր, խութե՜ր։

— Կանգնեցնել նավը,—անհանգիստ ձայնով հրամայեց հերթապահ պաշտոնյան։

Նավը վայրկենապես կանգնեց, խրվեց ժայռերի մեջ և, թակարդն ընկած թռչունի պես, սկսեց թրթռալ։

2

Նավապետը քնած էր. նա իսկույն արթնացավ և մի րոպեյից հետո դիտարանի վրա յեր։ Բոլորն էլ արագ հագնվելով՝ վերև վազեցին։

Նավն ուժգնությամբ դիպչում էր քարերին։ Մեքենան գործում էր, վորքան ուժ ուներ, բայց չէր կարողանում նավը տեղից շարժել. նա սաստիկ խրվել էր։

Սոսկալի դրություն էր. փչում էր ուժեղ քամին, շուրջն էլ անտանելի մութն էր։

Տասը րոպեյից հետո իմաց տվին, վոր ջուրը ճեղքով նավն է լցվում. բոլոր հնարները գործ դրին, բայց ջուրը հետզհետե ավելանում էր։ Դրությունը ծանր էր. ազատվելու վոչ մի հնար չկար, վոչ վոքից օգնություն սպասել չէր կարելի։ Ամեն ինչ ներքևից բարձրացրին տախտակամած։ Նավն ազատելու մասին էլ վոչ վոք չէր մտածում։

Բայց գիշերով և այն էլ սոսկալի ալեկոծության միջոցին մակույկներով հեռանալը՝ անմտություն էր. պետք էր սպասել լուսաբացին։

Վերջապես արևելքը սպիտակեց։

Նավից հիսուն սաժեն հեռավորության վրա յերևաց բարձր և ուղղաձիգ ափը։ Քամին չէր հանդարտվում և ալիքներն ահեղ մռնչյունով զարկվում էին ափին։

Մոտիկ ափն անհասանելի յեր թվում, մահն անխուսափելի։ Ափն էին հավաքվել մի խումբ արաբներ, բայց ինչ կարող էին այդ արաբներն անել, կամ ինչով օգնել։

3

Լուսացավ։

Մութ ամպերը պատել էին յերկինքը։ Քամին չէր հանդարտվում. ալիքներն առաջվա պես ահագին էին։ Նավը յերբեմն ճոճվում էր հարվածներից, բայց դեռ ջրի յերեսին էր մնում։

Նավապետը պաղարյունությամբ շրջում էր ամեն կողմ և վոգևորում նավաստիներին։

— Դե՜, տղերք, մի վախենաք, քամին շուտով կը դադարի, և նավակներով ափ դուրս կը գանք։

Նավապետը դառնալով հերթապահին՝ ասաց։

— Յեթե հնարավոր լիներ պարանի ծայրն ափ հասցնել և այնտեղ ամրացնել, դա միակ փրկությունը կը լիներ։ Բայց իսկապես չի կարելի. մակույկն իսկույն ջրով կը լցվի, քամին չի դադարում։

— Գուցե հնարավոր լինի լողալով։

— Լողալո՞վ։ Բայց ո՞վ սիրտ կանի։ Յեթե նույն իսկ մեկը հրաշքով հասնի լողալով, ափի քարերին կը դիպչի ու կը ջարդվի... Բայց և այնպես, պետք է փորձել... Յեթե արաբները պարանի ծայրը բռնեն, մենք փրկված ենք։ Հրամայեցեք, վոր նավաստիները հավաքվեն։

Յերբ բոլորը շարքով կանգնեցին, նավապետը մոտեցավ և բացատրելով իր միտքը, ձայն տվեց.

— Դե, տղերք, կա՞ արդյոք ձեր մեջ մեկը, վոր ուզում ե մեզ բոլորիս ազատել։ Յեթե կա, թող այս կողմ կանգնի։

Վոչ վոք չշարժվեց. բոլորը սոսկումով նայում եյին փրփրած ալիքներին։

Միայն Պատրիկ նավաստին դուրս յեկավ շարքից, համարձակ մոտեցավ նավապետին և քաշվելով ու կարմրելով ասաց.

— Յե՛ս եմ կամենում, նավապետ։

— Դո՞ւ,— զարմացած բացականչեց նավապետը։

— Այո՛, նավապետ։

— Ի՞նչ քո բանն ե, դու իսկույն կը խեղդվես։

— Անհոգ յեղեք, նավապետ, յես սովոր եմ ջրին. լողալ գիտեմ։

— Լա՞վ ես լողում։

— Բավականին լավ։

— Բայց դու հասկանո՞ւմ ես, թե ինչ ես անում։

— Հասկանում եմ, նավապետ։

— Բայց և այնպես կամենո՞ւմ ես։

— Ընկերներիս համար ինչպես չաշխատեմ։

— Յեթե պարանի ծայրը ափ հասցնես, դու մեր փրկիչը կը դառնաս... Բոլորի կողմից շնորհակալություն եմ հայտնում քեզ,— ասաց նավապետը հուզված։

Պատրիկ նավաստին արագությամբ մերկացավ, կապեց կտավե գոտին և պարանի ծայրը փաթաթեց մեջքին։

Յերբ պատրաստ եր, խոնարհությամբ գլուխ տվեց ամենքին և դողդողացող ձայնով ասաց.

— Մնաք բարև, յեղբայրներ։

— Գնաս բարև, Պատրիկ։

Բոլորը նայում եյին նրան իբրև մի զոհի։ Նա նետվեց ալիքների մեջ։

4

Բոլորի աչքերն ուղղված եյին դեպի անվախ լողորդը։ Նրա գլուխը սև կետի նման յերբեմն յերևում եր ալիքների միջից, յերբեմն անհետանում։

— Կեցցես, լավ ե լողում,— ասում եր ինքն իրեն նավապետը, աչքը չհեռացնելով լողորդից։

Ճիշտ վոր Պատրիկը լավ եր լողում... Արդեն մոտ ե, մի քանի շարժում ևս, և ահա ափ կը հասնի։ Արաբները ինչ վոր բան են աղաղակում նրան, դեպի աջ ցույց տալով, բայց նա վոչինչ չի հաս-

կանում։ Հանկարծ մի ալիք ուժով վերցրեց նրան և խփեց ծովեզրյա մի սուր քարի... Սոսկալի ցա՜վ ու թուլությունը իսկույն հաղթեցին նրան և մթագնած աչքերով պարանի ծայրը միայն կարողացավ ցույց տալ մոտ վազող արաբներին։

Արաբները դուրս քաշեցին Պատրիկի դիակը և սկսեցին պարանը ձգել։

Կես ժամից հետո պարանի ծայրը ամուր կապած եր մի ժայռի։ Նավի վրա յեղող մարդիկ սկսեցին նրա ոգնությամբ ափ դուրս գալ։

Յերբ բոլորը ափ յելան, նավապետը, ցույց տալով Պատրիկի դիակը, ասաց.

—Յեղբայրներ, ահա սա յեր, վոր զոհեց իր կյանքը մեզ փրկելու համար։

Նա վերցրեց գլխարկը, խոնարհվեց և համբուրեց հանգուցյալի ճակատը։

Բոլորն ել վերցրին գլխարկները և մեկ-մեկ սկսեցին համբուրել Պատրիկին։

Այդ միջոցին նավն ընկղմվում եր։

58. Գետնախնձորը

Վոչ-վոք չգիտի յերևի թե ինչպես գետնախնձորը մտավ մեր յերկիրը և ինչպես եյին վերաբերվում մարդիկ դրան առաջին որերին։

Յես այդ ժամանակ փոքրիկ տղա եյի և ամենայն մանրամասնությամբ հիշում եմ բոլորը։

Մի ծանոթ վաճառական քաղաքում հորս տվել եր գորշ, հաստ կճեպներ և ասել եր, վոր յեթե դա հողի մեջ ցանենք՝ շատ համեղ արմատներ կտա, վոր լավ ուտելիք ե և հացի տեղ կարող ե բռնել։ Ուրիշ յերկրներում, ասել եր վաճառականը, սա գործ են ածում իբրև կերակուր և այնքան առատ բերք ե տալիս, վոր տեղացիք ամբողջ տարին ապրում են դրանով։ Նա ասել եր և այն, վոր մեր յերկրի համար դա մի իսկական բարիք ե և սովը ընդմիշտ կվերացնի մեր գյուղերից։

Այդ որերը, լավ հիշում եմ, մեր տունը դարձել եր մի տեսակ թամաշատեղ։ Մեր հարևանները և, ընդհանրապես, բոլոր գյուղացիները՝ մարդ, կին, յերեխա, խումբ-խումբ գալիս եյին մեր տուն՝ հորս բերած տարորինակ կճեպները տեսնելու։ Վերցնում եյին նրանց, զննում, հոտ քաշում, հետո նորից ցած դնում ու ծիծաղում։

— Ա՛յ կասես հա... Ախմախներ ենք՝ ինչ է,— ասում էին նրանք.— ո՞վ է տեսել եսպեսը բանը տնկեն...

Յեվ մեկը մյուսին բոթում էին, աչքով անում ու փռթկացնում։

Մի օր էլ, յերբ գյուղացիները հավաքվել էին այսպես՝ մեր քահանան՝ տեր-Օհաննեսը կճեպներին նայելուց հետո, աչքերը թարթեց ծաղրական ձևով, հաստ քիթը ցցեց, յետ դարձավ, նայեց գյուղացիներին և այնպես փռթկացրեց, վոր բոլորը քրքջացին։

— Ի՞նչ եք խրխնջում,—ասավ բարկացած.— ծիծաղելու ինչ կա այստեղ. չե՞ք ամաչում։

Բայց գյուղացիք ավելի էին ծիծաղում, իսկ տեր-Օհաննեսը հո՝ փորը բռնած, օրորվում էր ծիծաղից։

— Ծիծաղեցեք, ծիծաղեցեք,— ասավ հայրս.— թող մի բուսնեն, են ժամանակ կտեսնեք...

— Բուսնե՜ն,— կրկնեց տերտերը խղճացողի դեմք առած և ձեռները կրծքին ծալած.— Բուսնեն... խեղճ մարդ. ավելի լավ կլինի առաջվա պես էլի կաղամբ ու շողգամ ցանես, իսկ ես անճոռնի կճեպները դեն գցի՝ կորչեն... Դրանից բան չի դուրս գալ... Յես տեր-Օհաննեսը չլինեմ, յեթե ասածներս չկատարվեն։

— Ինչքան կուզեք դուրս տվեք, ո՞վ է հավատում ձեզ,— ասավ հայրս և տոպրակով կճեպները դրեց պահարան։

Այդ օրվանից գյուղում սկսեցին այնպիսի լուրեր պտտել, վոր մարդ ապշում էր մեր գյուղացոց տգիտության վրա։ Ասում էին, վոր իբր թե հայրս գժվել է, վոր պարտիզում շաղգամի կճեպ է ցանել և սպասում է գազար առնելու։ Յերբեմն էլ մարդիկ գալիս էին մեր տուն և ցավակցությամբ հորս առողջությունը հարցնում։

Այս ամենը, անշուշտ, կատաղեցնում էր հորս։ Յերբ նա յերեկոները վշտացած պատմում էր այդ բաները մորս՝ մայրս տխրում էր և ասում, վոր լավ կանի ձեռք քաշի այդ կճեպներից։

Այս բոլորը, սակայն, չազդեց հորս վրա։ Նա պարտեզը փորեց, լավ աղբեց և բերած կճեպները ցանեց։ Նրան օգնում էինք յես և յեղբայրս։

Գյուղացիք, այլև ուրիշ անցորդներ, գալիս էին և գլուխները ցանկապատից բարձրացնելով՝ դիտում արածներս։ Նրանք էլ ձեն չէին հանում. լավ գիտեյին, վոր յեթե մեկնումեկը համարձակվեր հորս բարկացնել՝ ծեծ պիտի ուտեր։

Յեթե այսպես, մի առ մի պատմեմ մեր քաշածները մինչև գետնախնձորը հավաքելու օրը, պատմեմ գյուղացոց անմիտ ծաղրը, տգետների ասածները գուցե անհավատալի թվա։ Քանի մարդ

տգետ է լինում, այնքան ավելի սիրում է ծաղրել խելոքներին։ Հենց վոր գյուղում խոսք էր բացվում գետնախնձորի վրա, բոլորը քրքիջ էին բարձրացնում և ծիծաղից թուլանում։ Յես գրեթե ամեն օր կռվի էյի բռնվում գյուղացի մանուկների հետ. հենց այդ գետնախնձորի պատճառով։

Ինձ տեսնելուն պես լակոտներն սկսում էին կանչել.

— Ե՜յ, հե՜յ, մի տեսեք, տեսեք, կճեպ ուտողը գալիս է։

Յես բարկանում էյի սաստիկ և ճիպոտով հարձակվում տղաների վրա։ Բայց, դժբախտաբար, միշտ մենակ էյի լինում նրանց դեմ։ Յերբեմն տաս հոգով վրաս էյին թափվում, մի լավ դնգում ու վերջն էլ «կճեպ ուտող» ասելով ճամփա դցում։ Այսպես միշտ մենակ կռվում էյի ծեծ, նախատինք, բայց լաց չէյի լինում, այլ կատաղում էյի։

Էլ չեք կարող յերևակայել թե ինչպե՜ս ցանկանում էյի, վոր մեր ցանածը շուտով դուրս գա։ Գոնե թշնամիներին լռեցնելու, ամաչեցնելու համար։ Ու ամեն առավոտ լուսաբացին վազում էյի պարտեզ և ցանկապատից նայում, թե ծիլերը չեն յերևում արդյոք։ Բան չտեսնելով քիթս կախ վերադառնում էյի և մտքումս հայհոյում տեր-Օհաննեսին, վոր անիծել էր մեր տունկերը։

Հայրս էլ, տեսնելով վոր վոչինչ չի ծլում, սկսում էր հավատալ տեր-Օհաննեսի խոսքերին։ Յերբեմն մտածում էր հողը փորել և առվույտ ցանել այնտեղ։ Սիրտս նեղանում էր այդ մտքերից. այլևս ծաղր ու ծանակից չպիտի ազատվեյինք ու հանգստություն չպիտի ունենայինք։ Միայն հաջողությունը կարող էր փակել տգետների բերանը։ Իսկ մայրս շարունակ անիծում էր հորս ծանոթ վաճառականին, վոր խայտառակեց մեզ բովանդակ գյուղում։

Այսպես անցան օրեր, շաբաթներ։ Յեվ ահա մի օր, վաղ առավոտյան, յերբ պարտեզի կողքով գնում էյի հանդը, մտածեցի մի ներս նայեմ.

Բարձրացա՝ ցանկապատից նայեցի ներս և, ի՜նչ տեսնեմ։ Նայում եմ ու աչքերիս չեմ հավատում։ Ի՞նչ է այն։ Աջ, ձախ, ամեն կողմ հողից բարձրացել են ինչ-վոր կանաչ տերևների փնջեր։ Ցողը կակղացրել էր հողը և մեր գետնախնձորը ծլել էր։

Թռա պարտեզ, վոր մոտից նայեմ։ Այո, ծիլեր են. մեր կողմերում նմանը չտեսնված ծիլեր։ Ե՛լ կանգնել չկարողացա, դուրս յեկա ու վո՜նց եմ վազում։ Մի քանի վայրկյանով հասա տուն և շնչասպառ ներս մտա։

— Ի՞նչ է յեղել, ա՛յ տղա, ի՞նչ կա,—հարցրեց հայրս։

— Ծլել են, ամբողջ պարտեզը ծածկված է ծիլերով։

— Ի՞նչ ես ասում, ա՛յ տղա։

— Այո, հայրիկ, ամեն կողմից գլուխները հանել են ծիլերը։ Մի գիշերվա մեջ բոլորը ծլել են։

— Սպասիր, ա՛յ տղա, էդ ինչ լավ բան եղավ,— գոչեց հայրս ցնծությամբ ու դուրս թռավ սենյակից։

Յես ու մայրս հետևեցինք նրան, և յերեքով իջանք պարտեզ։ Այստեղ արդեն նրանք համոզվեցին, վոր յես չեյի սխալվել։ Ամեն կողմից տերևներ ու տերևներ... Ուղղակի անսովոր տեսարան։

— Ե՛, դուրս յեկավ,— գոչեց հայրս ուրախացած — ցույց կըտանք հիմի տեր-Ոհանեսին ու բոլորին...

Ու յերկար անցնում եյինք թփից-թուփ և նայում բոլորին։ Չեք կարող յերևակայել, թե վորքան ուրախ եյինք։

Յերբ քիչ հետո մենակ տուն եյի դառնում, գյուղի լակոտներն էլի սկսեցին իրենց սովորական աղաղակները։

— Հե՜յ, եհե՜յ, կճեպ ուտողը գալիս է...

Այս անգամ չբարկացա նրանց վրա, ընդհակառակը՝ կանգնեցի և հպարտությամբ մեր պարտեզի կողմը ցույց տալով՝ ասի։

— Ավելի լավ է գնացեք տեսեք ինչպես են աճել ձեր ծաղրած կճեպները... Հիմի դուք էլ կուզեք ունենալ, բայց տվող չի լինի...

Նրանք լռեցին ու իրար նայեցին և, կարծես, մտածում եյին, թե գուցե սուտ չեն ասածներս։

Այդ որը գյուղում վոչինչ չգիտեյին։ Հետևյալ որն ու յերրորդ որը սկսեցին խոսել, վոր մեր պարտեզում ցանած «կճեպները» բուսել են և վոր այդ բույսը բնավ նման չի շաղգամի կամ ճակնդեղի։ Ու առավոտից մինչև յերեկո այլևս ամբոխը չեր հեռանում մեր պարտեզի մոտից։ Մոտենում եյին, կախվում ցանկապատից, լուռ նայում ծիլերին և այլևս վոչ-վոք չեր ծիծաղում։

Մի որ, յերբ Տեր-Ոհանեսն անցնում եր մեր պարտեզի կողքով, հայրս կանչեց նրան.

— Տեր-հայր, մի յեկեք ես կողմը... յեկեք մի տեսեք ինչպես ձեր ասածը չկատարվեց. մի նայեք տեսեք վոնց է դուրս յեկել է...

Ե՛, ինչ կա վոր,— մոտ յեկավ տերտերը ծիծաղելով.— տեսնում եմ, տեսնում... Կարծում եյի սատանայական բան է, բայց դուրս է գալիս, վոր այդպես չէ։ Ավելի լավ, ավելի լավ, մի անգամ համը կտեսնենք, յեթե համով է, իհարկե...

Հուլիս ամսին մեր պարտեզը նմանում եր մի խոշոր կանաչ փնջի՝ լիքն սպիտակ ծաղիկներով։ Բույսը մեծանում եր ու մեծանում և քիչ եր մնում ցանկապատին հասնի։

Սեպտեմբերի սկզբներին բույսի ծաղիկները թափվեցին և ինքն էլ սկսեց որեցոր թառամել-թոշնել։

— Կարծես հանելու ժամանակն է,— ասում եյինք մենք։

— Վո՛չ,— առարկում եր հայրս,— հոկտեմբերից առաջ չպիտի հանել։

Ու վորոշեցինք հոկտեմբերի մեկը գալուն պես նախ մի թուփ հանել և տեսնել, թե հասել են գետնախնձորները։

Վերջապես ահա և հոկտեմբերը։ Մշուշոտ յեղանակ։

Առավոտյան հայրս բահը վերցեց և գնաց պարտեզ։ Մենք էլ յետևից։ Առաջին իսկ թփի մոտ կանգնեց հայրս և սկսեց փորել։ Յերբ նա հողը շուռ ավեց՝ մեր աչքին յերևացին արմատից կախված վարդագույն գետնախնձորներ։ Քանդեց յերկրորդ, յերրորդ թուփը՝ նույնն եր։ Դուրս եյին գալիս մեծ, փոքր—վարդագույն ու սպիտակ գետնախնձորներ։ Հինգ-վեց թփից հավաքածը մի զամբյուղ լցրեց։ Մենք զարմացած իրար եյինք նայում։ Մարդ իր աչքին չեր հավատում։

Պակաս զարմացած չեյին և մեր գյուղացիները։

Նրանք իրենց արածից ամոթահար՝ գալիս եյին նայում գետնախնձորը, գննում և գլուխները շարժում։

Հետևյալ տարվանից գետնախնձորը տարածվեց մեր գյուղում և այժմ նա բազմաթիվ ընտանիքներ է պահում։

---

59. Յոհան Գուտենբերգ

I

Ստրասբուրգ քաղաքի մոտակայքում, մի հին կիսավեր սենյակում, լարված աշխատում եր Յոհան Գուտենբերգը։ Մեծ ու մանր դանակներով, սրածայր փորիչներով և բզերով նա ջղաձգորեն կտրատում, փորագրում, ծակծկում եր փայտի կտորներ, յերբեմն միայն գլուխը թափ տալով՝ ճակատին իջած խիտ մազերը յետ քցելու համար։ Նրա շարժումները արագ եյին և վոգևորված։ Քունն ու քաղցը մոռացած՝ ճարպիկ ու ամուր մատներով շտապ-շտապ բանում եր. փայտի մանրուքն ու տաշեղը թափթփվում եյին նրա յերկար մորուքի վրա, վոր անկարգ ցրիվ եր յեկել լայն կրծքին։ Դուռը ամուր փակված եր, լուսամուտի վարագույրները իջեցրած։

Զարմանալի բաներ եյին պատմում Գուտենբերգի մասին։ Ասում եյին թե նա կախարդ է, գործ ունի գերբնական ուժերի հետ։ Գուտենբերգը փախած եր իր հայրենի Մայնց քաղաքից, քաղաքային խռովությունների ժամանակ և զրկված հայրենի ժառանգությունից զրկանքներով լի կյանք եր վարում Ստրասբուր-

գում։ Նա սովորել էր վոսկերչություն, ինքը հնարել էր թանկա-
գին քարեր վողորկելու մի նոր միջոց, գեղեցիկ հայելիներ էր
շինում, մետաղե շրջանակներ էր ձուլում, նախշերով զարդա-
րում։ Ամբողջ հոգով սիրել էր ձեռարվեստը։

Հրաժարվելով ազնվական դասակարգի նախապաշարմունքնե-
րից, վորին նա պատկանում էր, նա անգամ գրվեց վոսկերիչների
համքարության և հասարակ արհեստավորների հետ ընկերակցու-
թյուն կազմեց՝ ակնեղեն ու հայելիներ շինելու համար։

2

Այն օրից, երբ Գուտենբերգը մոտեցել էր արհեստավորնե-
րին, մի ծածուկ տրամություն համակել էր նրա հոգուն։ Շուրջը
տեսնում էր անթափանց տգիտություն և կոպտություն, և չէր կա-
րողանում հաշտվել այդ ամենի հետ։ Նույն իսկ այն հազվագյուտ
մարդիկ, վորոնք մի կերպ կարդալ էյին սովորել և կուզենային
դուրս գալ իրենց մտավոր խավարից, վոչինչ չէյին կարողանում
անել, վորովհետև ուսում ձեռք բերելը շատ դժվար էր, ձեռա-
գիր գրքերը թանգ էյին և սակավաթիվ։

Եվ Գուտենբերգը գիշեր ցերեկ մի բանի մասին էր մտա-
ծում, թե ինչպես անի, վոր գրքերը ամենքի համար մատչելի
դառնան

Դրա համար էր, վոր նա փակվում էր մենակ սենեակում
ու աշխատում։ Եվ այժմ նրան թվում էր, թե հնարը գտել է։

Փայտից կտրատել էր հավասար քառակուսի ձողիկներ, քսան

և չորս հատ, լատինական այբուբենի տառերի թվով. ամեն մեկի
գլխին փորագրել էր մի-մի տառ բարձրաքանդակ և թարս, իսկ
ձողիկների տակը ծակել էր, իրար կողքի շարել այբուբենական
կարգով, ծակերով թել անցկացրել, ամբողջ շարքը իրար հետ ա-
մուր կապել, և այժմ թաթախում էր մի սև հեղուկի մեջ ձողիկ-
ների գլուխները, ապա դնում մի կտոր մագաղաթի վրա ու ամ-
բողջ մարմնով ընկնում վրան։

Մագաղաթի վրա դրոշմվում էր լատինական այբուբենը։
Հուզված Գուտենբերգը նորից է կնքում իր շարվածքը, կրկին
նույն այբուբենը, յերրորդ, չորրորդ անգամ։ Հիացած նա քանդում
է շարվածքը ու նորից շարում ձողիկները, այս անգամ իբրև մի
բառ, ու կրկին դրոշմում մագաղաթի վրա ու տպում մի ամ-
բողջ բառ...

Բազմաթիվ տարիների յերազանքը իրականացած էր. գտել
էր վերջապես գրքերը բազմացնելու և էժանացնելու միջոցը։
Ի՜նչքան պարզ բան, ի՜նչքան հասարակ։ Եվ ինչպես էր, վոր
մինչև հիմա չէր մտածել։

Բայց փայտը փափուկ է, շուտով է ծռվում, մաշվում կամ
կոտրվում և միշտ ձեռքով դրոշմելն էլ դժվար է։

Գուտենբերգը նորից անխոնջ աշխատում է իր սենյակում
մարդկանց աչքից հեռու։ Նույն իսկ ընկերակիցները կարծում
էյին թե, նա հայելիների նկարներն ու քանդակներն է գծա-
գրում, վոր այդչափ յերկար նստած է գիշերները և ազատ րո-
պեներին անգամ դուրս չի գալիս իր առանձնությունից։ Մինչև
այժմ իր բոլոր ուժերն ու շահած փողերը նա գործ էր դնում իր
գյուտը կատարելագործելու համար։

Նա մտածեց տառերը մետաղից ձուլել. կաղապարներ պատ-
րաստեց տառերը մեջը շարելու համար, վոր բառեր կազմվեն,
բառերից տողեր, տողերից յերեսներ։ Շինեց տախտակներ ու
շրջանակներ, վոր շարվածքը ամուր սեղմվի ու կապվի, վոր ոչ
մի տառ միջից չը թափվի։ Հնար գտավ շարվածքի մեջ սպրդած
սխալները իսկույն ուղղելու։ Հնարեց զանազան գույնի շուտ չո-
րացող թանաքներ։ Հնարեց բարձեր, վոր թանաքը տառերի յերե-
սին հավասար քսվի։

Ապա սկսեց մտածել մի այնպիսի մեքենայի մասին, վոր
շարվածքի վրա թուղթը դնելիս հավասարապես ճնշի ու թուղթը
չը պատռի։

3

1440 թվի մի գեղեցիկ որ Գուտենբերգը արագ քայլերով
գնում էր Ստրասբուրգի նեղ փողոցներով դեպի իր ծանոթ ճա-

խարակագործ վարպետի արհեստանոցը, Թիկնոցի քղանցքի տակ մի մեքենայի փոքրիկ օրինակ պահած։ Ուզում եր նույն մեքենան ավելի մեծ չափով պատվիրել։

Վարպետը օրինակը ձեռքին շուռ ու մուռ տվավ և մի տեսակ արհամարհանքով ու ծաղրական յեղանակով ասավ.

— Ձեր ուզածը մի նոր ձևի ճզմիչ ե, մի նոր ձևի մամուլ։

— Այո — պատասխանեց Գուտենբերգը, վոգևորությամբ — իսկապես վոր դա մի ճզմիչ ե, մի մամուլ. բայց մի մամուլ, վորից շուտով հոսելու և անսպառ հոսանքով ամենահրաշալի ըմպելիքը, վոր հագեցնի մարդկանց ուսման ծարավը։ Այդ մամուլի միջից հոսելու և տգիտության խավարը փարատող լույսը և չը տեսնված ճաճանչներով փայլելու մարդկանց հոգիներում։

Մի փոքր ժամանակից հետո վարպետը հանձնեց Գուտենբերգին պատրաստ մեքենան։

Նրա բերած մեքենան առաջին տպագրական մամուլն եր։

---

60. Տառերի գյուտը

Լեո

Մեզանից շուրջ 6000 տարի առաջ Ելամ անունով յերկրում, վոր գտնվում եր Պարսից ծոցի մոտ, մարդիկ հասան գրելու իսկական գյուտին, այն ե՝ մարդու խոսքերը նշաններով մի վորևե առարկայի վրա դրոշմելու միջոցին։ Այս նշանները ներկայացնում եյին զանազան առարկաներ, օրինակ՝ թռչուն, ոձ, ջուր և այլն։ Այդպես ել կարդացվում եյին նրանք և նրանցից կազմվում եյին խմբեր, վորոնք դառնում եյին բառեր ու նախադասություններ։ Գրության այս յեղանակը կոչվում ե գաղափարանիշներ։ Նրա մի տեսակը, վոր կոչվում ե սեպագրություն, վորովհետև ունի սեպերի նմանություն բերող նշաններ, գործածական դարձավ Բաբելոնում, Ասորեստանում, Պարսկաստանում և հին Հայաստանում։ Յեգիպտոսը վերցրեց Ելամի ձևը, վոր և այնտեղ սկսեց կոչվել, հունարեն լեզվով, հիերոգլիֆ։ Հայերենի մեջ այս անվան համապատասխանում ե մեհենագրոշմ անունը։ Չինաստանում ել ամենահին ժամանակներից գործածության մեջ մտավ գրության հիերոգլիֆ ձևը, վոր շարունակվում ե և այսօր, յենթարկվելով փոփոխությունների։

Սակայն չե կարելի ասել թե մարդկությունը այս գյուտերով միանգամայն լուծում եր գրության հարցը։ Բոլոր այս ձևերը շատ անհարմար և դժվար եյին նախ և առաջ այն պատճառով, վոր գործ եյին ածում մեծ քանակությամբ նշաններ։ Օրինակ,

Յեգիպտոսի հիերոգլիֆները պարունակում եյին 700 նշաններ, իսկ չինականներն այսօր ունեն մոտ 50 հազար նշաններ։ Սեպագրությունը գործ եր ածում 300 նշաններ։ Սովորել այսքան նշանները շատ դժվար եր։

Յեվ ահա փյունիկեցիները, հին ժամանակների այս զարմանալի ընդունակ և ճարպիկ վաճառականները, հնարում են գրության այն ձևը, վոր կոչվում ե այբուբեն (հունարեն ալֆաբետ)։ Այստեղ նշաններ են, վորոնք արտահայտում են լեզվի մեջ յեղած ձայները, հնչյունները, վորոնցից և կազմվում են բառեր։ Այս ձայնական ձևը հնարվեց մեզանից մոտ 3900 տարի առաջ և մինչև այսօր ել մնում ե լավագույն ձևը։

Փյունիկեցիներից այբուբենը վերցրին հույները, հույներից իտալացիները և ուրիշ շատ ազգեր։ Յուրաքանչյուր ազգ հարմարեցնում եր այբուբենն իր լեզվին և ավելացնում եր նոր նշաններ, վորոնք այդ լեզվի առանձնահատուկ հնչյուններն են արտահայտում։

Այբուբեններն ահագին ծառայություն մատուցին մարդկության։ Ուսուցումը հեշտանում եր, տարածվում մեծ ծավալով, ճոխացնելով մարդկային քաղաքակրթությունը։

Հայերեն տառերի գյուտը տեղի ունեցավ մեզանից 1500 տարի առաջ, 412 թվականին։ Մինչև այդ Հայաստանում գոյություն ուներ մի այբուբեն, վոր հերյուրել եյին այդտեղ քրիստոնեություն քարոզող սիրիացի հոգևորականները, սակայն այդ այբուբենը շատ անկատար եր հայոց լեզուն ամբողջովին արտահայտելու համար։ Ուստի թողնելով մի կողմ այդ այբուբենը, Հայաստանի հայ, հույն և սիրիացի հոգևորականները իրանց բաց արած դպրոցների մեջ մտցրին հունարեն և ասորերեն այբուբենները։ Բայց սրանցով ել անկարելի յեղավ հայոց լեզվի բոլոր հնչյունները պահպանել։ Յեվ ժողովրդին հասկանալի մայրենի լեզուն մոռացված եր մնում, գրքերը թարգմանել չեր լինում, ուստի յեկեղեցիներում կարդում եյին հունարենով կամ սիրիական լեզվով, բայց վորովհետև ժողովուրդը չեր հասկանում այդ օտար լեզուները, ուստի կարդացածը մեկ ել թարգմանում եյին հայերենով։

Հայ հոգևորականության համար կյանքի և մահվան խնդիր եր հայախոս քրիստոնեյություն ստեղծելը և օտար հոգևորականներից, մանավանդ սիրիացիներից իրան ազատելը։

Յեվ ահա հայ հոգևորականներից մեկը, Մաշթոց (կամ Մեսրոպ) վարդապետ անունով, վերցնում ե գոյություն ունեցած այբուբենի հին անկատար տառերը, նորից կարգի ե բերում նրանց, ավելացնում ե նոր տառեր և այսպիսով ստեղծում ե մի այբուբեն,

վոր լիովին համապատասխանում էր հայոց լեզվին։ Ապա բաց են անում հայերենի դպրոցներ, վորոնք տարածում են ուսումն ու գրագիտությունը։ Հայ ժողովուրդը միանգամայն կերպարանափոխվում է։ Այդ ժամանակից է սկսվում հայոց գրականությունը, վոր այնուհետև յերկար դարերի ընթացքում դառնում է հայ ժողովրդի կուլտուրական զարգացման խարիսխը։

61. Անցի՛ր, սև ամպ

Հովհ. Հովհաննիսյան

Անցի՛ր, սև ամպ, դու մեր սրտից,
բացվի՛ր, յերկինք կապուտակ,
ախուր, խավար Թուխպի միջից
ցոլա՛, գարնան արեգակ։

Թող պատռվի այս ցուրտ ձմրան
օդը հանդերձ տաղտկալի,
և շողշողա մանուկ բնության
վոսկե ժպիտ ցանկալի։

Յեվ բերկրության արտասուքներ
այս լանջերից թող հոսեն.
Թարմ կանաչին ջինջ առվակներ
քաղցր ավետիք թող խոսեն.

Թե մայր յերկիրն ազատվեցավ
իր կուռ, ճնշող կապանքից,
նոր ցնծության յերգ լսվեցավ
հեզ արտուտի բերանից...

62. Մարդու ազգականները

Բոլոր կենդանիներն առաջացել են մեկը մյուսից։ Յեթե այդպես է ուրեմն, բոլոր կենդանիները պետք է կապված լինեն միմյանց հետ ազգակցական կապերով, մոտիկ կամ հեռավոր։ Յեվ այդպես էլ է, նրանք բոլորը իրար ազգականներ են։ Մարդը նույնպես կենդանի է։ Նշանակի մարդու և կենդանիների մեջ էլ կա ազգակցական կապ։

Յեվ իրոք, բոլոր կենդանիները մեր ազգականներն են, միայն մեկը մերձավոր, մյուսը՝ հեռավոր։

Օրինակ, մողեսը մեզ ավելի մոտիկ ազգական է, քան ձուկը։ Հայտնի է, վոր ինչքան ազգականներն իրար մոտ են, այնքան իրար նման են։ Այդ տեսակետից յեթե մոտենանք մեր բերած օրինակներին, կը տեսնենք, վոր մողեսը մեզ ավելի յե նման, քան ձուկը։ Հենց այն հանգամանքը, վոր ձուկն ապրում է ջրի մեջ, իսկ մողեսը մեզ նման ազատ օդի մեջ և շնչում է ազատ օդ,

բավական է ցույց տալու համար, վոր մողեսը մեզ ավելի յե մոտիկ, քան ձուկը։ Յեվ այդ շատ հասկանալի յե։ Ձկներն ավելի հին կենդանիներ են, քան մողեսները. ձկները մողեսների պապերն ու նախապապերն են։

Բայց մենք կենդանիների մեջ էլ ավելի մոտիկ ազգականներ ունենք, քան մողեսը․ Կոչխարը, կովը, ձին, շունը և այլն

անհամեմատ մեզ ավելի մոտիկ ազգականներ են։ Այդ բոլոր կենդանիները կենդանի ձագ են բերում և կերակրում նրանց կաթով։ Բացի դրանից, այդ կենդանիների արյունը միշտ տաք է լինում այնպես, ինչպես մեր արյունն է, մինչդեռ մողեսը վոչ կենդանի ձագ է բերում, վոչ կերակրում է իր ձագին կաթով և վոչ էլ ունի տաք արյուն։ Նրա արյունը, նայած յեղանակին, լինում է յերբեմն տաք, յերբեմն էլ սառը։ Ամառը, տաք յեղանակներին, օրինակ, տաք է լինում, իսկ ձմեռը՝ ցուրտ յեղանակներին՝ սառը։ Այն բոլոր կենդանիները, վորոնք վոչխարի, կովի պես կենդանի ձագ են ծնում, կերակրում կաթով և ունեն միշտ տաք արյուն, կոչվում են կաթնասուն կենդանիներ։

Կաթնասուններ շատ կան. այսպես, օրինակ, կաթնասուններ են նաև կատուն, այծը, մուկը, գայլը, աղվեսը, արջը, կապիկը և այլն։ Այս կաթնասունների մեջ մի քանի կենդանիներ մեզ ավելի մոտիկ ազգականներ են, քան մյուսները։ Պարզ է անշուշտ, վոր ավելի մոտիկները նրանք պետք է լինեն, վոր մեզ ավելի շատ են նման։ Յեթե մի առ մի համեմատենք մեր այս թված կենդանիները մեզ հետ, իսկույն կը նկատենք, վոր ամենից շատ նման է մեզ կապիկը։ Յեվ իսկապես, յեթե դիտենք նրա ձեռքերը—կը նկատենք, վոր նրանք միանգամայն նույն ձևն ու կազմությունն ունեն, ինչ վոր մեր ձեռքերը։ Նա էլ իր ձեռքերով բռնում է իրեր, կտրատում մասերի, տանում բերանը և առհասարակ կատարում այն բոլորը, ինչ վոր մենք մեր ձեռքերով։ Նրա վոտքերը նույնիսկ նման են մեր վոտքերին, միայն նրա մատները շատ ավելի յերկար են, քան մերը, բացի դրանից, բութ մատի ծայրը նա կարողանում է կպցնել բոլոր մյուս մատների ծայրերին, ճիշտ այնպես, ինչպես վոր մենք մեր ձեռքի բութ մատով ենք անում։ Դրա պատճառն այն է, վոր կապիկը մեծ մասամբ ապրում է ծառի վրա և ստիպված է յեղել մագլցելու ժամանակ իր վոտքերը նույնպես ձեռքերի տեղ գործածել։ Սակայն, կապիկները տեսակներ շատ ունեն. նրանց մեջ կան և այնպիսիները, վորոնք հաճախ ծառերից իջնում են և գետնի վրա ման գալիս։ Այդպես է, օրինակ, գորիլլան. հենց այդ է պատճառը, վոր այդ կապկի վոտքերը մերինին ավելի յեն նման, քան մյուսներինը։ Կապիկների մեծ մասն ունի յերկար պոչ. այդ պոչը նրանցից շատերը ծառերի վրա մագլցելու ժամանակ գործ են ածում իբրև հինգերորդ ձեռք։ Բայց կան կապիկներ էլ, վոր բոլորովին զուրկ են պոչից. գորիլլան, օրինակ, անպոչ է։ Կապիկը նման է մեզ նաև իր դիմագծերով։ Իզուր չէ բոլորովին, վոր վայրենի մարդիկ կապիկներին նույնպես մարդ են համարում։

Բայց կապիկներն ունեն նաև տարբերություններ։

Ամենից առաջ քայլելու ժամանակ նրանք հենվում են իրենց ձեռքերի մատների վրա և բացի դրանից, իրենց մեջքը չեն կարողանում ուղիղ պահել։ Նրանց մեջքին միշտ մի կուզ է լինում դուրս ցցված։

Կապկի ճակատը կարճ է և հետ գնացած, իսկ ունքոսկրները դուրս ցցված։ Նրա գանգը փոքր է և պարունակում է իր մեջ շատ փոքր ուղեղ։ Նույնիսկ ամենամեծ կապկի ուղեղը մեկ և կես անգամ ավելի փոքր է, քան մարդունը։ Ատամները մեծ են, սուր և դուրս ցցված։ Այդ ատամներով կապիկները պաշտպանվում են թշնամիների դեմ։ Կապկի մարմինն ամբողջովին պատած է մազերով։ Այս վերջին տարբերությունն առանձին նշանակություն չունի, վորովհետև կան մարդիկ, վորոնց մարմինը նույնպես ամբողջովին պատած է մազով։

Չնայած այս տարբերություններին, այնուամենայնիվ կապիկը մեզ ավելի յե նման, քան վորևե ուրիշ կենդանի։ Ահա հենց այդ է պատճառը, վոր բոլոր կենդանիների մեջ նա մեր ամենամոտիկ ազգականն է։

Մի գիտնական կատարել է մի այսպիսի փորձ։ Վերցրել է մի կատու, կտրել նրա արյունատար խողովակներից մեկը, վերցրել վորոշ քանակությամբ արյուն և սրսկել այն մի այլ կատվի արյունատար խողովակի մեջ։ Առաջին կատվի արյունը յերկրորդ կատվի վրա վոչ մի ազդեցություն չի ունեցել։ Դրանից հետո նա նույն ձևով կրկին արյուն է հանում կատվից, բայց այս անգամ սրսկում է արդեն այդ արյունը մի ճագարի մարմնի մեջ։ Ճագարը սրսկումից հետո անմիջապես հիվանդանում է և քիչ ժամանակից հետո մեռնում։ Հասկանալի յե, վոր կատվի արյունը ներգործում է ճագարի վրա, վորպես թույն։ Պատճառը պարզ է. կատվի արյունը նման չէ ճագարի արյան. արենակցական կապը այդ յերկու կենդանիների մեջ շատ թույլ է։

Նման փորձ այդ գիտնականը կատարել է նաև այլ կենդանիների վրա։ Նա վերցրել է շան արյունը և սրսկել է գայլի մարմնի մեջ և գայլի արյունն էլ շան մարմնի մեջ։ Վոչ գայլը և վոչ էլ շունն այդ սրսկումից չեն վնասվել։ Սակայն, յերբ շան արյունը սրսկել է վոչխարի մարմնի մեջ, վերջինս հիվանդացել և մեռել է։ Կնշանակե, շունն ու գայլը իրար արենակից կենդանիներ են, իսկ շունն ու վոչխարը՝ վոչ։ Նույն ձևով հաստատվել է նաև, վոր ձին ու էշը մոտիկ ազգականներ են։ Ահա այս ձևով գիտնականները գտել են, վոր մարդն ու կապիկը նույնպես արենակիցներ են։ Վոչ մարդու արյունն է վնասում կապիկին և վոչ էլ կապիկի արյունը՝ մարդուն։

Այս բոլորը ցույց են տալիս, վոր մարդն ու կապիկն իրար շատ մոտիկ ազգականներ են։

Լինել արենակից ազգականներ՝ նշանակում է, ունենալ նույն ծնողները, պապերը կամ նախապապերը։ Յերբ ասում ենք, վոր յերկու կենդանիներ մոտիկ ազգականներ են, նշանակում է, այդ կենդանիները ծագել են անպատճառ նախնիներից։ Յեվ իրոք, կապիկն ու մարդը ծագել են մի ընդհանուր նախապապից։ Մեր այդ նախապապը նման է յեղել մի կողմից կապիկին, մյուս կողմից էլ մարդուն։ Հենց այդ է պատճառը, վոր նրան այժմ գիտությունն անվանում է մարդ-կապիկ։ Մարդ-կապիկը շատ վաղուց անհետացել, գնացել է, բայց նրա ժառանգները՝ մարդը և կապիկը դեռ շարունակում են ապրել։

---

63. Արագածին

Ավ. Իսահակյան

Դու՛ն, Արագա՛ծ, ալմաստ վահան
կայծակեղեն թրերի,
գագաթներդ՝ բյուրեղ կայան
Թափառական ամպերի։

Աղբյուրներդ գիշեր ու զոր
խոսքի բռնված իրար հետ,
վտակներդ գիլ ու գլոր
արբեշումն փեշերեդ։

Սեգ ժայռերդ արծվի բույն,
լճակներդ՝ լույս-փերուզ.
առուներդ՝ մեջքիդ փայլուն
պերճ գոտիներ վոսկեհյուս։

Թիթեռներդ հուր-հրեղեն
Թռչող-ճախրող ծաղիկներ.
Ձյու ու զարմանք յերազներին
պոկված ծվեն ծվիկներ։

Ծիրանավառ գո՛ւն Թագուհի,
բուրումների գո՛ւն աղբյուր,
ծաղիկներդ հազար գույնի,
հազար անուն, հազար բույր։

---

64. Փոքրիկ հերոսը

1

Հունիս ամսի մի գեղեցիկ առավոտ կարմիր հեծելազորքի մի վաշտ, ուշադրությամբ դիտելով ամայի ճանապարհը, հանդարտաքայլ առաջ եր գնում թշնամու դեմ։ Վաշտի առջևից լռիկ գնում եյին հրամանատարն ու կոմիսարը, շարունակ իրենց շուրջը նայելով և ամեն վայրկյան սպասելով, վոր ծառերի մեջ թաքնված սպիտակների առաջապահ զինվորներին կը տեսնեն։ Վաշտը մոտեցավ մի գյուղական տան, վոր սոսիներով պատած եր։ Դռան մոտ նստած եր տասներկու տարեկան մի տղա և փայտ եր տաշում դանակով։

Տղան վաշտը տեսնելուն պես փայտը դեն գցեց ու գլխարկը հանեց։ Սիրուն տղա յեր՝ արևադեմ, խոշոր ու կապույտ աչքերով, յերկայն ու շեկ մազերով, առանց բաճկոնակի, պարզ շապկով, կուրծքը բաց։

— Ի՞նչ ես անում այստեղ,— հարցրեց կոմիսարը իր ձին կանգնեցնելով։— Ինչո՞ւ դու էլ ծնողներիդ հետ չես փախել։

— Յես ծնողներ չունեմ,— պատասխանեց տղան,— վորբ տղա յեմ, մնացել եմ կարմիրներին տեսնելու։

— Թշնամիներն անցա՞ն այստեղից։

— Վո՛չ. անա յերեք որ է, վոր չեն յերևում։

Կոմիսարը փոքր ինչ մտածեց, հետո ձիուց վայր թռավ, ներս մտավ ու տանիքի վրա բարձրացավ։ Տնակը ցած եր. տանիքի վրայից հեռուն նայել չեր կարելի։

— Լավ կը լիներ ծառի վրա բարձրանալ,— ասաց կոմիսարը վայր իջնելով։

Ամբարի առջև կար մի մեծ սոսի, վորի գագաթը ճոճվում եր կապուտակ օդի մեջ։ Կոմիսարը մեկ ծառին նայեց, մեկ զինվորին և հետո հանկարծ տղային դարձավ.

— Ա՛յ տղա, աչքերդ սո՞ւր են։

— Ի՞մ աչքերը,— պատասխանեց տղան,— մղոնից հեռու թռչող ճնճղուկին էլ կը տեսնեմ։

— Կարո՞ղ ես այս ծառի ամենաբարձր գագաթը յելնել։

— Ա՞յս ծառի. կես րոպեյում կը բարձրանամ։

— Կարո՞ղ ես տեսածներդ ինձ պատմել։ Արդյոք թշնամիներ չե՞ն յերևում, փոշու ամպեր, փայլատակող հրացաններ, ծուխ ու ձիեր։

— Կարող եմ։

— Ի՞նչ տամ քեզ դրա համար։

— Ի՞նձ, այդ բանի համա՞ր,— կրկնեց տղան։— Ի՛նչ եք ա-

սում։ Յեթե սպիտակների համար լիներ, ինչ էլ տային, չեյի բարձրանալ, իսկ մերոնց համար... յես պատրաստ եմ։

— Լա՛վ, ասացիր, դե ուրեմն բարձրացիր։

— Մի րոպե ժամանակ տվեք, վոր կոշիկներս հանեմ։

Կոշիկները հանեց, վարտիքի կապը քաշեց, գլխարկը գետնին տվավ ու գրկեց ծառի բունը։

— Սպասի՛ր,— գոչեց կոմիսարը, ահ զգալով։

Տղան իր գեղեցիկ կապույտ աչքերով հարցական նշան արավ։

— Բան չկա, բարձրացիր... ասաց կոմիսարը։

Տղան կատվի պես վեր մագլցեց։

— Իսկ դուք ձեր շուրջը նայեցեք,— գոչեց կոմիսարը կարմիր զինվորներին։

2

Մի քանի րոպեյից հետո տղան արդեն գագաթի վրա յեր. ճյուղերը նրա վոտքերը ծածկում եյին, շապիկը մինչև գոտին սպիտակ-սպիտակ փայլում եր, շեկ գլուխն արևի տակ պսպղում։ Հազիվ կարելի յեր նշմարել նրան—այնքան բարձր եր։

— Հեռո՛ւ նայիր,— գոչեց նրան կոմիսարը։

Ավելի լավ տեսնելու համար՝ տղան աջ ձեռն արձակեց ու ճակատին դրավ։

— Ի՞նչ ես տեսնում,— հարցրեց կոմիսարը։

Տղան գլուխը ցածրացրեց ու կանչեց ձեռի միջով։—Յերկու ձիավոր ճանապարհի վրա։

— Այստեղից վո՞րչափ հեռու։

— Մի կես մղոն։

— Շարժվո՞ւմ են։

— Վոչ, անշարժ կանգնած են։

— Ե՛լ ինչ կա. ապա նայիր դեպի աջ։

Տղան նայեց դեպի աջ։

—Գերեզմանատան մոտ, ծառերի մեջ, մի բան ե փայլում... կարծեմ սվիններ են։

— Մարդիկ տեսնո՞ւմ ես։

— Վոչ։

Նույն վայրկյանին մի գնդակ սուր շչելով՝ բարձրացավ ու գնաց ընկավ տան յետևը։

— Իջի՛ր, իջի՛ր,— աղաղակեց կոմիսարը,— նրանք քեզ նշմարել են... էլ վոչինչ հարկավոր չե. վա՛յր իջիր...

— Յես չեմ վախենում,— պատասխանեց տղան։

— Իջի՛ր,—կրկնեց կոմիսարը։—Էլ ինչ ե յերևում ձախ կողմից։

— Ձա՞խ կողմից։

— Այո, ձախից։

Տղան գլուխը դեպի ձախ թեքեց... Մի ուրիշ սուր շաչյուն ականջի մոտիկից ծակեց ոդը։ Տղան սոսկաց։—Ա՜յ քեզ բան, բռնված եմ,—գոչեց նա։—Գնդակը մոտովս թռավ։

— Իջի՛ր.—կրկնեց կոմիսարը հրամայաբար։

— Իսկույն, իսկույն, —պատասխանեց տղան։—Սակայն ծառն ինձ պաշտպանում ե։ Ուզում եք իմանալ, թե ձախ կողմում ինչ բան կա։

— Այո, ձախ կողմը,—բայց իջի՛ր, իջի՛ր...

—Ձա՛խ կողմը,—կանչեց տղան, մինչև գոտին դուրս կախվելով տերևների միջից,—այնտե՛ղ, ուր կանգնած ե մատուռը. տեսնում եմ, կարծեմ այնտեղ...

Մի յերրորդ սաստիկ շաչյուն... տղան սկսեց ցած իջնել ու հանկարծ գլխիվայր ընկավ։

— Անիծվի՜ն,— աղաղակեց կոմիսարը, վրա հասնելով։

Տղան ընկավ մեջքի վրա և փռվեց բազկատարած. կրծքի ձախ կողմից արյան վտակ եր հոսում։ Հրամանատարն ու յերկու զինվոր ցած թռան ձիերից. կոմիսարը կռացավ, շապիկը պատռեց—թշնամու գնդակը մտել եր ձախ կողքը։

— Մեռա՞ծ ե,—գոչեց կոմիսարը։

— Կենդանի՛ յե,—պատասխանեց հրամանատարը։

— Ափսո՛ս, կտրիճ տղա,—աղաղակեց կոմիսարը։ Բայց մինչև նա այս ասաց ու թաշկինակով վերքը կապելու վրա յեր,—տղան մեռավ։—Խե՜ղճ տղա—կրկնեց կոմիսարը տխրագին,—պատվակա՜ն, հերոս տղա, փոքրիկ հեղափոխական։

Կոմիսարը մոտեցավ տնակին, հանեց պատուհանից կարմիր դրոշակն ու փռեց մեռելի վրա, իբրև ծածկույթ, բաց թողնելով յերեսը։ Հրամանատարը հավաքեց և տղայի մոտ դրավ նրա կոշիկները, գլխարկը, դանակն ու փայտը։ Կարմիր զինվորները մի վայրկյան լուռ կեցան. կոմիսարը դիմեց հրամանատարին։

– Մարմնի յետևից մարդ կուղարկենք, մեռավ իբրև կարմիր զինվոր, զինվորներն էլ կը թաղեն։ Նա համբուրեց փոքրիկի ճակատը և հրաման տվավ.—Հեծե՛ք։

Վաշտը առաջ խաղաց։

3

Արեգակը մայր մտնելու վրա յեր։ Նույն ճանապարհով անց եր կենում Լենինի անվան գունդը։

Պատանու մահվան լուրն արդեն հայտնի յեր կարմիր զինվորներին։ Նրանց ճանապարհը ձգվում եր տնակի մոտով սահող մի առվակի յերկայնությամբ։

Առջևից գնացողները տեսան սոսիի արմատի մոտ փոքրիկ

դիակը՝ ծածկված դրոշակով, և զինվորական պատիվ տվին։ Կոմիսարներից մեկը ծաղիկներ քաղեց առվի ափից ու սփռեց մեռելի վրա։ Հետո բոլոր կարմիր զինվորներն էլ անց կենալիս ծաղիկ քաղելով՝ նույնն արին. դիակը միանգամայն ծաղիկներով ծածկվեց։ Ամենքն էլ նրան վողջունում էին, միաս բարև տալով.
—Ապրիս, փոքրիկ տղա։ Կեցցես, քաջ պատանի։—Մնաս բարև, խարտյաշ մանուկ։—Ապրես։—Փառք և պարծանք պատանի կոմունարին։

Մի հրամանատար իր քաջության կարմիր դրոշակի շքանշանը դրեց մեռելի վրա, մյուսը համբուրեց նրան. իսկ ծաղիկներն անվերջ թափվում էին նրա մերկ վոտքերի, արյունաթաթախ կրծքի և շիկահեր գլխի վրա։

Իսկ հերոս պատանին ննջում էր բարձր խոտերի մեջ, կարմիր դրոշակի տակ, սպիտակ ու ժպտերես, կարծես թե վողջույնները լսելով և յերջանիկ, վոր տվել էր իր կյանքը բանվորագյուղացիական մեծ հեղափոխության համար։

65. Խորթ զավակները

Ն. Մարգոյան

Քաղաքի ծայրում, մի մեծ յերեքհարկանի տան պատուհանների անկյուններում շինված էին բազմաթիվ ծիծեռնակի բներ։

Ամառը, հուլիս ամսին, յերկարատև շոգերից հետո, յերբ ըսկըսեցին փչել ուժեղ քամիներ, ծիծեռնակի բներն այդ շոգերից և քամիներից չորացան և պոկվելով՝ թափվեցին ցած ու փշրվեցին։ Բների հետ միասին վայր ընկան նաև նրանց մեջ յեղած ձուտերը՝ փոքր ու անօգնական վիճակի մեջ։ Մի քանիսը նրանցից մեռան տեղնուտեղը։ Վողջ մնացածները հազիվ էին շարժվում։ Պետք էր տեսնել այդ ժամանակ նրանց ծնողներին։ Նրանք անհանգիստ ծլծլոցով պտտում էին շարունակ օդի մեջ և հաճախ այնքան էին մոտենում գետնին, վոր իրենց յերկար ու բարակ թևերով շոշափում էին իրենց մեռած ու վողջ մնացած ձագերին։ Շուտով հավաքվեցին դեպքի վայրը անհագին քանակությամբ ծիծեռնակներ։ Բոլորն էլ ծլծլում են, բոլորն էլ ուզում են վորևէ բանով օգնել ձագերին։ Բայց ինչ կարող էին անել խեղճերը։

Յես վճռեցի օգնել ընկածներին, իսկույն ցած իջա, հավաքեցի ձագերին, բերի սենյակ, դրի պատուհանի վրա և աշխատեցի կերակրել նրանց ճանճերով ու միջատներով։ Բայց միանգամայն անօգուտ։ Նրանք շատ էին փոքրիկ և ինձնից կերակուր չէին վերցնում։ Ի՞նչ անել։ Մտածեցի տեղավորել նրանց ծի-

ծեռնակի բներում։ Այդպես էլ արի. տեղավորեցի բոլորին, ամեն մեկին մի բնի մեջ։ Ծիծեռնակի ձագերը նոր բների մեջ իրենց շատ լավ զգացին. նրանք ուղղելով իրենց մարմինը, հարմար դիրք ընդունեցին և գլուխները դուրս հանելով՝ մյուս ձագերի հետ միասին սկսեցին կերի սպասել։ Քիչ անցած՝ ծիծեռնակները յեկան ձագերի համար կեր բռնած իրենց կտուցներում, յեկան նստեցին բների վրա և տեսնելով օտար ձագերն իրենց բներում՝ իսկույն յետ քաշվեցին, սկսեցին ծլծլալ, անհանգիստ կերպով թռչել այս ու այն կողմը։ Նրանց ծլծլոցը քանի գնաց, այնքան ուժեղացավ։ Այդ ծլծլոցի վրա հավաքվեցին անհագին թվով ծիծեռնակներ։ Բոլորն էլ անհանգիստ շարժումներ էին կատարում օդի մեջ և ծլծլում։

Յես դիտում էի նրանց այդ շարժումներն ամենայն հետաքրքրությամբ։ Հանկարծ ծլծլոցը դադարեց։ Նրանք բոլորը նստեցին պատուհանի վերևում դուրս ցցված քարերի վրա և գլուխները մոտեցրին իրար, կարծես խորհրդակցում էին իրար հետ։ Մի րոպե չանցած, նրանցից մեկը, յերևի ամենից խիզախը, թռավ օդի մեջ և մի միջատ բռնելով՝ բերեց տվեց օտար ձագերից մեկին։ Դրանից հետո թռավ յերկրորդը, յերրորդը և բոլորն էլ միջատներ բռնած վերադարձան և կերակրեցին օտար ձագերին։ Այնուհետև ծիծեռնակները սկսեցին կերակրել թե իրենց և թե այդ օտար ձագերին հավասար կերպով։

Խորթ զավակներն իրենց հյուրընկալող այդ բներում աճեցին, մեծացան և թևեր առնելով թռան ամեն մեկը մի կողմի վրա և սկսեցին իրենց համար ինքնուրույն կյանք վարել։

66. Պապի համար

1

Պապն այնքան վատ էր զգում իրեն, վոր յերեք տարի շարունակ անկողնից չէր յելնում։ Վոչ թե հիվանդ էր, այլ ուժասպառ էր յեղել բոլորովին, հիշողությունն էլ թուլացել էր։ Յեվ ինչպես բոլոր ծեր մարդիկ, նա էլ շատ համառ էր դարձել։ Այնպես վոր դժվար էր նրան մի բանում համոզել։ Յեթե նրա գլուխը մի բան էր մտնում, հեշտ չէր այնուհետև այդ միտքը հանել նրա գլխից։

Այդպես էլ ամառվա սկզբից նա անպատճառ ուզում էր տեսնվել իր հին բարեկամ ծերունի Պետրոսի հետ, վոր ապրում էր սարի այն կողմն ընկած հեռու մի գյուղում։ Թե ինչ էր ասելու նրան, դա յերևի ինքը՝ պապն էլ չգիտեր։ Բայց անպատ-

ճառ ուզում եր տեսնել, և իր այդ ցանկության մասին մի որ հայտնեց վորդուն ու ասավ։

— Մարդ ուղարկիր Պետրոսի յետևից—թող գա. յես ուզում եմ նրա հետ խոսել։

— Լավ, խոստացավ վորդին։

Բայց խոստումը չկատարեց։

Այսպես մի քանի անգամ ել պապը հիշեցրեց նրան ծեր Պետրոսի մասին, բայց վորդին չեր կանչում նրան։

— Անկարելի բան է Պետրոսին քաշ տալ այստեղ,—ասում եր նա կնոջը.— Շատ ծեր է, չարժի, կը հոգնի։ Պապի հետ այդ մասին չպետք է վիճել. շուտով կըմոռանա։

Բայց պապը չեր մոռանում։ Տեսնելով՝ վորդին մարդ չի ուղարկում Պետրոսի յետևից, պապը մտածեց, վոր ինքը կանչի Պետրոսին։ Բայց ում կարող եր ուղարկել։ Գյուղը, ուր ապրում եր Պետրոսը, հեռու եր, սարի այն կողմը։ Մեծ ճանապարհով տասյոթ վերստ յեր, իսկ սարի կածանով՝ յոթ վերստ։ Մտածեց պապը, մտածեց յերկար, բայց չգտավ մի մարդ, վորին կարողանար ուղարկել Պետրոսի յետևից, վերջապես կանչեց թոռանը՝ փոքրիկ Աշոտին և թուղթ ու թանաք ուզեց, վոր Պետրոսին նամակ գրի։ Բայց բան դուրս չեկավ։ Նրա ձեռները դողդողում եյին—գրել չկարողացավ։ Փոքրիկ Աշոտը, վոր սիրում եր պապին, խոստացավ, վոր ինքը նամակ կը գրի, յերբ գրել սովորի։ Իսկ նա դպրոց պիտի գնար յեկող աշնանից։

— Ո՜հ, մի ամբողջ տարի պիտի սպասեմ...

Այդ ժամանակ փոքրիկ Աշոտը, տեսնելով վոր հայրիկը չի կատարում պապի ցանկությունը և պապն ինքն ել չի կարողանում նամակ գրել,—վորոշեց ինքը գնա ծեր Պետրոսին կանչի, և վորպեսզի շուտ կանչի—նա վորոշեց գնալ սարի ճանապարհով։

Վորոշելն ու անելը մեկ յեղավ։

Նախ՝ մորից ծածուկ պահարանից հաց ու պանիր վերցրեց, հետո շուրջը նայելով, թե արդյոք մայրը չի նայում իրեն՝ ճանապարհ ընկավ։ Նա գնում եր սարի կածանով, վոր սաստիկ զառիվեր եր և տեղ-տեղ ծածկված եր մեծ-մեծ քարերով։ Բայց նա մագլցելով՝ գնում եր առաջ։ Ցեվ քանի առաջ եր գնում՝ ծնկներն այնքան դժվարությամբ եյին ծալվում, այնքան ավելի ծանր եր թվում նրան իր սեփական մարմինը։ Այնպես վոր դեռ կես ճանապարհին նա քրտնեց ջուր դառավ։ Բաճկոնը հանեց, ապա մի փոքր կանգնելով՝ շարունակեց բարձրանալ։

Մի ժամում հասավ սարի կատարը, վորտեղից ճամփան իջնում եր ցած։ Աշոտը վորոշեց նստել այդտեղ և հանգստանալ։ Նրան թվում եր, վոր հինգ-վեց վերստ անցել է արդեն և մնում

է մի-յերկու վերստ. ուրեմն շուտով տեղ կհասնի։ Պետրոսի գյուղը գուցե հենց այստեղ մոտիկ է։ Ցեվ նա շուրջը նայեց։

Վոչինչ չեր յերևում։ Ամեն կողմ անտառ եր։

Նա յելավ տեղից և նորից ճամփա ընկավ։

Գնում եր նա ու մտածում, թե ինչ պիտի ասի ծեր Պետրոսին, յերբ հասնի նրա տունը։

— Բերև ձեզ. դո՛ւք եք իմ պապի բարեկամ Պետրոսը.

— Այո՛, յես եմ, կասի ծեր Պետրոսը.—համեցի՛ր, նստի՛ր։

— Շնորհակալ եմ։

— Դու վո՞րտեղից ես գալիս, փոքրի՛կ։

— Ցես՝ մեր գյուղից։ Պապս խնդրեց բարևել ձեզ և ասել, վոր գաք իրա մոտ։ Նա ուզում է ձեզ հետ խոսել։

Ցեվ Աշոտի մտքերը գնացին հեռու։ Նա յերևակայում եր, թե ինչպես է ինքը մտնում ծեր Պետրոսի տունը, թե ինչպես իրեն ծեր Պետրոսն ու իր տնեցիներն ընդունում են ուրախությամբ, հյուրասիրում են քաղցրավենիքով։

Ու այսպես մտածելով՝ անտառի միջով գնում եր առաջ։ Քիչ հետո նա բոլորովին մտավ անտառ. ել վոչ յերկինքն եր յերևում, վոչ ել ճանապարհ կար։ Բայց նա այնուամենայնիվ գնում եր առաջ։ Ցեվ անտառում այնպիսի լռություն եր տիրում, վոր Աշոտը ցնցվում եր, յերբ ծառերի ճյուղերն իրար եյին դիպչում։

Նա գնում եր արագ-արագ, հետո հոգնեց և քայլերը դանդաղեցրեց, իսկ վերջը արդեն հազիվ քարշ եր գալիս։ Շուրջը ինչ վոր մեկը տարորինակ ձևով թխկացնում եր և ինչ-վոր բան շրշում եր մի տեղ։

Աշոտի բերանի անկյունները կախվեցին ցած, կարծես նա պատրաստվում եր լաց լինել, բայց արցունք չեր գալիս։ Վախից նա հոգնածությունը մոռացավ և սկսեց վազել, կարծես մեկը հալածում եր նրան։

Ցեվ քանի առաջ եր գնում, այնքան նրա սարսափը մեծանում եր։ Վերջը ընկավ ծառի տակ և կուչ յեկավ։

2

Աշոտի գնալուց հետո մայրն սկսեց վորոնել նրան. Նայեց պարտեզ, փողոց, հարևանների բակերը։ Վոչ մի տեղ Աշոտը չըկար։ Հարցրեց պապին։ Նա վոչինչ չը գիտեր։ Վերջապես մարդ ուղարկեց ջաղացը, գետափը, իմանալու թե լողանալու չէ գնացել արդյոք։ Աշոտը վոչ մի տեղ չկար։ Քիչ հետո, յերբ հայրը հնձատեղից տուն յեկավ և իմացավ բանն ինչումն է, յերկու մարդ վերցրեց գյուղից ու գնաց Աշոտին վորոնելու։

Բողար շունը ընկերացավ նրանց և հոտոտելով առաջ ընկավ։ Երբ Աշոտի հայրն ու գյուղացիք ուզում եյին թեքվել ուրիշ կողմ գնալու — Բողարը հաչում, կլանչում և առաջ էր վազում, կարծես ուզում էր ասել՝ հետևեցեք ինձ։

Եվ մարդիկ հետևում եյին նրան։

Շունն այդպես հոտոտելով՝ բարձրացավ սարը և ապա մտավ անտառ։

Երկար ժամանակ գնում էր նա, և մարդիկ նրա յետևից։ Կամաց-կամաց նա այնքան առաջ անցավ, որ Աշոտի հայրն ու նրա ուղեկիցները յետ մնացին և չգիտեյին ուր գնալ։ Մեկ էլ լսեցին Բողարի ուրախ կլանչոցը անտառի խորքից։ Նրանք շտապեցին դեպի այն կողմը և ինչ տեսան... Աշոտը մի ծառի տակ քնած, իսկ Բողարը նստել է նրա մոտ և լիզում է նրա յերեսն ու ձեռները։

Հետևյալ օրը հայրը Աշոտին վերցրեց և միասին ձիով գնացին ծեր Պետրոսի յետևից, վոր գա գայլին տեսնելու։

---

67. Ջրահեղձը

Պուշկին

Ներս վազեցին մանուկները
ու կանչում են հորն շտապ.
— Ա՛պի, ապի, յե՛կ, մեր թոռը
մեռել հանեց դեպի ափ։
— Սո՜ւտ եք ասում, շան լակոտներ,
գոռաց հայրը ահարեկ·
բաղանեցեք դուք հալա դեռ,
մեռելն հետո կը տեսնեք։

Դիվան կը գա, պատասխան տուր·
ցավի միջում կը մընամ.
Հընար չը կա, բե՛ր, այ կնիկ,
շորերս տուր մի գնամ։
— Ո՞ւր է մեռելն,
— «Ա՜յ, ապի, այ»։
Ճիշտ վոր, գետի յեզերքին,
Թաց թոռի մոտ, գետնի վրա
տարածված էր մի մարմին։

Զարհուրելի դիակն ուռել,
կապտել է այլանդակ։
Արդյոք տանջված մի թշվառ էր՝
հանգիստ գտած ջրի տակ,
մի գետակուր ձկնորս էր այն,
Թե՞ գինեմոլ մի ջահել,
Թե՞ անզգույշ վաճառական
հարամու յեր պատահել...

Ընչի՞ն է պետք· աչք ածելով
ըշտապում է գյուղացին,
վոտից բռնած, յետ քարշ տալով,
ջուրն է տանում խեղդվածին։
Ու թիակով գետի յեզրից
ջուրը հըրեց նա նըրան,
ու դիակը գընաց՝ նորից
փընտրի իրան գերեզման։

Մեռելն յերկար ջրի միջին
ցած էր իջնում ճոճվելով.
աչքով ճամփեց մեր գյուղացին
ու տուն դարձավ կանչելով.
— Դեսը կորեք, այ լակոտներ,
յեկե՛ք, բան տամ ձեզ, տանեմ,
ամա թե վոր ձեն եք հանել,
հոգիներդ կը հանեմ։

Գիշերն ուժգին բուք վերկացավ,
գետն յելնում է, վորոտում...
Մարխը արդեն այրվեց, հանգավ
լուռ ու ծըխոտ խըրճիթում։
Վողջ քընած են։ Անքուն պառկած
միտք է անում գյուղացին...
Բուքն ոռնում է... մին էլ հանկարծ
լուսամուտը բախեցին...

— Ո՞վ ես։ «Ներս թող,
այ տանտեր, ներս...»
— Ա՛յ, ներս ու քեզ չառ ու ցավ,
ինչ ես շըրջում Կայենի պես.
վո՞ր սատանեն քեզ բերավ։
Ի՞նչ անեմ քեզ, տամ հիմի,
տեղըս նեղ է, տունը մութ։
Ու ծույլ ձեռքով, տրրտընջալով՝
բաց է անում լուսամուտ։

Ցոլում էր լուսին ամպի տակից
անձև կանգնած... մի մերկ մարդ.
ջուր է հոսում նըրա միրքից,
բաց են աչքերն ու անթարթ։
Կախ են ընկած բազուկները,
վողջ կարկամած սոսկալի,
ուռած մարմնին քառչանգները
կըպած՝ սևին են տալի...

Ահից մարդը՝ ճանաչելով
իր մերկ հյուրին նա հանկարծ.
փեղկը խփեց ու դողալով՝
— Ա՛յ դու ճաքես, քըրթմընջաց։
Ամբոխվեցին մաքերը մութ,
մինչև լույսը նա դողում,
մինչև լույսը լուսամուտ
բախում եյին ու բախում...

Ամբոխն ահեղ գըրույց ունի,
Թե այս դեպքից գյուղացին
ըսպասում է ամեն տարի
միշտ նույն օրը խեղդվածին։
Խառնվում է օրն առավոտից,
գիշեր գալիս բուք ու մութ,
ու խեղդվածը ամբողջ գիշեր
բախում դուռն ու լուսամուտ։

---

68. Ոդագնացություն

1

Ցամաքի ու ջրի վրա ազատ ճանապարհորդել սովորելուց հետո մարդն սկսեց նախանձել յերկնքի թռչուններին։

Բայց թևեր չուներ։

Իսկ ոդում թռչել ուզում էր։ Վոչ խճուղի յեր պետք, վոչ յերկաթգծեր, վոչ առագաստ։ Ճանապարհը հարթ է, ընդարձակ, գեղեցիկ։

Մարդն սկսեց սովորել ու մտածել։

Շինեց ոդապարիկ, նրանից նավակ կապեց ու թռավ, սլացավ անտառներից, արծվից, ամպից բարձր... բարձր...

Բայց... այնտեղ էլ, ինչպես Ջրի վրա, քամին խանգարեց, մարդուն տանում էր այնտեղ, ուր ինքն էր ուզում:

Անցան տարիներ, բայց մարդը չէր թողնում քամուն հաղթահարելու միտքը: Մտածեց, փոխ առավ արագաթռիչ արծվի ուժեղ, հսկայական թևերը, շոգենավի անիվները, միացրեց իրար և քամուն հաղթահարելով՝ այժմ թռչում է անծայր սարերի, խոր անդունդների, լայն-լայն գետերի, լճերի, անեզր ծովերի ու ովկիանոսների վրայով: Հեռու չէ այն ժամանակը, յերբ յերկաթուղին պետք կը գա մեզ նույնքան, որքան կառքն ու սայլը:

2

1862 թվի սեպտեմբերի 5-ին յերկու անգլիացի բարձրացան օդապարիկով: Օդապարիկն արագությամբ սկսեց վեր թռչել և քանի վեր էր գնում, այնքան ավելի ու ավելի ցուրտ էյին զգում բարձրացողները: Յերեք վերստից հետո ամպերին հասան օդապարիկն ամպի միջումն էր անցնում. յերկու ճանապարհորդները դողում էյին ցրտից և խոնավությունից: Յերբ օդապարիկն ամպերից վեր բարձրացավ, կրկին լուսացավ, էլի կապույտ յերկինք ու արև յերևացին:

Բարձրից նայելիս ամպերը սպիտակ, խորդ ու բորդ ձյունապատ դաշտի էյին նմանում: Ամպերի ճեղքերից տեղ-տեղ յերևում էր յերկիրը՝ գյուղեր, անտառներ, քաղաքներ, ծովեր և նավեր:

Ամպերից բարձր ցուրտն ավելի սաստկացավ: Չորս-հինգ վերստ բարձրության վրա ջուրը սառեց: Շունչ քաշելը դժվարացավ, ականջները խշխշալ սկսեցին և սրտները արագ թրթռալ: Քաջ օդավարողները առանց վհատվելու համբերում էյին և կրկին վեր բարձրանում: Ութ վերստ բարձրության վրա նրանցից մեկն այնքան թուլացավ, որ չէր կարողանում վոչ ձեռքը բարձրացնել և վոչ մարմինը շարժել: Վերջապես նա ուշաթափվեց և ընկավ բը-

թոցի մեջ: Իսկ օդապարիկը բարձրանում էր ու բարձրանում:

Յերկու քաջերին էլ մահ էր սպառնում: Յերկիրը տասը վերստ ցած էր գտնվում նրանցից: Մյուս ընկերը նույնպես սառել էր և հազիվ-հազ շունչ քաշում: Նա իր վերջին ուժերը հավաքելով՝ ուզեց ձեռքը բարձրացնել, օդապարիկի ծակը բանալ, որ միջի գազը դուրս գալով օդապարիկը ցած գա, բայց ձեռքը փայտի նման կախ էր ընկել և չկարողացավ: Այն ժամանակ նա ատամներով բռնեց այն թոկը, որով կապված էր այդ ծակը, քաշեց և բանալով թողեց, որ օդապարիկի գազը քիչ-քիչ դուրս գա: Օդապարիկն էլ սկսեց կամաց-կամաց ցած գալ:

Նրանք բարձրացել էյին տասը վերստից ավելի և այդ բարձրության վրա քսան և չորս աստիճան ցուրտ էր, մինչդեռ ներքևում ամառ էր:

3

Մի ուրիշ օդագնաց էլ այսպես է պատմում.

— Ահագին բազմություն էր հավաքվել թռիչքս տեսնելու:

Օդապարիկը պատրաստ էր:

Յես հրաժեշտ տվի մերձավորներիս, տեղավորվեցի օդապարիկի մեջ, ստուգեցի պաշարեղենն ու գործիքները և ձայնեցի՝ «բաց թող»:

Թոկերը բաց թողին և օդապարիկը վեր բարձրացավ նախ հանդարտ, ինչպես կապը կտրած ձի, ապա բոլոր թափով: Ներքևից թափահարում էյին թաշկինակներ ու գլխարկներ և ծափահարում:

Յես արդեն այնքան բարձր էյի, որ դժվարությամբ էյի կարողանում նշմարել մարդկանց: Սկզբում յերկյուղ էյի կրում, բայց հանկարծ ուրախություն զգացի ու վախը մոռացա:

Հազիվ լսելի յէր մարդկանց ձայնը, որ մեղուների բզզոցի յէր նման: Յերկրի մակերևույթը պատկերի նման էր, որի վրա կարծես նկարված էյին փողոցներ, տներ, գետեր, այգիներ: Ջափազանց ուրախ էյի:

Քաղաքի պատկերը հետզհետե փոքրանում էր ու հեռանում: Յերկիրը կարծես մեծանում էր ու լայնանում:

Յես ավելի ու ավելի էյի ուրախանում, ուրախությունից սկսեցի յերգել, բայց ձայնս այնքան թույլ էր, որ յես զարմացա ու վախեցա իմ ձայնից:

Արեգակը պայծառ փայլում էր, հանկարծ ծածկվեց ամպերով:

Յես նորից տխրեցի և ցանկանալով մի բանով զբաղվել,

հանեցի ծանրաչափը և իմացա, վոր գտնվում եմ չորս վերստ բարձրության վրա:

Յերբ գործիքը տեղն եյի դնում, մի բան թպրտաց. նկատեցի աղավնուն և հիշեցի, վոր վերցրել եմ հետս ներքև նամակ ուղարկելու համար: Մի կտոր թղթի վրա գրեցի, թե առողջ եմ և գտնվում եմ չորս վերստ բարձրության վրա ու թուղթը կապեցի աղավնու վզին: Նա նըստած եր նավակի ափին և նայում եր ինձ իր կարմրագույն աչքերով. ինձ թվաց, թե նա խնդրում ե, վոր իրեն անհանգստացնեմ:

Յերկիրը չեր յերևում. ամպը պատել եր: Բայց նամակ պիտի ուղարկեյի: Աղավնին դողում եր ամբողջ մարմնով: Յես բաց թողի նրան, նա թևերը շտապ թափահարելով, ծռվեց մի կողմի վրա և ինչպես քար ներքև գլորվեց:

Յես նայեցի ծանրաչափին. հիմա գտնվում եյի յերկրից հինգ վերստի վրա. զգում եյի, վոր ոդը նոսր ե և հաճախ եյի շունչ առնում:

Յես ցանկացա իջնել: Թոկը ձգեցի, վոր գազը բաց թողնեմ, բայց թուլացել եյի արդյոք, թե ոդապարիկի վորևե մասն եր փչացել—չգիտեմ, միայն փականը չբացվեց:

Յերկյուղից սառա: Բարձրանալս չեյի ուզում: Շնչառությունս հետզհետե ծանրանում եր:

«Յեթե գազը բաց թողնել չկարողանամ, ոդապարիկս կը պայթի և յես կորած եմ» —մտածեցի:

Իմանալու համար՝ կանգնած եմ, թե բարձրանում եմ—ցած գըցեցի թղթի կտորներ: Նրանք քարի նման արագ ցած ընկան, ուրեմն յես բարձրանում եյի:

Բոլոր ուժով ձգեցի թոկը. փականը բացվեց: Յես նորից մի կտոր թուղթ գցեցի, այս անգամ թուղթը վերև թռավ. նշանակում ե իջնում եյի:

Դեռ յերկիրը չեր յերևում: Իջնում եյի ամպերի միջով: Սկսեց քամի փչել:

Շուտով յերևաց արևը, ապա յերկիրը:

Մեր քաղաքը չկար. յերևում եյին անտառ և յերկու գետ:

Յես կրկին ուրախացա և չեյի ուզում իջնել:

Հանկարծ ինչ-վոր բան ձայն հանեց. մի արծիվ եր:

Նա ոդում կանգ առած, ապշած նայում եր ինձ:

Յես նետի արագությամբ իջնում եյի:

Շուտով սկսեցին յերևալ դաշտեր, անտառ, նրա ափին գյուղ, գյուղի մոտ՝ վոչխարի հոտ: Ինձ նկատեցին:

Յես ձայն տվի և թոկերը ցած գցեցի: Գյուղացիք վազեցին. մի յերեխա առաջինը բռնեց թոկը: Ուրիշներն ել բռնեցին, փաթաթեցին մի ծառի և ես դուրս եկա:

Յես ճանապարհորդել եյի յերեք ժամ և իմ իջած տեղը գըտնվում եր մեր քաղաքից 250 վերստ հեռավորության վրա:

---

69. Բնության հրաշքներից

1904 թվին Սպանիայի մի քաղաքում, մրրիկից անմիջապես հետո, յերկնքից սկսեց ցորենի անձրև թափվել: Այս տարօրինակ անձրևը սաստիկ վախեցրեց ժողովրդին ու թեև ցորենը հավաքեցին, բայց արտասովոր անձրևի պատճառը հասկանալ չկարողացան:

Յերկու տարի հետո Գերմանիայում պատահեց ավելի արտասովոր դեպք. անձրևի հետ յերկնքից սկսեց թափվել ծովային խեցգետիններ և այդ անձրևը շարունակվեց կես ժամից ավելի:

1814 թվի ոգոստոս ամսին Ֆրանսիական մի քաղաքում սաստիկ քամի եր, շինությունները դողդողում եյին, ինչպես յերկրաշարժի ժամանակ. փողոցներում գտնված մարդիկ շտապում եյին պատսպարվել տներում: Հանկարծ փողոցում գտնվողներից վոմանք ճչացին զարմանքից, վորովհետև անձրևի հետ իրենց գլխին գորտեր եյին թափվում: Այս գորտանձրևը բավական յերկար տևեց:

Յեթե գորտանձրևը բացի անախորժությունից վոչինչ չտվեց մարդկանց, տառեխների անձրևը, վոր մի քանի անգամ տեղաց Շոտլանդիայում (Հյուսիսային Անգլիա), բնակիչներին մեծ բավականություն պատճառեց: Նրանք իհարկե շատ զարմացան, բայց դա չխանգարեց ոգտվելու տառեխներից՝ թե վաճառելու և թե իրենց գործածության համար:

Աշխարհի մեջ, տեղ տեղ պատահել են նույնպես ճիճուների, միջատների և մինչև անգամ ոձերի անձրևներ:

Հարկավոր ե արդյոք ասել, վոր այս արտասովոր անձրևների պատճառը ծովային մրրիկներն ու թայֆուններն են։ Մրրիկը գետնի յերեսից վեր ե հանում միջատներ, ճահիճներից և լճերից ջրախառն հազարավոր գորտեր, խեցգետիններ, ծովերից միլիոնավոր տառեխներ, քշում ե հեռու, շատ հեռու, մինչև վոր քամին հանդարտում ե, նրանք վար են թափվում անձրևի ձևով։

---

70. Փոքրիկ տղան

1

— Փոքրիկ, ջուր բեր։
— Փոքրիկ, ջուր բեր։

Կանչում եյին այս ու այն կողմից բանվորները, վարպետները, վոր յերկաթից ու քարերից տուն եյին շինում ամերիկյան մի քաղաքում։ Խեղդող շոգ որ եր։ Փոքրիկ տղաները շարունակ ջուր եյին կրում դույլերով։ Յեվ բանվորներն սպունգի նման ծծում եյին ջուրը։

— Ե՛յ, իծի ճուտ, շուտ,— ջուր պահանջեց աշխատանքների վերակացուն և, տեսնելով վոր փոքրիկ տղան քայլերը վախով ե փոխում պատից-պատ մեկնած տախտակի վրայով, ծիծաղեց։

— Հը՞, վախենո՞ւմ ես,— ասավ նա։

Տղան, իսկապես վախենում եր։

— Ե՜, այստեղ քեզ պես վախկոտների տեղը չի,— նկատեց վերակացուն ջուրը խմելուց հետո.— քանի շուտ թողնես այս գործը՝ այնքան լավ կը լինի քեզ համար։

Փոքրիկ տղան չպատասխանեց, բայց ավելի շփոթվեց։

Ահա չորրորդ որն եր, վոր նա զբաղվում եր այդ գործով՝ բանվորներին ու վարպետներին ջուր տալով։ Դժվար եր մի քանի որվա մեջ սովորել մի քանի հարկ ունեցող բարձր շինության գըլխին պատից-պատ դրված գերանների վրայով քայլել։ Հեշտ բան չեր։ Ներքև ահագին անդունդ եր։ Նրան թվում եր, թե ինչ-վոր անտես, բայց ուժեղ ձեռքեր բռնում են իրեն և հրում դեպի անդունդը։

Նա բոլորովին վախկոտ չեր։ Վերակացուն ի զուր եր այդպես կարծում։ Յեվ վոչ ել ծույլ եր։ Նա, ընդհակառակը, շատ արագ եր շարժվում։ Յերբեմն նա մոռանում եր ներքևում բացվող անդունդը և ուրախ-ուրախ, արագ-արագ մի բանվորից անցնում եր մյուսին.

2

Անցավ մի քանի ժամ աշխատանքի մեջ։ Բայց «վախկոտ» բառը, վոր ասավ վերակացուն, դեռ հնչում եր փոքրիկ տղայի սրտում։

— Լավ եր սպաներ ինձ, քան թե վախկոտ անվաներ,— մտածում եր փոքրիկը տրտմությամբ։

Վախկոտ համարվել — ծանր բան ե։ Բայց գործից զրկվել — ավելի ծանր ե։ Ասում են, վոր այս գործը իրա բանը չե։ Բայց չե՞ վոր այս աշխատանքը լավ ե վարձատրվում. և չկա մի ուրիշ աշխատանք, վոր սրանից ավելի լավ վարձատրվի։ Իսկ նրան ինչ ե հարկավոր — լավ վարձատրություն։ Նա մենակ հո իր մասին չի մտածում։ Նա մտածում ե իր ընտանիքի, իր հիվանդ մոր, յեղբայրների և քույրերի մասին։

3

Որն արդեն յերեկո յեր դառնում։ Իսկ փոքրիկ տղան շարունակում եր դեռ վազել հարկից հարկ, պատից պատ և ջուր հասցնել բանվորներին։ Վերակացուի առավոտյան ասած խոսքը ժամանակ առ ժամանակ նրա միտն եր գալիս դեռ։

Հանկարծ, ամենաբարձր հարկից, վորտեղ բանվորները յերկաթ եյին դարսում, մի ճիչ լսվեց։

Այդ ճիչը սարսափելի յեր։ Դա ավելի շուտ հուսահատության մի աղաղակ եր։

Մի ակնթարթում բոլոր բանվորները ցնցվեցին իրենց տեղերում։ Անհայտ տեղից սպառնացող վտանգի յերկյուղը պաշարեց բոլորին։ Ով ե իմանում ինչ կարող եր պատահել։ Թոկը արդյո՞ք կտրվեց, գերանների հանգույցը թուլացավ արդյոք, թե ինչ-վոր բեռ շուռ յեկավ,— այդ բոլոր արկածները կարող եյին իրենց հետ ներքև թափել բազմաթիվ քար ու յերկաթ, վորոնք իրենց ճանապարհին կարող եյին բանվորներին վոչնչացնել մրջյունների պես։

Բանվորները րոպեյական սարսափից ուշքի գալով՝ վազեցին ամեն մեկը մի կողմ, իմանալու թե ինչ ե պատահել, վո՞րտեղ ե վտանգը։

Տեսարանը, վոր բացվեց բոլորի աչքի առջև, իսկապես վոր կարող եր սարսափ ազդել նույնիսկ ամենաանվրդով մարդուն։

Շենքի ամենաբարձր կետում, վորտեղ տասչորսյերրորդ հարկի հիմքն եր դրվում, կախվել եր մի ահագին բեռ — յերկաթե գերան։ Իսկ նրա վրա, գրեթե մեջտեղը, ընկած եր մի մարդ։ Նրա ձեռքի մեկը, ըստ յերևույթին, ջախջախված եր, իսկ յերեսը ծածկված եր արյունով։ Մարդը չգիտես ինչպես եր մնացել

բեռի վրա։ Հավանորեն ընկել էր այնպես, վոր մարմինը ինքն իրեն պահում էր իր հավասարակշռությունը։

Թոկի կախ ընկած ծայրը ամեն ինչ բացատրում էր։ Նա կտրվել էր, նրա մի ծայրը հարվածել էր մարդուն, վոր ընկած էր այժմ բեռի վրա, և միանգամից անզգա դրության հասցրել նրան։

Բանվորները նայում էին այդ սարսափելի տեսարանին և չգիտեյին ինչ անել, ինչպես ոգնել։ Կարելի յեր միայն բեռը թոկով քաշել։ Բայց նախ հարկավոր էր վիրավորին կապել բեռից, քաշելու ժամանակ վայր չընկնի։ Բայց բեռին բարձրանալը վտանգավոր կարող էր լինել վիրավորի համար։ Մարմինը հեշտությամբ կարող էր կորցնել իր հավասարակշռությունը և գլորվել ցած։

Րոպեները, վոր հավիտենության չափ յերկար էին թվում, անցան լռության ու սարսափի մեջ։ Վոչ վոք չէր խոսում։ Թըվում էր՝ վոչ մի բանով ոգնել չի կարելի։

— Յես կը փորձեմ, յես թեթև եմ,— ասավ այդ ժամանակ խուլ ձայնով մեր փոքրիկ տղան, վորին վերակացուն առավոտյան վախկոտ էր անվանել։

Նրան շրջապատող բանվորները վոչ մի խոսք չասին։ Նրան թոկ տվին և ոգնեցին բեռի ծայրը բարձրանալու։

Կանգնել անկարելի յեր։ Փոքրիկ տղան չոքեց բեռի վրա և սողալով առաջ գնաց։

Վտանգը մեծ էր։ Բեռը մինչև անգամ նրա ծանրության տակ տատանվում էր։

Ճամփեն, վոր պետք է սողալով գնար տղան, թվում էր անվերջ։ Բայց նա սողում էր աչքերը չհեռացնելով վիրավորից և աշխատում էր մտածել, վոր բեռը իբր թե գետնի վրա յե, և վոչ թե ոդի մեջ, անդունդի վրա կախված։ Բեռի լայնությունը մի վոտնաչափ էր։ «Այստեղ կարելի յե և պարել» սիրտ էր տալիս տղան ինքն իրեն։

Յերբ տղան մոտեցավ վիրավորին, նրա վոտները ու ձեռները դողում էին, և նա հազիվ կարողացավ թոկով փաթաթել վիրավորի մարմինը այնպես, վոր նա չընկնի։

Վիրավորի դեմքը նրան ծանոթ էր թվում։ Դա աշխատանքների վերակացուն էր, վոր այսոր առավոտյան նրան վախկոտ անվանեց... Յերևում էր, վոր կենդանի յե։

Վերջապես վիրավորը կապվեց բեռին. էլ չի ընկնի։ Այստեղ տղայի ուժերը թուլացան։ Նա կարողացավ միայն իր ձեռներն ու վոտները անցկացնել թոկի հանգույցը և ընկնել ցանցի մեջ։

Այնուհետև նա գիտակցությունը կորցրեց։

Մի քանի րոպե անց, բեռը յերկու մարմիններով գետնի վրա յեր։ Մարդիկ ամեն կողմից շրջապատել էին նրանց։

Վիրավորն ու փոքրիկ տղան ուշքի յեկան։

Տղան, զարմացած, կարծես քնից նոր արթնացած, աչքերը բացեց։ Նրա կողքին պառկած էր վերակացուն՝ գլուխը կապած, և սպասում էր, վոր ձեռն էլ կապեն։

— Սիրելի փոքրիկս,— ասավ նա, տեսնելով վոր տղան աչքերը բացեց.— մի՛ ասավ, վոր դու վախկոտ ես։ Յես իմ կյանքս քեզ եմ պարտական և յերբեք, յերբեք այս բանը չեմ մոռանա։

71. Սահարա

Ե. Տուր

Արդյոք գիտեք, թե ինչ բան է Սահարա անապատը. դա յերկրագնդի վրա յեղած ամենասարսափելի տեղերից մեկն է։ Հազիվ թե բևեռային սառցադաշտերն այնքան զարհուրելի լինեն, վորքան այդ ընդարձակ անապատը։ Ահագին տարածության վրա չկա վոչ ջուր, վոչ ծառ, վոչ թուփ, վոչ խոտ, այլ միայն ավազ, ավազ ու ավազ։

Յերկինքն յեռացած յերկաթի նման հրաշեկ է, վոսկու նման դեղին, արևն իր ուղղաձիգ ճառագայթներով այրում, տոչորում է, նա լողում է վոսկե-հրային յերկնքում, իր փայլով ու թուլացնող ջերմությամբ այրում է ճանապարհորդին։ Վոչ մի կաթիլ ամպ, վոչ մի զովացուցիչ քամի։ Ամենափոքր ստվերն անգամ չի նկատվում վոչ մի տեղ, չորս կողմն ամեն բան լուսավորում, ամեն բան այրում, տոչորում է։

Յերեկոյան դեմ արևի ճառագայթները հանգչում են, իսկ արևը հրային գնդի նման

անհետանում է հորիզոնի ծայրին, վոսկե մշուշի մեջ, բայց դարձյալ զովություն չի լինում: Կրակ կտրած ավազը գիշերվա հովի փոխարեն ճնշող գոլ է արձակում:

Անապատում առաջացող քամին այրում է բոցի պես: Մանր ավազի շիկացած հատիկները թափվում են ճանապարհորդի չորացած կոկորդի, պայծառ լույսից թուլացած աչքերի, քթի ու բերանի մեջ և կամ կպչում ամբողջ մարմնին: Անտանելի ծարավը ընկճում է ճանապարհորդին. նրա աչքերը կսկծում են, նա վոչինչ չի տեսնում, հոգնած տեսողությունը հրաժարվում է նրան ծառայելուց:

Ավելի ուժեղ քամին ալեկոծում է ավազի դաշտավայրը և բարձրացնում ավազի անթիվ ալիքներ. անապատը ծովի նման շարժվում, տատանվում է, նրա վրա բարձր և խոր ալիքներ են կազմվում, սկսում են օդի մեջ ավազի ամպեր բարձրանալ և պատել յերկինքը: Հրեղեն մշուշը ծածկում է արևը, վորն այդ ժամանակ յերևում է հրաշեկ, բայց անփայլ գնդի նման:

Հետզհետե ավելի յե ալեկոծվում ավազը, ավելի տաքանում օդը, յերկու քայլ հեռու բացի հրային վոսկե փոշուց այլևս վոչինչ չի յերևում: Սա մի սարսափելի բուք ու բորան է, բայց վոչ թե ձյունի, այլ կրակ կտրած ավազի:

---

72. Առաջին ձնծաղիկները

Յերկար ու սպիտակ մորուքով մի ծերունի նստել եր ալեխառն հոնքերը կիտած ու մտածում եր: Մութ ու ցուրտ եր նրա շուրջը:

«Աշխարհի յերեսին վոչ վոք այնքան բան չի արել, վորքան յես», մտածում եր ծերունին և հարյուրյերրորդ անգամ սկսում եր համարել իր գործերը:

Լիակատար խաղաղություն եր տիրում շուրջը, բայց հանկարծ ինչ-վոր աղմուկ ընդհատեց ծերունու մտածմունքը: «Այս ինչ բան է: Ո՞վ է համարձակվում ինձ խանգարել: Յես ամենքին հրամայել եմ, վոր լռեն ու անշարժ մնան... Այս ձայները նման են ջրի կարկաչին, բայց չե՞ վոր յես հրամայել եմ ջրին ել, վոր այլևս չխոխոջի: Իսկ սա ինչ բան է: Ասես թռչունների յերգը լինի... Բայց չե՞ վոր յես թռչուններին ուղարկել եմ հեռավոր հարավ»,—ասում եր ծերունին ավելի և ավելի խոժոռելով թավ հոնքերը:

Այդ ժամանակ ծերունին տեսավ, վոր իր առաջ կանգնած է վոսկեփայլ գանգուրներով ու կարմրաթուշ դեմքով մի պատանի,

— Քեզ ո՞վ թույլ տվավ այստեղ գալ,—բարկացած փնթփնթաց ծերունին:

— Ի՞նչ դժգոհ ես յերևում, պապի,—ասավ պատանին...— ներիր, վոր յեկել եմ առանց քո թույլտվության: Բայց մի նայիր, տես՝ ինչպես ամենքն ուրախ են գալուս. կարծում եյի, թե դու ել...

— Վո՛չ, վոչ, յես ուրախ չեմ,—մռայլ մրթմրթաց ծերունին:

— Յես շատ եմ լսել մեծամեծ գործերիդ մասին,— շարունակեց զվարթադեմ պատանին,—և յեկել եմ հաստատ տեղեկանալու, ճի՞շտ է արդյոք այն ամենը, ինչ վոր պատմում են քո մասին:

— Յես արել եմ ավելին, քան թե դու կարծում ես, տղա, վոչ վոք չի կարող թվել իմ կատարած բոլոր հրաշքները...

— Ասա ինձ, ծերուկ, ինչ է արածդ. յես կարծում եյի, թե բացի ինձանից վոչ վոք հրաշք չի գործում:

— Յես կը փչեմ գետին, ու նա կծածկվի սառուցով,—սկսեց ծերունին:

— Իսկ յես կը փչեմ սառույցին ու կազատեմ կաշկանդված գետը—պատասխանեց պատանին:

— Յես կը թափահարեմ ալեզարդ գլուխս, ու յերկիրը կը ծածկվի ձյունով:

— Յես թափ կը տամ վոսկեհեր գանգուրներս, և պայծառ կը ժպտա արեգակը ու կը հալվի ձյունը:

— Յես կը հրամայեմ թռչուններին, վոր լռեն ու հեռանան, և թևերը բանալով կը դիմեն դեպի հեռավոր յերկրներ:

— Իսկ յես կասեմ՝ «Թռչնիկներ, վերադարձեք». կը գան նրանք, կը պտտվեն գլխիս ու օդը կը լցնեն զիլ յերգերով:

— Վոչ վոք չի կարող մեկ-մեկ համարել այն բոլոր տերևները, վոր սարսափից դողդողալով թափվում են գետին, յերբ յես կպչում եմ նրանց սառցե մատներովս, կամ փչում եմ իմ ցուրտ շունչը:

— Յես յերբեք չեմ տեսել տերևները ծառերից թափվելիս, այլ տեսել եմ նրանց միշտ մատղաշ, կանաչ, իմ յերևալուս ուրախ դողդողալիս,—առարկեց պատանին:

Յեվ ծերն ու պատանին խոսում եյին ամբողջ գիշեր: Ծերունին սկսեց հոգնել, իսկ պատանին հետզհետե ավելի զվարթանալ:

Լուսաբացին արևը փայլեց ու օդը լցվեց թռչունների ուրախ ծլվլոցով:

Պատանին հասկացավ, վոր արդեն բոլորն իմացել եյին իր գալստի մասին ու իրան դիմավորում եյին ուրախ զվարթ. նա

նայեց էր շուրջը յերջանիկ ժպիտով, ապա դարձավ ծերունու կողմը, վոր միաս բարև ասի նրան…

Բայց ծերունին էլ չկար։

Այնտեղ, ուր նա նստած եր մի քիչ առաջ, յերևում եյին մի քանի սպիտակ բծեր՝ ձյունի վերջին մնացորդները։

Պատանին մոտեցավ նրանց ու ժպտաց։ Բծերը վոչ թե ձյունի մնացորդներ եյին, այլ սպիտակ ձնծաղիկներ, գարնան առաջին ծաղիկները, վորոնք դեռ հիշում եյին ձմռան մասին։

---

73. „Սատանի մեքենան“

1

1807 թվի օգոստոսի 11-ին Ամերիկայի Նյու-Յորկ քաղաքի գրեթե բոլոր բնակիչները խռնվել եյին Հուդզոն գետի նավահանգստում։ Ամեն մեկն ուզում եր տեսնի, թե ինչպես պիտի բանի մեքենագետ Ռոբերտ Ֆուլտոնի հնարած նավը, վորը իբր թե պիտի առանց քամու գնար և հոսանքով, և հոսանքի հակառակ։

Ափի մոտ յերևում եր մի տարօրինակ նավ, առանց կայմի, առանց առագաստի, մի հաստ ծխնելույզ եր միայն անկված մեջտեղից, մի-մի ահագին անիվ եր կողքերին։

— Տեսեք, տեսեք,— ծիծաղում եր մի ծերունի նավաստի ամբոխի միջից,— մի ամբողջ գործարան ե դրել նավի վրա։ Գլուխս կտրել կը տամ, թե որ ծանրությունից հատակը չը գնա։ Այսպես էլ անխելքություն։

— Տղերք, սայլ ե շինել, ջրի յերեսին անիվներով ե ուզում ման գա։ Ե՛յ, սայլապան Ֆուլտոն,— ծաղրում եր մի ուրիշը։

— Նայեցեք, նայեցեք,— հանկարծ կանչեց ամբոխը,— մեքենան վառում են։

Ծխնելույզից քուլա-քուլա ծուխ բարձրացավ, մեքենան սկսեց վշշալ։ Տախտակամածի վրա հուզված ման եր գալիս մի քառասուն տարեկան տղամարդ ու հրամաններ արձակում։

— Ֆուլտո՛ն, Ֆուլտո՛ն,— աղաղակեց մեկը ափից։— Են աշխարհում պապիս բարև արա ինձանից։

Միահամուռ հռհռոցը խլացրեց այս ծաղրանքը, ամեն կողմից սկսեցին շվացնել ու կանչել.

— Բարի ճանապարհ, «խելառ Ֆուլտոն»։

Այս անունն եյին դրել տարօրինակ նավին, վորի ճակատին մեծ տառերով գրված եր՝ «Կլերմոնտ»։

Հանկարծ շոգենավից լսվեց ականջ ծակող մի սուլոց։ Ամբոխը պատասխանեց ավելի անսանձ շվոցներով ու չարախնդաց ճիչերով։

Անիվները պտտվեցին, շոգենավը ցնցվեց ու սկսեց ափից հեռանալ, սկզբում շատ դանդաղ ու ծանր, իսկ հետո ավելի ու ավելի արագ ու թեթև։ Շվոցն ու ծիծաղը մեկ անգամից. կտրվեցին ապշած, աչքերը չռած նայում եր ամբոխը, ու հանկարծ հազարավոր կուրծքերից դուրս թռավ մի բացականչություն՝ «կեցցե»։ Ժողովուրդը վազում եր ափով շոգենավի յետևից, մինչև վոր նավը աչքից անհետացավ, ուղևորվելով դեպի Ալբանի, գետն ի վեր։

Բայց Ֆուլտոնը ուշք չէր դարձնում վոչ ամբոխի շվոցներին ու ծաղրանքին, վոչ էլ հիացմունքին. նա լարված հետևում եր իր նավի ընթացքին. մեկ արագացնում, մեկ դանդաղեցնում եր, մեկ աջ եր ուղղում, մեկ ձախ, ու շարունակ դիտում եր՝ չը կա՞ արդյոք վորևե պակասություն։ Հետզհետե յերջանկության և հպարտության զգացմունքը լցնում եր նրա հոգին, վոր այնքան տանջվել եր այդ մեծ նպատակին հասնելու համար։

2

Մի շաբաթից հետո տեղական լրագրներում լույս տեսավ մի հայտարարություն, վորի մեջ Ֆուլտոնը հայտնում եր, վոր շոգենավը ամեն չորս որը մի անգամ յերթևեկելու յեր Նյու-Յորկի և Ալբանիի միջև, դուրս գալով առավոտյան և հաջորդ որվա իրիկունը տեղ հասնելով։

Նշանակված որը նորից Նյու Յորկի ամբողջ գետափը ծածկված եր ժողովրդով, վոր յեկել եր տեսնելու, թե ով ե լինելու այն հանդուգնը, վոր սիրտ կանի ու կը մտնի այդ «սատանի մեքենան»։

Ֆուլտոնը ի զուր բարձրաձայն դիմում եր մի քանի անգամ ամբոխին, հրավիրելով ցանկացողներին իրեն հետ ուղևորվել Ալբանի. բոլորն էլ յետ-յետ եյին քաշվում շոգենավի մոտից, թեև տեսնում եյին, վոր բացի Ֆուլտոնից նավի վրա կային և ուրիշ ծառայողներ։ «Սատանի հետ ե ընկերացել»,— խոսում եյին ամբոխի մեջ։

Շոգենավը ճամփա ընկավ։ Գետափնյա գյուղացիները, մանավանդ կանայք և յերեխաները, ճչում ու լալիս եյին, հենց վոր հեռվից նշմարում եյին այդ «հրեշը», վոր ծուխ ու բոց եր ժայթքում և ահռելի վշշում։ Ճամփին պատահող նավերի նավապետները սարսափահար կանչում եյին՝ «Վիշապ, վիշապ» ու թաքնվում տախտակամածի տակ։ Ֆուլտոնը մենակ կանգնած եր շոգենավի վրա և տխուր մտածում եր…

3

Նրա մտքով անցնում էր իր ամբողջ անցյալը, գրկանքներով, հիասթափություններով, չարքաշությունով լի անցյալը։ Հորը չէր հիշում. Նա մեռել էր, յերբ ինքը դեռ յերեք տարեկան էր։ Մայրը որավարձով լվացք էր անում, դաշտում աշխատում կամ դռնե-դուռը կար անում։ Իսկ տունը լիքը յեղբայրներ ու քույրեր։ Ռոբերտը այնուամենայնիվ դպրոց էր գնում, գրել-կարդալ սովորում։

Հիշեց Ֆուլտոնը թե ինչպես աշակերտություն էր անում վոսկերչի մոտ, ապա նրանից հեռացավ և պարապում էր պատկերահանությամբ։ Յերանի այն օրերին. ինքն այնպես համառում էր, թե առաջնակարգ նկարիչ է դառնալու։ Ու հանկարծ Ռոբերտի աչքի առջև կանգնեց մոր անմոռանալի կերպարանքը. վո՜րչափ յերջանիկ էր նա, յերբ վորդին իր խնայողություններով գնեց մի կտոր հող, մի տնակ և տնտեսության բոլոր պարագաները ու այդ ագարակի մեջ բնակեցրեց պառավին։

Հետո սկսում են թափառումները Անգլիա, Ֆրանսիա, ուրիշ յերկրներ, և հիասթափություն. համոզվում է, վոր նկարչության տաղանդ չունի ու նվիրվում է մեքենագործության... Ի՞նչքան անքուն գիշերներ, սոված օրեր է անցկացրել իր ամենագլխավոր նպատակին հասնելու համար և այդ նպատակը յեղել է մարդկությանը մի այնպիսի նավ տալ, վորը շոգու միջոցով ազատ ման գար թե հոսանքով և թե հոսանքին հակառակ։ Յեվ ահա այժմ, յերբ իր յերազանքը իրականացել է, հենց իր հայրենակիցներն են, վոր յերես են դարձնում իրենից...

4

Մյուս առավոտ Ֆուլտոնը կրկին մեկ—յերկու ժամ ֆզուր սպասեց ճամփորդի։ Վոչ վոք չէր յերևում, ամբոխը լուռ կանգնած էր ափին։

Հանկարծ—չէր ուզում հավատալ իր աչքերին—ամբոխը ճեղքելով շոգենավի սանդուղքով սկսեց բարձրանալ մի լըջմիտ յանկի, ճամփի պայուսակը ձեռքին։

— Ի՞նչ եք կամենում,—հարցրեց Ֆուլտոնը։

— Չե՞ վոր դուք հայտարարել եյիք, թե ճամփորդներ եք փոխադրում Օլբանիից Նյու-Յորկ։ Ստացեք փողը։

Ու մեկնեց փողը։ Ֆուլտոնը հուզմունքից չէր կարողանում խոսի։

— Այստեղ վեց դոլլար է (12 ռուբլի). դուցե քի՞չ է,—հարցրեց ուղևորը տարակուսած։

— Վո՛չ, վո՛չ,—բացականչեց Ֆուլտոնը՝ արտասուքն աչքերին, սեղմելով պարոնի ձեռքը։ Հենց այդքան է նշանակված։

Բայց հասկանո՞ւմ եք, սա առաջին վարձատրությունն է, վոր ստանում եմ բազմամյա տառապանքներիս համար, և դուք առաջին մարդն եք, վոր ձեր կյանքը վստահանում եք ինձ։ Յես կուզենայի ձեզ հետ մի շիշ գինի խմեմ այն վստահության համար, վորով վերաբերվեցիք իմ նավին. բայց այժմ յես այնքան աղքատ եմ, վոր չեմ կարող գնել այդ մի շիշ գինին։ Գուցե յերբեվիցե ավելի լավ հանգամանքների մեջ իրար հանդիպենք, այն ժամանակ մենք միասին մի քանի շիշ կը դատարկենք ի հիշատակ այս օրվա։

— Մի՛ վհատիք,—ընդհատեց նրա ուղեկիցը.—ապագան ձերն է։

5

Ճիշտ վոր, վերջը նրանք նորից պատահեցին և Ֆուլտոնը միշտ առանձին խանդաղատանքով էր խոսում իր «առաջին ուղևորի» մասին. «Այդ մարդը ինձ վստահացավ,—ասում էր նա,—յերբ դեռ վոչ վոք չէր վստահանում»։

Անծանոթի գուշակությունը կատարվեց։ Հենց իր կենդանության օրով Ֆուլտոնը տեսավ, ինչպես շոգենավերը յերևացին Ամերիկայի ուրիշ գետերի վրա էլ, նույնպես և Յեվրոպայում։ Նրա մահից մի տարի առաջ շոգենավը առաջին անգամ կտրեց անցավ Ատլանտյան ովկիանոսը՝ Նոր Աշխարհից Հին Աշխարհ։

Յերբ 1815 թվին Ֆուլտոնը մեռավ, ամբողջ Նյու-Յորկը սուգ հագավ։ Թաղման օրը բոլոր պաշտոնատեղիներն ու արհեստանոցները փակվեցին, բոլոր բնակիչները գնում եյին մեծ մարդու դագաղի յետևից՝ դրոշակները պարզած։ Իսկ նավահանգստից անընդհատ վորոտում եյին յերեսուն ահագին թնդանոթներ նրա նոր շինած՝ պատերազմական վիթխարի շոգենավի վրայից։

Այդ շոգենավը, ուր վեց հարյուր նավաստի պիտի ծառայեր, կոչվում էր «Ֆուլտոն»։

1) Ամբոխը սկզբում ինչո՞ւ յեր ծաղրում Փուլտոնին: Ինչո՞ւ եյին վախենում նրա «հրեշից»:

2) Ի՞նչ նշանակություն ունի մարդկության համար շոգենավի գյուտը:

74. Հիմարը

Լ.Ն օկով

1

Ի՞նչ մարդու կարելի յե հիմար ասել։ Թվում է թե ամենքի համար պարզ է. բայց յեթե սկսենք քննել, թե ով ինչպես է այդ հասկանում—կտեսնենք վոր ամենքն էլ միատեսակ չեն հասկանում այդ։ Գիտական բառարանը, վորի յուրաքանչյուր բառի նը-

շանակությունն ստուգված ու պարզաբանված է, բացատրում է, վոր «հիմար նշանակում է խելքից պակաս մարդ, տխմար, բանականությունը կորցրած, խենթ, խելագար»։ Սրանից ավելի գիտական բացատրություն փնտրելն ավելորդ է, բայց կյանքում յերբեմն հանդիպում ենք հիմար անունը կրող այնպիսի մարդկանց, վորոնք, սակայն, վո՛չ տխմար են, վո՛չ խենթ, վո՛չ խելագար... Դրանք հետաքրքրական մարդիկ են, և այդպիսիներից մեկի մասին է, վոր ուզում եմ պատմել։

——

Մեզ մոտ՝ գյուղումը, կար անհեր-անմեր մի ճորտ տղա, անունը Պան։ Ապրում էր նա կալվածատիրոջ տանը. հագնում էր, ինչ տալիս էյին, իսկ կերակրվում էր կով կթող կնոջ ու նրա յերեխաների հետ մի սեղանից։ Նրա պաշտոնն էր՝ «ամենքին օգնել». դա նշանակում էր, վոր կալվածում պաշտոն ունեցող յուրաքանչյուր մարդ թե կին իրավունք ուներ նրան ստիպելու, վոր իր տեղն ամեն տեսակ աշխատանք կատարի, և նա, օրեր էյին լինում, անընդհատ աշխատում էր։ Այսօրվա պես հիշում եմ նրան։ Կը պատահեր, ձմեռը,—դաժան ձմեռներ են լինում մեր յերկրում,—յերբ մենք առավոտյան արթնանում էյինք և նայում լուսամուտից, Պանն արդեն յերկուտակված քաշում էր ահագին մի սահնակ խոտի խուրձերով, կամ գարմանով բեռնավորված։ Մենք նոր զարթնում էյինք, իսկ նա արդեն հոգնած էր լինում աշխատանքից, և առհասարակ շատ քիչ կը տեսնեյիր նրան պարապ։ Հանգիստ չուներ. կը պատահեր, վոր մի քանի րոպե գոմի դռանը կը նստեր մի բան ուտելու։ Յեվ կերածն ինչ էր—ցամաք հաց։ Այդպիսի դեպքերում յերբեմն կը հարցնեյինք.

— Այդ ինչ է, Պան, ինչո՞ւ յես ցամաք հաց ուտում։

Յեվ նա միշտ կը պատասխաներ կատակով.

— Վո՛նց թե ցամաք. չե՞ս տեսնում վոր մաքուր ջուրը հետն է։

— Ինչո՞ւ մի բան չես խնդրում հետը ուտելու—կաղամբ, վարունգ կամ գետնախնձոր։

Պանը գլուխը թափ կը տար ու կը պատասխաներ.

— Ե՛հ, էդ էր պակաս... Յես առանց էդ էլ կուշտ եմ։

Յեվ գոտին կապելով՝ նորից կերթար այս կամ այն բանը կրելու։ Նրա գործը յերբեք չեր հատնում, վորովհետև ամեն մեկը ստիպում էր նրան, վոր իրեն օգնի։ Յեվ նա մաքրում էր գոմերը, ախոռները, տավարին կեր էր տալիս, վոչխարը ջուրն էր տանում, իսկ յերեկոյան, կը պատահեր, իրա և ուրիշների համար արեխ կաներ. կը քներ բոլորից ուշ, կը զարթներ բոլորից շուտ՝ դեռ ծեգը չբացված։ Հագնվում էր միշտ վատ ու աղքատ։ Յեվ մեկը չկար, վոր խղճար նրան. բոլորն էլ ասում էյին.

— Ե՛հ, նրան ինչ կա—հիմար է։

— Ինչումն է նրա հիմարությունը։

— Ամեն բանում...

— Որինակ։

— Էլ ինչ որինակ. ահա կով կթողը ամեն բան՝ վարունգը, գետնախնձորը իր յերեխաներին է տալիս, իսկ Պանը... Նրա համար՝ միևնույնն է... վո՛չ խնդրում է, վո՛չ գանգատվում։ Հիմար է, կատարյալ հիմար...

——

Մենք՝ յերեխաներս, չեյինք կարող այդ բոլորը լավ հասկանալ, և թեև Պանից հիմարություններ չեյինք լսած, այլ ավելի շուտ փաղաքշանք էյինք տեսել, վորովհետև նա մեզ համար շինում էր փոքրիկ ջրաղացներ, և ուրիշ խաղալիքներ, սակայն, ինչպես բոլոր տնեցիք, այնպես էլ մենք, ասում էյինք, վոր Պանը հիմար է, և դրա դեմ վո՛չ-վոք չեր առարկում։ Բայց շուտով պատահեց մի դեպք, վոր այդ մասին առարկելն արդեն անկարելի դառավ։

2

Մենք ունեյինք մի խիստ, շատ խիստ կառավարիչ, վոր սիրում էր ամենափոքր հանցանքի համար էլ մարդ պատժել։ Կերթար, որինակ, յեռանդակ (միաձի կառք) նստած և չորս կողմը կը նայեր—թե չկա՞ արդյոք մի վորևե անկանոն բան, և յեթե նկատեր անկարգ մի բան՝ իսկույն կը կանգներ, կը կանչեր հանցավորին ու կը հրամայեր.

— Գնա՛ անմիջապես գրասենյակ և իմ անունից հայտնիր ավագ գործակատարին, վոր ճիպոտի քսանուհինգ հարված տա քեզ. յեթե խաբեցիր՝ յես յերեկոյան կը հրամայեմ իմ ներկայությամբ կրկնակի հարվածներ տալ։

Էլ ներողություն ու ներում արդեն չեյին համարձակվում խնդրել նրանից, վորովհետև նա այդպես բաներ չեր սիրում և դեռ պատիժն ավելացնում էր։

Մի անգամ էլ ահա, ամառը, գնում է այս կառավարիչը դաշտ և տեսնում է, վոր նոր դուրս յեկած հաճարի արտերում ձիու քուռակներ են ման գալիս և վոչ այնքան ուտում են, վորքան տրորում են ու սմբակներով արմատահան անում։

Կառավարիչը կատաղում է։

Քուռակների վրա այդ տարի պահապան էր փոքրիկ Պետրոսը, կով կթող Աննայի վորդին, այն կով կթողի, վոր գետնախնձորը խնայում էր Պանին և բոլորը տալիս էր իր յերեխաներին։ Պետրոսն այդ ժամանակ տասներկու տարեկան էր, բայց կազմվածքով Պանից փոքր էր և բարակ-մարակ, դրա համար էլ

«Նարմանազուկ» ասելով, ծաղրում էյին նրան. մի խոսքով մորից յերես առած էր, իսկ աշխատանքի համար թույլ: Այդ որը նա քուռակները հանգն էր տարել վաղ առավոտյան, յերբ ցողը չէր չորացել դաշտերում. մրսելուց դողը բռնում է, նստում է ու քուրքը քաշում գլխին, և հենց վոր տաքանում է՝ քունը տանում է. նա քնում է, իսկ քուռակներն այդ ժամանակ մտնում են հաճարի արտերը:

Կառավարիչը հենց վոր տեսնում է այդ, անմիջապես վերցնում է Պետրոսի քուրքը և ասում:

— Թող Պանին առայժմ նայի իրա և քո գործին, իսկ դու իսկույն գնա գրասենյակ և ծառային ասա, վոր ճիպոտի քսան հարված տա քեզ. և յեթե մինչև իմ տուն դառնալս՝ ասածս չկատարես, այն ժամանակ յես իմ ներկայությամբ կրկնակի հարվածներ կը տամ:

Ասում է ու գնում:

Իսկ Պետրոսը նստում է ու լաց լինում: Դողում է ամբողջ մարմնով, վորովհետև նրան յերբեք ճիպոտի հարվածներով չէյին պատժած: Լալիս է և ասում Պանին.

— Պանի ջան, վախենում եմ... մի ասա—ինչ անեմ.

Պանը շոյում է նրա գլուխը և ասում.

— Յես էլ վախենում էյի... Ի՞նչ պիտի անես... դիմացի՛...

Պետրոսն ավելի յե լալիս, և լաց լինելով՝ ասում.

— Գնամ, վախենում եմ, չգնամ՝ էլի վախենում եմ: Ավելի լավ է՝ ջուրն ընկնեմ:

Պանը համոզում է նրան, համոզում և վերջը ասում է.

— Ե՛հ, վախկոտի մինն էլ դու ես. մնա էստեղ, նայիր իմ գործին էլ, քու գործին էլ, յես կերթամ քու տեղ...

Պետրոսը հարցնում է.

— Վո՞նց թե իմ տեղ. ինչ պիտի անես վոր...

—Վոչինչ, մի բան եմ մտածել:

Յեվ արագ-արագ վազում է Պանը դեպի կալվածատիրոջ տունը և մի ժամ հետո վերադառնում ժպտալով:

— Ել ախպեր մի,—ասում է,—Պետրոս, ամեն ինչ արի, վոչ մի տեղ մի գնա. դու պատժից ազատված ես:

Պետրոսը մտածում է.

«Միևնույն է. Պանին պիտի հավատալ»,—և չի գնում. իսկ կառավարիչը յերեկոյան գալիս և հարցնում է գրասենյակի ծառային.

— Առավոտը են փոքրիկ հովիվն յեկա՞վ ծեծվելու:

— Ինչպես չէ, ասում է, յեկավ, պարոն:

— Ճիպոտի հարվածներ տվի՞ք:

— Այո, ասում է, տվինք:

— Լա՞վ տվիք:

— Այո՛, լավ:

Բանն այսպես էլ վերջացավ, բայց հետո իմացան, վոր ծեծել են վոչ թե այն հովվին, վորին պիտի ծեծեյին—վոչ թե Պետրոսին, այլ Պանին: Այս բանը տարածվեց կալվածում ու գյուղում, և ով վոր լսում՝ ծիծաղում էր Պանի վրա.

— Այ քեզ հիմա՛ր... Իսկապես վոր հիմար...

Յեվ Պետրոսին էլ չծեծեցին:

3

Այդպես էլ ապրեց Պանը հետո:

Մի քանի տարի անց Ղրիմի պատերազմը յեղավ: Սկսեցին զինվոր ու զորք հավաքել: Լաց ու կոծն ընկավ գյուղը. ո՞վ կը ցանկանար տանջվել պատերազմում: Մանավանդ մայրերը՝ իրենց ուտում էյին վորդիների պատճառով:

Այդ ժամանակ Պանը չափահաս տարիքի յեր հասել արդեն: Յեվ ահա մի օր գալիս է կալվածատիրոջ մոտ և խնդրում.

— Հրամանք արեք, -ասում է,—ինձ քաղաք տանեն՝ զինվոր գրեն:

— Դա ինչ ցանկություն ե:

—Ենպես, ասում է.—ուզում եմ գնալ:

— Ինչո՞ւ: Մի լավ մտածիր—նոր:

— Չէ, ասում է,—մտածելու ժամանակ չի:

— Ինչո՞ւ ժամանակ չի:

— Բա դուք չե՞ք լսում՝ ինչպես են բոլորը լաց լինում. իսկ յես լաց լինող չունեմ—ուզում եմ գնալ:

Նրան աշխատում են համոզել, յետ պահել այդ մտքից:

— Տե՛ս, ասում են,—կոպիտ անտաշի մեկն ես—պատերազմում բոլորը վրադ կը ծիծաղեն:

Իսկ նա պատասխանում է.

— Եդ ավելի լավ է, ծիծաղն ավելի ուրախ բան է, քան կռիվը. յեթե մարդիկ ուրախ լինեն—են ժամանակ բոլորն էլ կը հաշտվեն:

Նրան տարան քաղաք և զինվոր գրեցին, և յերբ տանողները վերադարձան՝ սկսեցին հետաքրքիր հարց ու փորձ անել նրանց:

— Հը՛, մեր հիմարը մնա՞ց այնտեղ: Զինվոր տալուց հետո տեսա՞ք:

— Ինչպես չէ, ասում են, տեսանք:

— Ի հարկե, վրան ծիծաղում էյին:

— Այո՛,—ասում են,—առաջ ծիծաղում էյին, բայց յերբ նա իր յերկու բուբլով, վոր մենք նվեր էյինք ավել, շուկայում խրն-

ձոր գնաց և ամեն զինվորի մինը ավեց, իսկ իրեն մոռացավ... բոլորը գլուխները շարժեցին և ամեն մեկն սկսեց իր խնձորը նվիրել նրան տալու։ Բայց նա ամաչեց ու ասավ.

—Ի՛նչ եք անում, ախպեր ջան. յես ուղիղ սրտով արի։ Ներեք, յես չեմ ուզում։

Զինվորներն սկսեցին բարեկամաբար ձեռք խփել նրա մեջքին.

— Ո՜, ինչ բարի տղա յես յեղել։

Իսկ առավոտյան նա ամենից շուտ զարթնեց զորանոցում, ամեն ինչ հավաքեց և բոլոր հասակավոր զինվորների կոշիկները մաքրեց։ Նրան սկսեցին գովել, իսկ հասակավոր զինվորները մեզ հարցնում էյին. «Սա հիմար է, ինչ է»։

Տանողները պատասխանում էն.

— Հիմար չէ, բայց...ենպես, ծննդից էդպես է։

Յեվ այդպես Գանը գնաց իր հիմարությամբ ծառայելու...

75. Թղթի տոպրակի պատմությունը

Ն. Սարգսյան

Խանութից մի թղթի տոպրակի մեջ բալ էյին առել և տուն բերել. այստեղ բալը թափել էյին ափսեյի մեջ, իսկ թղթե տոպրակը շպրտել աղբանոցը։

— Ի՞նչ զարմանալի արկածներն են այս մարդիկ,— ասաց թղթե տոպրակը աղբանոցի մոտ իր վոստայնի ծայրին նստած սարդին,— ինչքան լավություններ եմ արել մարդկանց և այդ բոլորի վարձատրությունն այս էր, որ այսքան կոպիտ կերպով շպրտեցին ինձ այստեղ, աղբանոցը։

— Այդ ինչ լավությունների մասին է խոսքդ, հետաքրքիր է,— հեգնանքի ժպիտով հարցրեց սարդը։

— Ինչ լավությունների՞,—պատասխանեց թղթի տոպրակը,— դա մի ամբողջ պատմություն է, յեթե այդ հետաքրքրում է քեզ, յես իսկույն կը պատմեմ. դե լսիր։

«Յես մի ժամանակ գտնվում էյի գեղեցիկ և թանկագին ճոթեղեն ապրանքների մի մեծ խանութում, բարձր դարակի վրա։ Օրերս շատ ուրախ էյին անցնում։ Ամեն օր նույն պատմությունը. մեկը փաթաթում էր, մյուսը՝ ջոկում, ջոկջկում, առնում և գնում։ Յես էլ էյի կամենում, որ ինձ էլ գնեյին. և մի օր իմ ցանկությունը կատարվեց։ Մի գյուղացի կին ներս մտավ և վառ գույներով չիթ պահանջեց։ Յես այն ժամանակ շատ վառ գույներ ունեյի. ինձ վրա նկարված էյին մեծ-մեծ վարդեր։ Յերբ ինձ ցույց տվին նրան. նա իսկույն հավանեց և գնեց։

«Հետևյալ օրը յես արդեն գյուղումն էյի. ինձ դրին սեղանի վրա, մկրատով կտրեցին մեծ ու փոքր կտորների և ապա կարեցին։ Շուտով շորը պատրաստ էր։

«Սկզբում յես ինձ շատ լավ էյի զգում, իմ տերը ինձ շատ լավ էր նայում, հագնում էր միայն կիրակի և տոն օրերին և կամ հյուր գնալիս։

«Բայց այդ յերկար չտևեց. նա հետո սկսեց ավելի և ավելի շուտ-շուտ հագնել և մի օր էլ այնպես կեղտոտեց, որ ստիպված յեղավ լվալ տաշտակի մեջ։ Լվալու ժամանակ ինչպես էր անգութ կերպով ճզմում ինձ, հուպ տալիս, սղմում, նորից բացում, նորից ճզմում, նկարագրել չեմ կարող։ Բայց այդ դեռ բավական չէր, դրանից հետո էլ դրեց տաք հարթուկի տակ և սղմեց։ Յես կարծում էյի, թե դրանով իմ տանջանքները վերջացան։ Սակայն դա միայն սկիզբն էր. նրանից հետո ամեն շաբաթ կրկնվում էր նույնը և քանի գնում, այնքան ավելի և ավելի դաժան կերպով։ Վոչինչ չէր մնացել ինձ վրա. գույնս խունացել էր, ծաղիկներս այլևս չէյին յերևում. տեղ-տեղ էլ թելերս կտրվել էյին։ Վերջը իմ տերը ինձ այլևս չէր հագնում. յես դարձա մի հասարակ փալաս, որով փոշի էյին մաքրում, ամաններ սրբում։ Քիչ անցած դրա համար էլ անպետքացա և ինձ դեն շպրտեցին։ Յես ընկա մի ցեխոտ տեղ, մարդիկ ինձ վոտքով տրորում, անցնում էյին. վախենում էյի, թե հենց այստեղ, ցեխի մեջ պետք է փտեմ վոչնչանամ։

«Բայց ահա մի օր մի յերեխա տոպրակն ուսին գալիս է, կանգնում ինձ մոտ և նայում։ «Ինչ է փնտռում այս յերեխան», մտածեցի յես, և հենց այդ ժամանակ, ձեռքը մեկնում է նա, բռնում իմ մի ծայրից և դուրս քաշելով՝ հանում ցեխից և գցում իր տոպրակի մեջ։ Ի՞նչ ասես, որ չկար այդ տոպրակի մեջ. յերկաթյա ժանգոտ մեխ, թիթեղյա աման, կոտրած պայտ, անպետք կաշվի կտորներ և այլն։ Մինչև մենք կը ծանոթանայինք իրար հետ այդ տոպրակի մեջ, յերեխան հասել էր արդեն մի փոքրիկ խանութ։ Այդտեղ տոպրակը թափ տվին և ինձ բաժանեցին իմ ընկերներից, յես ընկա փալաս-փլուսներով լցված քսակի մեջ։

«Մի քանի օրից հետո այդտեղից մեզ ուղարկեցին բարձր ծխնելույզներ ունեցող մի մեծ շինություն։ Ինչպես իմացանք, դա մի թղթի գործարան էր։ Այդտեղ, մի մեծ սենյակի մեջ դատարկեցին քսակը և սկսեցին ջոկել չթի փալասները մյուսներից, ապա մեզ՝ չթի փալասներիս սկսեցին տնտղել, կոճակները և ավելորդ մասերը կտրել, հեռացնել։ Հետո ածեցին մի մեծ արկղի մեջ։ Այդ արկղի մեջ պտտվում էր մի գլան, վորի վրա ցցված էյին բազմաթիվ ճաղեր։ Արկղի տակ կար մի մաղ, իսկ վերևում՝ մի լայն

խողովակ։ Երբ գլանը պտտվում էր, նրա ճաղերը դարձվում էին մեզ, ցնցում, թափ տալիս և հեռացնում մեզնից բոլոր անմաքրությունները։ Բարձրանում էր փոշու մի ամպ, որ խողովակի միջով անցնում էր վեր։ Դրանից հետո մեզ բոլորիս լցվում են կաթսաների մեջ։ Վորպեսզի մեր վրայից բոլոր յուղային մասերը հեռանան, ջրի մեջ գցում են կիր կամ մոխիր և սոդա։ Մենք բոլորս մաքրվում և սպիտակում ենք բոլորովին։ Դեռ չհանգստացած, այդտեղից վերցնում են մեզ և ածում տաք ջրով լցված մի ամանի մեջ. այդ ամանի մեջ էլ պտտվում էր մի գլան, որի վրա ցցված էին բազմաթիվ ատամներ։ Այդ գլանը պտտվելու ժամանակ այնպես էր զարկում մեզ, որ մենք քրքրվում էինք միանգամայն։ Գլանը շուտով սկսում է այնպես արագ պտտվել, որ ես բոլորովին ինձ կորցնում եմ, միայն այն եմ տեսնում, որ մենք այլևս նման չենք կտորների, այլ դարձել ենք փոքրիկ թելիկներ, հետո այդ թելիկներն էլ քայքայվում են և ամանի մեջ առաջվա կտորների տեղը առաջանում է մի կիսահեղուկ զանգված։ Դրանից հետո թե ինչ է կատարվում, չեմ իմանում, միայն այն գիտեմ, որ յես սպիտակ թղթի մի թերթ դարձած նստած էի իրար վրա դարսված թղթերի գլխին։

«Թե ինչպես կիսահեղուկ զանգվածից թուղթ դարձա յես, այդ հասկացա. հետո միայն, յերբ սկսեցի դիտել նստածս տեղից գործարանում կատարվող աշխատանքը։ Բանից դուրս է գալիս, որ կիսահեղուկ զանգվածը նրանք ածում են մի մեքենայի մեջ, իսկ այդ մեքենայի մյուս կողմից դուրս է գալիս թղթի շերտը։ Կիսահեղուկ զանգվածը տարածվում է մեքենայի մեջ բարակ շերտով, հետո տաք պղնձե գլանների տակ չորանում, հարթվում է և շերտի ձևով դուրս գալիս մյուս կողմից։ Ստացված թուղթը փաթաթվում է գլանների վրա. հետո կտրատում են հավասար մասերի և դարսում իրար վրա։

«Գործարանից ընկա յես մի մեծ խանութ։ Այստեղ կային շատ տեսակ-տեսակ իրեր՝ գրչածայր, մատիտ, գրչաման, տետրեր, գրքեր, թանաքամաններ, ամեն տեսակի և գնի։ Շատ չմնացի յես այդտեղ։ Մի փոքրիկ աղջիկ յեկավ, գնեց ինձ մի քանի ուրիշ թերթերի հետ և տարավ։ Տանը նա շինեց մի տետր և սկսեց գրել։ Գրում էր նա մեծ յեռանդով. մի շաբաթ չանցած՝ ամբողջ տետրը նա արդեն լցրել էր։ Այդտեղից էլ ընկա յես կրկին խանութ։ Փոքրիկ աղջիկն ինձ ծախել էր խանութպանին արդեն իբրև փաթթելու թուղթ։ Ահա հենց այդտեղ շինում են ինձնից տոպրակ և իբրև տոպրակ ընկած եմ այժմ այստեղ»։

— Վերին աստիճանի արկածալից պատմություն, բայց յերբեք չէյի ուզենա քո տեղը լինել,— ասաց սարդը և յերեսը շուռ տալով գնաց վոստայնի մեջ ընկած ճանճի արյունը ծծելու։

76. Թռչունների աշնանային տեղափոխությունը

Ըստ Բոգդանովի

Ինչու՞ յեն տեղափոխվում թռչունները։

Աշունը հասնելուն պես թռչունների մեջ մի տեսակ իրարանցում է նկատվում։

Ամառային զվարճությունների մեջ մենք բոլորովին չենք նկատում, թե ինչպես ուրախ թռչունները կամաց-կամաց դադարում են յերգելուց։ Անտառները, մացառներն ու դաշտերը դեռ չեն դատարկվել, այնտեղ թեև թռչուններ շատ կան, բայց նրանք միայն ճռվողում, մոլորվածի նման դես ու դեն են ընկնում, կարծես թե յերգելը մոռացել են։ Շատերը մինչև անգամ թագ են կացել։

Մինչև այդ ժամանակ դրանք իրանց գործը կատարեցին, ձագուկներ հանեցին և մեծացրին։ Այժմ էլ պետք է փետուրներ փոխեն։ Փետուրները մաշվել են, հարկավոր է հին զգեստը հանել և փոխարենը նորը, ավելի տաքը հագնել։ Ահա դրանով են զբաղվում թռչունները ամառվա կեսից սկսած։ Հնացած փետուրները մեկը մյուսի յետևից թափվում են, թռչունները նիհարում են, դառնում ջղային և վախկոտ։ Նրանք թշնամիներից թաքնվում են, զգում են իրանց թուլությունը և նրանք շատ լավ են հասկանում, որ վոչ միայն յերգելը, այլև մի փոքրիկ ծպտունն անգամ կարող է իրանց մատնել, թշնամու ճանկը գցել։

Այսպես մի յերկու-յերեք շաբաթվա ընթացքում թռչունները

զգեստավորված թռչնիկներն ավելի աշխույժ են և հոգատար։ Փետուր փոխելու ժամանակ նրանք սաստիկ թուլանում են. բայց թափում են իրենց հին փետուրները և դրանց փոխարեն նորերով են ծածկվում։ Շատ թռչունների այդ նոր զգեստի գույնը բոլորովին տարբերվում է գարնանայինից։ Գարնանային զգեստի գույներն այնքան ճոխ են, որ մարդու աչքն են շլացնում, մինչդեռ աշնան համեստ հագուստը լինում է գունատ, մոխրագույն։ Կան թռչուններ, որոնց փետուրներն առաջ սև են լինում, իսկ աշնանը դառնում են սպիտակ։

Հայտնի է, որ աշնանը խոտերը դալկանում են, ծառերի տերևները դեղնում և թափվում են, անտառներն ու դաշտերը մերկանում են… Թշնամու սուր աչքերից որտեղ կարող է թագ կենալ մեր բազմերանգ թռչնակը։ Որքան թռչունների աշնան հագուստը իր գույնով որքան համեստ լինի՝ այնքան նա օգտակար է, նա որքան ավելի նմանի դեղին տերևին, դալկացած խոտին, գետնի գույնին՝ այնքան ավելի ձեռնտու յե թռչունի համար։ Ահա այդ է թռչունների գունափոխվելու պատճառը։ Աշնան հագուստով յերբ նորից փետրավորվում են, այնուհետև նրանց ախորժակը բացվում է, կարծես՝ ծանր հիվանդությունից նոր են առողջացել։

Կերակուր ձեռք բերելու համար թռչունները պետք է շարունակ դես ու դեն ընկնեն, իսկ խոտերի և տերևների մեջ ունեցած բներն էլ հետզհետե կորցնում են, դրա համար պետք է կրկնապատկեն իրենց աշխատանքը, որպեսզի նոր, ապահով բնակարան գտնեն։ Սակայն նրանց թշնամիներն էլ քնած չեն, նրանց ախորժակն էլ բացվել է և ամեն կերպ աշխատում են նրանց որսալ։ Պաշտպանվելու համար թռչուններն, ուզեն-չուզեն, պետք է ընդհանուր ուժով դիմադրեն. այդ պատճառով գարնանը ջոկ-ջոկ ապրող, նույնիսկ միմյանց հետ կռվող թռչուններն աշնանը նորից հաշտվում, բարեկամանում են, մի տեղ են խմբվում և երամներ են կազմում։

Փոքրիկ երամին հետզհետե միանում են երկրորդը, երրորդը, չորրորդը, հինգերորդը և այլն… նրանց վրա նայելիս մարդ զարմացած մտածում է, թե որտեղից եկան։ Այս բազմաթիվ թռչուններն անտառների, դաշտերի, մարգագետինների վրայով անցնելիս այնպիսի կարգ ու կանոն են պահում, ինչպես հմուտ զինվորները զորախաղի ժամանակ։

Յեթե թռչնիկն իր համար կերակուր է որոնում, նա չի տեսնում, թե իր շուրջն ինչ է կատարվում և թշնամին շատ հեշտությամբ կարող է նրան որսալ։ Բայց երբ երկու, երեք կամ մի քանի թռչուններ միասին են լինում՝ այն ժամանակ նրանցից մի քանիսը կերակուր են փնտրում, մյուսները պահապան դառ-

նում. Այս կերպով աշխատանքն իրենց մեջ բաժանելով՝ նրանք կարողանում են վտանգից ավելի հեշտությամբ ազատվել։ Սա փոխադարձ օգնության ամենահասարակ օրինակն է, որ պատահում է թե թռչունների և թե կենդանիների մեջ։

Ահա դրա համար են թռչուններն աշնանը միասին հավաքվում։ Բացի դրանից, աշնանը պաշարը հետզհետե սպառվում է, քաղցած թռչունների երամները կերակուր ճարելու համար առավոտից մինչև երեկո շարունակ թափառում են այս ու այն կողմ։ Վերջապես նրանք կարող էին սովամահ լինել, յեթե երկար ըսպասեյին։ Բայց նրանք այդքան էլ անխելք չեն… Այդ սարսափելի վիճակին չհասնելու համար՝ որ առաջ թողնում են իրանց հայրենիքը և չվում են օտար երկրներ։ Յուրաքանչյուր երամի մեջ կան մի քանի ծեր և փորձված թռչուններ, որոնք շատ ու շատ անգամ չվել են ուրիշ տեղ ձմեռելու համար։

Ահա, այդպիսիները դառնում են երամի առաջնորդը։

Նրանք ծանոթ ճանապարհներով տանում են երամը։ Նրանց հրամանով երամը երբեմն-երբեմն կանգ է առնում մի տեղ կերակուր ճարելու, մի ուրիշ տեղ ջուր խմելու կամ գիշերելու։

Յերբ առաջնորդը հոգնում է, նրան փոխարինում է մյուսը, սրան էլ երրորդը և այլն։ Այսպես են անում և իջևանած տեղերում, այսինքն երբ թռչունները կերակուր որոնելով են զբաղված՝ առաջնորդները հերթապահ պահապանների դեր են կատարում։ Կան այնպիսի տեղեր, որտեղ թռչունները սիրում են մի քանի օր կանգ առնել, մինչև որ վատ եղանակը նրանց այդ տեղից էլ հեռացնում է։ Սրա հակառակ կան այնպիսի տեղեր էլ, որտեղ երամը երբեք չի իջևանում։

Այս բանն ամեն մի որսորդի, ամեն մի թռչնորսի քաջ հայտնի յե, իսկ բացատրել շատ հեշտ է։ Առաջնորդներն առանց նախապես տեղյակ լինելու՝ իրանց երամը չեն բերի այս կամ այն տեղերում իջևանելու։ Նրանք մանկությունից սովորել են իրանց առաջնորդ հայրերից, թե որ տեղն է օգտավետ, որը պաշարեղենով առատ։ Յեվ այդ տեղեկություններն անցնում են սերնդից սերունդ, ցեղից ցեղ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ–Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՑԱՆԿ

1. Ընկերները	Եղ. Չարենց	3
2. Ազատվեցին	Սերիկ	6
3. Աշխատանքի երգը	Հ. Հակոբյան	9
4. Եսասեր հսկան	Օ. Ուայլդ	9
5. Արտավազդ	Հովհ. Հովհաննիսյան	12
6. Արևը	Արագի	14
7. Հին օրհնություն	Հովհ. Թումանյան	15
8. Թշնամիները		17
9. Մանուկ Դավիթը	Հովհ. Թումանյան	18
10. Հաջողվեց	Սիմակ	23
11. Մեկմայիսյան հիմնը	Կիրիլլով, Թարգմ. Դ. Դեմիրճյան	26
12. Գայլն ու գառը	Լաֆոնտեն, Թարգմ. Ն. Մամիկոնյան	27
13. Սլաքավարը	Ստանյուկովիչ, Թրգմ. Հոգիջանյան	28
14. Ալագյազի մանիներից	Ավ. Իսահակյան	34
15. Կույրերի վարժարանը	Ե. դը-Ամիչիս	34
16. Լալվար սարը	Վ. Միրաքյան	38
17. Արագածի վորսորդը	Հովհ. Թումանյան	39
18. Կկուն ու աքլորը	Ա. Խնկոյան	40
19. Աղջիկն ու լուցկիները	Անդերսեն	41
20. Մանուկ Մհերը	Ավ. Իսահակյան	44
21. Ինչպես մաճկալ դարձա	Ռոզեգեր, Թրգմ. Ս. Զորյան	47
22. Գարուն	Վ. Տերյան	49
23. Երկաթուղու մուտքը մեր ձորերը	Հովհ. Թումանյան	50
24. Կաղնին ու եղեգը	Ա. Խնկոյան	52
25. Խուլ ու համրը		52
26. Լուսաբացին	Հ. Հակոբյան	54
27. Տպարանում	Ս. Լիսիցյան	55
28. Ուռի	Ա. Խնկոյան	57
29. Պայթյուն հանքում	Հ. Մելիք-Հայկազյան	57
30. Հույս	Ռ. Պատկանյան	60
31. Մի շաբաթ ծառի վրա	Վ. Փափազյան	61
32. Աշխատանքն ածխահանքում	Ն. Սարգսյան	65
33. Ծնծղուկը	Տուրգենև	68
34. Գելը	Հովհ. Թումանյան	69
35. Կենդանիների հավաքական ինքնապաշտպանությունը	Ն. Սարգսյան	72
36. Սար գնալը	Վ. Միրաքյան	74
37. Կյանքը մրջնոցում	Ն. Սարգսյան	77
38. Բարեսիրտ աղվեսը	Ա. Խնկոյան	83
39. Շների մասին	Ն. Սարգսյան	84
40. Եշն ու սոխակը	Թրգմ. Ղ. Աղայան	87
41. Ինչ էյին ասում սենյակի իրերը		88
42. Փոքրիկ աղջկան	Վ. Տերյան	94
43. Գայլի ընտանիքը	Ն. Սարգսյան	95
44. Մանթաշին	Ավ. Իսահակյան	97
45. Գիքորը	Հովհ. Թումանյան	98
46. Աներևույթ թշնամի	Ն. Սարգսյան	103
47. Դարբնի երգը	Հ. Հակոբյան	105
48. Եղնիկը		105
49. Թե ինչպես բռնեցին կապկի ձագը	Ն. Սարգսյան	107
50. Նավավար	Ա. Ծատուրյան	111
51. Հյուսիսային երկրներում		112
52. Մասիսի լանջին	Ա. Մխիթարյան	114
53. Մոծակ	Ն. Սարգսյան	119
54. Քրիստափոր Կոլումբոսը	«Լուսաբեր»-ից	121
55. Սինդերան	Ն. Սարգսյան	126
56. Կովկաս	Ա. Պուշկին, Թարգմ. Ա. Ծատուրյան	131
57. Անձնազոհ նավաստին	Կ. Ստանյուկովիչ	132
58. Գետնախնձորը	ըստ Ե. Շատրիանի,	135
59. Յոհան Գուտենբերգ	«Լուսաբեր»-ից	139
60. Տաների գյուղը	Լեո	142
61. Անցիր, սև ամպ	Հովհ Հովհաննիսյան	144
62. Մարդու ազգականները	Ն. Սարգսյան	144
63. Արագածին	Ա. Իսահակյան	148
64. Փոքրիկ հերոսը		149
65. Խորթ զավակները	Ն. Սարգսյան	152
66. Պապի համար	Թարգմ. Ս. Զորյան	153
67. Ջրահեղձը	Ա. Պուշկին Թարգմ. Հովհ. Թումանյան	156
68. Ոդագնացություն		157
69. Բնության հրաշքներից		161
70. Փոքրիկ տղան	Թարգմ. Ս. Զորյան	162
71. Սահարա	Ե. Տուր	164
72. Առաջին ձնծաղիկները	Թարգմ. Կ. Միրյանցյան	166
73. «Սատանի մեքենան»	«Լուսաբեր»-ից	168
74. Հիմարը	Լեսկով, Թարգմ. Ս. Զորյան	171
75. Թղթի տոպրակի պատմությունը	Ն. Սարգսյան	176
76. Թռչունների աշնանային տեղափոխությունը	Ըստ Բոգդանովի	179

ՀՀ Ազգային գրադարան
NL0240268

9436

№ 06706

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱԳՐՔԵՐ

1. Դասընկեր Ա. տարի (Այբբենարան). Երրորդ տպ. 50 կ.
2. Կարմիր Արև—Բ. տարի, կազմեցին և խմբագրեցին Հ. Կարախանյան և Ա.Թ. Խնկոյան, պատկերազարդ 60 կ.
3. Կարմիր Արև—Գ. տարի, կազմեցին և խմբագրեցին Հ. Կարախանյան և Ա.Թ. Խնկոյան, պատկերազարդ 80 կ.
4. Կարմիր Արև—Դ. տարի, պատկերազարդ, կազմեց և խմբագրեց Սուրխաթյան . . . 1 ր. —
5. Կարմիր Արև—Ե. տարի, պատկերազարդ, կազմեց և խմբագրեց Սուրխաթյան 1 ռ. 20 կ.
6. Կարմիր Արև—Զ. տարի (պատկերազարդ. կազմեց և խմբագրեց Սուրխաթյան . . 1 ր. 80 կ.
7. Նիկ. Սարգսյան—Դասագիրք աշխարհագրության, Ա. մաս— Բուսաբանություն . . 75 կ.
8. Լ. Նիկոնով—Բույսի կյանքը (պարզ պատկերով 19 նկարով), թարգմ. Ա. Տ.-Պ. . 40 կ.
9. Մ. Աբեղյան—Առաջնորդ հայոց լեզվի նոր ուղղագրության . . . . . 8 կ.
10. Ա. Մուշեղյան—Ինչպես կազմել հերբարիում . 10 կ.
11. Ռ. Դարբինյան—Բնագիտական քարտեզներ, Ա. մաս, բացատր. տեքստով—Բույսի կյանքը 40 կ.
12. Ռ. Դարբինյան—Բնագիտ. քարտեզներ, Բ. մաս, բացատր տեքստով.—Անկենդան բնություն 40 կ.
13. Գ. Ուշանով—Մանկան ուսուցիչը (Ասորերեն դասագիրք), Ա. տարի . . . . 25 կ.
14. Գ. Ուշանով—Նույնը, Բ. տարի . . . 40 կ.
15. Գ. Եղիյան—Աշխատանքի դպրոց (ձեռնարկ) 50 կ.
16. Վ. Կեմպբել—Զննական երկրաչափություն, թարգմ. Հ. Նավակատիկյանի . . 2 ր.
17. Ռոմ. Մելիքյան—Դպրոցական երգեր, Ա. տարի. 1 ր. —
18. Դրամատիզացիան Ա. աստիճանի դպրոցում, թարգմ. Ա. Շավարշյանի . . . . 10 կ.
19. Պ. Կովալենկո—Քաղաքական գրագիտության ձեռնարկ. (Հ. Ս. Խ. Հ. Պետհրատի խմբ. մարմնի հավելումներով) . . . . 40 կ.
20. Կարմիր Արև—Ա. տարի, ընթերցարան, կազմեցին և խմբագրեցին Հ. Կարախանյան և Ա.Թ. Խնկոյան։
21. Ա. Կիսելյով—Տարրական երկրաչափություն, ամբողջ, թարգմ. Ա. Տոնյանի։
22. Բեմ, Ստրուվե, Վոլկով—Հանրահաշիվ, Ա. և Բ. մաս։

Գները նշանակված են չերվոնեցներով։

ԳԻՆԸ 1 Ռ.

Օտար տեղերից դիմել՝ Երևան, Պետհրատ, Эривань (Армения), Госиздат.